Abstract – The Armenian sources, with the exception of Movses Dasxurants'i, don't mention any "AĀnshahik" noble dynasty. The basis for such an assumption by the Movses Dasxurants'i may perhaps be the following report by Movses Khorenats'i: "After this, he (king Vagharshak – H.K.) appoints as governor of the northeastern regions a great and renowned man of many talents and wisdom, AĀn, by the great river that flows through the vast plain, known as the Kur. From his descendants, they say, arose the rulers of the Utians, Gardmanians, Tsavdeans, and Gargarans". It is important to consider that by the time of Movses Khorenats'i (410 – late 5th century), the province of Arrān had already been established, incorporating the Armenian provinces of Utik and Artsakh. The historian, who was the first to explore the origins of Armenian noble houses, crafted the legend of AĀn to illustrate that these two regions, along with their noble families, were Armenian. However, Khorenats'i could not overlook the administrative and political divisions of his own time. During his era, Utik and Artsakh were integral parts of the marzpanate of Arrān. Furthermore, the administrative center of the marzpanate (late 5th – early 6th centuries) had shifted to the city of Partaw, located in the district of Uti AĀndznak. Since the name "Arrān" was also applied to these Armenian provinces, the supposed ancestor of the local noble families was identified as AĀn of the Sisakyan lineage. This information likely served as the basis for Dasxurants'i to assert that the ruling dynasty of the Kur-Araxes interfluvium was of Armenian AĀnšahik descent. However, a close examination of the sources reveals that the territories of the supposed "AĀnshahik" nobles actually belonged to the principality of Gardman. The rulers of Gardman, being a powerful noble family of the Armenian part of Arrān, perhaps after Vachagan III the Pious, became worthy of the title "Lord of Arrān" known as AĀnšahik at that time. In this context, it

becomes clear why the so-called "Aranšahiks" ruled specifically in Gardman, despite the existence of the Gardman princely dynasty. It is no coincidence that the Mihranids came precisely to the Gardman region-presumably overthrowing the local "Aranšahik" noble dynasty, and thus established their dominance over Arrān/Albania. In other words, a struggle for power took place, as a result of which the Aranšahik title and control over Gardman passed to the Mihranid dynasty.

Ամփոփում – Հայկական աղբյուրները, բացառությամբ Մովսես Դասխուրանցու, չեն հիշատակում որևէ «Առանշահիկ» ազնվական կամ նախարարական տոհմ: Պատմիչի՝ նման տեսակետի հիմքը թերևս կարող էր լինել Մովսես Խորենացու հետևյալ հաղորդումը. «Այնուհետև նա (Վաղարշակ արքան – Հ.Խ.) հյուսիս-արևելյան երկրամասերի կառավարիչ է նշանակում մի մեծ և հռչակավոր մարդ՝ բազմաթիվ տաղանդների և իմաստության տեր Առանին, մեծ գետի մոտ, որը հոսում է լայնատարած հարթավայրով և հայտնի է որպես Կուր: Նրա սերունդներից, ասում են, ծագել են ուտիականների, զարդմանացիների, ծավդեացիների և զարգարացիների իշխանները»: Կարևոր է հաշվի առնել, որ Մովսես Խորենացու (410 – V դարի վերջ) ժամանակ Առան նահանգն արդեն ձևավորվել էր՝ ընդգրկելով Ուտիք և Արցախ հայկական նահանգները: Պատմիչը, որն առաջինն է փորձել ներկայացնել հայկական ազնվական տների ծագումը, կազմել է Առանի լեգենդը՝ ցույց տալու համար, որ այս երկու երկրամասերը և նրանց ազնվական տները հայկական են: Սակայն Խորենացին չէր կարող անտեսել իր ժամանակի վարչական և քաղաքական բաժանումները: Նրա ապրած դարաշրջանում Ուտիքը և Արցախը Առան մարզպանության անբաժանելի մասերն էին: Բացի այդ, նահանգի վարչական կենտրոնը (մոտ V դարի վերջ – VI դարի սկիզբ) տեղափոխվել էր Պարտավ քաղաք՝ Ուտի Առանձնակ գավառում: Քանի որ «Առան» անվանումը տարածվում էր նաև այս հայկական նահանգների վրա, տեղական ազնվական տների ենթադրյալ նախահայրը համարվել է Սիսակյան Առանը: Հավանաբար, այս տեղեկությունն է հիմք ծառայել Դասխուրանցու համար՝ պնդելու, որ Կուր-Արաքս գետերի միջև ընկած տարածքի իշխողները հայկական Առանշահիկ տոհմից էին: Սակայն աղբյուրների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, այսպես կոչված «Առանշահիկ» ազնվականների ենթադրյալ տարածքները փաստացի պատկանել են Գարդմանի իշխանությանը: Գարդմանի իշխանները, լինելով հայկական Առանի/Աղվանքի հզոր ազնվական ընտանիք, հավանաբար, Վաչագան Բարեպաշտի ժամանակներից հետո արժանացել են «Առանի տեր» («Առանշահիկ») կոչմանը: Այս համատեքստում պարզ է դառնում, թե ինչու, այսպես կոչված, «Առանշահիկները» իշխում էին հենց Գարդմանում՝ չնայած Գարդմանի իշխանական տոհմի գոյությանը: Պատահական չէ, որ Միհրանյանները գալիս են հենց Գարդման գավառ՝ ենթադրաբար տապալելով տեղական «Առանշահիկ» ազնվական տոհմին և այդպիսով հաստատում իրենց գերիշխանությունը Առանի/Աղվանքի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում իշխանափոխություն, որի շնորհիվ Առանշահիկ տիտղոսը և Գարդմանի նկատմամբ վերահսկողությունն անցել են Միհրանյան տոհմին: Միհրանյաններից հետո այդ տիտղոսը կարճ ժամանակով կրում էին Խաչենի իշխանը (IX դ.) և Գանձակի ամիրը (X դ.):

Аннотация – Армянские источники, за исключением Мовсеса Дасхуранци, не упоминают о какой-либо знатной династии «Араншахики». Основанием для подобного утверждения, возможно, является следующий фрагмент из труда Мовсеса Хоренаци: «После этого он (царь Вагаршак – Г.Х.) назначает правителем северо-восточных областей великого и прославленного мужа, обладающего многими талантами и мудростью, Арана, у великой

реки, протекающей через обширную равнину, известную как Кура. Из его потомков, как говорят, вышли правители утийцев, гардманцев, цавдеев и гаргарцев». Важно учесть, что при Мовсесе Хоренаци (410 – конец V века) уже была сформирована провинция Арран, в состав которой вошли армянские области Утик и Арцах. Историк, который первым исследовал происхождение армянских знатных родов, создал легенду об Аране с целью показать, что эти две области, вместе с их знатными семьями, были армянскими. Однако Хоренаци не мог проигнорировать административное и политическое деление на данном историческом отрезке. В его эпоху Утик и Арцах были неотъемлемой частью провинции Арран. Кроме того, административным центром этой провинции (конец V – начало VI вв.) стал город Партав, расположенный в районе Ути Арандзнак. Так как название «Арран» использовалось применительно и к этим армянским областям, предполагаемого предка местных знатных семей стали называть Араном из рода Сисакянов. Эта информация, вероятно, послужила основой для утверждения Дасхуранци о том, что правящая династия междуречья Куры и Аракса происходила из армянского рода Араншахики. Однако внимательное изучение источников показывает, что территории, приписываемые князьям «Араншахики», на самом деле принадлежали княжеству Гардман. Правители Гардмана, являясь представителями могущественного знатного рода армянского Аррана, возможно, после Вачагана Благочестивого, удостоились титула «Владыка Аррана», который в то время мог называться «Араншахики». В этом контексте становится ясно, почему так называемые «Араншахики» правили именно в Гардмане, несмотря на существование местной гардманской княжеской династии. Не случайно, что именно в Гардмане пришли Михраниды, предположительно, свергнув местную знатную династию «Араншахики» и, таким образом, установив свою власть над Арраном/Албанией. Иными словами, имела место борьба за власть, в результате которой титул Араншахики и контроль над Гардманом перешли к династии Михранидов. После Михранидов этот титул получили князь Хачена (IX в.) и эмир Гандзака (X в.).

Keywords – Aʔanšahik, Arrān, Armenia, Movses Dasxurants'i, Artsakh.

Հիմնաբաներ – Առանշահիկ, Առան, Հայաստան, Մովսես Դասխուրանցի, Արցախ:

Ключевые слова – Араншахики, Арран, Армения, Мовсес Дасхуранци, Арцах.

Introduction

In historiography, the views on the term "Aʔanšahik" are ambiguous. Some researchers considered it a nakharar (princely) dynasty (Toumanoff 1963, 257–258 ref. 362; Ուրութարյան 1976, 86–87; Դանիելյան 2005, 55; Եղիազարյան 2010, 37; Վարդանյան 2018, 427), the others considered it a title (Minorsky 1958, 11 ref. 2, 13; Гаджиев 2003, 104, 118; Хуршудян 2003, 192; Vacca 2017, 130–133). The latter, although they considered it a title, linked the reasons and content of its emergence to various events. Thus, in this article, we set out to examine the reports of the sources and find out what the term "Aʔanšahik" represented.

Reports about "Aʔanšahik"

The first information about "Aʔanšahiks" is reported by Movses Dasxurants'i (also called Kaʔankatuats'i), in chapter 27 of volume 1 of his book. Narrating the visit

of Mesrop Mashtots' and his disciples to the place called Gis in the Uti district, the historian notes: "A long time afterwards, a noble prince called Varaz-P'eroř of the Ařanřahik family intended to renovate the Old Church..." (Movsēs Dasxuranči 1961, 55). The historian also mentions this Prince in the 32nd chapter of volume 2, by which he confirms that the house of Varaz Perozh, i.e., the dynastic domains, was in a place called Gis in the Uti district (Movsēs Dasxuranči 1961, 137). By the way, Varaz Perozh was the son of the Mihranid Varaz Grigor, the first Prince of Arrān (Ařvank', Albania) (Movsēs Dasxuranči 1961, 109). Then, while telling about the Mihranid dynasty (Pourshariati 2008, 70–75, 101–104; Maksymiuk 2015, 163–179) in chapter 17 of volume 2 of his book, Daskhurantsi reports that "Vardan the Brave, who built the fortress of Gardman in three years, with treachery in his heart, he invited the Eřanřahiks, the ancient native Armenian (Haykazean) family. Preparing for them the bread of perdition, he gave it to them to eat, and at that feast of their own blood he beheaded sixty men. He spared only Zarmihr Eřanřahik, the husband of one of the daughters of his family" (Movsēs Dasxuranči 1961, 108–109). It should be noted, that earlier Dasxurants'i mentioned that "When spring drew nigh, he (the Mihran – H.K.) went to the upper regions of the district of Gardman, and cunningly inviting twelve of its chieftains, put them to the sword, and took possession of the country" (Movsēs Dasxuranči 1961, 108).

From these reports of the historian we can understand: 1. that the term "Ařanřahik" (also Eřanřahik) was used as a clan name; 2. Mihran, the founder of the Mihranid dynasty, killed twelve Princes of the Gardman district and took control of the province. 3. The same was done by his great-grandson Vardan the Brave. Here, the following passage is important: "He spared only Zarmihr Eřanřahik, the husband of one of the daughters of his family", i.e. if the "Ařanřahiks" had really betrothed the Mihranids, then conspiring against them would be pointless. Such actions could only be motivated by dynastic enmity. In addition, once Mihran the Great had already massacred the local princes and taken over Gardman, which should have excluded any in-law relationship with the Mihranids. And if we even assume that they were connected by in-law ties, then they should have lost their position by accepting the supremacy of the Mihranids. One more consideration, if the "Ařanřahiks" were the owners of the native Haykazian Gardman district, then it was impossible that Varaz Perozh, the eldest son of Mihranid Varaz Grigor, was called the prince of the Ařanřahik clan. Thus, it turns out that the Mihranids massacred the Ařanřahiks twice for the clan name.

One consideration relates to Vardan the Brave Gardmanats'i. In the chapter 17 of volume 2, Movsēs Dasxuranči mentions that Vardan the Brave, who built the Gardman fortress in three years, was the son of Mihranid Vard (Movsēs Dasxuranči 1961, 108). And in Chapter 10 of Volume 3, the historian states that the Mihranid Vardan the Brave was the chairman of the Ařven assembly invited by the king Vachagan III Pious, who lived in Gardman (Movsēs Dasxuranči 1961, 197). If we take

as a basis the report of the historian that Mihranids migrated to Utik' during the reign of Khosrov Parvez, then it turns out that we are dealing with two Brave Vardan Gardmanians. However, in reality, we are talking about only one Vardan the Brave Gardmanatsi, so logically, the entry of the Mihranids to the Eastern part of Armenia was earlier. Gardman's owner's honorable position of presiding over the Atven assembly should be explained by the presence of a strong border-principality of Gardman (Յալոյրեաւ 2020, 170–172. In the middle period of the Arshakuni kingdom (3rd–4th centuries), Gardmanians were one of the powerful Armenian clans. In the rank table (Gahnamak) the prince of Gardman was in 23rd place, and in the military rank table the Gardmanians (with the 1000 soldiers) were part of the force of the Gugark' bdeškh. (Յալոյրեաւ 2011, 533, 543). The principality of Gardman with Artsakh province after 451 was included in the Arrān marzpanate, as a result of which the name Arrān-Ahvank' was also extended to the worlds of Utik' and Artsakh).



About the next "Ařanřahik" prince, Daskhurants'i reports related to the 8th century with an Arab raid against the Khazars: "The Eřanřahik Vačagan from among the patricians of Albania, a brave and vigorous prince and a skilful archer, was stationed with his army at his rear. The Khazars pursued him, but they were defeated and put to flight" (Movsēs Dasxuranči 1961, 209). As the historian reports, Prince of Arrān Jvanshir II was killed at this time (Movsēs Dasxuranči 1961, 209). Then, the historian calls "Ařanřahik" the Sahl Smbatean (9th century) prince of Khachen: "Lord Sahl i Smbatean Eřanřahik..." (Movsēs Dasxuranči 1961, 214, 217). In this connection, it should be noted that none of Sahl Smbatean's (About Sahl Smbatean see Minorsky 2020, 121–129) successors (Hovhannes, Atrnerseh, Hamam, Grigor, etc.) are called "Ařanřahik" by the historian, by their assumed family name. This suggests that it was a title indicating status: "Lord Sahl i Smbatean captures the rebel Baban ... and he received sovereignty over Armenia, Georgia, and Albania, to rule authoritatively and regally over all", "The Lord of Lords Yovhannēs, who became lord of Armenia, Georgia, and Albania" (Movsēs Dasxuranči 1961, 217). Which apparently was not used after Sahl Smbatean and his direct descendant Hovhannes. Moreover, the 11th–12th century Arabian author from Darband, Mammus al-Laqqi in his "History of Sharvān and Darband", in connection with the wars waged by the Shirvanshahs (شروانشاه), mentions the Prince of Arrān (صاحب آران) and the ruler with the title of Arrānřah (آرانرشاه) (Minorsky 1958, 39 Arabian text 15). The latter were the Shaddadians who settled in Gandzak in 971. The above evidence once again shows that "Ařanřahik" was a title that passed to different rulers in different periods.

It should be noted that Armenian sources, with the exception of Movses Daskhurants'i, don't mention any "Ařanřahik princely dynasty". Perhaps the following report of Movses Khorenats'i could serve as a basis for a similar assumption for the narrator: "After this he (king Vagharshak – H.K.) established in the governorship of the great and renowned and fertile northeastern region Arrān, a

man famous and outstanding in every deed of wisdom and sagacity; [this region] is by the great river called Kur, which cuts the extensive plain. But know this, that in the first book we forgot to mention this illustrious and famous race, the tribe of Sisak, which inherited the plain of Albania and the mountainous region of the same plain from the river Araxes as far as the fortress called Hnarakert. And the country was called Aluank' [Albania] after the gentleness of his mode of life; for they called him *alu*. Descended from him was this famous and valiant Arrān whom the Parthian Valarshak made military governor. From his offspring, they say, descend the families of Uti and Gardman and Tsowdēk and the principalities of Gargar" (Moses Khorenats'i 1978, 139–140).

It should be taken into account that in the days of Movses Khorenats'i (around 410 – end of the 5th century), the Albanian marzpanate was already formed, which included the Armenian provinces of Utik' and Arts'akh. Movses Khorenats'i, who was the first to try to give the circumstances of the creation of Armenian nakharar (princely) houses, in order to show that the above-mentioned two worlds (regions) with their nakharar houses were Armenian, wove the narrative about the Arrān governor. However, on the other hand, Khorenats'i could not but refer to the administrative and political division of his time. At that time, the provinces Utik' and Arts'akh were a constituent part of the Arrān marzpanate, moreover, the center of the marzpanate (late 5th – early 6th centuries) was moved to the town of Partaw in the Uti Arandznak district. And since the name Arrān also extended to the Armenian provinces, Sisakyan Ařan became the presumed ancestor of the local Armenian princely houses. Here, this information may have served as a basis for Movses Daskhurants'i, to consider the ruling dynasty of Kur-Araksyan Mesopotamia as "Haykazun Ařanřahik".

However, a careful examination of the sources shows that the domains of the alleged "Ařanřahik" princes actually refer to the principality of Gardman. The Gardmanians being the powerful ruling dynasty of the Armenian part of Ařan (Utik', Arts'akh), as we will see below, after Vachagan III Pious, the ruler of Arrān-Albania, at that time received the title of Ařanřahik (the proof of this is perhaps 5th–6th centuries the Syrian chronicler Zacharias of Mitylene's account of the conquest of Amid by the Persian king Kavad I (488–496, 498/499–531), in the 5th–6th centuries, where mentioned: "But a certain Christian prince of the country of Arran" (Zachariah of Mitylene 1899, 158). By the way, N. Pigulevskaya translated this part of the source as "*христианский царец из земли Аран*" (Пигулевская 1941, 152). It is interesting that the chronicle about Arrān reports that "Further the country of Arran in the country of Armenia, and it has a prince/king subject to the king of Persia" (Zachariah of Mitylene 1899, 328; Пигулевская 1941, 165). In this case, it becomes clear why the so-called "Ařanřahiks" ruled in Gardman itself, in the event that there was a Gardman family. And it is not a coincidence that the Mihranids come to the same Gardman province, as if to massacre the local "Ařanřahiks" princely clan, with which they captured the Arrān.



In other words, there is a struggle for power and the title of Aṛanšahik goes to the Mihranids along with Gardman (comparative with "a noble prince called Varaz-P'erož of the Aṛanšahik family" (Movsēs Dasxuranči 1961, 55), "Lord Viroy, thirty-four years. He liberated the prisoners of Armenia, Georgia, and Albania from Šat' Xazr. He requested King Xosrov to write the title 'Lord of Gardman and prince of Albania' on letters to the governors (kusakal) of this country, and this is still written" (Movsēs Dasxuranči 1961, 229). It can be assumed that the titles "Arrānšāh[ik]" and "Prince of Arrān" are identical. The first being a Persian form, it gradually gave way to or was expressed in the Arabic version).

Aṛanšahik is composed of the Middle Persian words Arrān (Ārān), Albania, and shah (šāh), king (Hübschmann 1897, 39), where the *ik* suffix of "Aṛanšahik" is not a derogatory form, meaning a little prince from Aṛan's generation (Мушегян 1989, 23), but ending in the Persian *ik* form, indicates affiliation, for example: Persian (pārsīk), Pahlavi (pahlawīk), Delmīk (dēlumīk), Armenian (*hayīk). The first known Middle Persian attestation of the title Arrānšāh dates to the 5th century, referring to king Arsvaghen/Yesvaghen (415/420–440/450) of Albania himself (Гаджиев 2003, 104, 118–119). In other words, the Middle Persian form Arrānšāh was used for the area geographically called Arrān-Albania (from the maps created by us, it is clear how the meaning and the borders of Arrān changed. About Arrān see Vacca 2020, 37–84; Khalifa-Zadeh Maksymiuk 2023, 167–182). From this it is not difficult to conclude that the royal title granted to Vachagan III Pious by the King of Kings Balash Sasanian (484–488) (in the borders of the former Arrān marzpanate) should also have been expressed in the Persian form Arrānšāh (Հովհաննիս 2020, 159–161). Then, in the first half of the 6th century, as a result of the de facto division of the Arrān marzpanate (it should be noted that although the marzpanate of Arrān was actually divided, as evidenced by the Arab chroniclers, the marzpanate status of Arrān was still not abolished. This is supported by the mentions of marzpanas Gayšak' and Sema Všnasp (Movsēs Dasxuranči 1961, 83, 96), when a number of state formations emerged, the rulers of which were granted royal titles by the Persian king Khosrow I Anushirvan (531–579) ("One of these was 'Khaḵ ān al-Jabal' [lord of the mountain] who bore the title 'Sāhib as-Sarīr' [holder of the throne] and was named Wahrārzān-shāh. Another was the king of Filān surnamed Filān-shāh. Others were Tabarsarān-shāh, the king of al-Lakz surnamed Jarshān – shāh, the king of Maskat (whose kingship has been abolished), the king of Līrān surnamed Līrān-shāh and the king of Sharwān called Sharwān-shāh" (Balādhuri 1916, 309), The title of Arrānšāh/ik passed to the prince of Gardman, whose de jure authority extended over proper Albania and the Armenian provinces of Utik' and Arts'akh.

Conclusion

Thus Aṛanšahik meant the ruler or prince of Arrān, and originally, when conferred by a Persian king, was doubtless a title and not a family name. At the

beginning of the 6th century, the ruler of the Armenian principality of Gardman was awarded the title of Aranshahik, the ruler of Arrān. Later, that title was held by the Mihranids, and for a short time by the prince of Khachen and the amir of the Gandzak.

Acknowledgements

During the preparation of this article, we would like to express our gratitude to Ph.D. Artak Maghalyan, Senior Researcher at the Department of Medieval History of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, for his valuable advice and the helpful materials he kindly provided.

References/Գրականություն/Литература

1. Al-Balādhuri 1916, *Kitāb Futūh al-Buldān* of al-Balādhuri, by Philip Khūri Ḥitti, New York, Columbia University.
2. Hübschmann H. 1897, *Armenische Grammatik*, Leipzig, Druck und Verlag.
3. Khalifa-Zadeh M., Maksymiuk K. 2023, Reforms of Sasanian king Khusro I and the northern bank of the Araxes – Arrān (Caucasus Albania), *Historia i Świat*, N 12, 167–182.
4. Maksymiuk K. 2015, The Pahlav-Mehrān family faithful allies of Xusrō I Anōšīrvān, *Метаморфозы истории*, N 6, 163–179.
5. Minorsky V. 1958, *A History of Sharvān and Darband in the 10th–11th Centuries*, Cambridge, Heffer.
6. Minorsky V. 2020, Arrān in the 9th–10th Centuries: Sahl ibn Sunbāṭ (d. ca. 850), From Albania to Arrān. *The East Caucasus between the Ancient and Islamic Worlds (ca. 330 BCE–1000 CE)*, edited by R.G. Hoyland, Gorgias Press, 121–129.
7. Moses Khorenats'i 1978, *History of the Armenians*, Translation and Commentary by R.W. Thomson, London, Harvard University Press.
8. Movsēs Dasxurançi 1961, *The History of the Caucasian Albanians*, Translated by C.J.F. Dowsett, London, Oxford University Press.
9. Pourshariati P. 2008, *Decline and Fall of the Sasanian Empire. The Sasanian-Parthian Confederacy and the Arab Conquest of Iran*, London, I.B. Tauris.
10. Toumanoff C. 1963, *Studies in Christian Caucasian History*, Washington, Georgetown University Press.
11. Vacca A. 2017, *Non-Muslim Provinces under Early Islam: Islamic Rule and Iranian Legitimacy in Armenia and Caucasian Albania*, Cambridge, Cambridge University Press.
12. Vacca A. 2020, Buldān al-Rān: The Many Definitions of Caucasian Albania in the Early Abbasid Period. In: Hoyland R.G., *From Albania to Arrān. The East Caucasus between the Ancient and Islamic Worlds (ca. 330 BCE–1000 CE)*, Gorgias Press, 37–84.

13. Zachariah of Mitylene 1899, *The Syriac Chronicle Known as that of Zachariah of Mitylene*, translated by F.J. Hamilton, E.W. Brooks, London, Methuen.
14. Դանիելեան Է. 2005, Գանձասարի պատմություն, Երեւան, «Գանձասար»:
Danielean E. 2005, *The History of Gandzasar*, Yerevan, Gandzasar (in Armenian).
15. Եղիազարյան Ա. 2010, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Երևան, ԵՊՀ հրատ.:
Yeghiazaryan A. 2010, *Arminia Administrative Region of the Arabian Caliphate*, Yerevan, YSU (in Armenian).
16. Յակոբեան Ա. 2011, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Չաւրանամակ», Բազմավէպ, N 3–4, 485–550:
Yakobean A. 2011, "The Throne List of Armenian Princes and Royals" and the "Force List", *Bazmavep*, N 3–4, 485–550 (in Armenian).
17. Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննություն), Երեւան, «Գիտություն»:
Yakobean A. 2020, *The Dynasties and Princely Families in Proper Aghuank and in the Eastern Part of Armenia from Antiquity to the 13th Century (Historical-source Research)*, Yerevan, Gitutyun (in Armenian).
18. Վարդանյան Ա. 2018, Հայոց Արևելից կողմերը V դարի երկրորդ կեսից IX դարի առաջին կեսը, Հայոց պատմություն, հ. II, Երևան, «Ձանգակ», 425–433:
Vardanyan A. 2018, *The Eastern Regions of Armenia from the Second Half of 5th to the First Half of 9th Centuries*, *History of Armenia*, vol. II, Yerevan, Zangak, 425–433 (in Armenian).
19. Ուլուբաբյան Բ. 1976, Արցախի իշխանությունները, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա, 86–92:
Ulubabyan B. 1976, *The Principalities of Artshakh*, *History of the Armenian People*, vol. III, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 86–92 (in Armenian).
20. Гаджиев М. 2003, Гемма-печать царя Албании Асвагена, Вестник древней истории, N 1, 102–119.
Gajiev M. 2003, A Gemma-Seal of Āhzwahēn, king of Caucasian Albania, *Journal of Ancient History*, N 1, 102–119 (in Russian).
21. Хуршудян Э. 2003, Армения и сасанидский Иран, Историко–культурологическое исследование, Алматы, Print-S.
Khurshudyan E. 2003, *Armenia and Sassanian Iran*, *Historical-Culturological Investigation*, Alma-Ata, Print-S (in Russian).
22. Мушегян А. 1989, Псевдоалбанская литература и ее апологеты, Вестник общественных наук, N 8, 16–33.
Mushegyan A. 1989, *Pseudo-Albanian Literature and its Apologists*, *Herald of Social Sciences*, N 8, 16–33 (in Russian).
23. Пигулевская Н. 1941, Сирийские источники по истории народов СССР, Москва-Ленинград, Академия наук СССР.
Pigulevskaya N. 1941, *Syrian Sources about the History of the Peoples of SSSR*, Moscow-Leningrad, Academy of Sciences of the USSR (in Russian).

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՏՈՒԺԱԾ
ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՍՓՅՈՒՌԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**
**THE ROLE OF THE ARMENIAN CHURCH IN ORGANIZING DIASPORA
SUPPORT FOR THE HOMELAND AFFECTED BY THE SPITAK EARTHQUAKE**
**РОЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ОРГАНИЗАЦИИ СОДЕЙСТВИЯ,
ОКАЗАННОГО ДИАСПОРОЙ ПОСТРАДАВШЕЙ ОТ СПИТАКСКОГО
ЗЕМЛЕТРЯСЕНИЯ РОДИНЕ**

Քնարիկ Պետրոսյան
Knarik Petrosyan
Кнарик Петросян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

knarik.petrosyan@academhist.am

Ներկայացվել է՝ 31.07.2025; գրախոսվել է՝ 16.10.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 31.07.2025; Revised: 16.10.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 31.07.2025; рецензировано: 16.10.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-52

Ամփոփում – Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի անկախության հռչակումը լայն հնարավորություններ ստեղծեցին եկեղեցական կյանքի ակտիվացման համար: Աշխուժացավ եկեղեցական, միաբանական, թեմական, հոգևոր-մշակութային կյանքը, կառուցվեցին նոր եկեղեցիներ ու վանքեր, հիմնվեցին նոր թեմեր: 1988–1991 թթ. ընթացքում Մայր Աթոռի գործունեության մեջ առաջնահերթ դարձավ 1988 թ. Սպիտակի երկրաշարժի աղետյալներին մարդասիրական օգնություն հասցնելու գործը: Կարևորվեցին նաև աջակցությունը նորանկախ Հայաստանի Հանրապետությանը, Արցախյան պայքարին ու արցախահայությանը, հայ ժողովրդի հոգևոր կարիքների բավարարումը, հայապահպանությունը Սփյուռքում, ազգային արժեքների սերմանումն ու արմատավորումը հայության մեջ: Հայ Առաքելական Եկեղեցին էական դեր ունեցավ հատկապես Սփյուռքի և միջազգային կառույցների կողմից Հայ Եկեղեցու հասցեով Հայաստանին հատկացված մարդասիրական օգնությունը բաշխելու, երկրաշարժից տուժած Ստեփանավան քաղաքի վերաշինության, Ադրբեջանից բռնագաղթած հայրենակիցներին աջակցություն ցուցաբերելու հարցում: Հետագայում մարդասիրական օգնության ծրագրերը վերաձևեցին երկարաժամկետ զարգացման ծրագրերի, որոնց իրականացման գործում ևս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին անմասն չմնաց: Համահայկական ուղղվածություն ունեցող կարևորագույն խնդիրներում մեծ էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի

և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդի ղերակատարությունը. նրանք պարբերաբար տեղի ունեցող հանդիպումներում արժարժվող արմատական քննարկումների ընթացքում աշխարհի հայերին ուղղված համատեղ հայտարարություններով ուղենշեցին և կյանքի կոչեցին հայրենիքի վերականգնմանն ու վերաշինությանը միտված ծրագրեր: Հայոց եկեղեցու հայրապետների միասնական ու նպատակային համագործակցությունն օրինակ ծառայեց համայն հայության համար, որը ոչ միայն համախմբվեց եկեղեցու շուրջը, այլև հսկայական ռեսուրսներ ներդրեց աղետի գոտու վերականգնման, հայրենակիցներին աջակցելու, հայրենիքի վերելքի և հզորացման համար:

Abstract – The collapse of the Soviet Union and the declaration of Armenia's independence opened up wide opportunities for the revival of church life. Church, monastic, diocesan, spiritual and cultural life became more active, and new churches and monasteries were built and reopened, as well as new dioceses were founded. During 1988-1991, the Mother See prioritized in its activities the provision of humanitarian aid to the victims of the 1988 Spitak earthquake supporting the newly independent Republic of Armenia, Artsakh liberation struggle and the Armenians from Artsakh, meeting the spiritual needs of the Armenian people, preserving the Armenian identity in the Diaspora, and instilling and spreading national values among the Armenian people. The Armenian Apostolic Church played a crucial role, especially in the distribution of humanitarian aid allocated to Armenia addressed to the Armenian Church by the Diaspora and international organizations, furthermore in the reconstruction of the earthquake-affected city of Stepanavan, and in the extremely commendable work of providing assistance to displaced compatriots. Later, the humanitarian aid programs turned into long-term development programs, and the Armenian Apostolic Holy Church did not remain uninvolved in their implementation. Catholicos of All Armenians Vazgen I and Catholicos of the Great House of Cilicia Karekin II played an important role in the most important pan-Armenian affairs. Through regular meetings, radical discussions and joint statements addressed to all Armenians, they outlined and implemented programs aimed at the restoration and reconstruction of the Homeland. The joint and purposeful cooperation of the two Catholicos served as an example for the entire Armenian people, who not only rallied around the Armenian Church, but also invested huge resources in restoring the disaster zone, supporting their compatriots, and raising and strengthening the independent Homeland.

Аннотация – Распад Советского Союза и провозглашение независимости Армении открыли широкие возможности для активизации церковной жизни. Активизировалась церковная, монашеская, епархиальная, духовно-культурная жизнь, были построены новые церкви и монастыри, основаны новые епархии. В 1988–1991 гг. для Первопрестольного Святого Эчмиадзина приоритетной задачей стало оказание гуманитарной помощи пострадавшим от Спитакского землетрясения 1988 г., содействие независимой Республике Армения, Арцахской борьбе и арцахским армянам, удовлетворение духовных потребностей армян, сохранение армянства в Диаспоре. Армянская Апостольская церковь сыграла важную роль особенно в распределении гуманитарной помощи, предоставленной Армении Диаспорой и международными структурами, восстановлении города Степанаван, пострадавшего от землетрясения, оказании помощи депортированным из Азербайджана соотечественникам. В дальнейшем программы гуманитарной помощи превратились в долгосрочные программы развития, в реализации которых Армянская Апостольская церковь также не осталась в стороне. В важнейших делах общearмянской на-

правленности огромную роль сыграли Католикос Всех Армян Вазген I и Католикос Великого Дома Киликийского Гарегин II, наметившие и претворившие в жизнь программы, направленные на восстановление Родины. Совместное и целенаправленное сотрудничество двух католикосов послужило примером для всего армянства, которое не только сплотилось вокруг Армянской церкви, но и вложило огромные ресурсы в восстановление зоны бедствия, в поддержку соотечественников, в укрепление независимой Родины.

Հիմնաբառեր – Հայաստան, Սփյուռք, Եկեղեցի, կաթողիկոս, երկրաշարժ:

Keywords – Armenia, Diaspora, Armenian Church, Catholicos, earthquake.

Ключевые слова – Армения, Диаспора, церковь, Католикос, землетрясение.

Ներածություն

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ ինքնության ու ազգային արժեքների պահպանության ու զարգացման հիմնական կառույցը, մտածելակերպն ու ավանդույթները հետագա սերունդներին փոխանցող կարևորագույն օջախը: Այն նպաստում է ազգային միասնականությանը, հայության համախմբմանն ու առաջընթացին:

Հայոց Եկեղեցին ազդեցիկ հաստատություն է նաև Սփյուռքում, որտեղ իրականացնում է ոչ միայն կրոնական, հոգևոր քարոզչություն և գործունեություն, այլև հանդես է գալիս հայկական համայնքների կրթական և մշակութային կյանքն ակտիվացնելու, աշխարհացրիվ հայությանը համախմբելու հայապահպան առաքելությամբ: Հայոց Եկեղեցին առանձնահատուկ դեր ունի հատկապես Հայրենիք-Սփյուռք հոգևոր-մշակութային կապերը սերտացնելու, հայոց պետականության ամրապնդման գործին սփյուռքահայությանը ներգրավելու ասպարեզում:

1980-ական թվականների վերջին և 90-ականների սկզբին հայ իրականության մեջ տեղի ունեցան լրջագույն փոփոխություններ, որոնք պայմանավորված էին Խորհրդային Միության փլուզմամբ և Հայաստանի անկախացման գործընթացներով: Այդ ամենն ընթանում էր այնպիսի իրավիճակում, երբ տեղի էր ունեցել Սպիտակի ավերիչ երկրաշարժը, և սկսվել էր Արցախյան շարժումը: Հայությունն ամենուրեք ոտքի էր կանգնել օգնելու աղետից տուժած հայրենիքին, ինչպես նաև աջակցելու Արցախյան ազգային-ազատագրական պայքարին: Նման պայմաններում իր ազգանպաստ գործունեությամբ կրկին հանդես եկավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հավատարիմ իր պատմական առաքելությանը, ջանքեր չխնայելով հայրենիքի զարգացման և վերելքի համար:

Հայոց Եկեղեցու դերը Սպիտակի երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում

Խորհրդային Միության փլուզումը, Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանի անկախացման գործընթացը տեղի էին ունենում բավականին բարդ սոցիալ-տնտեսական պայմաններում: Փլուզվել էին Խորհրդային ժամանակաշրջանում գործող տնտեսական ենթակառուցվածքները, փակվել արդյունաբերական ձեռնարկությունները, իսկ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից

Հայաստանի շրջափակումը երկիրը կանգնեցրել էր ծանր խնդիրների առջև: Իրավիճակն ավելի էր բարդացել հատկապես 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից հետո, որն ընդգրկել էր հանրապետության տարածքի 40 տոկոսը՝ 1 միլիոն 130 հազար բնակչությամբ (Հայոց պատմություն 2016, 179):

Գրեթե ողջ աշխարհը սկսեց աննախադեպ մարդասիրական աջակցություն ցուցաբերել, որին անմիջական մասնակցություն ունեցավ նաև Հայկական սփյուռքը: Երկրաշարժի հետևանքները վերացնելու, Հայաստանին օգնություն հատկացնելու գործում կարևոր դեր ստանձնեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: 1988 թ. դեկտեմբերի 9-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն հեռուստատեսությամբ առաջին հերթին սգակիր հայ ժողովրդին ուղղված ցավակցական խոսք ասաց (Սուրեն Շ. Վանեցի 1995, 98), այնուհետև հայրապետական ուղերձով հայությանը կոչ արեց անհապաղ օգնության հասնել հայրենիքին (Սփյուռքահայ կազմակերպություններ 2002, 79; «Հայ սփյուռք» հանրագիտարան 2003, 694):

Դեկտեմբերի 11-ին՝ երկրաշարժից չորս օր անց, կաթողիկոսը եղավ աղետի գոտում, տեսավ արհավիրքի ծանր հետևանքները և սփյուռքահայության ու աշխարհի մյուս եկեղեցիների օգնության հասնելու ջանքերն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու համար ձեռնարկեց համապատասխան միջոցներ (ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 111, թ. 4; Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում 2025, 206):

Անմիջապես արձագանքելով Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչին՝ Հայ եկեղեցին և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում միասնաբար ձեռնամուխ եղավ երկրաշարժի ծանր հետևանքների վերացմանը: Սփյուռքի հայկական համայնքները, մարդասիրական օգնությունից բացի, պատրաստակամություն հայտնեցին իրենց մասնակցությունը բերելու ավերված քաղաքների և գյուղերի վերաշինության գործին:

Երկրաշարժի հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն Կիպրոսից, որտեղ գտնվում էր Միջին Արևելքի եկեղեցիների խորհրդի գործադիր մարմնի ժողովին մասնակցելու համար, հատուկ հեռագիր ուղարկեց Վազգեն Ա կաթողիկոսին՝ հայրենի ժողովրդին հայտնելով իր ցավակցությունը և պատրաստակամությունը զորավիգ կանգնելու աղետյալ հայրենիքին (Հասկ 1988, թիւ 11-12, 601): Նույն օրը Գարեգին Բ-ն հեռաձայնային հաղորդակցության մեջ մտավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (World Council of Churches) հետ՝ խնդրելով Ս. Էջմիածնի միջոցով անմիջական օժանդակություն հասցնել երկրաշարժից տուժածներին (Հասկ 1988, թիւ 11-12, 602): Փաստորեն, Գարեգին Բ-ն օգտագործելով միջեկեղեցական հեղինակավոր հարթակը՝ Սփյուռքի տարբեր համայնքների ուշադրությունն էր հրավիրում անտարբեր չմնալու համազգային խնդիրներին, ինչպես նաև ակնկալում էր քրիստոնյա աշխարհից օգնություն տրամադրել Խորհրդային Հայաստանին:

Վերադառնալով Կիպրոսից՝ Գարեգին Բ-ն դեկտեմբերի 9-ին Անթիլիասում նախագահեց կաթողիկոսության Ազգային կենտրոնական վարչության խառը

ժողովը, որտեղ ծրագրեցին, թե ինչ եղանակներով պետք է կազմակերպեն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության աջակցությունը հայրենի ժողովրդին (Հասկ 1988, թիւ 11-12, 569-570): Կաթողիկոսարանի Մայր տաճարից Գարեգին Բ-ն դեկտեմբերի 11-ին կոչ ուղղեց Կիլիկիո Ս. Աթոռի բոլոր թեմերին, առաջնորդներին, Ազգային ժողովականությանը, հոգևորական դասին և բոլոր կազմակերպություններին, միություններին ու հաստատություններին, որ իրենց «լիագոյն եւ լայնագոյն» բաժինը բերեն հայրենիքի օժանդակության գործին և հետագա վերակառուցման և «վերականգնումի» հիմնական աշխատանքներին (Հասկ 1988, թիւ 11-12, 570):

Գարեգին Բ-ն պարբերաբար ուղղակի հաղորդակցության մեջ էր մտնում Վազգեն Ա-ի և ՀՀ պետական ներկայացուցիչների հետ՝ իրազեկ դառնալով հայրենիքի կարիքներին, առաջնահերթություններին և Ազգային կենտրոնական վարչության ու թեմերի գործակցությամբ կազմակերպում էր կաթողիկոսության համահայկական և համաշխարհային օգնության գործը:

Գարեգին Բ-ի կոչով կաթողիկոսության թեմերում շտապ օգնության համար սկսված ժողովրդական հանգանակության աշխատանքներն ընթանում էին մեծ թափով՝ առաջին անհրաժեշտության օժանդակություններն ամենաարագ ձևով հատկացնելու աղետյալներին: Կիլիկիո Աթոռի բոլոր թեմերին հղվեցին հատուկ նամակներ, և ցուցմունքներ տրվեցին առաջիկա գործունեության համար, որոնք ճշտվելու էին Վազգեն Ա կաթողիկոսի, հայրենի իշխանությունների և այլ պատասխանատու անձանց ու կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո:

Առաջին անհրաժեշտության օգնության և կազմակերպական ու վերաշինության գործի հետագա ծրագրերը քննարկելու նպատակով 1988 թ. դեկտեմբերի 15-ին Գարեգին Բ-ն ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ կաթողիկոսության միաբան, գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոս Ազնավորյանի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի ատենապետ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Խաչիկ Պապիկյանի ուղեկցությամբ (Էջմիածին 1988, նոյեմբեր-դեկտեմբեր, 24): Դեկտեմբերի 17-ին Գարեգին Բ-ն մեկնեց երկրաշարժից ավերված Գյումրի և Սպիտակ քաղաքները և ականատես եղավ աղետի ծանր հետևանքներին:

Դեկտեմբերի 15-20-ը հայրենիք այցի ընթացքում Գարեգին Բ-ն հանդիպեց ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի, ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանի հետ, այցելեց Էջմիածնի քաղաքային հիվանդանոցում երկրաշարժից տուժածներին, իսկ դեկտեմբերի 18-ին Սուրբ Էջմիածնում Վազգեն Ա-ի հետ մասնակցեց երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստյան պատարագին (Հասկ 1988, թիւ 11-12, 523-567): Պատարագի ընթացքում Գարեգին Բ-ն ընտրվելու կապակցությամբ իրեն տրված հայրապետական ոսկե արծիվը դրեց սուրբ խորանին՝ իբրև ապագա նվիրահավաքության հիմք և բոլորի առջև ուխտեց հնարավոր ամեն ինչ անել իր ժողովրդի

վերքերի ապաքինման և վերականգնման համար (Հասկ 1988, թիւ 11-12, 549, 580, 588):

1988 թ. դեկտեմբերի 19-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն հանդես եկան համատեղ կոչով՝ համայն հայությանը հորդորելով «մեկ սիրտ և մեկ կամք դարձած» շարունակել օժանդակության աշխատանքները և նպաստել տարերային աղետից կործանված քաղաքների և շենքերի վերակառուցման գործին (ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 4-6; Էջմիածին 1988, նոյեմբեր-դեկտեմբեր, 16; Հասկ 1988, թիւ 11-12, 581-583; Պետրոսյան 2011, 173-174; Վազգեն Ա նամականի 2018, 124-127; Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում 2025, 216-218): Իրենց եկեղեցական կենտրոններին և համայնքներին ուղղված գործնական առաջադրանքների առումով կարևոր էր համազգային հանգանակության գործը կատարել լիակատար միասնությամբ և հանգանակված գումարները հատկացնել նախօրոք ճշտված ու ծրագրված նպատակների իրականացմանը:

Կաթողիկոսների կոչին հետևեց աննախադեպ աջակցությունը. աղետից տուժածներին օգնելու նպատակով Հայաստան էին ուղարկվում սննդամթերք, բժշկական սարքավորումներ, դեղորայք, հագուստ: Հայ Առաքելական եկեղեցին դարձավ օգնություն ստանալու և բաշխելու կենտրոններից մեկը:

Անթիլիաս վերադառնալուց անմիջապես հետո համահայկական և միջ-համայնքային, միջկուսակցական նպաստահավաքի աշխատանքներին մեկնարկ տալու նպատակով Գարեգին Բ-ն խորհրդակցություններ ունեցավ ազգային-քաղաքական կուսակցությունների գերագույն մարմինների ներկայացուցիչների հետ, հանդիպեց նաև հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Հովհաննես-Պետրոս ԺԸ պատրիարքի և Հայ ավետարանական եկեղեցու Միջին Արևելքի եկեղեցիների նախագահի փոխանորդ, վերապատվելի Սաղըրյանի հետ (Հասկ 1988, թիւ 11-12, 599):

Հայ Առաքելական եկեղեցու հետևողական աշխատանքի շնորհիվ երկրաշարժի առաջին իսկ օրվանից Մայր Աթոռի հասցեով ստացված հազարավոր տոննաներով օգնությունը եկեղեցին բաշխում էր աղետի գոտու բոլոր հասցեներով: Այդ աշխատանքն իրագործում էր երկրաշարժից անմիջապես հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից ստեղծված հանձնաժողովը, որը ստանում և աղետյալներին էր բաժանում արտասահմանից Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված առաջին անհրաժեշտության ապրանքները՝ հագուստ, դեղորայք, բժշկական սարքավորումներ, սննդամթերք, վերմակներ, վրաններ, խոհանոցային պիտույքներ և այլ պարագաներ (Էջմիածին 1989, հունուար, 28; Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում 2025, 206-207): Բացի վերոնշյալ ապրանքներից, 1989 թ. փետրվարի դրությամբ Մայր Աթոռը երկրաշարժից անօթևան մնացածներին տրամադրել էր 2,5 միլիոն ռուբլի (Էջմիածին 1989, փետրուար-մարտ, 42): Մայր Աթոռի ներքին՝ հատկապես Արարատյան, Շիրակի, Արցախի ու Ռուսաստանի եկեղեցական թեմերը լայնածավալ օգնություն հասցրեցին երկրաշարժից տուժածներ-

րին, ծնողազուրկ երեխաներին, ինչպես նաև Սումգայիթից, Կիրովաբադից (Գանձակ) ու Բաքվից հեռացած փախստականներին և մարտնչող արցախահայությանը (Էջմիածին 1992, դեկտեմբեր, 17):

Համազգային վերականգնման գործին իրենց լայն մասնակցությունը բերեցին նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմերը: Կաթողիկոսության բոլոր՝ Ամերիկայի, Իրանի, Քուվեյթի, Կիպրոսի, Սիրիայի թեմերից առաջնորդներ և ազգային իշխանության ներկայացուցիչներ ժամանեցին Հայաստան և Վազգեն Ա կաթողիկոսի հետ համախորհուրդ՝ իրենց օժանդակությունը բերեցին մի շարք ծրագրերի իրագործման համար:

1989 թ. ապրիլի 21–29-ին Գարեգին Բ-ն երկրորդ անգամ ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հայրենիքում միասնաբար ոգեկոչելու համար (Էջմիածին 1989, ապրիլ–մայիս-յունիս, 8, 12; Հասկ 1989, թիւ 4–5, 177): Գարեգին Բ-ն Մեծի Տանն Կիլիկիո առաջին հայրապետն էր, որը Ս. Էջմիածին էր այցելում Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական հրավերով: Կարևորելով աղետյալներին օգնություն կազմակերպելու հարցում երկու հայրապետների համագործակցությունը, մասնավորապես երկու ամիս առաջ տեղի ունեցած նրանց հանդիպումը ԱՄՆ-ում՝ Գարեգին Բ-ն նշել է. «...ի՞նչ մեծ մխիթարութիւն եղաւ ամբողջ Ամերիկահայութեան համար եւ նաեւ ամբողջ աշխարհի հայութեան համար, որոնք լսեցին մեր երկուքի արտայայտութիւնները, այդ միասնական կեցուածքը որուն մէջէն արտայայտուեցաւ անքակտելի միութիւնը եւ ամբողջականութիւնը մեր եկեղեցիին եւ մեր ազգին» (Էջմիածին 1989, ապրիլ–մայիս-յունիս, 14; Հասկ 1989, թիւ 4–5, 183):

Ապրիլի 22-ին երկու հայրապետները պաշտոնապես այցելեցին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկրաշարժի հետևանքների վերացման և Հայաստանի ավերված շրջանների վերականգնման, Հայրենիք-Սփյուռք կապերի հետագա սերտացման և հայությանը հուզող այլ հարցեր: Ներկայացվեց հայրենիքի համար այդ դժվարին օրերին Հայոց եկեղեցու կատարած ահռելի դերը երկրաշարժի հետևանքների վերացման, վերաշինության ու վերականգնման կենսական գործում:

Գարեգին Բ-ն ապրիլի 25-ին այցելեց աղետի գոտի, եղավ Գյումրիում, Սպիտակում, Ստեփանավանում, Վանաձորում և վերականգնման աշխատանքներին սատարելու նպատակով Մայր Աթոռին նվիրաբերեց հարյուր հազար դոլար (Էջմիածին 1989, ապրիլ–մայիս-յունիս, 24–25; Հասկ 1989, թիւ 4–5, 266, 272; Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում 2025, 219: Գումարը հատկացվեց Գյումրու Յոթ վերք Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման համար: 1991 թ. դրությամբ եկեղեցին արդեն վերանորոգվել էր, և կանոնավոր կերպով կատարվում էին եկեղեցական արարողությունները):

Աղետի գոտու վերաշինության ծրագրերի առնչությամբ ապրիլի 28-ին Գարեգին Բ-ն գործնական հանդիպում ունեցավ Հայաստանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Լևոն Սահակյանի հետ (Էջմիածին 1989, ապ-

րիլ-մայիս-յունիս, 9; Հասկ 1989, թիւ 4-5, 252-253), որը նաև երկրաշարժից ավերված շրջանների վերակառուցման համար կազմված պետական մասնավոր հանձնաժողովի նախագահն էր: Պետական իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում Գարեգին Բ-ն ընդգծում էր, որ հայրենիքի վերականգնմանն ուղղված Սփյուռքի հայության բերելիք բաժինը չնկատեն և չբնորոշեն որպես օժանդակություն, այլ՝ մասնակցություն (Հասկ 1989, թիւ 4-5, 149):

Այցելության ավարտին՝ 1989 թ. ապրիլի 29-ին, երկու հայրապետները ստորագրեցին համատեղ հաղորդագրություն, որտեղ անդրադառնալով երկրաշարժի ծանր հետևանքներին, ինչպես նաև 1989 թ. փետրվարի սկզբին իրենց կողմից Նյու Յորքում արված կոչերին, կրկին կոչ էին անում Սփյուռքի հայկական եկեղեցիներին ու հայկական բոլոր կազմակերպություններին շուտափույթ կերպով իրենց լիազոր ներկայացուցիչներն ուղարկել Հայաստան, և վերաշինության պատասխանատու պատկան մարմնի հետ համախորհուրդ, ճշտել իրենց օգնության բնույթը և այն իրագործել առաջիկա ամիսներին (ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 34-37; Էջմիածին 1989, ապրիլ-մայիս-յունիս, 28; Հասկ 1989, թիւ 4-5, 273; Հայոց եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում 2025, 219):

Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները այդ համազգային ծանր օրերին կարևորում էին հայության միասնականությունը՝ «մեկ եկեղեցի, մեկ ազգ, մեկ Մայր հայրենիք» նշանաբանով, որն առավել ամրապնդվել էր երկուստեք հանդիպումներով ու գործակցությամբ Մայր հայրենիքում երկրաշարժից անմիջապես հետո և ապա 1989 թ. փետրվարին Նյու Յորքում ամերիկահայության կատարած հանգանակությունները բաշխելու առիթով: Դարձյալ հաստատում և ավետում էին հավատացյալ ժողովրդին և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում, որ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին մեկ ու անբաժան ազգային եկեղեցի է՝ խարսխված Ս. Գրիգոր Լուսավորչի հավատքի վրա և պատմականորեն նվիրագործված մոտ 1700 տարիներ ի վեր:

Վերադառնալով Լիբանան՝ Գարեգին Բ-ն 1989 թ. մայիսի 7-ին Անթիլիասի Մայր տաճարում քարոզի ընթացքում անդրադառնալով իր այցին՝ կարևորեց Սփյուռքի անվերապահ մասնակցությունը հայրենիքի վերականգնման գործին, ինչպես նաև հանձնառություններ ստանձնած Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության բոլոր թեմերին ու բարեսիրական կազմակերպություններին կոչ ուղղեց արագ գործել հայրենիքի վերակառուցման համար (Հասկ 1989, թիւ 4-5, 149):

Երկրաշարժի հետևանքների վերացման գործում կարևոր դերակատարության համար Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն ՀԽՍՀ գերագույն խորհրդի և Նախարարների խորհրդի կողմից 1990 թ. պարգևատրվեց հուշամեդալով ու պատվոգրով (Հասկ 1990, թիւ 8-12, 661):

Գարեգին Բ-ն հերթական անգամ հայրենիք այցելեց 1991 թ. հունիսի 8-22-ին՝ Վազգեն Ա կաթողիկոսի հրավերով, Դեր Զորի Սրբոց նահատակաց եկեղեցու օծումից մեկ ամիս անց: Երկշաբաթյա ուխտագնացության ընթացքում Գարե-

գին Բ-ն այցելեց Այրարատյան, Շիրակի, Սյունյաց, Գուգարաց թեմերը (Հասկ 1991, թիւ 6-7, 258-334), մասնակցեց պատարագի Երևանի Ս. Սարգիս եկեղեցում:

Կաթողիկոսները եղան Ծիծեռնակաբերդում, ծաղկեպսակ դրեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, հանդիպեցին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, որը, բարձր գնահատելով Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու առաքելությունը ինչպես անցյալում, այնպես էլ նորանկախ հանրապետության համար դժվարին ժամանակներում, հայրապետներին ներկայացրեց հայրենի իշխանությունների կողմից կատարվող աշխատանքներն ու ծրագրերը (Էջմիածին 1991, ապրիլ-մայիս-յունիս, 15):

Հունիսի 13-ին երրորդ անգամ այցելելով աղետի գոտի՝ Գարեգին Բ-ն, եղավ Գյումրիում, Սպիտակում: Գյումրիում նորակառույց բնակելի թաղամասեր այցելելուց հետո քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ երկրաշարժի նահատակների (Էջմիածին 1991, ապրիլ-մայիս-յունիս, 15):

Իր այցելության ընթացքում Գարեգին Բ-ն ամենուր ներկայացնում էր 1991 թ. մայիսի 5-ին Դեր Զորում բացված Սրբոց նահատակաց եկեղեցու խորհուրդը, կարևորում էր Հայրենիք-Սփյուռք միասնությունը, հայության առաջնահերթությունների հետևողական առաջ մղումն ու պայքարը հայոց ոտնահարված իրավունքների վերականգնման համար:

Աղետի հետևանքները վերացնելու գործում, անշուշտ, կարևոր դեր ունեին նաև Հայ Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական աթոռներն ու արտասահմանյան թեմերը: Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը 1991 թ. մարտին այցելեց հայրենիք: Մարտի 18-ին Վազգեն Ա-ն և Թորգոմ արքեպիսկոպոսը ՀՀ գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ քննարկեցին Հայ Եկեղեցուն և հայրենի պետությանը հուզող բազմազան հարցեր (Էջմիածին 1991, ապրիլ-մայիս-յունիս, 24):

While Qatar's mediation initiatives have not always led to the full resolution of conflicts, they have consistently contributed to easing tensions and reducing violence in the aforementioned conflicts. Even in cases where it was impossible to maintain lasting peace, the mediation mission managed to achieve a ceasefire. In this sense, Qatar's mediation mission can be considered successful.

Ultimately, Doha's involvement in conflicts such as those in Yemen, Sudan, and Lebanon marked the beginning of a broader strategic trajectory that matured during the Arab Spring. These mediation experiences laid the foundation for Qatar's redefined foreign policy, which actively projects its "soft power" across the Arab world. Qatar's mediation diplomacy exemplifies the interplay between soft power and role theories in shaping the foreign policy of small states. Qatar's foreign policy

demonstrates how small states can use soft power and role performance to achieve disproportionate status in a competitive international hierarchy.

Acknowledgment

I want to express my sincere gratitude to my scientific supervisor, Dr. Assoc. Prof. Araks Pashayan, for her invaluable guidance, encouragement, and support throughout the development of this article. Her insightful feedback, deep expertise, and continuous dedication greatly contributed to the quality and direction of my work.

References/ Գրականություն/Литература

1. Badanjak S. 2023, Third Parties in Peace Agreements: First Look at New Data and Key Trends, PeaceRep, University of Edinburgh.
2. Bakri N., Cowell A. 2008, Lebanese Reach Agreement to Resolve 18-month Political Crisis, The New York Times, <https://www.nytimes.com/2008/05/21/world/africa/21iht-lebanon.4.13105564.html> (Accessed on: 03.05.2025).
3. Barakat S. 2014, Qatari Mediation: Between Ambition and Achievement, Washington, Brookings Institution.
4. BBC News 2023, Yemen Crisis: Why is there a War? <https://www.bbc.com/news/world-middle-east-29319423> (Accessed on: 19.05.2025).
5. Blanford N. 2008, Qatari Deal Defuses Lebanese Crisis, Christian Science Monitor, <https://www.csmonitor.com/World/Middle-East/2008/0522/p01s05-wome.html> (Accessed on: 08.05.2025).
6. Bukin A. 2014, Intermediate Policy of Qatar in Arab Countries, Bulletin of the Russian University of People's Friendship, Series: International relations, N 3, 96–100 (in Russian).
7. Ghobari M. 2008, Qatar Tries to Salvage Faltering Yemen Ceasefire, <https://www.reuters.com/article/economy/qatar-tries-to-salvage-faltering-yemen-ceasefire-idUSLO4365487/> (Accessed on: 11.06.2025).
8. Gulbrandsen A. 2010, Bridging the Gulf: Qatari Business Diplomacy and Conflict Mediation, Doctoral Dissertation, Georgetown University.
9. Harutyunyan L. 2012, Lebanon between Political Crises and Relative Stability, Contemporary Eurasia, N 1/2, Institute of Oriental Studies, NAS RA, 5–19.
10. Holsti K. 1970, National Role Conceptions in the Study of Foreign Policy, International Studies Quarterly, N 14/3, 233–309.
11. International Crisis Group 2009, Yemen: Defusing the Saada Time Bomb, Middle East Report, N 86, 35.
12. Kamrava M. 2011, Mediation and Qatari Foreign Policy, The Middle East Journal, N 65/4, The Middle East Institute, 539–556.

-
13. Karamalla-Gaiballa N. 2017, The Qatari Efforts to Resolve the Armed Conflict in Darfur – The Challenges and Obstacles, *International Journal of Sudan Research*, N 7/1, 57.
 14. Nye J. 2008, Public Diplomacy and Soft Power. *The Annals of the American Academy of Political and Social Science*, N 616/1, 94–109.
 15. Palik J. Rustad S. 2019, Mediation in the Yemeni Civil War: Actors, Outcomes, and Lessons Learned, *Peace Research Institute Oslo*, 4.
 16. Schenker D. 2008, Lebanese Crisis Ends: Hezbollah Victory or Temporary Truce? *Policy-watch*, 1375.
 17. Shinn D. 2004, Addis Ababa Agreement: was it Destined to Fail and are there Lessons for the Current Sudan Peace Process? *Annales d’Ethiopie*, N 20/1, 239–259.
 18. Sudam M. 2007, Yemeni Rebels Agree Truce with Government, *reuters.com*, <https://www.reuters.com/article/us-yemen-rebels-ceasefire-idUSL1651527520070616> (Accessed on: 07.06.2025).
 19. Sudan Tribune 2009, *TEXT: Goodwill and Confidence-building Agreement to Resolve Darfur Conflict*, *Plural News and Views on Sudan*, <https://sudantribune.com/article/30081> (Accessed on: 14.05.2025).
 20. United Nations 2011, UN Welcomes Accord Signed between Sudan and Darfur Rebel Group, *United Nations News*, *news.un.org*, <https://news.un.org/en/story/2011/07/381652-un-welcomes-accord-signed-between-sudan-and-darfur-rebel-group> (Accessed on: 25.05.2025).
 21. United Nations, African Union Hybrid Operation in Darfur, Doha document for peace in Darfur, *unamid.unmissions.org*, <https://unamid.unmissions.org/doha-document-peace-darfur> (Accessed on: 21.05.2025).

**ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆՈՎ
ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ (2012–2018 ԹԹ.)**

**SUPPORT IN PROVIDING ACCOMMODATION AND HOUSING TO
SYRIAN-ARMENIAN REPATRIATES (2012–2018)**

**СОДЕЙСТВИЕ В ПРЕДОСТАВЛЕНИИ УБЕЖИЩА И ЖИЛЬЯ
АРМЯНАМ-РЕПАТРИАНТАМ ИЗ СИРИИ (2012–2018 ГГ.)**

Քնարիկ Ավագյան
Knarik Avagyan
Кнарик Авакян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

knarik.avakian@academhistory.am

Ներկայացվել է՝ 01.04.2025; գրախոսվել է՝ 17.10.2025; ընդունվել է՝ 10.12.2025

Received: 01.04.2025; Revised: 17.10.2025; Accepted: 10.12.2025

Представлено: 01.04.2025; рецензировано: 17.10.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-98

Ամփոփում – 2012 թ. սիրիահայերի՝ դեպի Հայաստան առանձնապես ստվարացած հոսքը առաջ բերեց նրանց կացարանով և բնակարանով ապահովելու հրատապ անհրաժեշտություն: Եվ քանի որ այդ հարցը ՀՀ իշխանությունների մտահոգության առարկան դարձավ, ուստի ձեռնարկած քայլերի շնորհիվ չի արձանագրվել առանց կացարանի մնացած ոչ մի սիրիահայ: Թեպետ Հայաստան ժամանած սիրիահայ ընտանիքների համար միանվագ ֆինանսական աջակցություն չի եղել, բնակարանի ձեռքբերման հարցում սիրիահայերը որևէ արտոնություն չեն ունեցել, սակայն նրանց ճնշող մեծամասնությունը օգտվել է բնակվարձի փոխհատուցման իրավունքից: ՀՀ սփյուռքի նախարարության ձեռնարկած օպերատիվ և անհետաձգելի միջոցառումների, ինչպես նաև համասփյուռքյան ու միջազգային տարբեր կազմակերպությունների գործակցությամբ ցուցաբերված ֆինանսական աջակցության շնորհիվ կացարանով ու բնակարանով ապահովվել են Հայաստան ժամանած բոլոր սիրիահայերը: Այնպես որ, ի տարբերություն օտար երկրներում հայտնված մեր հայրենակիցների, ոչ մի նորեկ դրսում չի մնացել: Հանրապետության նախագահի հանձնարարությամբ և Կառավարության 2013 թ. հունիսի 6-ի որոշման համաձայն՝ մեկնարկել է բնակարանաշինության «Նոր Հալեպ» ծրագիրը Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում, որը, սակայն, չիրականացավ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Հայաստանում սիրիահայերի համար բնակարան

կառուցելու գործն իրականացվել է բարեգործական ծրագրի, ինչպես նաև անհատ սիրիահայերի նախաձեռնության շնորհիվ:

Abstract – In 2012, in the conditions of a particularly large influx of Syrian Armenians to Armenia, one of the most important issues was providing them with housing and apartments. And since this issue was a matter of concern for the RA authorities, no Syrian-Armenians were recorded as being left without housing. Although there was no one-time financial assistance for Syrian-Armenian families arriving in Armenia, Syrian-Armenians did not benefit from any privileges in the matter of acquiring an apartment, the overwhelming majority used the right to compensation for housing costs. Thanks to the operational and urgent measures taken by the RA Ministry of Diaspora, as well as the financial assistance provided in cooperation with various pan-Diaspora and international organizations, all Syrian-Armenians arriving in Armenia were provided with housing and apartments. So, unlike our compatriots who ended up in foreign countries, no newcomer was left outside. By order of the RA President and according to the decision of the Government of 2013, June 6, the "New Aleppo" housing construction project was launched in the city of Ashtarak, Aragatsotn region, but was not implemented due to lack of financial resources. The work of building housing for Syrian-Armenians in Armenia was carried out thanks to a charitable program, as well as the initiative of an individual Syrian-Armenian.

Аннотация – В 2012 году, в условиях интенсивного притока сирийских армян в Армению, одним из важнейших вопросов стало обеспечение их жильём и квартирами. И поскольку этот вопрос был предметом обеспокоенности властей РА, ни один сирийский армянин не остался без жилья. Хотя и единовременной финансовой помощи семьям сирийских армян, прибывающих в Армению, не предоставлялось, и сирийские армяне не пользовались какими-либо льготами в вопросе приобретения квартиры, но подавляющее большинство воспользовалось правом на компенсацию расходов на жильё. Благодаря оперативным и неотложным мерам, принятым Министерством диаспоры РА, а также финансовой помощи, оказанной при сотрудничестве с различными общедиаспоральными и международными организациями, все сирийские армяне, прибывшие в Армению, были обеспечены жильём и квартирами. Таким образом, в отличие от наших соотечественников, оказавшихся в дальнем зарубежье, сирийские армяне не остались без крова. По поручению Президента РА и Правительства от 6 июня 2013 года в городе Аштарак Арагацотнской области стартовал проект жилищного строительства «Новый Алеппо», однако он не был реализован из-за нехватки финансовых средств. Работа по строительству жилья для сирийских армян в Армении осуществлялась благодаря благотворительной программе, а также инициативе отдельных сирийских армян.

Հիմնաբառեր – Սիրիա, համայնք, հայրենադարձություն, կացարան, բնակարան:

Keywords – Syria, community, repatriation, shelter, accommodation, housing.

Ключевые слова – Сирия, община, репатриация, убежище, жильё.

Ներածություն

2012 թ. հուլիսից սիրիահայերի՝ դեպի Հայաստան առանձնապես սովա-
րացած հոսքի պայմաններում սիյուռքի նախարարությունը (այսուհետև՝ ՄՆ,

նախարար՝ Հրանուշ Հակոբյան, 2008–2018 թթ.) Հանրապետության նախագահի (Սերժ Սարգսյան, 2008–2018 թթ.) հանձնարարությամբ լծվել է Սիրիայից հայրենադարձների կարիքները հոգալու գործին (Համաժողովներ 2017, 1, www.mindiaspora.am): Արդեն 2012 թ. սեպտեմբերի 22-ին ՄՆ-ում ձևավորվել է սիրիահայերի բնակարանային, աշխատանքային, առողջապահական, կրթական հարցերով զբաղվող ոլորտային աշխատանքային չորս ենթախումբ (Պետական քաղաքականություն, <http://www.mindiaspora.am>): Սիրիահայերի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից էր նրանց կացարանով և բնակարանով ապահովումը: Նշենք, որ, ընդհանուր առմամբ, 2012–2018 թթ. ավելի քան 22.000 սիրիահայ է ներգաղթել Հայաստան (Սիրիահայերի մասին 2017, www.nyut.am; Lieberman 2017, www.devex.com):

Աջակցություն սիրիահայերին կացարանով ապահովման խնդիրներին

Հայաստան ժամանած որոշ սիրիահայեր ՄՆ են դիմել կացարանով ապահովվելու խնդրանքով: ՀՀ-ում սիրիահայերին կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով ՄՆ-ն համագործակցել է տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության (ՏԿՆ ՄՊԾ) հետ՝ մշտապես իրազեկելով կացարան ցանկացողների մասին: 2012 թ. հոկտեմբերի տվյալներով, այդ հարցով ՄՆ է դիմել ընդհանուր առմամբ շուրջ 90 մարդ:

ՏԿՆ ՄՊԾ ներկայացրած տվյալների համաձայն՝ Երևանի Նոր Նորքի 2-րդ զանգվածի և Մասիսի շրջանի Դարբնիկ գյուղի կացարաններում տեղավորվել է 90 ընտանիք՝ 214 անդամով: Ծառայության հաղորդմամբ՝ «սուր է կացարանների ապահովման խնդիրը». թեև սպառվել են իրենց տրամադրության տակ եղած բոլոր ռեզերվները (ներառյալ ազատ սենյակները, մահճակալային ֆոնդը և այլն), այդուհանդերձ, շարունակվել են կացարանի համար նոր դիմումները: 2012–2014 թթ. ժամանակավոր կացարանով կամ բնակարանային վարձով ապահովվելու խնդրանքով ՄՆ և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ (այսուհետև՝ ՍՀՀԿ ՀԿ, նախագահ՝ Լենա Հալաճյան) դիմել է սիրիահայ 1.041 ընտանիք՝ 4.000-ից ավելի անդամով (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 115, 117; ց. 3, գ. 51, թ. 44):

Ընդ որում, նշված ժամանակահատվածում ՏԿՆ ՄՊԾ, Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ), Հայ կաթողիկե եկեղեցու, «Հայկական կարիտաս» բարեգործական կազմակերպության, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության, «Առաքելություն Հայաստան» բարեգործական կազմակերպության, ինչպես նաև անհատ բարերարների աջակցությամբ և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ֆինանսավորմամբ կացարանով ապահովվել է շուրջ 700 ընտանիք (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 115):

ՄՆ-ի տվյալներով՝ պետության տրամադրած կացարաններում 2012 թ. նոյեմբերին բնակվել է 100-120 սիրիահայ ընտանիք, իսկ արդեն 2014 թ. սկզբին՝ 200 սիրիահայ: Ընդհանուր առմամբ, 2014 թ. սկզբին պետական բոլոր այն կառույցները, որոնք հնարավոր էր տրամադրել սիրիահայերին որպես ժամանա-

կավոր կացարան, արդեն իսկ շահագործված էին (Ամբողջական տվյալներ 2012, www.panarmenian.net; Balkhian 2014, www.armenianweekly.com):

Մինչև 2015 թ. հուլիսը ՄԱԿ ՓԳՀ-ն «Առաքելություն Հայաստանի» միջոցով կարգավորել է շուրջ 12 սենյակ-կացարան միայնակ տարեցների համար: ՄՊԾ-ի կողմից գործող ապաստան փնտրողների կենտրոնը բնակեցված էր: Այն բացառապես նրանց համար էր, ովքեր տեղահանվել էին Սիրիայից, տակավին ձեռք չէին բերել հայկական քաղաքացիություն և դիմել էին ՀՀ-ում քաղաքական ապաստանի: ՄՊԾ-ի համարկման տունը ժամանակավոր կարգով կարող էր տեղավորել փախստական 4–5 ընտանիք (մինչև 20 անձ) (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 119, թ. 56):

Ընդհանուր առմամբ, 2012–2015 թթ. ընթացքում մի քանի տասնյակ բնակարաններ են վերանորոգվել ՏԿՆ ՄՊԾ-ի ջանքերով և ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի տրամադրած ֆինանսական միջոցներով, որի շնորհիվ արդեն 2016 թ. դրությամբ 144 սիրիահայ տեղավորվել է ՄՊԾ-ի հատուկ կացարանում և հանրակացարաններում (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 65, թ. 78; գ. 71, թ. 23):

Աջակցություն սիրիահայերին բնակարանով ապահովման և վարձավճարի խնդիրներին

Հայաստանում Սիրիայից հայրենադարձ ընտանիքները բնակություն են հաստատել հիմնականում Երևանում, ինչպես նաև Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արարատի մարզերում (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 81, թ. 45):

Հայրենիք փոխադրվածների համար լուրջ խնդիր էր նաև բնակարանով ապահովման հարցը (В Сирии осталось 2015, www.iragir.am): Հայաստանում սիրիահայերի կեցության խնդիրները մեծապես հաջողվել է լուծել շնորհիվ տարբեր անհատների, հասարակական, բարեգործական, սփյուռքի կազմակերպությունների միջոցներով սիրիահայ կարիքավոր ընտանիքներին ժամանակավոր կացարաններ տրամադրելով, ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի, տեղական, համահայկական և միջազգային հասարակական կազմակերպությունների համաֆինանսավորմամբ իրականացվող բնակավարձերի փոխհատուցման ծրագրի շնորհիվ (Համաժողովներ 2017, 1, www.mindiaspora.am):

Միևնույն ժամանակ, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (ՏԿԱԻՆ), ՄՊԾ-ի ջանքերով և ՄԱԿ ՓԳՀ-ի տրամադրած միջոցներով 2012–2014 թթ. ընթացքում վերանորոգվել է մի քանի տասնյակ բնակարան (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 63, թ. 9):

Մասնավոր ձեռնարկությունների հետ խորհրդակցելով՝ ՍՀՀ ՀԿ-ի միջոցով սիրիահայերին առաջարկվել են Երևանում համեմատաբար ցածր գներով բնակարան ձեռք բերելու տարբերակներ, որոնք, սակայն, նշանակալի արդյունք չեն տվել (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 55, թ. 68):

Սիրիահայերին աշխատանքով և բնակարանով ապահովելու առաջարկությամբ են հանդես եկել նաև ԼՂՀ իշխանությունները: Համագործակցության շնորհիվ՝ 2012 թ. հոկտեմբերին 2 ընտանիք բնակություն է հաստատել ԼՂՀ-ում: Եվս

3-ը պատրաստվել են տեղափոխվել: ՍՆ դիմած ընտանիքներից 16-ն ունեն նյութական օժանդակության կարիք (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 115):

ՍՆ հաղորդման համաձայն՝ «Հայաստանում մշտական բնակություն հաստատած սիրիահայերի գերակշռող մասը բնակվում է Երևան քաղաքում՝ իրենց կողմից վարձակալած բնակարաններում: Սիրիահայ խոցելի ընտանիքների բնակվարձերի փոխհատուցումն (60 հզ ՀՀ դրամի սահմաններում) առաջին 3–15 ամիսների ընթացքում իրականացվում է համահայկական, բարեգործական, հասարակական և միջազգային կառույցների աջակցությամբ» (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 75, թ. 100):

2013 թ. հունվարի դրությամբ Երևանի քաղաքի 12 վարչական շրջաններից 11-ում բնակվել է սիրիահայ 1.372 անձ (489 ընտանիք) (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 82, թ. 58) (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1

ՏԵՂԵԿԱՆՔ			
Երևանի տարբեր վարչական շրջաններում բնակվող սիրիահայերի վերաբերյալ (2013 թ. հունվար)			
№	Վարչական շրջան	Ընտանիքների թիվը	Անձերի թիվը
1.	Կենտրոն	190	458
2.	Արաբկիր	132	375
3.	Էրեբունի	32	107
4.	Քանաքեռ-Զեյթուն	36	100
5.	Շենգավիթ	26	89
6.	Նոր Նորք	25	73
7.	Մալաթիա-Սեբաստիա	18	62
8.	Աջափնյակ	11	37
9.	Նորք-Մարաշ	6	30
10.	Ավան	8	26
11.	Դավթաշեն	5	15
12.	Նուբարաշեն	-	-
Ընդամենը՝		489	1372

Սիրիահայերի համար դժվարություն հարուցող հանգամանք էր բնակարանային վարձի վճարման հարցն ընդհանրապես և, մասնավորապես, բարձր վճարումների հանգամանքը Երևանի կենտրոնում: Ուստի շատերը, ի վիճակի չլինելով վճարել բնակարանային վարձը կամ գումար տնտեսելու նպատակով, սկսել են կենտրոնից տեղափոխել արվարձաններ: Եթե կենտրոնում բնակարանային վարձի համար պետք է վճարեին 700 դոլարին համարժեք դրամ, ապա Կոմիտաս, Զեյթուն թաղամասերում կամ քաղաքից դուրս՝ մարզերում, այն անհամեմատ մատչելի էր («Սիրիահայերն սկսեցին փոխել իրենց տները...» 2013, www.hayernaysor.am):

Մինչև 2015 թ. ներառյալ ժամանակավոր կացարանով և բնակարանային վարձով ապահովվելու խնդրանքով ՍՆ և ՍՀՀԿ ՀԿ դիմել է 1.686 ընտանիք՝

4.000-ից ավելի անդամով: Իսկ արդեն 2017 թ. բնակարանի վարձի ապահովման հարցով նախարարություն է դիմել 156 անձ, որոնք փոխհատուցում են ստացել ՄԱԿ ՓԳՀ վարչության կողմից՝ խոցելիության աստիճանից ելնելով 3–12 ամսվա համար (Չաքարյան 2018, 571):

Անշուշտ, այդ բոլորը ժամանակավոր միջոցներ են եղել, մինչդեռ Կառավարության «ոազմավարական նախագծի հիմքում դրված էր սոցիալական բնակարանների ապահովման հարցը, քանի որ Սիրիայի պատերազմը շատերին ստիպել է ընդմիջտ Հայաստանում մնալ», – նշել է նախարարության պատասխանատուն՝ հավելելով, որ դրանից բխում է նաև սիրիահայերի զբաղվածության ապահովման հարցը (Ապրում են Հայաստանում 2018, www.armeniasputnik.am):

Տարբեր ժամանակահատվածներում կացարանով և բնակարանների վարձավճարներով ապահովվել է շուրջ 1.000 սիրիահայ ընտանիք: Այդ հարցում սիրիահայերին աջակցել են հայրենի, արտերկրի և միջազգային տարբեր կառույցներ: Այսպես, ՄՆ հաղորդմամբ, 2014 թ. դեկտեմբերի տվյալներով, ավելի քան 700 սիրիահայ ընտանիք տարբեր կազմակերպությունների և մասնավոր հովանավորների կողմից ստացել է բնակվարձի փոխհատուցում, իսկ 2015 թ. վերջին շուրջ 700 սիրիահայ ընտանիք ամսական 200 դոլարին համարժեք գումար է ստացել բնակարանի վարձի հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով (Չաքարյան 2018, 571; Ахметели 2014, www.bbc.com; Հայաստանի Մէջ Արդէն Փոխուած է 2015, www.ragamamoul.net) և այլն:

2012–2015 թթ. ընթացքում սիրիահայ 40 ընտանիք տեղավորվել է անհատ բարերարների բնակարաններում, 72 ընտանիք՝ Հայ կաթողիկե եկեղեցու հյուրատանը: 2015 թ. դեկտեմբերի տվյալներով՝ սիրիահայ շուրջ 1.000 ընտանիք ընդգրկվել է բնակվարձի փոխհատուցման ծրագրերում (1 ընտանիքի հաշվով 60.000 դրամի չափով 6 ամիս ժամկետով): Իսկ արդեն 2012–2016 թթ. ընթացքում ՄՆ համակարգմամբ և հասարակական, բարեգործական, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ բնակվարձի փոխհատուցում է ստացել 2.200-ից ավելի սիրիահայ ընտանիք, 160 ընտանիք տեղավորվել է անհատ բարերարների բնակարաններում, 50 ընտանիք՝ Հայ կաթողիկե եկեղեցու հյուրատանը (ՀԱԱ, ֆ. 1786, գ. 65, թ. 78; գ. 67, թ. 94; գ. 69, թ. 64; գ. 71, թ. 23; գ. 172, թ. 49; գ. 175, թ. 7, 45):

Սիրիահայերի բնակարանի վարձի փոխհատուցման համար ՄՆ-ն մասնավոր նամակներով միջնորդել է միջազգային տարբեր կազմակերպությունների ղեկավարներին:

ՀՀ ՀԱԻ աշխատակից, պ.գ.թ. Գայանե Հակոբյանի կողմից 2014 թ. և 2016–2017 թթ. ՀՀ տարբեր շրջաններում (Երևան, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Արագածոտնի մարզեր) ավելի քան 500 սիրիահայերի, ինչպես նաև հայաստանցիների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների համաձայն, 2014 թ. մայիսի դրությամբ, ժամանակավոր կացարանով կամ բնակվարձի փոխհատուցումն ապահովելու նպատակով ՄՆ և ՍՀՀՀՀ է դիմել 911 սիրիահայ ընտանիք: 2014 թ.

քանակական հետազոտության տվյալներով սիրիահայ ընտանիքների 74%-ը բնակվել է վարձով, նրանց միայն քառորդ մասն է բնակվել առանց վարձավճարի՝ կա՛մ սեփական բնակարանում, կա՛մ հարազատ-բարեկամի տանը և կա՛մ հանրակացարանում (Հակոբյան 2024, 67, 189):

Անշուշտ, արտերկրի ճամբարներում կամ փողոցներում հայտնված անտուն գիշերող իրենց հայրենակիցների համեմատ՝ հայրենիքում սիրիահայերն անհամեմատ բարվոք վիճակում էին (Ավագյան 2022, 63, 80; Ավագյան 2023, 61–74):

Ի դեպ, ավելի հեռատես մեր հայրենակիցները, որոնք տակավին պատերազմի հենց սկզբում կամ ավելի շուտ էին եկել հայրենիք, ընդ որում՝ նաև որոշակի գումարով, շատ ավելի բարվոք վիճակ ունեցան Հայաստանում, քան նրանք, որոնք ժամանել էին ավելի ուշ (Minister of Diaspora 2015, www.iragir.am):

«Նոր Հալեպ» բնակելի թաղամաս կառուցելու ծրագիրը

Սիրիայում շարունակվող պատերազմական վիճակի հետևանքով Հայաստանում հանգրվանած սիրիահայերին բնակարանով ապահովելու խնդրի լուծմանն աջակցելու նպատակով 2013 թ. ՍՀՀՀ ՀԿ-ի առաջարկով Կառավարությունը որոշել էր Երևանից 20 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերից որևէ մեկում՝ Էջմիածին, Մասիս, Աշտարակ քաղաքներում, սիրիահայերի համար նոր բնակելի թաղամաս հիմնել (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 51, 63, թ. 56):

Որոշվել էր բնակավայրն անվանել «Նոր Հալեպ»՝ ի պատիվ Սիրիայի հայաշատ Հալեպ քաղաքի, որը Հայոց ցեղասպանությունից հետո հյուրընկալել էր հազարավոր հայերի: Բնակարանները սիրիահայերին առաջարկվելու էին շուկայականից ցածր գներով: Թաղամասը կառուցելու համար հայտարարվելու էր մրցույթ, ընտրվելու էր շինարարական կազմակերպությունը (Hakobyan 2013, www.agbu.org):

Սիրիահայերից բաղկացած խումբն այցելել է երեք քաղաքները և ընտրել առավելապես արդյունաբերական Աշտարակ քաղաքը (Armenia Builds a New Aleppo 2013, www.eurasianet.org; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 55, թ. 68):

Հանրապետության նախագահի հանձնարարությամբ և Կառավարության 2013 թ. հունիսի 6-ի N 656-Ն որոշման համաձայն՝ մեկնարկել է բնակարանաշինության «Նոր Հալեպ» ծրագիրը Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում (Կառավարության որոշում 2013, www.arlis.am): Իր հերթին Աշտարակի ավագանին հուլիսի 23-ին թաղամասի կառուցման համար որոշել է հատկացնել 4,8 հեկտար հողատարածք: Նախատեսված էր «Նոր Հալեպ» թաղամասում սիրիահայերին բնակարանները հանձնել արդեն 2015 թ. (Construction of New Aleppo Quarter 2013, www.arka.am; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 161, թ. 30):

Շինարարությունն իրականացվելու էր մասնավոր հատվածի և բնակարան ձեռք բերելու ցանկություն ունեցող սիրիահայերի ներդրումների շնորհիվ: Հայաստանում արդեն իսկ կային գործարարներ, որոնք պատրաստ էին այդ նպատակի համար ներդրումներ կատարել: Ծրագրի իրականացման համար նախնական տվյալներով անհրաժեշտ էր 25 մլն ԱՄՆ դոլար, որը պետք է հա-

վաքվեր դիմորդների և բարերարների միջոցով (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 51, թ. 44; գ. 63, թ. 9):

Կառավարության մամուլի ծառայության տվյալներով՝ բնակարան ձեռք բերելու նպատակով արդեն իսկ արձանագրվել էր 650 սիրիահայ ընտանիք՝ 3.500 անդամով, որոնք պատրաստակամություն էին հայտնել վճարել բնակարանի արժեքի մինչև 50%-ը, մնացյալը հոգալու էր Կառավարությունը բարեգործական կառույցների հետ (Հայաստան-Սփիւռք չորրորդ համաժողովում 2014, 69; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 51, թ. 44; գ. 63, թ. 9):

Մեկ ընտանիքին բնակարանով ապահովելու համար անհրաժեշտ էր 50.000 ԱՄՆ դոլար, որի մի մասը՝ 25.000-ը, ակնկալվում էր ստանալ բարեգործական ճանապարհով: Բնակարանները սիրիահայերին առավել մատչելի դարձնելու նպատակով անցկացվել է հանգանակություն: Օժանդակության խնդրանքով սփյուռքի նախարարը դիմել է տարբեր բարեսիրական կազմակերպությունների, հայրենակցական միությունների և այլ հաստատությունների ղեկավարներին (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 51, թ. 44; գ. 172, թ. 59):

2013 թ. դեկտեմբերի 9-ին «Նոր Հալեպ» թաղամասի վերջնական նախագիծը ներկայացրել են Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցություն ՀԿ-ի համանախագահներ Վահե և Գոհար Թութունջյանները: Թաղամասը պիտի ներառեր 22–30 բնակարան ունեցող շենքեր, լողավազաններ, ստորգետնյա ավտոկայանատեղիներ, խաղասրահներ, ինչպես նաև պոլիկլինիկա, խանութներ, վարձակալության տրվող գրասենյակային տարածքներ, տարբեր տեսակի ժամանցների և եկամուտ բերող այլ գործառույթների համար ակումբային շինություններ և այլ հարմարություններ: Թաղամասում արդեն իսկ առկա էին դպրոց ու մանկապարտեզ: Պատրաստվել է նաև մանրամասն նախահաշիվ-գնացուցակ՝ բոլոր գործարքների և շինարարական աշխատանքների համար՝ հնարավորություն տալով վերահսկել գները: Ուսումնասիրվել է արտասահմանյան շուկան, մանավանդ որ սփյուռքում բնակվող բազմաթիվ սիրիահայերի հնարավոր է հետաքրքրեր «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման ծրագրին ներդրումներ կատարելն ու բնակարաններ ձեռք բերելը: Արդեն 2014 թ. սկզբից իրականացվել է ծրագրի նախահաշվարկ, որի ավարտից հետո հայտարարվելու էր շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ: Շինարարության ընթացքն ու մնացած հարցերը հսկելու էր ՍՀՀԿ ՀԿ-ն (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 55, թ. 68; գ. 63, թ. 56; գ. 65, թ. 77; գ. 92, թ. 51; գ. 98, թ. 47–48; Construction of New Aleppo Quarter 2013, www.arka.am):

Սիրիահայերի համար «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման համար գումարները հանգանակվել են ՍՀՀԿ ՀԿ-ի կողմից, իսկ հավաքվող «գումարները կուտակվում են նրանց հատուկ հաշվեհամարում, և այդ գործին ՀՀ սփյուռքի նախարարությունը չի մասնակցում» (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 61, թ. 43):

ՄՆ-ի տվյալներով՝ 620 սիրիահայեր, որոնք նախապես ցուցակագրվել էին բնակարան ձեռք բերելու համար, ի վերջո՝ զարմանալիորեն միասնաբար էլ հրաժարվել էին իրենց բաժին ներդրումը կատարել բնակարանների կառուց-

ման մասնավոր ծրագրին: Այնինչ հայրենի պետությունն ի վիճակի էր բնակելի ամբողջ թաղամասի կառուցման ծախսերը միակողմանի իր վրա վերցնել: Այնպես որ, «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման ծրագիրն առկախվել է, քանի որ, սիրիահայերի իսկ հավաստմամբ, նրանք տվյալ պահին թաղամասի կառուցման համար իրենց մասնաբաժինը մոծելու հնարավորություն չեն ունեցել, բացի այդ՝ նաև բարեգործ-ֆինանսավորողներ ի հայտ չեն եկել (Minister of Diaspora 2015, www.lragir.am; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 63, թ. 9):

Սիրիահայերի համար թաղամասի կառուցման գործում Հայաստանից առաջին նվիրատուն «Գրանդ Հոլդինգ» ընկերության հիմնադիր-ղեկավարն էր (Հրանտ Վարդանյան), որը շինարարությունը կազմակերպելու նպատակով նվիրաբերել էր 100.000 դոլար: Առանձին բարերարներ տրամադրել են 52 մլն դրամ և այլն: Արձագանքելով սփյուռքի նախարարի կոչին՝ Քուվեյթ պետությունը ևս վերահաստատել է իր պատրաստակամությունն աջակցել Հայաստանում «Նոր Հալեպ» թաղամասի կառուցմանը: Վերոնշյալից բացի, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ իրենց աջակցությունն են հայտնել շինարարական աշխատանքների իրականացման հարցում (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1; ց. 3, գ. 101, թ. 63; Kuwait Ambassador Reconfirms 2014, www.armenpress.am; Աշտարակում սիրիահայերի համար 2013, www.armenpress.am):

Բնակելի շինություններ սիրիահայերի համար

Հայաստանում սիրիահայերի համար բնակարան կառուցելու գործն իրականացվել է բարեգործական ծրագրի, ինչպես նաև անհատ սիրիահայի նախաձեռնության շնորհիվ (Թարյան 2015, www.mediamax.am):

Երբ պարզ դարձավ, որ սիրիահայերին սնունդ տրամադրելու ծրագիրն արդեն սպառվել է, մինչդեռ նրանց զգալի մասն իր ունեցած գումարի նշանակալի բաժինը ծախսում է վարձակալած բնակարանների համար վճարելով, ՀՀԴ «Օգնիր եղբորդ» հիմնադրամը ձեռնամուխ է եղել Հայրենիքում սիրիահայերի բնակարանի ապահովման խնդրին աջակցելու գործին: Սիրիահայերի դիմումների համաձայն՝ 2013 թ. հիմնադրամի ղեկավարությունը դիմել է Կառավարություն և նախնական պայմանավորվածություն ձեռք բերել բազմաբնակարան շենք կառուցելու համար: Միաժամանակ, Երևանի քաղաքապետի հետ նախնական պայմանավորվածություն համաձայն, քաղաքապետարանը պատրաստակամություն է հայտնել կառուցվելիք բնակելի երկու շենքերի համար Երևանի Դավիթաշեն և Աջափնյակ վարչական շրջանում երկու հողատարածք տրամադրել: Աշխատանքները սկսվել են, ցանկացողների գրանցումները՝ ևս: Դիմումների ընդունումն ընթացքի մեջ էր: Նախապատվությունը տրվելու է ընտանիքներին: 2013 թ. հուլիսի սկզբի տվյալներով՝ բնակարան ձեռք բերելու համար գրանցվել է սիրիահայ 200 ընտանիք, իսկ օգոստոսի վերջին՝ արդեն 350: Բնակարանների գնումն իրականացվել է նվազագույն վճարով (Մարտիրոսեան 2013, www.arfd.am; Դավթաշենում բնակարան ձեռք բերելու համար 2013, www.arfd.am):

Քանի որ ծրագիրը բարեսիրական էր, ուստի և հիմնադրամն ազատվել է հարկերից, ինչպես նաև քաղաքապետարանը հողատարածքները տրամադրել է ոչ շուկայական գներով: Նախատեսվել է, որ երկու շենքերը լինելու են բազմաբնակարան և բաղկացած 15 հարկից: Առաջին հողատարածքում կառուցվելիք շենքում կարող է տեղավորվել մոտավորապես 70, իսկ երկրորդում՝ 100–120 ընտանիք: Շենքի առաջին հարկի տարածքները նախատեսված են առևտրային նշանակության, ինչպես նաև ավտոկայանատեղիի համար: Ըստ «Օգնիր եղբորդ» բարեգործական ծրագրի խորհրդի անդամ Խաչիկ Ջոզիկյանի՝ այդ երկու շենքերի կառուցումից հետո, որոնց համար նախնական հաշվարկներով պահանջվել է 1–1,5 տարի ժամանակ, ի հայտ էր գալու նաև երրորդ և չորրորդ շենքերի կառուցման հարցը: Առաջին երկու շենքերի շինարարության մեկնարկի արարողությունը տեղի է ունեցել 2013 թ. օգոստոսի 27-ին: Իսկ արդեն 2014 թ. դեկտեմբերի 24-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի մասնակցությամբ տեղի է ունեցել «Օգնիր եղբորդ» բարեգործական հիմնադրամի միջոցներով մայրաքաղաքի Ա. Միկոյան 4/3 և 4/6 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքի հիմնարկերի արարողությունը: Շուրջ 600 մ² հողատարածքի վրա, Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծի համաձայն, կառուցվելու էր 78 բնակարանից բաղկացած 14-հարկանի շենք (Դավիթաշենում սիրիահայերի համար 2013, www.armlur.am; Մարտիրոսեան 2013, www.arfd.am; Սիրիահայ ընտանիքների համար 2014, www.arfd.am; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 108, թ. 81):

Գումարի հիմնական մասը բարեգործական ծրագրի կողմից ծածկվելու, ինչպես նաև մասամբ հանգանակության շնորհիվ հավաքված լինելու և Կառավարության կողմից ծրագիրը հարկերից ազատվելու շնորհիվ բնակարանները սիրիահայերին տրամադրվել են շուկայականից 50% ցածր գնով, այսինքն՝ կես գնով: Բնակարանների հանձնման հարցը խիստ վերահսկողության տակ էր, և տրվել են բացառապես սիրիահայերին (Սիրիահայերի համար կառուցվելիք բնակարանները 2013, www.arfd.am):

Վերոնշյալից բացի, 2012 թ. Հայաստան տեղափոխված ոմն սիրիահայ, որը «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման համար ստեղծված հանձնաժողովի կազմում էր, որոշել է սիրիահայերի համար մատչելի գնով բնակարաններ կառուցելու առաջարկով դիմել տարբեր շինարարական կազմակերպություններ և հովանավորների: Երկարատև աշխատանքի հետևանքով, ի վերջո, Դավթաշեն 4-րդ թաղամասի վերջնամասում կառուցվել է 16-հարկանի 3 շենք (շենքերի կառուցման աշխատանքները սկսվել են 2014 թ.), որտեղ բնակարանի 1 մ² սիրիահայերին վաճառվել է 550–650 դոլարով: Ծրագիրը ստացել է «Իմ բնակարանը՝ հայրենիքիս մեջ» անվանումը (Թարյան 2015, www.mediamax.am; Դավթաշենում սիրիահայերի համար 2013, www.armlur.am):

Սիրիահայերի տեղաբաշխումը Հայաստանի տարբեր մարզերում

Սիրիահայ առանձին ընտանիքներ ցանկություն են հայտնել բնակություն հաստատել նաև ՀՀ տարբեր մարզերում (Արարատ, Արմավիր, Արագածոտն,

Գեղարքունիք, Կոտայք, Շիրակ, Լոռի (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 44, թ. 33; գ. 116, թ. 88), որտեղ ղեկավարությունը կամ տեղացիները նրանց առաջարկել են բնակարաններ, տներ, առանձնատներ, ինչպես նաև տրամադրել են նոր բնակարաններ, սակայն նման դեպքերը լուրջ ցուցանիշներ չեն ներկայացնում: Սիրիահայ մեր հայրենակիցները հիմնականում նախընտրել են բնակություն հաստատել քաղաքներում կամ մարզկենտրոններում և զբաղվել արհեստներով ու ձեռնարկատիրությամբ: Վերջիններս ընդգրկված չեն եղել գյուղատնտեսության, մասնավորապես անասնաբուծության և հողագործության ոլորտներում (ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 67, թ. 95):

ՀՀ-ում սիրիահայերի մեծամասնությունը բնակվել է Երևանում: Ըստ սոցիոլոգ Գ. Հակոբյանի քանակական հետազոտության արդյունքների՝ նրանք կազմել են սիրիահայ ընտանիքների 89%-ը, մինչդեռ մարզերում բնակվել է 11%-ը: Մարզերում բնակվողները նախընտրել են մարզկենտրոնները, ինչպես նաև Երևանին մերձակա քաղաքային ու գյուղական բնակավայրերը (օրինակ՝ Գյումրի, Վաղարշապատ, Աբովյան, Առինջ, Զրվեժ և այլն) (Հակոբյան 2024, 45, 70):

Քիչ թվով սիրիահայեր բնակություն էին հաստատել նաև Արցախի Հանրապետությունում: 2018 թ. դրությամբ՝ ԱՀ, մասնավորապես Քաշաթաղի շրջանում (Բերձոր, Կովսական, Իշխանաձոր, Աղավնո, Գետամեջ համայնքներ), բնակվել է սիրիահայ 24 ընտանիք՝ 76 անձ (41 տղամարդ, 35 կին): Այդ տարիների ընթացքում սիրիահայերի շրջանում գրանցվել է երեք ամուսնություն և ութ երեխայի ծնունդ: 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով արցախցիների հետ Հայաստան են տեղահանվել նաև այդտեղ բնակություն հաստատած սիրիահայերը (Հակոբյան 2024, 45, 70, 189):

Եզրակացություններ

Բնակարանային հարցը Հայաստանում սիրիահայերի դիմագրաված հիմնական խնդիրներից էր: Եվ քանի որ կացարանով ու բնակարանով ապահովման հարցը ՀՀ իշխանությունների մտահոգության առարկան էր, ուստի առանց կացարանի մնացած սիրիահայ չի արձանագրվել: ՄՆ աշխատակազմի ղեկավարի հաղորդման համաձայն՝ թեպետ Հայաստան ժամանած սիրիահայ ընտանիքների համար միանվագ ֆինանսական աջակցություն չի եղել, բնակարանի ձեռքբերման հարցում սիրիահայերը չեն օգտվել որևէ արտոնությունից, սակայն ճնշող մեծամասնությունն օգտվել է բնակվարձի փոխհատուցման իրավունքից (В Сирии остался 2015, www.lragir.am; ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 69, թ. 86):

ՄՆ-ի ձեռնարկած օպերատիվ և անհետաձգելի միջոցների, ինչպես նաև համասփյուռքյան ու միջազգային տարբեր կազմակերպությունների գործակցությամբ ցուցաբերված ֆինանսական աջակցության շնորհիվ կացարանով ու բնակարանով ապահովվել են Հայաստան ժամանած բոլոր սիրիահայերը: Այնպես որ, ի տարբերություն օտար երկրներում հայտնված մեր հայրենակիցների, ոչ մի նորեկ դրսում չի մնացել:

Շնորհակալական

Սույն հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար տեղեկությունների համար շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակից, պատմաբան Քնարիկ Պետրոսյանին:

Գրականություն/References/Литература

1. Ամբողջական տվյալներ. Քանի սիրիահայ կա Հայաստանում, նրանցից քանիսն ունեն բնակարան և աշխատանք 2012, 21 նոյեմբերի, www.panarmenian.net/arm/news/133582 (Accessed on: 23.01.2025):
Full data: How Many Syrian Armenians are There in Armenia, How Many of Them have Housing and Jobs 2012, November 21, www.panarmenian.net/arm/news/133582 (Accessed on: 23.01.2025) (in Armenian).
2. «Ամեն ինչ իր գինն ունի» Սիրիահայերի հիմնախնդիրները Հայաստանում 2014, Մագնիս – Magnis, <https://www.youtube.com/watch?v=lmhyn-pbjTY> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
"Everything Has Its Price" The Problems of Syrian-Armenians in Armenia 2014, Magnis, <https://www.youtube.com/watch?v=lmhyn-pbjTY> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
3. Աշտարակ քաղաքում «Նոր Հալեպ» թաղամաս կառուցելու ծրագիրը ծախողման եզրին է 2014, 27 հունիսի, <https://www.aysor.am/am/news/2014/06/27/nor-halep/812113> (ներբեռնման օրը՝ 23.01.2025):
The project to Build a "New Aleppo" District in Ashtarak City is on the Verge of Failure 2014, June 27, <https://www.aysor.am/am/news/2014/06/27/nor-halep/812113> (Accessed on: 23.01.2025) (in Armenian).
4. Աշտարակում կհիմնվի «Նոր Հալեպ» թաղամաս 2013, 7 հունիսի, <http://hayernaysor.am/archives/7382> (ներբեռնման օրը՝ 23.01.2025):
"New Aleppo" District to be Established in Ashtarak 2013, June 7, <http://hayernaysor.am/archives/7382> (Accessed on: 23.01.2025) (in Armenian).
5. Աշտարակում սիրիահայերի համար կառուցվելիք թաղամասը «Իմ Հալեպ» անունը կունենա 2013, 8 հունիսի, <https://armenpress.am/arm/news/721899.html> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
The District to be Built for Syrian Armenians in Ashtarak will be Called "My Aleppo" 2013, June 8, <https://armenpress.am/arm/news/721899.html> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
6. Ավագյան Ք. 2022, Սիրիահայերի արտագաղթը Կանադա (2013–2016 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (666), Երևան, 63–80:
Avagyan K. 2022, The Emigration of Syrian Armenians to Canada (2013–2016), Herald of Social Sciences, Journal of the National Academy of Sciences of the Republic of Armenia, N 3 (666), Yerevan, 63–80 (in Armenian).
7. Ավագյան Ք. 2023, Սիրիայի հայերի տեղաշարժը արտերկիր (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, ԱՄՆ, Շվեդիա, Ավստրալիա) (2012–2018 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (669), Երևան, 61–74:

- Avagyan K. 2023, The Migration of Syrian Armenians Abroad (Lebanon, Turkey, Jordan, USA, Sweden, Australia) (2012–2018), Herald of Social Sciences, N 3 (669), Yerevan, 61–74 (in Armenian).
8. Բնակվարձի փոխհատուցում, http://www.mindiaspora.am/am/bnakvardz_s (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
Housing Compensation, http://www.mindiaspora.am/am/bnakvardz_s (in Armenian) (Accessed on: 21.03.2025).
 9. Դավթաշենում բնակարան ձեռք բերելու համար գրանցվել է 200 սիրիահայ. Դիմումներ ընդունումը կշարունակվի 2013, 2 հուլիսի, <http://www.arfd.am/syriahay/?p=1099> (ներբեռնման օրը՝ 21.03.2025).
200 Syrian Armenians Registered to Buy Apartments in Davtashen. Applications will Continue to be Accepted 2013, July 2, <http://www.arfd.am/syriahay/?p=1099> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
 10. Դավթաշենում սիրիահայերի համար բնակելի շենք կկառուցվի 2013, 14 հունիսի, <https://armalur.am/48573> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
Residential building to be built for Syrian Armenians in Davitashen 2013, June 14, <https://armalur.am/48573> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
 11. 350,000 տոլար ի նպաստ հայաստանի մէջ սուրիահայերու բնակեցման ծրագիրին 2016, 24 մարտ, <http://www.ragamoul.net/news/news-from-armenia/350000-տոլար-ի-նպաստ-հայաստանի-մէջ-սուրիա/> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
350,000 Dollars in Support of the Syrian-Armenian Settlement Program in Armenia 2016, March 24, <http://www.ragamoul.net/news/news-from-armenia/350000-տոլար-ի-նպաստ-հայաստանի-մէջ-սուրիա/> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
 12. Ջաքարյան Ֆ. 2018, Սիրիայի հայ համայնքի հետ տարուող աշխատանքները (2008–2015), «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիսեր (24–27 Մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ, Haigazian University Press, 569–576:
Zakaryan F. 2018, The Work Carried out with the Armenian Community of Syria (2008–2015) "Armenians of Syria: Conference Proceedings (24–27 May, 2015)", ed.: Andranik Tagessian, Beirut, Haigazian University Press, 569–576 (in Armenian).
 13. Թարյան Մ. 2015, Երեւանում սիրիահայերի համար շենք է կառուցվել, 23 հոկտեմբերի, <https://mediamax.am/am/news/society/15811> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
Taryan M. 2015, A Building has been Built for Syrian-Armenians in Yerevan, October 23, <https://mediamax.am/am/news/society/15811> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
 14. Իրավաբանական աջակցություն, http://www.mindiaspora.am/am/iravabanakan_s (ներբեռնման օրը՝ 23.05.2018):
Legal Support, http://www.mindiaspora.am/am/iravabanakan_s (Accessed on: 23.05.2018) (in Armenian).
 15. Կովսականում բնակարաններ են հանձնել սիրիահայ ընտանիքներին 2014, 12 ապրիլի, <http://www.arfd.am/syriahay/?p=2694> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
Apartments were Handed over to Syrian-Armenian Families in Kavsakan 2014, April 12, <http://www.arfd.am/syriahay/?p=2694> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).

16. «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական ՀԿ-ում տեղի ունեցավ Դիլիջանի սոցիալական բնակարանային ծրագրի ներկայացումը 2015, 7 հոկտեմբերի, <https://aleppo-ngo.org/hy/հալէպ-հայրենակցական-բարեսիրական-հ-2/> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
The Presentation of the Dilijan Social Housing Program Took Place at the "Aleppo" Compatriot-Charitable NGO 2015, October 7, <https://aleppo-ngo.org/hy/հալէպ-հայրենակցական-բարեսիրական-հ-2/> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
17. Հակոբյան Գ. 2024, Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիան Հայաստանում, Երևան, ՀԱԻ հրատ.:
Hakobyan G. 2024, The Socio-Cultural Adaptation of Syrian Armenians in Armenia, Yerevan, Armenian Academy of Sciences Publishing House (in Armenian).
18. Համաժողովներ. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողով 2017, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար, սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի զեկույցը, «Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ», 18–20 սեպտեմբերի, 84, http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Firdus_Zakaryan.pdf (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
Conferences: 6th Armenia-Diaspora Conference 2017, Report of Firdus Zakaryan, Chief of Staff of the RA Ministry of Diaspora, Head of the Working Group on the Issues of Syrian Armenians, "On the Support Provided to Syrian Armenians Who Found Refuge in the Republic of Armenia", September 18–20, 84, http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Firdus_Zakaryan.pdf (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
19. «Հայ Տուն»-ը փրկութիւն եղաւ շատ մը սուրիահայերու համար. Յարութ Ներսէսեան 2016, 5 հեկտեմբեր, <https://www.amaa.am/am/տորոյություններ/item/773-«հայ-տուն»-ը-փրկութիւն-եղաւ-շատ-մը-սուրիահայերու-համար-յարութ-ներսէսեան> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):
"Hay Tun" was a Salvation for Many Syrian Armenians. Harut Nersesyan 2016, December 5, <https://www.amaa.am/am/տորոյություններ/item/773-«հայ-տուն»-ը-փրկութիւն-եղաւ-շատ-մը-սուրիահայերու-համար-յարութ-ներսէսեան> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
20. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1; ֆ. 1786, ց. 2, գ. 8, թ. 115, 117; ֆ. 1786, ց. 3, գ. 24, 31, 44, 51, 53, 55, 56, 58, 59, 61, 63, 64, 65, 67, 68, 69, 70, 71, 74, 75, 81, 82, 83, 85, 86, 89, 90, 91, 92, 93, 94, 98, 101, 108, 109, 110, 116, 119, 122, 129, 130, 134, 135, 137, 146, 159, 161, 172, 175:
National Archive of Armenia, Fund 1786, List 1, Case 137; Fund 1786, List 2, Case 8, թ. 115, 117; Fund 1786, List 3, Case 24, 31, 44, 51, 53, 55, 56, 58, 59, 61, 63, 64, 65, 67, 68, 69, 70, 71, 74, 75, 81, 82, 83, 85, 86, 89, 90, 91, 92, 93, 94, 98, 101, 108, 109, 110, 116, 119, 122, 129, 130, 134, 135, 137, 146, 159, 161, 172, 175.
21. Հայաստան-Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ., սեպտեմբերի 19–20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ 2014, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Երևան:
On the Implementation of the Recommendations made at the Fourth Armenia-Diaspora Conference (September 19–20, 2011, Yerevan) 2014, Ministry of Diaspora of the Republic of Armenia, Yerevan (in Armenian).
22. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում. Աշտարակ քաղաքում «Նոր Հալեպ» թաղամասի կառուցմանն աջակցելու մասին 2013, 6 հունիսի, N 656-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84044> (ներբեռնման օրը՝ 21.03.2025):

- Decision of the Government of the Republic of Armenia: On Supporting the Construction of the "New Aleppo" District in the City of Ashtarak 2013, June 6, N 656-N, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84044> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
23. Հայաստանի մէջ արդէն փոխուած է գործատուներու վերաբերումը սփրիահայերու նկատմամբ. Հրանոյշ Յակոբեան 2015, 9 նոյեմբեր, <http://www.ragmamoul.net/news/diaspora/հայաստանի-մէջ-արդէն-փոխուած-է-գործատու/> (ներբեռնման օրը՝ 21.03.2025): Employers' Attitudes to Syrian Armenians in Armenia Have Already Changed. Hranush Hakobyan 2015, November 9, <http://www.ragmamoul.net/news/diaspora/Հայականի-կա-նի-կանինին-կանինին-կանինին/> (Accessed on: 21.03.2025) (in Armenian).
 24. Մարտիրոսեան Մ. 2013, Երեւանում Կառուցուելու Են Շէնքեր Սփրիահայերի Համար, 21 Օգոստոս, <http://www.arfd.am/syriahay/?p=1543> (ներբեռնման օրը՝ 18.04.2025): Martirosyan M. 2013, Buildings to be Built in Yerevan for Syrian Armenians, August 21, <http://www.arfd.am/syriahay/?p=1543> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
 25. Պետական քաղաքականություն, http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun (ներբեռնման օրը՝ 18.04.2018): State Policy, http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun (Accessed on: 18.04.2018) (in Armenian).
 26. Ռափյան Ա. 2015, Սիրիացիները չպետք է հույսները դնեն ՀՀ-ում ստացած փախստականի կարգավիճակով շենգենյան երկրներ գնալու վրա, 15 դեկտեմբերի, <http://nyut.am/?p=97671&l=ru> (ներբեռնման օրը՝ 18.04.2025): Rapyan A. 2015, Syrians Should not Rely on Going to Schengen Countries with Refugee Status Received in Armenia, December 15, <http://nyut.am/?p=97671&l=ru> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
 27. Սիրիահայ ընտանիքների համար մայրաքաղաքում բազմաբնակարան շենք կկառուցվի 2014, 24 դեկտեմբերի, <http://www.arfd.am/syriahay/?p=3842> (ներբեռնման օրը՝ 18.04.2025): Apartment Building to be Built in the Capital for Syrian-Armenian Families 2014, December 24, <http://www.arfd.am/syriahay/?p=3842> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
 28. Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը 2017, 27 հունվարի, <http://www.nyut.am> (ներբեռնման օրը՝ 18.04.2025): About Syrian Armenians in the Language of Statistics. Our Guest is Lena Halajian, President of the "Center for Coordinating the Issues of Syrian Armenians" NGO 2017, January 27, <http://www.nyut.am> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
 29. Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ. Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում 2018, Երևան: List of Organizations and Services Providing Assistance to Syrian Armenians. Increasing the Resilience of Syrian Armenians and Locals 2018, Yerevan (in Armenian).
 30. «Սիրիահայերն սկսեցին փոխել իրենց տները...», Զրուցեց Լիանա Խաչատրյանը 2013, 3 մարտի, <http://hayernaysor.am/archives/2515> (ներբեռնման օրը՝ 18.04.2025): "Syrian Armenians Began to Change Their Homes...", Interview with Liana Khachatryan 2013, March 3, <http://hayernaysor.am/archives/2515> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
 31. «Օգնիր եղբորդ». Դավիթաշենում սիրիահայերի համար բնակելի շենք կկառուցվի 2013, 14 հունիսի, <http://www.arfd.am/syriahay/?p=999> (ներբեռնման օրը՝ 18.04.2025):

- "Help Your Brother". Residential Building to Be Built for Syrian Armenians in Davitashen 2013, June 14, <http://www.arfd.am/syriahay/?p=999> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
32. «Oxfam»ը Կը շարունակէ գումար յատկացնել սուրիահայերուն՝ տան վարձքերը հոգալու համար 2016, 11 հոկտեմբեր, <http://asbarez.com/arm/265905/> (ներբեռնման օրը՝ 18.04.2025):
Oxfam Continues to Allocate Money to Syrian Armenians to Pay for House Rents 2016, October 11, <http://asbarez.com/arm/265905/> (Accessed on: 18.04.2025) (in Armenian).
33. Balkhian S. 2014, The Housing Conundrum: Syrian Armenians in Armenia, January 14, <https://armenianweekly.com/2014/01/14/the-housing-conundrum-syrian-armenians-in-armenia/> (Accessed on: 18.04.2025).
34. Construction of New Aleppo Quarter for Syrian Armenians Will Cost About \$20 Million - Ministry of Diaspora 2013, October 25, http://arka.am/en/news/society/construction_of_new_aleppo_quarter_for_syrian_armenians_will_cost_about_20_million_ministry_of_diasp/#sthash.utHrBMJ0.dpuf (Accessed on: 23.01.2025).
35. Davtyan N. 2013, Armenian Artists Support the Construction of "New Aleppo" District in Ashtarak, June 7, <https://en.armradio.am/2013/06/07/armenian-artists-support-the-construction-of-new-aleppo-district-in-ashtarak/> (Accessed on: 18.04.2025).
36. Hakobyan J. 2013, Middle East Meets Armenia: Armenians Flee Syria for the Motherland, June 1, <https://agbu.org/news-item/middle-east-meets-armenia-armenians-flee-syria-for-the-motherland/> (Accessed on: 23.01.2025).
37. Harutiunian L. 2012, Syria Refugees Boost Yerevan's Housing Market, August 23, <https://www.rferl.org/a/syria-armenia-housing-market/24685725.html> (Accessed on: 23.01.2025).
38. Hergnyan S. 2016, \$86,700 Donated for Failed "New Haleb" Neighborhood for Syrian-Armenians Remains Unused in Yerevan Bank, December 13, <https://hetq.am/en/article/73729> (Accessed on: 23.01.2025).
39. Kuwait Ambassador Reconfirms Assistance to New Aleppo 2014, September 6, <http://armenpress.am/eng/news/775226/kuwait-ambassador-reconfirms-assistance-to-new-aleppo.html> (Accessed on: 18.04.2025).
40. Lieberman Amy. Lessons Learned as Syrian-Armenian Refugees Return to Armenia. 2017, July 25, <https://www.devex.com> (Accessed on: 18.04.2025).
41. Minister of Diaspora on Transportation of Armenian Syrians 2015, June 2, <http://www.lragir.am/index/eng/0/country/view/34146#sthash.abnXmk1h.dpuf> (Accessed on: 23.01.2025).
42. Ахметели Н. 2014, Манвелян Алексей. Сирийские армяне: трудный путь на родину. 27 декабря, http://www.bbc.com/russian/society/2014/12/141227_syria_armenians_refugees?SThisFB (дата обращения: 23.01.2025).
Akhmeteli N. 2014, Manvelyan Alexey. Syrian Armenians: The Difficult Path to the Homeland, December 27, http://www.bbc.com/russian/society/2014/12/141227_syria_armenians_refugees?SThisFB (Accessed on: 23.01.2025) (in Russian).
43. В Сирии осталось 15 тысяч армян 2015, 16 сентября, <https://www.lragir.am/ru/2015/09/16/44311/> (дата обращения: 23.01.2025).
There are 15 thousand Armenians left in Syria 2015, September 16, <https://www.lragir.am/ru/2015/09/16/44311/> (Accessed on: 23.01.2025) (in Russian).

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑԻՆ ԵՎ ԻՐ «ԳՈՎԵՍ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՎԱԾԱԾԻՆՆ» ՆԵՐՔՈՂԸ
PETER OF SYUNIK AND HIS "GLORY TO THE HOLY MOTHER OF GOD" PANEGYRIC
ПЕТРОС СЮНЕЦИ И ЕГО ПАНЕГИРИК «ПОХВАЛА ПРЕСВЯТОЙ БОГОРОДИЦЕ»

Գևորգ Կարապետյան
Gevorg Karapetyan
Геворг Карапетян

Գևորգյան հոգևոր ճեմարան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայաստան
Gevorgyan Theological Seminary, Mother See of Holy Etchmiadzin, Armenia
Духовная семинария Геворкян, Первопрестольный Святой Эчмиадзин, Армения

mothercathedral@etchmiadzin.am

Ներկայացվել է՝ 16.07.2025; գրախոսվել է՝ 06.08.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 16.07.2025; Revised: 06.08.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 16.07.2025; рецензировано: 06.08.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-114

Ամփոփում – Քրիստոնեական Սուրբ Եկեղեցու կյանքում առանձնահատուկ տեղ է հատկացվում սրբերի դերին և նրանց թողած հիշատակին: Եկեղեցին իր պաշտամունքի մեջ հիշատակում է աստվածահաճո ու մաքրակրոն վարքով կենցաղավարած սրբերին՝ նրանց կերպարը որպես ոգևորիչ օրինակ ծառայեցնելով քրիստոնեական Եկեղեցու բոլոր անդամների համար և, միևնույն ժամանակ, մեծապես արժևորելով սրբերի բարեխոսության կարևորությունը: Սույն հոդվածով անդրադարձ ենք կատարել հայ մատենագրության մեջ Սուրբ Աստվածածինն նվիրված առաջին գրությանը՝ **«Գովեստ Ի Սուրբ Աստուածածինն» ներբողին**: Այն Աբ. Աստվածածնի կյանքն ու վարքը գովերգող հայ միջնադարյան մատենագրության փառահեղ նմուշներից է, որում արդեն իսկ ակնհայտորեն վեր է հառնում Հայ Առաքելական Եկեղեցու մարեմաքանական ուղղափառությունը: Հոդվածում հանգամանալից քննության են առնվել երկի դավանաբանական և լեզվաոճական առանձնահատկությունները: Պետրոս Սյունեցու սույն երկը, հայ իրականության մեջ Աստվածածինն օրհներգող առաջին ներբողյանը լինելով, լեցուն է աստվածաբանական-քնարական զուգորդություններով, որոնք համահունչ են ընդհանուր քրիստոնեական ոգուն: Մեր հոդվածում խոսել ենք նաև ժամանակի աստվածաբանական երկերի հետ փոխկապակցվածության և աստվածաշնչական ու հայրախոսական ժառանգության հետ սերտ առնչության մասին՝ փորձելով ուրվագծել և վեր հանել ստեղծագործության ինչպես վարդապետական-դավանաբանական, այնպես էլ պատմաբանասիրական ընդթափանցումը:

Abstract – In the life of the Christian Holy Church, saints and their enduring legacy are considered to have a special role. In its worship, the Church records saints who lived godly and pious lives, using their image as an example of inspiration for all members of the Christian Church while greatly valuing the importance of the intercession of saints. The present article

examines the first written work in Armenian literature dedicated to the Holy Virgin, the panegyric **"Glory to the Holy Mother of God"**. It is a magnificent example of medieval Armenian literature that glorifies the life and conduct of the Virgin Mary, clearly reflecting the Mariammanological orthodoxy of the Armenian Apostolic Church. The article thoroughly analyzes the theological and linguistic-stylistic characteristics of the mentioned work. **"Glory to the Holy Mother of God"** by Petros Syunetsi, being the first hymn in the Armenian tradition to praise the Theotokos, is filled with theological-lyrical combinations that resonate with the universal Christian spirit. The article also explores the interconnectedness of the work with the contemporary theological writings and its close ties to biblical and patristic heritage, aiming to delineate and highlight both its doctrinal-theological and historical-philological characteristics.

Аннотация – Во время богослужения священнослужители упоминают святых, представляя их образ в качестве вдохновляющего примера для всех верующих и представителей христианской церкви. Данная статья посвящена первому письменному сочинению в армянской литературе – панегирику «Похвала Пресвятой Богородице», восславляющему Пресвятую Деву. Это великолепный образец средневековой армянской литературы, повествующий о жизни и деяниях Девы Марии и отражающий мариамманологическую ортодоксию Армянской Апостольской церкви. В статье подробно анализируются богословские и лингвостилистические особенности данного сочинения, автором которого является Петрос Сюнеци. Текст первого гимна в армянской традиции, восхваляющий Богородицу, изобилует красноречивыми богословскими терминами и стилистическими оборотами, созвучными общехристианскому духу. В статье также рассматривается созвучность этого сочинения современным ему богословским трудам и его тесная связь с библейским и патристическим наследием, дабы обозначить и выделить как его богословско-догматические, так и историко-филологические характеристики.

Հիմնաբառեր – Ս. Աստվածածին, մարեմաբանություն, Սուրբ Կույս, Պ. Սյունեցի, ներբող:

Key words – Holy Mother of God, Mariammanology, Holy Virgin, Peter of Syunik, Panegyric.

Ключевые слова – Св. Богородица, мариамманология, Святая Дева, П. Сюнеци, панегирик.

Ներածություն

Ինչպես սահմանում է Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, սրբերի բարեխոսությունը «յաղթական եկեղեցիին աղօթքն է զինուորեալ եկեղեցիին համար» (Գալուստեան 1993, 64), քանի որ սրբերը իրենք «իրենց մէջ կը տաճարակրեն զԱստուած: Անոնք միջնորդներ են Աստուծոյ եւ մարդերու միջեւ, ոսկի շղթան երկիրը երկինքին կապող... պատկերը Աստուծոյ հոգիին եւ նկարագրին» (Իզնատիոսեան 1978, 7):

Հայ եկեղեցին, լինելով անբաժան մասը Քրիստոսի հետ «մի անբաժանելի միություն կազմող, Քրիստոսով ապրող և գործող» (Տեր-Հակոբյան 2018, 72) Ընդհանրական և Առաքելական Սուրբ եկեղեցու, ընդունում է աստվածաշնչյան համաքրիստոնեական սրբերի հետևյալ դասակարգումը. Մարիամ Աստվածածին, Հովհաննես Մկրտիչ, առաքյալներ, մարգարեներ, վկաներ, Ստեփանոս Նախավկա, ապա՝ Գրիգոր Լուսավորիչ, այնուհետև՝ սրբակենցաղ վանականներ ու խոստովանողներ: Ինչպես հենց այս աստիճանակարգումն է ցույց տալիս, քրիստոնեական եկեղեցու սրբերի մեջ մարդկության փրկության համար միջնորդող մեծա-

գույն և առաջին բարեխոսը «աստուածահայեաց աչք» և «աստուածախօս լեզու» (Տաթևացի 1741, 506) Աբ. Կոյսն է:

Սուրբ Աստվածածինն նվիրված առաջին գրությունը հեղինակել է ոսկեդարյան շրջանի մատենագիր Պետրոս Սյունեցին: Պետրոս Սյունեցու վերաբերյալ կենսագրական տվյալները սակավաթիվ են: Ծնվել է մոտ V դ. վերջին, աշակերտել է Մովսես Խորենացուն: Ստացել է խոր, համակողմանի գիտելիքներ, հմտացել մեկնաբանական, քերթողական արվեստի մեջ. այս պատճառով նա հայտնի է նաև «Քերթող» պատվանունով (Օրմանյան 1959, 1669):

Ստեփանոս Օրբելյանի խոսքով՝ Պետրոս Սյունեցին եղել է «քաջ հոռետորն եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կատարեալ առաքինութեամբ. Նախ աթոռ վարդապետաց Հայոց, քերթող եւ թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս, եւ արար ճառս իմաստալից ի ծնունդն Քրիստոսի եւ ընդդէմ քաղկեդոնականացն եւ այլ յոյվս, եւ մեկնեաց զխրթին եւ զդժուարիմաց բանս Հին եւ Նոր Կտակարանաց» (Օրբելեան 1910, 131; Խաչերեան 1998, 286, Սարգիսեան 1904, 65–71):

Նա մասնակցել է Դվինի 554 թ. ժողովին (Օրմանյան 1959, 1669): Մահացել է 558 թվականին: Պետրոս Սյունեցու գրչին են պատկանում առաջին երեք տիեզերաժողովների, ինչպես նաև Քաղկեդոնի և Եփեսոսի երկրորդ եկեղեցական ժողովների մասին պատմող «Յաղագս հաւատոյ» աշխատությունը, Սուրբ Ծննդյան մի ճառ, որից փոքրիկ պատառիկներ են պահպանվել միայն, այն էլ՝ Ստեփանոս Սյունեցու «Յաղագս անապականութեան մարմնոյն» և Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» աշխատություններում: Պետրոս Սյունեցու հաջորդ երկը «Հարցմունք յաղագս մարմնատրութեան Տեառն» աշխատությունն է, մյուսը՝ «Պետրոսի Սինեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիբուզտի յորժամ ի հանդի էր ի Դվին» երկը, որում Պետրոս հայրապետը գովաբանում է Յիզտիբուզտի նահատակվելու պատրաստակամությունը: Պետրոս Սյունեցին հեղինակ է նաև դավանաբանական («Ճառ ընդդէմ քաղկեդոնականաց»), մեկնողական («Մեկնութիւն խրթին եւ դժուարիմաց բանից Հին եւ Նոր կտակարանաց»), ներբողական («Ներբողեան ի Բաբիկ Սինի») երկերի, որոնք մեզ չեն հասել: Այս երկերից օգտվել կամ իր աշխատության մեջ դրանց մասին հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը:

Պետրոս Սյունեցու «Գովեստի ի Սուրբ Աստուածածինն» ներբողը

Վերոհիշյալ երկերի միջից, այսուհանդերձ, Պետրոս Սյունեցու ամենաարժեքավոր երկը «Գովեստի ի Սուրբ Աստուածածինն» խորագրով ներբողն է (Մատենագիրք հայոց 2004, 387): Ն. Ակինյանի խոսքով՝ «Գովեստն ի Ս. Կոյսն Մարիամ» ներբողն ինքնին բավական է Մատենագրիս անունն անմահացնելու եւ Զ դարու միակ պարծանքն համարելու: Չափազանցութիւն ըրած չենք ըլլար, եթէ ըսենք, որ իրմէ վերջը փորձողներէն ոչ ոք կրցած է հաւասարիլ ճառիս՝ իւր ճաշակովն եւ գեղեցկութեամբը: Հետագայից կողմանէ եւս մեծ ընդունելութիւն գտած է ճառս, որուն վկայ են Շարակնոցի Մեծացուցէները» (Ակինեան 1904, 78): Հ. Քյոսեյանը, շեշտելով այս երկի կարևորությունը, նշում է. «Սա հայ եկեղեցական մատենագրության մեջ Տիրամորը դրվատող առաջին ներբողն է, որի շարադրանքը ուղեկցվում է աստվածաբանական խոր, համակողմանի մեկնաբանությամբ... Մասնագետների իրավացի հավաստմամբ Աստվածածինն նվիրված հետագա

ներբողներից և ոչ մեկը չունի Պետրոսի այս երկի աստվածաբանական խորությամբ ու գեղարվեստական պայծառությունը» (Քյոսեյան 2018, 135–136):

Խոսելով այս երկի մասին՝ Գ. Տեր-Մկրտչյանը նշում է. «Պետրոսի՝ Աստվածածնա Գովեստը կարդացվում էր Փրկչի ծննդյան տոներին: Վեցերորդ դարում, ինչպես և դեռ շատ հետո, մեր եկեղեցին չուներ և ո՛չ մի հատուկ տոն Աստվածածնա: Ավետյաց, Վերափոխման և այլ տոները մտել են մեր մեջ շատ հետո, օտար անվավերական գրությունների թարգմանությամբ ազդեցությամբ, հույն, և ավելի ուշ, նաև լատին եկեղեցիների օրինակով և հետևությամբ» (Տեր-Մկրտչյան 1998, 166):

Ստեղծագործության սկզբում Սյունյաց եպիսկոպոսը ցնծալից բերկրանքով օրհնաբանում է Տիրամոր աստվածային առաքելությունը: Նա, ով կենդանի ջրի ինքնաբերական ջրհորը եղավ, «յորմէ արդարութեան արեգակն ծագեաց, ճառագայթաւէր լուսով զաշխարհս լուսաւորեաց» (Մատենագիրք Հայոց 2004, 389): Եվ մինչև իսկ մարդկային միտքն ու լեզուն ի զորու չեն արժանի փառաբանություն մատուցել Սրբուհուն, սակայն հեղինակը կոչ է անում օրհնաբանել Կոյսին, քանի որ «յոյժ պատուական են արեւելք վասն տուրնջենային հրոյն ընդ այն ծագելոյ, այլ ո՛չ իբրեւ զտեառնամայր աղախինն, յորում ամենեցունցն Աստուած բնակեաց եւ արեգակնաբար ի նմանէ յաշխարհս ծագեաց» (Մատենագիրք Հայոց 2004, 390): Այսպիսով, Աստվածածինն անհամեմատ գերազանցում է արևելքից ծագող լույսին, որի մեջ Աստված բնակվեց և որից, որպես աշխարհի արեգակ, ծագեց Միածին Որդին: Այնուհետև հաջորդում է Տիրամորն ուղղված «երանի»-ների շարքը, որտեղ Աստվածածինը ներկայացվում է որպես Հորի կանխասացությունն ու Դավթի մարգարեությունն իրականացնող Սրբուհի: Սուրբ Կոյսը կոչվում է Սուրբ լեռ, իսկ նրանից ծնվածը՝ ճշմարիտ Աստված: Այստեղ դավանաբանական նրբին հարց է լուծում հեղինակը՝ ներկայացնելով Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միության կերպը: Քրիստոսի մեջ աստվածային ու մարդկային բնությունների միավորման կերպը հայրախոսական ժառանգության մեջ անճառելի ու անքննելի խորհուրդ է համարվել, ուստի Պետրոս Սյունեցին ամենայն զգուշությամբ հորդորում է չհանդգնել Քրիստոսին սուկ մարդ կոչել, այլ անբաժանելիորեն, ճշմարտապես միացած Աստված և մարդ (Մատենագիրք Հայոց 2004, 391): Պետրոս Սյունեցու ինչպես այս, այնպես էլ մյուս երկերում առկա քրիստոսաբանական տեղիները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ դավանաբանական այս կետերը իրենց սուր ծայրով ուղղված էին քաղկեդոնականության դեմ:

Ըստ Պետրոս Սյունեցու, Աստվածածնի սրբության աղբյուրից երբեք չհամարձակվեց խմել նրա այր Հովսեփը, քանի որ Տիրամայրը *անաղար սրբությամբ* էր կնքել իր մարմինը (Մատենագիրք Հայոց 2004, 389):

Այնուհետև ճառագիրը, խոսելով Աստվածածնի անարատ կուսության մասին, փառաբանում է նրան որպես «Դրախտ աստուածատունկ, Այգի վայելույ, Մորենի անկիզբելի, Լեռն սուրբ, Վեմ ջրածին, Գաւազան ծաղկեալ, Սափոր ոսկի, Տուփ անուշահոտ խնկոց, Տապանակ կենդանագիր կտակին, Զրհոր կենդանի ջրոյն, Բոյս բարի, Տեղի շափիղայի, Քաղաք Աստուծոյ, Պարտէզ փակեալ, Աղբիւր կնքեալ, Բլուր կնդրկի, Հովիտ շուշանի, Երկիր ծարաւուտ, Ամպ թեթեւ, Անապատ անկոխ, Դուռն աղխեալ, Տոմար անընթեռնելի, Երկիր բանաւոր, Առաւուտ խաղաղութեան» (Մատենագիրք Հայոց 2004, 391–392):

Աստվածածնին գովերգող 24 երանությունների աստվածաշնչյան ծագումը և հայրաբանական զուգորդումները

Հեղինակը կետ առ կետ անդրադառնում է 24 վկայությունների՝ «Ուրախ լեր Մարիամ» կրկներգությամբ մեկնելով դրանցից յուրաքանչյուրը: Այստեղ Պետրոս Սյունեցուն օգնության են եկել Աստվածաշնչի գրքերը՝ Ծննդոց, Սաղմոսներ, Օվսեի, Եսայու և Եզեկիելի մարգարեություններ, Հովհաննեսի Ավետարան:

Այժմ անդրադառնանք հիշյալ 24 բնորոշումներից յուրաքանչյուրի սուրբգրային ծագմանը (աշխարհաբար թարգմանությունը մերն է – Գ.Կ.):

Ա. Ուրախ լեր Մարիամ, Դրախտ աստուածատունկ. քանզի աստուածաբոյս մարմինն ի միջի քում որպէս զծառն կենաց արմատացեալ, զոր ընդ բոցեղէն սրոյն զաւրութիւն բարձրելոյն անհալելի զքեզ տաղաւարեաց – Ուրախացի՛ր, Մարիա՛մ, աստվածաբոյսն դրախտ, որովհետեւ աստվածաբոյս մարմինը որպէս կյանքի ծառ քո մեջ արմատացաւ ու բոցեղէն սրի հետ բարձրյալի զորությունն անհալելի կերպով քո մեջ բնակվեց:

Սուրբ Կույսը համեմատվում է **Ծննդոց գրքի 2-րդ գլխում** հիշատակվող դրախտի հետ. «*Եւ տնկեաց Աստուած զդրախտն յեղեմ ընդ արևելս, և եղ անդ զմարդն զոր ստեղծ»* (Ծննդ. Բ 8): Ինչպես դրախտում առաջին մարդիկ զգում էին Աստծու անմիջական ներկայությունը, քանի որ Աստված Ինքը բնակվում էր դրախտում, այդպես և Սուրբ Կույս Մարիամն է փառաբանվում **«աստուածատունկ դրախտ»** բնորոշումով, քանի որ Մարիամի արգանդում՝ ասես դրախտում, բնակվեց Ինքը՝ Քրիստոս Աստված՝ աստվածային Իր ողջ փառքով:

«Կենաց ծառ»-ի մասին հիշատակությունը դարձյալ ակնարկ է արարչագործության դրվագի, որում պատմվում է Տիրոջ կողմից «կենաց (իմա՝ կյանքի, փրկության) ծառը» դրախտի մեջտեղում տնկելու մասին. «*Եւ բուսոյց ևս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել, և քաղցր ի կերակուր. և զծառն կենաց ի մէջ դրախտին, և զծառն գիտելոյ զգիտութիւն բարոյ և չարի»* (Ծննդ. Բ 9): Այլաբանորեն՝ «կենաց ծառը» Աստվածորդին՝ Քրիստոս էր, Որին Հայր Աստված «տնկեց» դրախտի մեջտեղում՝ հանուն համայն մարդկության փրկության: «Կենաց ծառի» («Կենաց փայտի») խորհրդաբանությունը մեկ անգամ չէ, որ իր լայն կիրառությունն է գտել քրիստոնեական մատենագրության մեջ, շարականներում («Քանզի անմահացաք կենացն փայտի ի ճաշականէ մահաբեր պտղոյն, որ կանգնեցաւ քառակերպն ի միջակին՝ դիտելով ընդ հարաւ, Աստուած հարցն մերոց», Հրց. Խաչվերացի գկ) ու առհասարակ հոգևոր ողջ գրականության մեջ:

Բ. Ուրախ լեր Մարիամ, Այգի վայելույ, յորում կամաւորութեամբ Հաւր ճշմարիտ որթն տնկէր: Կապեսցէ, ասէ, զէշ իւր զորթոյ եւ զյաւանակ իւր զգնդակէ որթոյ: Որթ զԱստուած Բանն ասէ եւ գնդակ՝ զմարմին նորին, զոր եւ ինքն իսկ Միածինն ասէր, թէ ես եմ որթն ճշմարիտ – Ուրախացի՛ր, Մարիա՛մ, վայելույ այգի, որպեղ ճշմարիտ որթը տնկվեց Հոր կամքով: «Իր էջը որթին պիտի կապի, – գրված է, – և իր ալանակը՝ որթի ոստին» (հմմտ. Ծննդ. ԽԹ 11): Այսպեղ Բանն Աստված «որթ» է կոչվում, իսկ մարմինը՝ «ոստ»: Եվ Միածինն ինքն էլ ասում էր. «*Ես եմ ճշմարիտ որթը*»:

Ծննդ. ԽԹ 11-րդ համարի հիշատակումով հեղինակը դարձյալ այլաբանորեն ակնարկում է Քրիստոսի գալուստը և փրկչական առաքելությունը, որ տեղի

ունեցալ «վայելուչ այգում»՝ **Աստվածամոր որովայնում՝ «կամաւորութեամբ Հաւր»**, Փրկչի բնակության միջոցով: Ծննդոց գրքի այս հատվածում Հակոբն իր վերջին խոսքերով օրհնություններ է բաշխում զավակներին, իսկ հիշատակված տեղին, ի մասնավորի, վերաբերում է Հուդային, որից սերում էր Ինքը՝ Քրիստոս: Հետևաբար, Հուդային ուղղված այս օրհնությունը մարգարեաբար վերագրվում է Հայր Աստծու Միածին Որդուն՝ ավետելով Աստվածորդու զորության ու հոգևոր առաջնորդության մասին. «Կորին առիծու Յուդա. ի շառաւելէ ելեր որդեակ իմ, ելեր բազմեցար, ննջեցեր իբրեւ զառիծ, եւ իբրեւ զկորին առիծու. ո յարուցանէ զնա: Մի պակասեցէ իշխան Յուդայ, եւ մի պէտր յերանաց նորա. մինչչեւ եկեսցէ նա որոյ իւրն է հանդերձեալքն. եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց: Կապեցէ զորթոյ զյաւանակ իւր, եւ զգնդակէն զյաւանակ իշոյն. լուսացէ գինով զպարմուծան իւր, եւ արեամբ խաղողոյ զհանդերձս իւր» (Ծննդ. ԽԹ 9–11): Որթի և ոստի միության խորհրդանշական պատկերով էլ մատնացուց է արվում Քրիստոսի մեջ աստվածային և մարդկային բնությունների միավորությունը: Իսկ ասվածը հավաստագրվում է Հովհաննեսի Ավետարանում Քրիստոսի՝ Իր իսկ մասին վկայաբերած խոսքով. «Ես եմ որթն ճշմարիտ՝ եւ հայր իմ մշակ է» (Հովհ. ԺԵ 1):

Գ. Ուրախ լեր Մարիամ, Մորենի սխրալի, որ աստուածութեանն հրով վառեալ ոչ այրեցար – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, սխրալի մորենի, որ աստվածություն կրակով վառվեցիր, բայց անկեզ մնացիր:*

Այս երրորդ (Գ) օրհնության մեջ արդեն Պետրոս Սյունեցին Ծննդոցի նախորդ մեջբերումներից անցում է կատարում Աստվածաշնչի կանոնի՝ ըստ հերթականության, հաջորդ գրքին՝ մեջբերելով Ելից Գ 2–3-րդ համարները. «Եւ երեսեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենոյ: Եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին: Եւ ասէ Մովսէս. Անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ, զի՞ է՛ զի ոչ այրի մորենին» (Ելք Գ 2–3): Խորհրդաբանորեն Տիրամայրն այստեղ համեմատվում է անկեզ մորենու հետ, որն իր մեջ կրեց բոլորի Աստծուն, սակայն չայրվեց աստվածային անշեջ Հրից, այլ ամենապատիվ վսեմությամբ հանձն առավ ու ստանձնեց Աստվածորդու մայրը լինելու երանելի կոչումը:

Դ. Ուրախ լեր Մարիամ, Լեառն սուրբ, յորում ստեղծիչն Մովսէսի նորահրաշ տնարէնութեամբ առագաստեալ վարագուրեցաւ – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, սուրբ լեռ, որտեղ Մովսէսի Սրբեղծիչը նորահրաշ տնօրինությամբ առագաստվելով վարագուրվեց:*

Հավատարմորեն շարունակելով աստվածաշնչյան պատումի հերթականությունը՝ Պետրոս եպիսկոպոսն այստեղ էլ հիշատակում է Ելից գրքի այն դրվագը, երբ Մովսէսը բարձրանում է Սուրբ լեռը՝ Աստծու հետ խոսելու համար, և չդիմանալով աստվածային փառքի զորությանը՝ իր երեսը մի կողմ է շրջում, և այդ դիրքով է խոսում Տիրոջ հետ (տե՛ս Ելք Գ 4–6):

Ե. Ուրախ լեր Մարիամ, ապառաժ Վեմ, ուստի յորդահոս վտակն խաղացեալ՝ զհամահրաւէր աւետիսն աշխարհի հնչէր. «Եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս եւ արբցէ» – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ապառաժ վեմ, որից հորդահոս վտակը հոսելով՝ համայն աշխարհին ավերիս է հնչեցնում. «Եթե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ ու խմի»:*

Աստվածածնին փառաբանող հաջորդ հիշատակությունը դարձյալ Ելից գրքից է՝ 17-րդ գլխից, որտեղ Մովսեսն, ի դիմաց հրեա ժողովրդի տրտունջների ու բողոքների, Տիրոջ հրամանով ժայռից ջուր է բխեցնում: Խորհրդանշաբար Աստվածածինն էլ համարվում է «**ապառաժ Վէմ**», որից բխում է կենսատու ջրի աղբյուրը՝ Հիսուս Քրիստոս (տե՛ս Ելք ԺԷ 1-7, հմմտ. Հովհ. Է 37):

2. Ուրախ լեր Մարիամ, Գաւազան ծաղկեալ, ուստի յարմատոյն Յեսսեայ բոխեալ յարադալար ծաղիկն, որում յառաջացոյց յաւրինակ քահանայապետին եղեւ ցուպ, որ ի խորանի անդ առժամայն բողբոջեալ սաղարթէր – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ծաղկած գավազան, որի վրա Հեսսեի արմատից բուսնեց մշտադալար ծաղիկը, որի նախապիպն էր Ահարոն քահանայապետի ցուպը, որն էլ վկայության խորանի մեջ իսկույն բողբոջելով՝ ճյուղ արձակեց:*

Աստվածաշնչյան հաջորդ դրվագը, որը հիշատակում է Պետրոս Սյունեցին, Թվոց գրքի 17-րդ գլուխն է, որտեղ պատմվում է Ահարոնի ծաղկած գավազանի մասին. «*Եւ եղեւ ի վաղիւ անդր եւ մփին Մովսէս եւ Ահարովն ի խորանն վկայութեան: Եւ ահա դալարացաւ գաւազանն Ահարովնի ի տան Ղեւեայ, եւ արձակեաց շառաւեղել, եւ ծաղկեաց ծաղիկ, եւ երեսեցոյց ընգոյգ:*»

Այս պատումի մեջ Աստված ցույց է տալիս իր ընտրությունը՝ իսրայելացիների 12 ցեղերի միջից ընտրելով Աբրահամին ու որպես ժողովրդի անհնազանդության դեմ նշան զետեղելով Ուխտի տապանակում (տե՛ս Թվ. ԺԷ): Այդպիսով Տերը քահանայության պատիվը վերապահեց Ահարոնին և նրա հետնորդներին, որոնց մեջ մեծագույնը հավիտենական Քահանայապետ Քրիստոս էր՝ Հեսսեի արմատից բուսնած *մշտադալար Գավազանը* (Թվ. ԺԷ 8): «Գովեստի» հեղինակն այս հիշատակությանը զուգահեռում է Եսայու մարգարեությունը Հեսսեի (Դավթի հոր) արմատից, այսինքն՝ Դավթի սերնդից Փրկչի սերելու մասին. «*Եւ բոխեսցէ գաւազան յարմատոյն յեսսեա. եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի...ի նա հեթանոսք յուսացին*» (Ես. ԺԱ 1, հմմտ. ԺԱ 10):

Է. Ուրախ լեր Մարիամ, Սափոր ոսկի, որ ոչ զմահկանացու ընչընչուկն կրեցեր, այլ զանմահացուցիչ կերակուրն, զոր աստուածեղէն բերանն հրատարակեալ ասէ. «Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին եւ մեռան, իսկ որ զմարմին իմ ուտէ՝ զմահ մի՛ տեսցէ յափտեան» – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ոսկի սափոր, որ ոչ թե մահկանացու ուրելիք կրեցիր, այլ՝ անմահացնող կերակուր, որի համար աստվածային բերանն ինքը ասաց. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան և մեռան, բայց ով իմ մարմինն ուրի, հավիտյան մահ չպիտի տեսնի»:*

Այս հատվածում հեղինակը մեջբերում է երկնքից աստվածատուր մանանայի էջքի սուրբգրային տեղին (տե՛ս Ելք ԺԶ)՝ Հովհաննեսի Ավետարանի համապատասխան հատվածի հետ համադրությամբ (տե՛ս Հովհ Ը 51-52): Առաջին հայացքից թվում է, թե Պետրոս Սյունեցին այստեղ խախտում է աստվածաշնչյան տեղիների մեջբերման կանոնական հերթականությունը՝ Թվոց գրքի մեջբերումից հետո դարձյալ վերադառնալով Ելից գրքում պատմված մի դրվագի: Սակայն իրականում հեղինակն այստեղ լրացնում է ծաղկյալ գավազանի մասին նախորդ պատումը: Ինչպես Ահարոնի ծաղկյալ գավազանը (տե՛ս Թվ. ԺԷ 10), այդպես նաև՝ մանանայի մնացորդները (տե՛ս Ելք ԺԶ 32-34) հրեաների կողմից զետեղվել էին աստվածային ներկայությունը խորհրդանշող Ուխտի տապանակում: Այս առումով թե՛ նա-

խորդ (2) և թե՛ ներկա (Է) տները հեռակայորեն մատնանշում են Աստվածածնի խորհրդաբանությունն իբրև «Ուխտի տապանակ», որում սքանչելախորհուրդ երևամամբ հայտնվեց Աստվածորդին:

Ը. Ուրախ լեր Մարիամ, Տուփ խնկահոտ իւղով լցեալ, ուստի նարդոսն մեծագնի բուրեալ եւ աստուածային անուշահոտութեամբ զտիեզերական տունս լցոյց – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, խնկաբոյր յուղով լեցուն փուփ, որից մեծագին նարդոսը բուրեց ու աստվածային անուշահոտությամբ լցրեց փեզերական փունը:*

Այստեղ Սյունյաց եպիսկոպոսի հայացքի կենտրոնում դարձյալ Թվոց գիրքն է՝ այն դրվագը, երբ Մովսեսի՝ Վկայության խորանը կառուցելուց հետո հրեաները Տիրոջ Սուրբ Սեղանի առջև իբրև ընծա էին մատուցում խնկով լցված տուփեր (տե՛ս Թվ. Է 14): Նույնպես և Աստվածածինն է համարվում խնկաբոյր տուփ, որից բուրում և համայն տիեզերքն է պարուրում Աստվածորդու փրկչական անուշաբուրությունը:

Թ. Ուրախ լեր Մարիամ, Տապանակ շարժուն, յորում Բանն մշտնջենաւոր եղև և կենդանագրեալ եւ նորոգելով եւս զջարդեալսն փոխանակ մովսիսակերտ քարեղինացն չորս բանաւոր տախտակս զաստուածական արէնս դրոշմեաց – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, շարժուն փապանակ, որի մեջ կենդանագրվեց մշտնջենավոր Բանը և նորոգեց մովսիսակերտ փշրված, քարեղեն փախտակները՝ նրանց փոխարեն աստվածային օրենքները չորս բանավոր փախտակների վրա դրոշմելով:*

Այստեղ դարձյալ զարգացվում է Ուխտի տապանակի խորհրդաբանությունը. ինչպես Մովսեսը, Տիրոջ հրամանով, Ուխտի տապանակի մեջ էր զետեղել Օրենքի 2 քարե տախտակները (տե՛ս Բ Օրին. Ժ 5), այդպես էլ Նոր Ուխտի տապանակը՝ Աստվածածինը, իր մեջ էր կրում Նոր Օրենքի 4 տախտակների (նույնն է, թե՛ 4 Ավետարանների) Օրինատուին՝ Հիսուս Քրիստոսին:

Ժ. Ուրախ լեր Մարիամ, Տուն կենդանի ջրոյն, զորմէ մարգարէն ասէր, թէ Զուր ի տանէ Տեառն ելցէ եւ արբուսցէ զվիճակն հեթանոսաց, զոր եւ Միածինս ասաց, թէ ես եմ ջուրն կենդանի – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, կենդանի ջրի փուն, որի մասին մարգարեն ասում էր. «Տիրոջ փնից աղբյուր պիտի ելնի և հեթանոսներին բաժինը ոռոգի», ինչպես Միածինը ինքը ևս ասաց. «Ես եմ կենդանի ջուրը»:*

Հաջորդիվ խորհրդաբանական համեմատությունն ուղղվում է դեպի սուրբ-գրային մարգարեությունները: Մասնավորապես մեջբերվում է Հովելի մարգարեության սույն համարը. «Եւ եղիցի յաւոր յայնմիկ բղխեսցեն լերինք զքաղցրութիւն, և բլուրք յորդեսցեն զկաթն, և ամենայն աղբերք Յուդայ բղխեսցեն ջուրս: Եւ աղբեր ի փանէ Տեառն ելցէ, և արբուսցէ զծորն վիճակաց» (Հովել Գ 19): Կենդանի ջրի տունը՝ Սուրբ Աստվածածինը, իրենից բխեցնում է կենդանի ջրի Աղբյուրը (Հովհ. Դ 10-11)՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

ԺԱ. Ուրախ լեր Մարիամ, Բոյս բարի ըստ սրբոյն Յակովբայ, որ արծարծեալ ի մահիճսն առ կենարարն Քրիստոս զբանն տպաւորեաց, թէ՛ «Ի շառաւելէ ելեր որդեակ» (Ծննդ. ԽԹ 9) – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ըստ սուրբ Հակոբի, բարի բոյս, որ մահճի մեջ նորոգվելով ակնարկեց կենարար Քրիստոս Բանին, թե՛ «Իմ շառավղից ելար, որդյալ»:*

Այստեղ համեմատության եզրը դարձյալ Հին Կտակարանի պատումն է, և կրկին (ինչպես Բ տան մեջ) Հակոբի օրհնությունների՝ Ծննդոցի դրվագը: Քրիստոս այստեղ ներկայանում է իբրև Հակոբի (Հուդայի) շառավղից բուսնած ճյուղ

(տե՛ս Ծննդ. ԽԹ 9), իսկ Տիրամայրը համեմատվում է այդ ճյուղն ընծյուղած Բարի արմատի հետ:

ԺԲ. Ուրա՛խ լեր Մարիամ, Քաղաք Աստուծոյ ըստ երանելոյն Դաւթայ, որ յառաջն երգեաց թէ «Փառաւորեալն խաւսեցաւ վասն քո քաղաքդ Աստուծոյ» - Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Աստուծո քաղաք՝ ըստ երանելի Դաւթի, որ դեռ շարտ առաջ երգեց. «Տերը փառավոր բաներ խոսեց քո մասին, Աստուծո՛ւ քաղաք»:

Այս տան մեջ Աստվածածինը պատկերվում է «Աստծո քաղաքի» խորհրդանշական պատկերով: Ինչպես Դաւիթ մարգարեն իր սաղմոսներում փառաբանում էր Սիոնը՝ Աստծո քաղաքը, որում Տերը հոժարել էր բնակվել (տե՛ս Սաղմ. 22 3), այդպես և այստեղ Պետրոս Սյունեցին օրհնաբանում է Սբ. Կոյսին, որին Աստված բարեհաճել էր ընտրել իր սրբազան բնակության համար:

ԺԳ. Ուրա՛խ լեր Մարիամ, Տեղի շափիղայի, զի իբրեւ ակն պատուական աստուածախառն մարմինն գոյանայր ի քեզ, որ եւ եղան իսկ որպէս զքար ընտիր ի հիմունս Սիովնի - Ուրախացի՛ր, Մարիա՛մ, բնակարեղի շափյուղայի, որովհետեւ աստվածախառն մարմինը քո մեջ գոյացավ իբրեւ պարզական ակն, որն իբրեւ ընտիր քար դրվեց Սիոնի հիմքում:

Դարձյալ ակնարկ ենք տեսնում մարգարեական կանխասացությանը: Եզեկիել մարգարեն իր տեսիլքներից մեկում հանդիպում է Աստծուն՝ բազմած շափյուղա քարից շինված երկնային գահին. «Եւ տեսանէի ահա ի վերայ հաստատութեանն որ էր ի վերայ գլխոց քերովքէիցն իբրեւ զվէմ շափիղայական, և ի վերայ նորա նմանութիւն աթոռոյ» (Եզեկ. Ժ 1): Աստվածածինն այստեղ համարվում է որպէս Սիոնի հիմքում դրված շափյուղայակերտ գահ, քանի որ հենց նրա (Աստվածածնի) մեջ բազմեց համայն մարդկության Փրկիչ-Թագավորը:

ԺԴ. Ուրա՛խ լեր Մարիամ, ըստ ամենիմաստնոյն Սողովմոնի Աղբեր կնքեալ, ընդ որ ամենալցոյց գետն բոխեալ՝ զկուսութեանն կնիք ո՛չ ելոյծ - Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ըստ ամենախմաստուն Սողոմոնի՝ կնքյալ աղբյուր, որից, առանց կուսության կնիքը եղծելու, բխեց ամենալից գետը:

Այս տան մեջ շեշտադրվում է Տիրամոր մշտակուսությունը: Աստվածածինը ներկայացվում է իբրեւ «Աղբեր կնքեալ» (Երգ երգոց Դ 12), որից բխեց ամենալից գետը: Այս պատկերը վերցված է Երգ երգոցի 4-րդ գլխից:

ԺԵ. Ուրա՛խ լեր Մարիամ, Պարտէզ փակեալ, որ զբազմաբեր ձիթենին վերընծիղեցեր, յաղագս որոյ Եսայիաս մարգարեացաւ, թէ Մնացեալն Յակովբայ նորատունկ սիրելի. ծաղկեսցէ Իսրայէլ եւ լցցի երկիր պտղով նորա - Ուրախացի՛ր, Մարիա՛մ, փակված պարտեզ, որ բազմաբեր ձիթենին վերընծյուղեցիր, որի մասին Եսային մարգարեացավ՝ ասելով. «Գալիք օրերին Հակոբը նոր տունկեր պիտի բուսեցնի, Իսրայելը պիտի ծաղկի և ընծյուղվի, ու ամբողջ աշխարհը նրա պտղով պիտի լցվի»:

Նախորդ տան մեջ գործածված սուրբգրային միևնույն տեղին (Երգ երգոցի Դ 12)՝ շարունակաբար, հիշատակվում է այստեղ՝ Եսայու մարգարեության հետ զուգադրվելով: Տիրամայրը կոչվում է «Պարտէզ փակեալ», որում վերընծյուղվեց «բազմաբեր ձիթենին»՝ փրկության պտուղը (Հիսուս Քրիստոսին) պարգևելով ամբողջ աշխարհին (տե՛ս Երգ երգոց Դ 12, հմմտ. Եսայի ԻԷ 6):

ԺԶ. Ուրախ լեր Մարիամ, Հովիտ անվար, ուստի իբրեւ շուշան վայրենի տէրունական մարմինն բուսաւ, զորմէ հոգելից մարգարէն ճառեաց, թէ՛ «Եղէց ցաւ Իսրայելի եւ ծաղկեցէ որպէս շուշան» – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, անմշակ հովիտ, որից տէրունական մարմինը բուսնեց վայրի շուշանի պէս, և որի մասին խոսեց հոգելից մարգարե Ովսեն՝ ասելով. «Իսրայելի համար ցոյ պիտի լինեմ, և այն շուշանի պէս պիտի ծաղկի»:*

Ովսեի մարգարեության այս «Հովիտ անվար» բնորոշումը կրկին նշանակում է Աստվածածնի կուսությունը, իսկ այդ անմշակ հովտում բուսնած «վայրի շուշանը» Քրիստոս էր, որ ոռոգվեց աստվածային ցոյով ու ծաղկեց հանուն Իսրայելի (լայն իմաստով՝ բոլոր քրիստոնյաների) փրկության (տե՛ս Ովսե ԺԴ 6):

ԺԷ. Ուրախ լեր Մարիամ, Բլուր խնկոյ, յոր Տէրն մտեալ անմահութեանն հոտովն զմահկանացու նիւթն համեմէր եւ ծնեալ յաշխարհ կենդանեաց եւ մեռելոց՝ յափտենական ծխէր կեանս, զոր մարգարէութիւնն կանխաւ գուշակէր, թէ՛ «Բուրեցի հոտ նորա որպէս կնդրկի» – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, խունկի բլուր, ուր Տէրը մտնելով՝ մահկանացու նյութը անմահության հոտով համեմեց ու կենդանիների և մեռյալների այս աշխարհում ծնվելով՝ հավիտենական կյանքի խունկը ծխեց, ինչպէս որ մարգարեությունն էր նախագուշակում. «Այն կնդրուկի պէս պիտի բուրի»:*

Դարձյալ հիշատակվում է Ովսեի մարգարեությունը՝ նախորդ տան մեջ վկայաբերված տեղիին անմիջապէս հաջորդող հատվածը, և այդպիսով ակնարկվում է Քրիստոսի փրկարար տնօրինությունը, ըստ որի՝ Բանն Աստված Մարիամի որովայնում «անմահութեանն հոտովն զմահկանացու նիւթը» համեմեց՝ մարդկային մարմնի հետ անճառելի միավորությամբ ծնվելով «**յաշխարհ կենդանեաց եւ մեռելոց**» ու բուրելով հավիտենական կյանքի անուշահոտ խունկը (տե՛ս Ովսե ԺԴ 7):

ԺԸ. Ուրախ լեր Մարիամ, Երկիր ծարաւուտ, զորոյ զբնութիւնն ոչ իշխեաց վթարել լուծումն արուի. ուստի մարգարէն զՔրիստոս ի նմա բոյս յապառաժի երգեաց ասելով՝ Պատմեցաւ մեզ իբրեւ զմանուկ, իբրեւ զարմատ ի ծարաւուտ երկրի – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, անջրդի հող, որի չոր բնությունը որևէ արվական բնություն չհամարձակվեց խոնավեցնելով աղարպել: Այդ իսկ պատճառով մարգարեն Քրիստոսին նրա վրա ծլարձակած նկարագրեց՝ ինչպէս ապառաժի վրա ծլած մի բոյս՝ ասելով. «Նա մեր առջև բացվեց մատղաշ տունկի նման, անջրդի հողում բուսնած արմարի պէս»:*

Աստվածածինը դիտվում է որպէս անջրդի հող, որի կուսությունը մշտապէս անեղծ ու անբասիր մնաց՝ զերծ տղամարդկային ամեն տեսակի ներգործությունից: Իսկ Քրիստոս էլ ներկայանում է որպէս այդ կուսական Ծննդյան Պտուղ՝ ծլարձակած ասես ապառաժի վրա (տե՛ս Եսայի ԾԳ 2):

ԺԹ. Ուրախ լեր Մարիամ, Ամպ թեթեւ ըստ յառաջասացութեան մարգարէին, թէ Ահա՛ւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթեւ ամպոյ եկեցէ յեգիպտոս: Եւ արդարեւ ամպ ցամաք, զի ոչ գիջացեալ ծանրացար ի ցանկութենէ առն – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, թեթև ամպ՝ ըստ Եսայի մարգարեի կանխասացության. «Ահավասիկ Տերը թեթև ամպի վրա նստած Եգիպտոս պիտի գա»:* Արդարև

ցամաք ամպ ես դու, քանի որ աշխարհային ցանկություններով չխոնավացար ու չծանրացար:

Եսայի մարգարեի «**Թեթև ամպ**» բնորոշումը (տե՛ս Եսայի ԺԹ 1) Տիրամոր վերաբերությամբ կիրառված է հայ մատենագրության մի շարք երկերում: Մուշի որդի Հովհաննեսի՝ Եսայու մեկնության մեջ հեղինակը նշում է, որ թեպետ այս որակումը ոմանց կողմից տրվել է Սբ. Կույսին, սակայն իրականում այն վերագրելի է Աստվածային բնությանը. «*Թէպէտ եւ թանձրագոյն իցէ, գոյ սակայն ի նմա անմարմնական ինչ: Ոմանք զտուրք կոյս ասեն ամբ, սակայն եւ առ լսելս եւ այս՝ չէ փոքր, զի զանաւարութիւն եւ զթեթեւութիւն եւ զարագութիւն էութեանն ցուցանէ*» (Յովհաննէս Մուշի որդի 2009, 129):

Գևորգ Սկևռացու՝ Եսայու մեկնության մեջ արդեն մեկնիչը համաձայնում է «ամպ թեթև» բնորոշման՝ Աստվածածնին մատնանշելու խորհրդաբանությամբ և նշում է. «*Ոմանք զտուրք Կոյսն ասեն «զամպն»: Եւ բարութ իմացան, զի զանաւարութիւն եւ զթեթեւութիւն, այսինքն՝ զամենամաքուր սրբութիւն Կուսին ցուցանէ թեթեւն զցամաքն, եւ զանմասն ի փամկութենէ*» (Սկևռացի 2010, 212):

Մինչդեռ Սարգիս Կունդը, այս հատվածին անդրադառնալով, որևէ կերպ չի ակնարկում, որ հիշյալ մարգարեական տողերն Աստվածածնի մասին են (տե՛ս Կունդ 2003, 359–360):

Այս մարգարեության՝ Աստվածածնին բնորոշելու վերաբերյալ ամենակուտ ու համապարփակ մեկնությունը տալիս է սբ. Գրիգոր Տաթևացին, որը 10 պատճառ է բերում՝ «ապացուցելով», թե այս տողերն ինչու են հատկապես հենց Տիրամորը բնորոշում (տե՛ս Եսայու մարգարեության մեկնություն 2024, 36–38):

Ի. Ուրախ լեր Մարիամ, Անապատ անկոխ, յորում ոչ սոսկ ոք մարգարէ զվկայութեանն գործէ խորան, այլ զմեծն եւ զկատարեալն եւ զանձեռագործ խորանն, այսինքն զտիրական մարմինն առանց սերման առն ստեղծ ինքեան, զոր ի լուսազգեստ արգանդին հարեալ սաղմէր, զոր եւ հոգեհնչող քնարն հնչէ, թէ Յարեու եհար զխորան իւր – Ուրախացի՛ր, Մարիա՛մ, անկոխ անապատ, ուր ո՛չ թե մի պարզ մարգարե կանգնեցրեց վկայության խորանը, այլ Աստվածորդին Ինքը՝ մեծ, կապարյալ և անձեռագործ խորանը, այսինքն՝ Իր տիրական մարմինը, որն առանց արվական սերմի ստեղծեց, և որը լուսազգեստ արգանդում սաղմնավորելով կանգնեցրեց ինչպես հոգեհնչող քնարը՝ Դավիթն է ասում. «Արևի մեջ կանգնեցրեց իր խորանը»:

«**Անապատ անկոխ**» բնորոշումը, որը դարձյալ Տիրամոր կուսության հավաստումն է, այս առումով չունի աստվածաշնչյան ակունքներ, այլ ակնարկում է Մովսեսի կողմից Վկայության խորանն անապատում կանգնեցնելու սուրբգրային պատումը (տե՛ս Ելք ԻԵ): Այստեղ Պետրոս Սյունեցին գեղագիտորեն զարգացնում է անապատ-արև համեմատական պատկերը և Սաղմոսաց գրքի զուգադրությամբ Տիրամոր արգանդը համարում է արևառատ «անապատ», որում Ինքը՝ Աստվածորդին կանգնեցրեց Աստծո սուրբ խորանը (տե՛ս Սաղմ. ԺԸ 6):

ԻԱ. Ուրախ լեր Մարիամ, Դուռն աղխեալ, ընդ որ հրեշտակաց Տէրն մո՛ւտ եւ ե՛լ եւ զկուսական արգանդդ ոչ ելոյծ, յաղագս որոյ Եզեկիէլ մարգարէացաւ, թէ Դուռնն որ յարեւելս կոյս է՝ ոչ ոք մտցէ ընդ նա եւ ելցէ, բայց Տէր Աստուած Իսրայելի մտցէ եւ ելցէ եւ դուռն փակեալ կայցէ – Ուրախացի՛ր, Մարիա՛մ,

կողպված դուռ, որից միայն հրեշտակների Տերը մտավ ու ելավ և կուսական արգանդը չլուծեց, որի մասին մարգարեացավ Եզեկիելը. «Արևելյան կողմի դուռը փակ պիտի մնա, պիտի չբացվի, ու այնտեղից որևէ մեկը չպիտի մտնի կամ դուրս գա, որովհետև այնտեղով Իսրայելի Տեր Աստվածը պիտի մտնի ու ելնի, բայց դուռը փակված պիտի մնա» (հմմտ. Եզեկ. ԽԴ 1-2):

Այս մարգարեությամբ Տերը նկարագրում է տաճարի կառուցվածքը և, խոսելով սրբարանի արևելյան դռան մասին, ասում է. «**Ա՛յդ դուռն փակեալ կացցէ՛ և մի՛ բացցի՛ և մի՛ որ անցցէ ընդ դա, զի Տէր Աստուած Իսրայելի մտցէ ընդ դա. և եղիցի փակեալ: Քանզի առաջնորդ իշխանն նա՛ նստցի ի դմա ուրել հաց առաջի Տեանն**» (Եզեկ. ԽԴ 2-3): Հինկտակարանյան այս մարգարեությունը մարեմաբանության մեջ լայնորեն կիրառվում է որպես կանխասացություն և հիմնադրույթ Աստվածածնի հավիտենական կուսության վերաբերյալ: Քրիստոնեական Ուղղափառ Եկեղեցին Եզեկիել մարգարեի այս խոսքերը համարում է մարգարեություն Աստծո Որդու՝ Ամենաարքուի Կույս Մարիամից մարմին առնելու և միևնույն ժամանակ Աստվածածնի կուսության անաղարտ մնալու իրողության մասին (տե՛ս Православная библиотека, блаженный Феодорит Кирский, Толкование на пророка Иезекииля, глава 44), ինչը նկատի ունենալով էլ այս հատվածը ընթերցվում է Աստվածածինն նվիրված տոների ժամանակ:

ԻԲ. Ուրա՛խ լեր Մարիամ, Տոմար անընթեռների, զի թէպէտ եւ գիտէր Յովսէփ զգարութիւն, զի ունէր այլ կին, եւ չէր անփոյթ ի մարմնոյ խառնութեանց, սակայն զնա ո՛չ իշխեսաց ընթեռնույ, որպէս մարգարէն ասաց, թէ Տացի թուղթս այս յայր մի, որ գիտիցէ դարութիւն եւ մի՛ կարասցէ ընթեռնույ զնա – Ուրախացի՛ր, Մարիա՛մ, անընթեռների գրություն, որովհետև թեպէտ Հովսեփը կարդալ գիտեր, քանի որ այլ կին ուներ և անփոյթ էլ չէր մարմնական միավորության գործում, սակայն չհամարձակվեց քեզ կարդալ, ինչպես որ մարգարեն ասաց. «Թուղթը պիտի տրվի մի մարդու, որը կարդալ գիտի, սակայն չպիտի կարողանա կարդալ այն»:

Դարձյալ հիշատակվում է հինկտակարանյան մի մարգարեություն՝ Եսայու 29-րդ գլխից (տե՛ս Ես. ԻԹ 12), որի հասցեատերերը սուտ մարգարեններն էին: Վերջիններս, զուրկ լինելով աստվածընտրյալ մարգարե լինելու շնորհից և դրանով հանդերձ փորձելով մեկնաբանել ու կանխատեսել Տիրոջ կամքը, մարդկանց շփոթության մեջ էին գցում: Այս կեղծ մարգարենների դեմ ուղղված խոսքում առկա «**Տոմար անընթեռների**» բնորոշումը մարգարեական իմաստով վերագրվում է արդեն Սուրբ Կույս Մարիամին՝ նկարագրելով Հովսեփի հետ նրա անարատ հարաբերությունները: Զարգացնելով այս խորհրդաբանությունը՝ Հովսեփին կարող ենք համեմատել «կեղծ» մարգարենների հետ, որոնց, ինչպես գիտենք հինկտակարանյան պատմությունից, վիճակված չէր հասկանալու աստվածային տնօրինությունները (տե՛ս Մատթ. Ա 19): Ի համեմատություն կեղծ մարգարենների, սակայն, Հովսեփը խոնարհվեց Աստծո կամքի առաջ և վարվեց Տիրոջ պատգամի համաձայն (տե՛ս Մատթ. Ա 24):

ԻԳ. Ուրա՛խ լեր Մարիամ, Երկիր բանաւոր, զի աստուածընկալ որովայնդ անմատոյց լուսոյն ոչ միայն աթոռ, այլ ճշմարտութեամբ եղև մայր, զոր եւ ոմն ի շնորհալից վարդապետացն գրեաց, թէ Նորագործ աստուածապէս ճարտա-

րապետեալ՝ զերկիրս երկին արար – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, բանավոր երկիր, որովհետև աստվածը նկատ քո որովայնը ո՛չ միայն աթոռ, այլև ճշմարտապես մայրը եղավ լույսի, ուստի և շնորհալից վարդապետներից մեկը գրեց, թե՛ «որպես Աստված և ճարտարապետ՝ երկիրը վերստեղծելով երկնքի վերածեց»:*

Աստվածածինն այս անգամ փառաբանվում է որպես բանական երկիր (արարչաստեղծ աշխարհ, տիեզերք), որը Աստծո գործողամբ երկնքի վերածվեց: Այստեղ կարող ենք հստակ ակնարկ տեսնել Տիրամոր վերափոխման խորհրդի՝ Քրիստոսի կողմից երկրից երկինք բարձրացվելու վերաբերյալ: Իսկ ահա հիշատակված **«Նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար»** արտահայտությունը քաղված է Պատարագամատուցից, որը Հ. Քյոսեյանն արձանագրել է Պետրոս Սյունեցու այս երկը հրատարակելիս (Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության 2003, 168–169):

Ի. Ուրա՛խ լեր Մարիամ, Առաւատ գեղեցիկ, յորում խաղաղութիւնն մեր զարմանալի յարինմամբ արար զերկոսինն մի, եւ ըստ սրբոյն Զաքարիայ՝ արեգակնաբար ի մեզ ծագեցաւ, փարատել զխաւար մեղաց – *Ուրախացի՛ր, Մարիա՛մ, գեղեցիկ առավուր, որով ծագած մեր խաղաղությունը զարմանալի հորինմամբ երկուսը մեկ դարձրեց և, ըստ սուրբ Զաքարիայի, «արեգակնաբար ծագեց մեզ վրա՝ մեղքերի խավարը փարապելու համար»:*

Այս վերջին տան մեջ էլ Պետրոս Սյունեցին հիշատակում է Հովհաննես Մկրտչի հայր Զաքարիա քահանայի օրհներգությունը: Ականատես և մասնակից լինելով Աստծո հրաշքին՝ ծերունագարդ Զաքարիան իր ամուլ կնոջից զավակ ունենալուց հետո այսպես է գովերգում Տիրոջը. «Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ ա՛յց արասցէ մեզ արեգակն ի բարձանց: Երեւե՛լ որոց ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին. ուղղե՛լ զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան» (տե՛ս Դուկ. Ա 78–79): Աստվածածինը, արդարև, «գեղեցիկ առավուր» եղավ և մեզ վրա ծագեցրեց ճշմարիտ Լույսը՝ ամենքի Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

«Ուրա՛խ լեր Մարիամ» շարքն իր գեղագիտական սքանչելի հորինվածքով Սբ. Աստվածածինն ուղղված փառաբանական օրհներգության հիանալի նմուշ է, և իզուր չէ, որ այս շարքից մի շարք հատվածներ մուտք են գործել նաև հայ շարականագրության մեջ՝ իբրև «մեծացուցե՛ք» շարականային միավոր (տե՛ս Զայնքաղ Շարական 1999, 17):

Ուշագրավ է, որ Աստվածածինն գովերգող բնորոշումներից և մակդիրներից, որոնք իր Ներբողում գործածել է Պետրոս Սյունեցին, ակնհայտ է դառնում հեղինակի կրած ազդեցությունը վաղ քրիստոնեական հայրախոսական ժառանգությունից: Քրիստոնեական եկեղեցական մատենագրության հետ այդ «կենդանի կապը» առավել տեսանելի է դառնում, երբ համադրության մեջ ենք դնում արևելաքրիստոնեական մարեմաբանության մեջ գործածված եզրույթները Սյունյաց եպիսկոպոսի բնորոշումների հետ: Մասնավորապես սբ. Աթանաս Ալեքսանդրացու՝ Աստվածածինն ծոնված ներբողը մեծ հետք է թողել Պետրոս Սյունեցու այս երկի վրա: Ծիշտ Աթանասի նմանողությամբ է Պետրոս Սյունեցին շարադրել դարձյալ 24 տնից բաղկացած «Ուրա՛խ լեր Մարիամ» շարքը: Աթանաս Ալեքսանդրացին իր ներբողում, ի մասնավորի, խոսում է աստվածային անճառելի տնօրինությամբ Փրկչի՝ Աստվածածնից ծնվելու և Իր փրկչական առաքելությունն

իրականացնելու մասին (տե՛ս Սրբոյն Աթանասի Աղեքսանդրի հայրապետի Ներբողեան ի սուրբ Աստուածածինն 1899, 284–285):

Իսկապես հիասքանչ է Աստվածածինն տրված մակդիրների փառահեղ շարքը: Պետրոս Սյունեցին այսօրինակ օրհներգիչ խոսքերով է մեծարում Աստվածածինն՝ նրան կոչելով «անաղտ սրբութիւն, բազմափառ կոյս, վեմ ջրածին, դրախտ աստուածատունկ, մորենի սխրալի, յարադալար ծաղիկ, աղբիւր կնքեալ, բազմաբեր ծիթենի, լուսազգեստ արգանդ, անապատ անկոխ, անձեռագործ խորան, աստուածընկալ որովայն» և այլն (տե՛ս Մատենագիրք Հայոց 2004, 389–394):

Այնուհետև ներբողագիր եպիսկոպոսը իր խոսքն ամփոփում է այս գեղասքանչ համեմատությամբ՝ «ահա երկինքն, որ ի Սինէական լերինն բոցազարդ հրով զսանդարամետացն հիմունս դղորդեալ սասանեցուցին, եւ ձեռքն, որ զերկինս եւ զերկիր արարին, այժմ ի մէջ անցեալիբրեւ զպարմանի՝ բաժակ ի մատունս բերեալ՝ աղջկան միոյ մատուցանէ» (տե՛ս Մատենագիրք Հայոց 2004, 395):

Պետրոս Սյունեցու այս ներբողում, ինչպես Աստվածածինն ծոնված գրեթե մյուս բոլոր ճառերում, Տիրամոր բարեխոսության թեման արծարծվում է որպես բնագրի վերջաբան: Սյունյաց եպիսկոպոսը գրում է. «Արդ՝ աղաչեմք զքեզ, սուրբ Աստուածածին, լե՛ր բարեխաւս առ Որդիդ քո եւ Աստուած մեր միշտ փրկել ի փորձութենէ, զի ի ձեռն քո ի նա հաւատացեալ ժողովորդս եւ փառս մատուցանել ծնիցելոյդ ի քէն. այժմ եւ յալիտեանս յալիտենից, ամեն» (տե՛ս Մատենագիրք Հայոց 2004, 395) – «Արդ, աղաչում ենք, սուրբ Աստվածածին, բարեխոս՝ եղիր քո Որդու ու մեր Աստծո մօտ, որպեսզի Նա քո միջոցով միշտ փրկի իրեն հավատացող մեր ժողովրդին, և մենք էլ՝ Նրան, ով ծնվեց քեզնից, փառավորենք այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Եզրակացություններ

- Հայ մատենագրության հարուստ և բազմաբովանդակ էջերն անխոս վկայություն են Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական անաղարտության մասին: Դարեր շարունակ հայ եկեղեցու՝ վաղագույն շրջանում դավանած հավատքի ճշմարտությունները անխախտ ու անսասան են մնացել՝ հիմք դառնալով դավանական այն բոլոր հիմնադրույթների, որոնք երբեմն քարկոծվել, երբեմն ընդունվել են այլոց կողմից, սակայն երբևէ չկորցնելով չխամրող ճշմարտացիության լույսը:

- Պետրոս Սյունեցու «Գովեստ ի Սուրբ Աստուածածինն» երկը խարսխված է աստվածաշնչյան տեղիների և հայրաբանական վկայությունների վրա՝ նախանշելով հայ մարեմաբանական մտքի ինքնուրույն և անաղարտ զարգացումը:

- «Գովեստ ի Սուրբ Աստուածածինն» ներբողը հիմնաքարային նշանակություն է ունեցել Աստվածածինն ծոնված երկերի մեջ: Պետրոս Սյունեցուն հաջորդած հեղինակներն Աստվածածինն ծոնած իրենց տողերը շարադրելիս հաճախակի մեջբերումներ են կատարել այս «Գովեստ»-ից՝ այդպիսով փաստելով իրենց հավատարմությունը Սուրբ Կույսի անսերմ հղության և մշտակուսության վերաբերյալ քրիստոնեական Եկեղեցու նախաշավիղ դավանանքին:

- «Գովեստ»-ում խիստ ընդգծված է Տիրամոր բարեխոսության թեման, որը, որպես վերջաբան, ամփոփում է Աստվածածնի անչափ մեծ դերը փրկագոր-

ծության մեջ՝ հավաքական մեկ եկեղեցու և առանձին հավատացյալների մեծագույն բարեխոս Աստվածորդու առջև:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության, շոշափվող առանցքային հարցերի վերաբերյալ կարևոր խորհուրդների և դիտարկումների համար երախտագիտություն ենք հայտնում մեր գիտական ղեկավար, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. դոկտ. Հակոբ Քյոսեյանին:

Գրականություն/References/Литература

1. Ագաթանգեղեյ Պատմութիւն 2003, Վարդապետութիւն Սբ. Գրիգորի, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, հրատ. նշված է:
History of Agathangegea 2003, Doctrine of St. Gregory, Matenagiriq Hayots, vol. 2, Antelias-Lebanon (in Armenian).
2. Ակինեան Ն. 1904, Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց, Վիեննա, հրատ. նշված է:
Akinian N. 1904, Bishop Bedros of Syunik, Vienna (in Armenian).
3. Անանունի Մեկնութիւն մարգարեութեանն Եսայեայ 2003, Սբ. Էջմիածին:
Anonymous Commentary on the Prophecy of Isaiah 2003, Holy Etchmiadzin (in Armenian).
4. Աստուածաշունչ Մատեն Հին եւ Նոր Կտակարանաց 1997, Սբ. Էջմիածին:
Bible Book of the Old and New Testaments 1997, Holy Etchmiadzin (in Armenian).
5. Գալուստեան Շ. եպս. 1993, Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղեմ, Տպարան Սրբոյ Յակոբեանց:
Bishop Kalousdian Sh. 1993, Doctrines of Theology, Jerusalem (in Armenian).
6. Եսայու մարգարեության մեկնություն 2024, Երևան, հրատ. նշված է:
Interpretation of Isaiah's Prophecy 2024, Yerevan (in Armenian).
7. Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության 2003, Սբ. Էջմիածին:
Selected Armenian Church Bibliography 2003, Holy Etchmiadzin (in Armenian).
8. Իգնատիոսեան Վ. ծ. վրդ. 1978, Բարեխօսութիւն սրբոց, Վենետիկ, հրատ. նշված է:
Ignatiusian V., Rev. 1978, The Intercession of the Saints, Venice (in Armenian).
9. Խաչերեան Լ.Գ. 1998, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V–XVI դդ.), Լիզպոն, հրատ. նշված է:
Khacherian L.G. 1998, The Academic Centers of Armenian Literature: Schools, Seminaries, Seminaries, Seminaries, Academies and Universities in Medieval Armenia and Cilicia (5th–16th centuries), Lisbon (in Armenian).
10. Կունդ Ս. 2003, Ի մեկնութենէ մարգարեութեանն Եսայեայ, Սբ. Էջմիածին:
Kund S. 2003, On the Interpretation of the Prophecy of Isaiah, Holy Etchmiadzin (in Armenian).
11. Չայնքաղ Շարական 1999, Սբ. Էջմիածին:
Vocal Sharakan 1999, Holy Etchmiadzin (in Armenian).
12. Մամբրէի վերծանողի ճառք 1833, Վենետիկ, հրատ. նշված է:
Speech of the interpreter of Mambres 1833, Venice (in Armenian).

13. Մատենագիրք հայոց 2004, հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, հրատ. նշված է:
Matenagiriq Hayots 2004, vol. C, Antelias-Lebanon (in Armenian).
14. Մատենագիրք Հայոց 2005, հ. Ե, Անթիլիաս-Լիբանան, հրատ. նշված է:
Matenakirk Hayots 2005, vol. E, Antelias-Lebanon (in Armenian).
15. Մուրադյան Կ. 1983, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, հրատ. նշված է:
Muradyan K. 1983, Gregory of Nazianzus in Armenian Bibliography, Yerevan (in Armenian).
16. Յաճախապատում Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ ճառս Յաճախապատումն եւ լուսաւոր վարդապետութիւնս յաղագս աւգոյի լսողաց 2003, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, հրատ. նշված է:
The frequent stories of Saint Gregory the Illuminator of Armenia, the said Charis, the frequent stories and enlightening teachings of the young listeners 2003, Matenagiriq Hayots, vol. 1, Antelias-Lebanon (in Armenian).
17. Յովհաննէս Մուշի որդի 2009, Մեկնութիւն Եսայեայ, Սբ. Էջմիածին:
Hovhannes Mush's son 2009, Interpretation of Isaiah, Holy Etchmiadzin (in Armenian).
18. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆԲՀԼ) 1836, Վենետիկ, հրատ. նշված է:
New Dictionary of the Armenian Language (NBHL) 1836, Venice (in Armenian).
19. Սարգիսեան Բ.Հ. 1904, Պետրոս Սիւնեցի, Վենետիկ, հրատ. նշված է:
Sarkissian B.H. 1904, Bedros Syunetsi, Venice (in Armenian).
20. Սկեւռացի Գ. 2010, Մեկնութիւն մարգարեութեանն Եսայեայ, Սբ. Էջմիածին:
Skevratsi G. 2010, Interpretation of the Prophecy of Isaiah, Holy Etchmiadzin (in Armenian).
21. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրի հայրապետի Ներբողեան ի սուրբ Աստուածածինն 1899, Ճառք, թուրքք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, հրատ. նշված է:
The Nerboghian of Saint Athanasius, Patriarch of Alexandria, in the Holy Mother of God 1899, Letters, Papers and Oppositions, Venice (in Armenian).
22. Տաթեւացի Գ. 1741, Գիրք Քարոզութեան որ Կոչի Ամառան Հատոր, Կ. Պոլիս, հրատ. նշված է:
Tatevatsi G. 1741, Book of Sermons Calling the Summer Volume, Constantinople (in Armenian).
23. Տեր-Հակոբյան Զգոն ծ. վրդ. 2018, Սեր և ամուսնություն, Սբ. Էջմիածին:
Rev. Ter-Hakobyan Zgon 2018, Love and Marriage, Holy Etchmiadzin (in Armenian).
24. Տեր-Մկրտչյան Գ. 1998, Հայագիտական ուսումնասիրություններ, Սբ. Էջմիածին:
Ter-Mkrtychyan G. 1998, Armenian Studies, S. Echmiadzin (in Armenian).
25. Քոսեյան Հ. 2018, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երևան, հրատ. նշված է:
Koseyan H. 2018, Introduction to Armenian Church Bibliography, Yerevan (in Armenian).
26. Օրբելեան Ստ. 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանի:
Orbelian St. 1910, History of the Province of Sissakan, Tbilisi (in Armenian).
27. Օրմանյան Մ. արք. 1959, Ազգապատում, Բեյրութ, տպ. Սեւան:
Ormanyan M. Arch. 1959, Azgapatum, Beirut (in Armenian).
28. Православная библиотека, блаженный Феодорит Кирский, Толкование на пророка Иезекииля, https://azbyka.ru/otechnik/Feodorit_Kirskij/tolkovanie-na-proroka-iezekiilja/44 (30.06.2025): Orthodox Library, Blessed Theodoret of Cyrus, Commentary on the Prophet Ezekiel, https://azbyka.ru/otechnik/Feodorit_Kirskij/tolkovanie-na-proroka-iezekiilja/44 (дата обращения: 30.06.2025) (in Russian).

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ – ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

ЕГИШЕ ЧАРЕНЦ – ЕРВАНД КОЧАР

YEGHISHE CHARENTS – YERVAND KOCHAR

Դավիթ Գասպարյան

David Gasparyan

Давид Гаспарян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան

Institute of Istorii National Academy of Sciences, Armenia

Институт истории, Национальная академия наук, Армения

david.gasparyan@academhist.am

Ներկայացվել է՝ 26.11.2024; գրախոսվել է՝ 19.06.2025; ընդունվել է՝ 10.12.2025

Received: 26.11.2024; Revised: 19.06.2025; Accepted: 10.12.2025

Представлено: 26.11.2024; рецензировано: 19.06.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով

© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence

© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-130

Ամփոփում – Հոդվածը նվիրված է երկու հանճարեղ արվեստագետների՝ բանաստեղծ ու արձակագիր Եղիշե Չարենցի և նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարի ստեղծագործական առնչություններին: Նրանք գրեթե հասակակիցներ էին: Չարենցի ծննդյան 125-ամյակը նշվեց 2022-ին, Քոչարինը՝ 2024-ին: Իրար ճանաչել ու գնահատել են դեռևս Թիֆլիսում: Քոչարը 1921 թ. թղթի վրա նկարել է Չարենցին: Հաջորդեց Քոչարի կյանքի փարիզյան շրջանը, երբ նա այդ տարիների եվրոպական ավանգարդի նկարիչների կողքին էր և Պիկասոյի հետ մեկտեղ ցուցադրվում էր առաջնակարգ պատկերասրահներում: 1925-ին Չարենցն ու Քոչարը հանդիպեցին Փարիզում և քննարկեցին ժամանակակից պահանջներին համապատասխան ազգային արվեստի հարցեր: 1936-ին Քոչարը վերադարձավ հայրենիք: Ինչպես նա, այնպես և Չարենցն այդ տարիներին գտնվում էին պետքադարչության հսկողության ներքո: Անկախ քաղաքական հետապնդումներից և հալածանքներից՝ նրանք պատվով անցան արվեստագետի իրենց ուղին, որի հիմքն ազգային ավանդույթն էր և նրանց ստեղծագործական հանճարը: Այդ սիրով նրանք անդրադարձան ազգային էպոսին՝ «Սասնա ծռերին»: Չարենցը գրեց «Սասունցի Դավիթ» պոեմը և նախաձեռնեց «Սասնա ծռերի» պատումների շքեղ հրատարակությունը, Քոչարը էպոսի 1000-ամյակի կապակցությամբ կերտեց Սասունցի Դավիթ արձանը և իրականացրեց տպագիր գրքերից մեկի նկարչական ձևավորումը: Նրանց հետաքրքրությունները միավորվեցին նաև Կոմիտասի կերպավորման գործում: Չարենցը հանդես եկավ պոեմներով ու բանաստեղծություններով, Քոչարը՝ նկարով ու քանդակով: Չարենցին ու Քոչարին հետաքրքրում էին նաև ժամանակի արվեստի տեսության հարցերը՝ հատկապես սինթետիզմը, մոնումենտալիզմը և հայ միջնադարյան ավանդույթ-

ները: Չարենցն ու Քոչարը եղել են անձնական ջերմ փոխհարաբերությունների մեջ և կրել քաղաքական հետապնդումների ծանր հարվածները:

Abstract – The article explores the creative and personal relationship between two genius artists – poet and writer Yeghishe Charents and painter and sculptor Yervand Kochar. Both were almost contemporaries: Charents' 125th anniversary was celebrated in 2022, and Kochar's in 2024. Their acquaintance and mutual admiration began in Tiflis, where in 1921 Kochar drew a portrait of Charents on paper. This was followed by Kochar's Parisian period, where he worked among Europe's avant-garde artists of the time and exhibited alongside Picasso in prominent galleries. In 1925, Charents and Kochar met in Paris to discuss the creation of national art that aligned with modern demands. Kochar returned to Armenia only in 1936. During those years, both he and Charents were under close surveillance by the Political Administration of the State. Despite political repression and persecution, they honorably pursued their artistic paths, rooted in national traditions and creative genius. Their devotion to Armenian culture brought them to the national epic *Sasna Tsrer* (*David of Sasun*). Charents wrote the poem *David of Sasun* and initiated a lavish publication of the epic tales. Kochar, commemorating the epic's millennium, sculpted the statue of David of Sasun and illustrated one of the epic's printed editions. Their shared interests also extended to portraying Komitas. Charents wrote poems and verse dedicated to him, while Kochar created a portrait and sculpture. Charents and Kochar were deeply engaged in contemporary art theories, particularly focusing on synthesis, monumentalism, and Armenian medieval traditions. Their relationship was marked by warm personal connections. Both of them were politically repressed.

Аннотация – Статья посвящена творческим отношениям двух гениальных деятелей искусства – поэта и прозаика Егише Чаренца и художника и скульптора Ерванда Кочара. Они были почти ровесниками: 125-летие со дня рождения Чаренца отмечалось в 2022 году, а Кочара – в 2024 году. Их знакомство и взаимное признание состоялось еще в Тифлисе. В 1921 году Кочар создал портрет Чаренца на бумаге. Затем Кочар уехал в Париж, где работал в кругу европейских авангардистов тех лет и участвовал в выставках вместе с Пикассо в престижных галереях. Парижская встреча Чаренца и Кочара в 1925 г. не прошла бесследно, поскольку она была весьма конструктивной в плане обсуждения вопросов по созданию национального искусства. В 1936 году Кочар вернулся на родину. В те годы как он, так и Чаренц находились под пристальным надзором государственной политической системы. Несмотря на политические преследования и репрессии, они остались верны своим идеям и национальным традициям. Любовь к родной культуре нашла отражение в обращении к национальному эпосу «Давид Сасунский». Е. Чаренц создал поэму «Давид Сасунский» и стал инициатором богато иллюстрированного издания эпоса. Е. Кочар к 100-летию эпоса изваял статую Давида Сасунского и оформил одну из изданий героического эпоса. Знаковая фигура великого Комитаса также нашла воплощение в их творчестве: Е. Чаренц посвятил ему поэтические произведения, а Е. Кочар создал портрет и памятник Комитасу. Их объединяла также общность интересов в вопросах искусства и его направлений. Чаренца и Кочара также интересовали вопросы теории искусства своего времени: синтетизм, монументализм и средневековые армянские традиции.

Հիմնաբառեր – Հայաստան, Եղիշե Չարենց, Երվանդ Քոչար, Կոմիտաս, արվեստ:

Keywords – Armenia, Yeghishe Charents, Yervand Kochar, Komitas, art.

Ключевые слова – Армения, Егише Чаренц, Ерванд Кочар, Комитас, искусство.

Ներածություն

Եղիշե Չարենց – Երվանդ Քոչար՝ իրար արժանի երկու անուն, դարի որոնումներին հետամուտ երկու հայրենի հանճար, որոնց միավորում են ստեղծագործական խորքային ընդհանրությունները, որոնց համար նորը նույնքան կարևոր էր, որքան ազգային տոհմիկ ավանդույթը: Այդ գեղագիտությամբ նրանք անցան իրենց դժվարին ճանապարհը և ստեղծեցին մնայուն գլուխգործոցներ:

Նրանք՝ 1897 թ. մարտի 13-ին մակվեցի ծնողներից Կարսում ծնված Եղիշեն և 1899 թ. հունիսի 15-ին շուշեցի ծնողներից Թիֆլիսում ծնված Երվանդը, սերնդակիցներ էին, մեկը՝ բանաստեղծ, մյուսը՝ նկարիչ:

Ի դեպ, ամենևին ավելորդ չէ նշել, որ *նկարչական վառ արտահայտված ծիրքով օժտված է եղել նաև Չարենցը* (տե՛ս Ալեքսանդրյան 1979, 8):

Չարենցի նկարչական այս ջիղը՝ տեսողական պատկերների, գծի, գույնի, ձևի, լույսի ու ստվերի, խորության ու մակերեսի, ներքին շարժման հետագծի, տարրերի դասավորության ու հաջորդականության ընկալումը, պահի լուսանկարչական վավերականությունը որպես բառանկար տեսնելու շնորհը, պոեզիայում պետք է վերամարմնավորվեր բառապատկերների հյուսվածքով, դիմանկարների կոփվածքով, հերոսի շարժումների դրվածքով:

Հանդիպումներ Թիֆլիսում

Ստեղծագործական ճանապարհը Չարենցին տարավ Թիֆլիս, որտեղ և հանդիպել են:

Ինչպես Չարենցի Արփենիկ Տեր-Աստվածատրյանը, այնպես և Քոչարի Արփենիկը սովորել են Գայանյան դպրոցում: Այստեղից էլ ընդհանուր ծանոթությունը:

1921 թ. հուլիսի սկզբին նորապսակ Չարենցն ու Արփենիկը Թիֆլիսում էին, պիտի մեկնեին Մոսկվա՝ ուսանելու: Այս օրերին էլ Քոչարը նկարել է Չարենցին, ստեղծել «Եղիշե Չարենցի դիմանկարը» (1921, թուղթ, մատիտ, 17x12, Տրետյակովյան պատկերասրահ): Չարենցը նկարում 24 տարեկան է, բայց ներկայացված է ավելի հասուն կերպարով՝ իմաստուն աչքեր, դեմքին թեթև ժպիտ, որ կարող է ընկալվել նաև որպես թաքցրած հեգնանք, լայն ճակատ, գլխին՝ թասակ:

Չարենցի հետ ծանոթությունը շատ արագ վերածվում է մտերմության. 1922 թ. ապրիլի 20-ին Կ. Պոլսից հարազատներին հասցեագրված նամակում Քոչարը բարևներ է փոխանցում նաև Չարենցին՝ «...և բարևներ Չարենցին» (Երվանդ Քոչարի թանգարան, 3517, ֆ. 2389, այսուհետև՝ ԵՔԹ): Իսկ սա նշանակում է, որ Չարենցը եղել էր Քոչարյանների ընտանիքում, ծանոթացել հարազատների հետ, իսկ նրա մեկնումից հետո կապը պահպանվել է:

XX դարասկիզբը XIX դարավերջի պես արվեստի մեծ փոփոխությունների, խմբակցային հրովարտակաների ժամանակ էր: Գեղարվեստում հանրային ճանաչում ստացած և հաստատված ընդհանուր արժեքների ու արժեհամակարգի դեմ ելավ անհատը, ելավ անհատի շուրջ ձևավորված համախոհների խումբը: Եվ այդ ամենը՝ մամուլով, հանդեսներով, գրքերով, ցուցահանդեսներով, քննար-

կումներով ու անպակաս բռնեմով: Աչքի առաջ էին համաշխարհային արվեստի առաջանցիկ քայլերը՝ կուբիստների, ֆուտուրիստների, արվեստի արդիականացմանը միտված նորանոր խմբակցությունների հրովարտականները:

Չարենցը ևս ձգտում էր *ստեղծագործական համագործակցության*: Նրա առաջին փորձը 1921-ի հունիս-հուլիսին Կարո Հալաբյանի և Տիգրան Հախումյանի հետ «Կորչի» մարտական-հարձակողական ժխտական վերաբերմունքով պարբերականի հրատարակությունն էր, որի յուրաքանչյուր համարը, ըստ Հախումյանի, «...պետք է ռումբ լիներ՝ նետված արվեստի ու գրականության բուրժուական Օլիմպոսի մի որևէ հին կուռքի դեմ: Առաջին համարի պայթուցիկ ուժի կանխազգացողությունից Չարենցը ցնծում էր» (Հուշեր... 1986, 153): Համախոհների անհամաձայնության պատճառով գործը գլուխ չի գալիս: Հիմնական կռվանը Տերյանի ստեղծագործության հանդեպ ընդունող-ժխտող վերաբերմունքն էր: Հախումյանն՝ ընդունող, Չարենցը՝ ժխտող, ինչն էլ դառնում է նրանց տարաձայնության պատճառը: «Կորչի», որովհետև ժամանակն ամենայն սրությամբ դրել էր հնի և նորի հարցը, ըստ որի՝ հինը պիտի մեռնի, և նորը գրավի նրա տեղը: Ընդ որում՝ այս նախաձեռնությանը վստահորեն տեղյակ պետք է լիներ նաև Քոչարը, որովհետև այն օրերն էին, երբ նկարում էր Չարենցին:

Չարենցի երկրորդ փորձը «Երեքի դեկլարացիան էր, որ գլուխ եկավ և ցնցեց Երևանի թմրած մշակութային կյանքը (տե՛ս Գասպարյան 2022, 157–175):

Երրորդ փորձը 1923-ին ֆուտուրկոնստրուկտիվիստական «Ավանգարդ» պարբերականի նախաձեռնությունն էր, որ ձախողվեց համախոհներ չունենալու և միջոցներ չլինելու պատճառով: Չորրորդ քայլը Կարո Հալաբյանի և Միքայել Մազմանյանի համագործակցությամբ Մոսկվայում 1924-ի մայիսին «Standard» (Standard 2024, N 1) ամսագրի հրատարակությունն էր, որը կարճ կյանք ունեցավ (տե՛ս Գասպարյան 2022, 256–260): Այս փորձերը նույն տեսական ծրագրի շրջանակում էին, հենց թեկուզ այնքանով, որ «Standard»-ը «Երեքի» դեկլարացիայի սկզբունքների վերանայված շարունակությունն ու զարգացումն էր նոր պայմաններում:

Վերջին՝ հինգերորդ քայլը, արմատականորեն տարբեր էր նախորդներից. Մահարու, Արմենի, Բակունցի և այլոց համագործակցությամբ Չարենցն ստեղծեց «Նոյեմբեր» խմբակցությունը, որը պրոլետարական սխեմատիզմին հակադրեց բարձր արվեստի պահանջները, լույս աշխարհ բերեց բազմաթիվ արժեքավոր գրքեր և ավարտվեց Չարենցի ստեղծագործական գործունեության 20-ամյակի առթիվ Մկրտիչ Արմենի՝ «Չարենցի և հարակից խնդիրների մասին» (տե՛ս Գրական թերթ 1933, N 7, 21 ապրիլի) ծրագրային փայլուն հոդվածով (տե՛ս Գասպարյան 2022, 341, 479–481):

1917-ին Թիֆլիսում Քոչարը մասնակցել է Հակոբ Գյուրջյանի և Վահրամ Գայֆեճյանի ցուցահանդեսներին և արել նոր գեղարվեստի էությանը նվիրված այս գրառումները. «Որքա՞ն խղճուկ և աղքատ կլիներ կյանքը, եթե ժամանակ առ ժամանակ նոր մտքեր, նոր հուզումներ առաջ չգային և չթարմացնեին մարդկանց հոգիները: Եվ այդպես առաջ եկավ նոր Գեղարվեստը: Սկսվեց փո-

թորկալի կոիվ հնի՝ հասարակության համար ընդունելի մորալի և նորի՝ անհատների ժայթքող գյուտերի միջև: Հասարակությունը նոր Գեղարվեստը չի ուզում ընդունել և համարում է «դեկադանս»՝ «գեղարվեստի անկում», իսկ արվեստագետներին՝ «հոգեկան հիվանդներ»: Բայց միշտ անհատականությունը զարնվել է հասարակության տիրող մորալին: Դա մարդկային պատմության հիգիենան է: Բավական է արվեստագետը դուրս գա սովորականի նախադրված շրջանակից, խախտի կանոնը, որ հասարակությունը հարձակվի նրա վրա՝ նրան հայտարարելով «խելագար», «անամոթ հեղափոխական...» (Քոչար 2007, 16):

Զմոռանանք, որ այս ամենից առաջ անցյալի վերանայման, արժեքների վերագնահատման, նոր սերնդի այո՛-ի և ո՛չ-ի նույն պահանջով «Հայ գրականության գալիք օրը» զեկուցմամբ 1914 թ. ապրիլին Թիֆլիսում հանդես էր եկել Վահան Տերյանը (տե՛ս Տերյան 1975, 48–102): Նաև մտաբերենք՝ 1914-ից Թիֆլիսում ելույթներով հանդես էին գալիս ռուս ֆուտուրիստները, և ամենևին բացառված չէ Քոչարի մասնակցությունն այդ հանդիպումներին, իսկ նրա խոսքն այլ բան չէ, քան Տերյանի հնչեցրած նոր սերնդի ծայն կամ, Մայակովսկու հանգույն, հերթական շառաչուն ապտակ հասարակական մեռած ճաշակին: Քոչարը՝ որպես նկարիչ և արվեստի տեսաբան, ձևավորվում էր ա՛յս ստեղծագործական ճանապարհին...

Եվ ամենակարևորը՝ ըստ Քոչարի՝ «Արվեստագետները պետք է ձգտեն հեղափոխական լինել արվեստում, բայց ոչ հեղափոխական՝ հեղափոխական լինելու համար» (Քոչար 2007, 23): Այսինքն՝ ոչ թե արտաքին ձևական-ցուցադրականը, այլ էությունականը՝ փոփոխության պահանջը, պետք է գա ներսից և ոչ թե սոսկ նորածն լինելու հովերից: Այդպես էր մտածում նաև Չարենցը: Այդ իսկ պատճառով նրանք նաև ավանդական հաստատուն արժեքների պաշտպան էին և երբեք ոտքը չկտրեցին հայրենի հողից, որ նույնն է՝ ազգային հիմքից: Ավելի ուշ՝ 1969-ին, այս մոտեցումը Քոչարը ձևակերպեց այսպես. «Վերացական արվեստ չկա, արվեստը միշտ կոնկրետ է. ուրիշ կերպ չի կարող լինել: Արդիական արվեստ: Արդիական արվեստն ունի իր օրենքները: Այն անարխիա և տգիտություն չէ: Խախտումը պիտի լինի պատճառաբանված, հիմնավորված: Արվեստը զբաղմունք չէ, այլ կոլտուրա» (Քոչար 2007, 28):

1910–1920–1930-ական թթ.՝ նորագույն շրջանի հայ արվեստի ձևավորման այս ամբողջ բախտորոշ ճանապարհին, Քոչարը պետք է լիներ Չարենցի կողքին, այսինքն՝ նրանք պետք է լինեին միասին, մանավանդ որ Չարենցի համար գրական մարդկանց հավասար, եթե ոչ ավելի, նախընտրելի էին նկարիչները: Բայց Քոչարը 1922 թվականի ապրիլին մեկնեց երկրից, նախ՝ Կոստանդնուպոլիս, ապա՝ Վենետիկ, իսկ 1923-ին հաստատվեց արվեստների օրենսդիր քաղաք Փարիզում, այնտեղ, որտեղ Պիկասոն ու Դալին էին, և նոր արվեստի ավետաբեր շունչն էր: Մինչև վերադարձը (1936-ի մայիս) Քոչարը մասնակցեց բազմաթիվ ցուցահանդեսների, արժանացավ փառքի ու մեծարման: 1925 թ. Փարիզի «Այսօրվա արվեստ» ցուցահանդեսում Պիկասոյի հետ մեկտեղ ցուցադրվեց

նույն սրահում: Նրա շփումներն անմիջական էին նշված հեղինակությունների հետ, որոնք նաև գնահատում էին նրան (տե՛ս Մատթարո Քոչարը 2016, 10–11):

Չարենց – Քոչար ընդհանրությունները

Չարենց – Քոչար ընդհանրությունները շատ են և մեկը մյուսից ակնառու:

1919-ին ի շարս այլ գործերի Քոչարը վրձնել է երկու նկար՝ «Նկարչի մոր դիմանկարը» և «De profundis»՝ *մայր և ներանձնություն*:

Շատ չանցած՝ «Գազելների գրքից» խորագրով տպագրվում է Չարենցի «Մորս համար գազել»-ը (Հայաստանի կոոպերացիա 1920, N 12): Հայրենի տուն, տան առջև թթենու ստվերի տակ նստած մայր, անցած ու դարձած օրերի հիշողություն, տնից հեռացած ու անհայտության մատնված որդու կերպար, որից լուր չունի, և որի կարոտից հոսում են նրա դառնաղի արցունքները: Որբության մատնված անտերունջ սերնդի ճակատագիրն է, որ այլ հորիզոններում այդպես էլ պետք է կոչվեր՝ *կորած սերունդ*: Այնտեղ՝ մոր դիմանկար, այստեղ՝ «Մորս համար գազել», որի կապակցությամբ ժամանակի նույն նորարարական շնչով Չարենցն ասել է. «Ես ջահել ժամանակ հիսուն հատ գազել էի գրել. բոլորն այրեցի ու թողեցի միայն մորս նվիրված գազելը: Մնացածները չնչին բաներ էին ու նորություն չէին բերում ոչ թեմայով, ոչ էլ ձևով ու տաղաչափությամբ» (Չարենցի հետ 2008, 169):

Անցնենք Քոչարի «De profundis» նկարին: «De profundis» լատիներեն ապաշխարանքի 6-րդ սաղմոսի սկիզբն է, կաթոլիկ եկեղեցու պատարագի դրվագներից մեկը: Այն «Սատուրնական» գրքի «Ճիզվիտականություն» բանաստեղծության մեջ օգտագործել է Պոլ Վեռլենը: Ժամանակը ծանոթ էր Ստանիսլավ Պշիբիշևսկու «De profundis» (1900) վեպ-եռագրությանը, Օսկար Ուայլդի «De profundis» (1905) խոստովանանքին: Այնպես որ «De profundis»-ը՝ հեռու թե մոտիկ, կար և ազդանշաններ էր տալիս... Հիշենք, որ Պշիբիշևսկին դարասկզբին ընթերցվող հեղինակություն էր, որի ստեղծագործությանը, Չարենցից բացի, անտարակույս, ծանոթ էր նաև Քոչարը:

Չարենցը «De profundis» վերնագրով երկու անդրադարձ ունի: Առաջինը Երևանի ուղղիչ տանը Արփենիկի մահից հետո 1927 թ. սկզբին գրած նույնանուն պոեմն է և ցանկությունը՝ այդ վերնագրով ժողովել Արփենիկի մահվան կապակցությամբ գրած սգերգերը, ինչը չարեց և այդ մասին գրեց «Այրած երգեր» (1929) բանաստեղծության մեջ: «De profundis»-ը Չարենցը 1926-ին օգտագործել է «հատուցում» իմաստով: Նախատեսվող «De profundis» գրքի կապակցությամբ Չարենցն ասել է. «Պոեմը և այս բանաստեղծությունները մեկ ամբողջականություն են, և ես մտադիր եմ դրանք հրատարակել առանձին գրքով՝ «De profundis»: Իր հերթին, հուշագիրը ավելացնում է. «Ընթերցողը, սակայն, չի գտնի այդ պոեմը և բանաստեղծությունների այդ շարքը Չարենցի և ոչ մի ժողովածուի մեջ, քանզի հետո նա դրանք այրեց: Այդ «De profundis»-ի մասին ընթերցողը որոշ պատկերացում կարող է կազմել «Այրած երգեր», «Ես այն չեմ այլևս», «Իմ մուսային» և այլ բանաստեղծություններից» (Հայոց լեզու և գրական-

նություն 2017, 48–50): Չարենցի «De profundis» պոեմից հիշողությամբ պահպանվել է մի քանի տող (տե՛ս Հայոց լեզու և գրականություն 2017, 48–50): Այդ ոչնչացված շարքի հիմնական գաղափարը, ըստ Խորեն Ռադիոյի, «փրկված» է «Մուսայիս» բանաստեղծության մեջ (տե՛ս Չարենց 1968, 10): Չարենցի այդ օրերի դառն ու խելագար կյանքն է ու հոգեբանությունը, նաև գրական աշխարհն իր դավադիր խաղերով: Ինքն է՝ զղջման ու ապաշխարանքի կեղեքումներով, անցած ճանապարհի գնահատականներով, երբ նախկինում գրածները հիմա իրեն հանցագործություն էին թվում: Արփենիկից հետո նրան պատում է կյանքն ապրած-ավարտած անգո մարդու հոգեբանական մի թանձր զգացում (տե՛ս Չարենց 1983, 36):

Ինքնաճանաչման նոր խորություններ

Ուղղիչ տունն ու կնոջ մահը նրան համակել էին հուսահատությամբ: «Էլ առաջվա // Չարենցը չեմ», – գրում է «Լսիր անգին» տողով սկսվող (1929) բանաստեղծության մեջ:

Չարենցի երկրորդ «De profundis»-ը այդ վերնագրով խորախոր գրառումն է՝ 1937 թ. ապրիլի 13-ին, իր բնակարանում, «անկողնում, ինչպես միշտ», արված իր ծննդյան 40-ամյակի կապակցությամբ. «De profundis»-ն այստեղ արդեն օգտագործված է ոչ թե հատուցում, այլ *ի խորոց, խորքերից* իմաստով (տե՛ս Չարենց 1967, 484–490):

Ապա անցնում է «մտքերի հոսանքին». «Յուրաքանչյուր գաղափար վերջերս սկսում է ճյուղավորվել իմ ուղեղում և զարգանալ «ճյուղավոր» հաջորդականությամբ: Մի ներքին անզսպելի մղում դրդում է տվյալ գաղափարը զարգացնել բոլոր հնարավոր կողմերով, «ոստնային» սիստեմով – այսինքն՝ ինչպես աճում է ծառը:

Հիմնական գաղափարը դառնում է ծառի *բունը*, որը բարձրանալով սկսում է տալ ճյուղեր և ամեն ճյուղ իր հերթին՝ ոստեր, որոնք ևս իրենց հերթին դառնում են նոր ճյուղեր և այսպես անվերջ: – Հնարավոր է սակայն այս մեթոդով մշակել որևէ, թեկուզ ամենաչնչին գաղափար: – Իհարկե, ոչ...» (Չարենց 1967, 485):

Նկարում է մտքի այս ոստնային ճյուղավորման գծապատկերը՝ մինչ այդ գրելով. «Ահավասիկ այդ չարաբաստիկ «սիստեմը», որ, ինչպես կտեսնենք, ոչ թե *սիստեմ* է, այլ կատարյալ *անսիստեմություն* – *տարրերի*, բնական, վայրի, մացառուտ – աճման անկոնտրոլ (ոչ *ներքին* իմաստով) ընթացք» (Չարենց 1967, 486):

Շարունակում է գրառումները. «...չեմ կարողանում անցնել և տողն արդեն ճյուղավորվում է, ինչպես սերմը, ինչպես ծառը և ամեն մի տող դառնում է ծառ, – և ամեն մի բառը – ճյուղը է դառնում ու ճյուղավորվում անվերջ, էլ ինչպե՛ս, ինչպե՛ս, ինչպե՛ս կարող եմ ես անցնել մյուս տողին...» (Չարենց 1967, 489):

Խոր հոգեվերլուծական այս ինքնաքննությունը շարունակվում և ավարտվում է ոստնային ճյուղավորվող մտածողության գծապատկերով, թե միտքը ինչից ազդակ ստացավ, և ինքն իրենից ածանցվելով՝ ուր հասավ: Հաջորդում են երեք սյունակով գրված հիմնականում միավանկ բառեր: Շարունակում է դատողությունները ոստնային ճյուղավոր մտածողության մասին:

Ըստ այդմ՝ չէր հասցնում ստեղծագործական ազատ տարերքի հետևից: Իրականում անընդհատ գրում էր, բայց նաև անգամ դժգոհում, որ ինքը չի կարողանում ներշնչանքի չնչին մասն իսկ պահպանել. պատճառը, ահա, մտքի ուստնային ճյուղավորումն էր. «Թռչում ես, մի՛տք իմ, առաջ, // Դու հիմա շատ սրընթաց, // Եվ ես է՛լ գրչով իմ թաց // Չեմ կարող [հողմերում այս] // Քո թափին հասնել հիմա, // Ոչ միայն հանգով անաղարտ, // Այլ անգամ բառով արծակ, // Նշելու միտք ու իմաստ, // Պատկերներ իրար հրող, – // Դու հիմա շա՛տ ես կարող // Իմ դեռ հին գրչի համար» (Չարենց 1983, 218):

Նույն պրկված լարումն է, ինչը Քոչարի «De profundis» (1919) նկարում. Այնտեղ մկանների պրկում էր և մարմնի ձևախեղում, այստեղ հոգեբանական պրկում է, որ կարող է հասցնել խելագարության և մարմնի աղավաղում, այս դեպքում՝ հիվանդության և հյուծվածության պատճառով: Այս «ուստնային ճյուղավորումը» գալիս է նյութի տրոհման և ամբողջական ճանաչման նույն փիլիսոփայությունից, ինչ Քոչարի տարածական նկարչությունը: Եթե փորձենք նկարել Չարենցի խոհը՝ կդառնա հենց տարածական նկարչություն:

Ստեղծագործական ընդհանրության լավագույն դրսևորում է *Գոգալի կերպարը* Չարենցի «Տաղարանում» (1920–1921) և *Հուրիի պարկերը* Քոչարի «Հուրին» (1925), «Աղջկա դիմանկար» (1925), «Խնձորով աղջիկը» (1926), «Արևելուհիներ» (1926) նկարներում: Ընդհանուր հայացքով Արևելքն է, յուրահատուկ օրինատալիզմ, որ ներկայացվում է արևելյան աղջկա կերպարով: Չարենցի Գոգալը մերժում է բանաստեղծ տաղասացի սերը, իսկ Քոչարի Հուրին վերածվում է կեռ-կամար հոնքերը կպած, լիքը երեսով աղջկա դիմակի, կարծես նա ևս մերժողներից է, գուցե դժվար համոզվողներից, որովհետև սիրո սպասում ու պատրանք չկա դեմքին:

Այստեղից անցումը Սայաթ-Նովայի կերպարին, որ կա Չարենցի թե՛ «Տաղարան»-ում, թե՛ «Գիրք ճանապարհի»-ի վերջին տարբերակում զետեղված բեյթերում (16-18.IV.1934): Սայաթ-Նովայի դիմանկարը՝ որպես արևելյան աշուղ, 1945-ին նկարեց, 1963-ին նաև քանդակեց Քոչարը (պահպանվել են նրա ուշագրավ բացատրությունները (տե՛ս «Հուշեր... 1986, 191, 253):

Կին և պար. պարային շարժում և՛ պոեզիայում, ինչպիսին է Չարենցի «Ասպետականի» (1922) մեջ սև և սպիտակ երկու հուրի-փերիների պարը, և՛ նկարչության մեջ, ինչպիսին է Քոչարի «Պար»-ը կտավը (1971): Որպես զուգահեռ օրինակներ պոեզիայի մեջ կարող ենք հիշել Վարուժանի «Հարճը» (գրել է 1910-ին, ամբողջությամբ տպագրվել է 1912-ին) պոեմում Նազենիկի պարի տեսարանը, քանդակագործության մեջ՝ Հակոբ Գյուրջյանի «Պարուհին»: Կան նաև շատ այլ օրինակներ, որոնցում պատկերված է ոչ թե անշարժը՝ որպես բնորդ, այլ շարժումը նկարելու գայթակղությունն է (Շագալ, Պիկասո, Դալի):

Հանդիպում Փարիզում

Արտասահմանյան ուղևորության ընթացքում՝ 1925 թ. մարտ 31-ին, Չարենցը ժամանում է Փարիզ: Փարիզում էին Արշակ Չոպանյանը, Ալեքսանդր

Շիրվանզադեն, Կոստան Չարյանը, Ջապել Եսայանը, Համիկ Թումանյանը, Հակոբ Գյուրջյանը, Երվանդ Քոչարը... Շատերի թվում Չարենցը հանդիպում է նաև Երվանդ Քոչարին, որին հորդորում է՝ անպայման պետք է վերադառնաս Հայաստան, որպեսզի հառնես այնպես, ինչպես Էյֆելյան աշտարակը: Փարիզում Չարենցը «Ղեկ» պարբերական հրատարակելու ծրագիր ուներ, որին զանազան գրություններով աշխատակցելու էր հրավիրում Հայաստանի գրական ուժերին, ամենևին բացառված չէ, որ, որպես նկարիչ, այդ ծրագրին մասնակցելու հրավիրեր նաև Քոչարին:

Նոր արվեստի պատգամահոսության հաջորդ քայլը Չարենցն ի մի բերեց «Էպիքական լուսաբաց» (1930) ժողովածուի մեջ: Ահա ինքնաճանաչման մի դրվագ. «Ի՞նչ են մեր մեծ դարի հանդեպ // Երգերը մեր թոթովախոս... // Մենք, որ մի նոր կյանք ենք կանգնել, // Չունենք երգեր հատու ու խոր: // Ինչ գրել ենք մինչև հիմա՝ // Եղել է լոկ առաջաբան // Մի վիթխարի երգի համար, // Որ գալու է, բայց դեռ չկա» (Չարենց 1968, 27):

Մոնումենտալ արվեստ

Չարենցը հասնում է մոնումենտալ արվեստի գեղագիտությանը, մի բան՝ դեպի որը գնում էր նաև Քոչարը:

Ըստ սոցիալիստական ռեալիզմի տեսաբանների սխեմատիկ պահանջների՝ մոնումենտալիզմը պատկերացվում էր ծավալատարածական ընդգրկումով, ինչպես ես-երի միավորումով առաջացած մենք-ը: Այս ծավալային մոնումենտալիզմն ազդեց գրական ժանրերի վրա. սովորական դարձան չափածո վեպը, չափածո վիպակը, չափածո նովելը: Նույնը՝ արվեստի մյուս բնագավառներում՝ ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, նաև քաղաքաշինություն, արդյունաբերական ձեռնարկություններ, անհատական տնտեսություններին փոխարինող կոլեկտիվ տնտեսություններ: Մեծ ու անծայրածիր երկրում ամեն ինչ պետք է մեծ լիներ՝ սկսած Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից. մի միտում, որ, ի վերջո, հասնում է հիվանդագին մեծագություն՝ գիգանտոմանիայի:

Քոչարը հանդես եկավ «Մոնումենտալ պեյզաժ» հոդվածով, վերնագիրն իսկ Հայաստանի բնապատկերն է. «Հայաստանի պեյզաժն է, որ կարող է միաժամանակ առանցքը և ֆոնը կազմել մեր նկարչության» (Հունահայ տարեգիրք 1928, 254): *Միջանկյալ նշենք՝ մինչև «Էպիքական լուսաբաց» ժողովածուն, այս «Մոնումենտալ պեյզաժի» ակնհայտ մարմնավորում էր Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...»-ի տաղը՝ ընդգրկման ամբողջ գեղարվեստական համակարգով հանդերձ՝ արևահամ բառ, հին սագի ողբանվագ, լացակումած լար, արնանման ծաղիկներ, նաիրյան աղջիկների հեզաճկուն պար, մուգ երկինք, ջինջ ջրեր, լուսե լիճ, վիշապաձայն բուք, խրճիթների անհյուրընկալ սև պատեր, հնամյա քաղաքների հազարամյա քար, ողբաձայն երգեր, երկաթագիր գրքեր, արյունաքամ վերքեր, Նարեկացու, Քուչակի լուսապսակ ճակատ, որպես անհաս փառքի ճամփա՝ հավերժական ծյունների մեջ շողշողացող Արարարի ճերմակ գազաթ, և*

այս ամենով հանդերձ՝ մի ամբողջական արնավառ Հայաստան-յարի և՛ աշխարհագրական, և՛ պատմական բնակար՝ հարկապես Հայաստանի պեյզաժ:

Մոնումենտալության համար Քոչարն առանձնացնում է «տևականությունն ու անշարժությունը», «մեծ ամբողջը», միաժամանակ մոնումենտալությունը պայմանավորում օրվա մեքենայական և համայնական կյանքի պահանջով. «Երկրորդ նշանավոր ազդակը մոնումենտալ պեյզաժի համայնականությունն է կամ մեծությունը» (Հունահայ տարեգիրք 1928, 254): Քոչարի նշանակետը հաստատուն մեծություններն են՝ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...»-ի հետ մեկտեղ իր կերտած Սասունցի Դավթի և Վարդան Մամիկոնյանի արձանները:

Քոչարն արտահայտվել է նաև սոցիալիստական ռեալիզմի մասին. ընդհանուր հայացք նետելով արվեստի համաշխարհային պատմությանը՝ նա ընդամենը այս է ասում. «...բոլոր արվեստները ռեալիստական են, բայց այդ ռեալիզմները ունեն տարբեր գունավորումներ: <...> և չկա ռեալիզմից դուրս արվեստ» (Քոչար 2007, 22):

Իրենը, ինչպես ինքն էր ասում, «ներքին աչքի ռեալիզմն» էր, որ բնօրինակի ձևերը վերադասավորում է ըստ իր պատկերացումների ու երևակայության: Սա արդեն իրական աշխարհի հեղինակային արտացոլանքն է՝ եթե ոչ նման, ապա շատ աննման, որ ավելին է, քան նմանը...

Հակառակ սոցիալիստական ռեալիզմի գոեհիկ տեսաբանների՝ «Էպիքական լուսաբացում» մոնումենտալությունը Չարենցն ընկալեց որպես վեհ ու հերոսական, կատարյալ ու մնայուն արվեստի պահանջ: Ըստ այդմ՝ մոնումենտալությունը նրա համար այլ բացատրություն ուներ: Մոնումենտալ, այսինքն՝ զտված անկարևոր մանրուքներից, ժամանակի բնութագրական՝ ցայտուն, թանձր գծեր ու խտացումներ, նաև շարժունություն և արագություն՝ ընդդեմ մեռած անշարժի, նաև ժամանակի շունչը խտացնող անհատականություն, կենդանի մարդ՝ իր հոգեբանական բարդ ու հակասական տեղաշարժերով: Մոնումենտալությունը Չարենցն ընդունեց նաև վիպականության պահանջով՝ հենց որպես էպիկականություն:

Քոչարը մոնումենտալության հասավ ինչպես նկարչության, այնպես և քանդակագործության մեջ: Առաջին դեպքում հրաշալի օրինակներ են «Սասնա ծռերի» ձևավորումը՝ յոթ գրաֆիկական թերթ կամ էջ (1939), որ էպոսի ռուսերեն հրատարակության համար արեց Հովսեփ Օրբելու առաջարկությամբ՝ որպես հենք օգտագործելով սովարաթղթի վրա նկարած քարը, ասես՝ Քուռկիկ Ջալալի, Աղյուծ Միերի, Սասունցի Դավթի, Փոքր Միերի և մյուս կերպարները պատմության խորքում այդպես էլ պատկերվել են քարի վրա (Հայկական հերոսական դյուցազնավեպի ռուսերեն առաջին թարգմանության ակադեմիական հրատարակության համար աշխարհահռչակ արևելագետ Հովսեփ Օրբելին / նա գրքի առաջաբանի հեղինակն էր և հրատարակման անմիջական կազմակերպիչը / որպես իլյուստրացիոն նյութ ներկայացված բազմաթիվ առաջարկներից ընտրեց միայն Քոչարի նկարագրողումները): Քանդակների դեպքում՝ «Սասունցի Դավիթ» (1939, գիպս; 1959, կոփածո պղինձ) և «Վարդան Մամիկոնյան»

(պատրաստ էր 1962-ին, տեղադրվել է 1975 թ.): Այս գործերում մոնումենտալությունն ակնհայտ է և՛ ամբողջական ընկալումով, և՛ առանձին դրվագներում:

Անգամ փոքր չափերի մեջ մոնումենտալության հրաշալի խտացում է նաև «Չվարթնոցի արծիվը» (1933)՝ պարզ, հստակ ու հավերժական:

Մոնումենտալության տանում էր նաև ասելիքը՝ հենց Սասունցի Դավթի կերպարը, որին 1933-ին ոգեկոչեց նաև Չարենցը և ոչ միայն կերտեց, այլև կազմակերպեց «Սասնա ծռերի» պատումների առաջին հատորի տպագրական աշխատանքները:

Ինչպես Չարենցին, այնպես է Քոչարին քննադատողներն անպակաս էին. «Իսկ Արա Սարգսյանը թղթապանակը թևի տակ շրջում էր՝ այստեղ ու այնտեղ ջանալով ապացուցել, որ «Սասունցի Դավիթը» Միքելանջելոյի «Դավթի» կրկնօրինակն է, ինքնուրույն ոչինչ չկա, ազգային ոչինչ չունի, Սասունցի Դավթի թեման պատմական չէ՝ առասպել է, էպոս է, ի՞նչ կարիք կա կանգնեցնելու նման արձան» (Հուշեր... 1986, 107):

Մոնումենտալության խորքում արվեստագետի յուրահատուկ հիշողությունն է, որ նրան հասցնում է մարդկության ու ազգության պատմական, անհասանելի թվացող խորքային ծալքերին: Այդպիսին է Չարենցի ամբողջ պոեզիան՝ սկսած «Մարի, է՛գ թռչուն» (1916) բալլադից մինչև «Որպես լուսազարդ երկնքի թռչուն...» (1930) ու «Էկլեզիաստես» (1935) բանաստեղծությունները և «Կապուտաչյա հայրենիք» (1915) ու «Դանթեական առասպել» (1915–1916) պոեմներից մինչև «Պատմության քառուղիներով» (1933) «Մահվան տեսիլ» (1933), «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» (1932), «Նորք» (1933) պոեմները: Այդ հիշողությունն անցնում է դարերի ծալքերի ու մտքերի մաղի միջով և ազդակներ բերում խորքերից: Քոչարը դա համարում է «նախաձննդյան հիշողություն» և ավելացնում՝ «...մեր պատկերացումները կախված են հիշողությունից» (Հուշեր... 1986, 260):

Ինչպես Չարենցը, այնպես և Քոչարը *արվեստի մրաժողությամբ ուրբանիստներ էին*, նրանցը քաղաքային մշակույթն էր, որ լիովի առկա է երկուսի ստեղծագործության մեջ: Նրանց հերոսը քաղաքային մարդն է, և ամենևին պատահական չէ, որ Չարենցը գրեց «Homo Sapiens» (1928–1929) վերնագրով չափածո նովել, որն իր պատանեկան տարիների ամբողջական ներաշխարհն է Կարս քաղաքի փոշոտ փողոցների անհայտության մեջ, իսկ Քոչարը կերտեց նույնանուն «Homo Sapiens» (1933) նկար, որտեղ կրծքից մինչև որովայն իր ներքին էությանմբ աշխարհի առաջ բացված մարդն է՝ աչքերի մեջ թախիժ ու տխրություն, իսկ դեմքը՝ ասես մետաղյա դիմակ: Այլ նկարներում ծառ ու ծաղկի փոխարեն գունաթափ թերթի կտորն է, սրճարանային հանդիպումը՝ «Սրճարանում» (1918), «Բացօթյա սրճարանում» (1918), «Սեղանի շուրջ նստած երեք տղամարդ» (1918), «Մտորում» (1920) «Զրույց» (1923), «Վզպատով կինը» (1923), «Երկու կին սրճարանում» (1923), «Ծխախոտով տղամարդը» (1926) կամ «Կիբեռնետիկայի մուսան» (1972): Սա քաղաքային կյանքն էր, ստեղծագործողի ճակատագիրը, որ Չարենցին հասցրեց զառանցական վերնագրեր ունեցող բանաստեղ-

ծությունների՝ «Զառանցանք» (1935), անգամ՝ «Զառանցանք զառանցանքում» (1937), իսկ Քոչարին՝ «Տեսիլք» (1931, կտավ), «Մելամաղծություն» (1959, քանդակ), «Էքստազ» (1960, կտավ) գործերին: Չարենցի աչքի առաջ երկփեղկված մարդն էր՝ «Homo Sovietikus»-ի վերածված «Homo Sapiens»-ը: Ավելի ուշ նույն մտայնությամբ Քոչարը ստեղծեց «Երկփեղկված անհատը» (1954) նկարը: Նույն քաղաքային հոգեբանությամբ և՛ Չարենցը, և՛ Քոչարը կերտեցին իրենց ինքնանկարները. Չարենց՝ «Մոնումենտ» (1934), «Պետությունն՝ ամբողջ իր ապարատով» (1935), «Ինձ» (1936), «Անվերնագիր» (1936), Քոչար՝ «Ինքնանկար» (1918, 1936):

Քաղաքային պատկերների խտացում է Քոչարի «Մարդ-քաղաքը» նկարաշարը (1933), իսկ Չարենցի տեսադաշտում և՛ աղմկոտ քաղաքն էր, և՛ քաղաքային կյանքը՝ իր առանձին հերոսներով, որոնցից մեկն էլ «Մեծ առօրյան» (1929) չափածո նովելի հերոս, կյանքից դուրս նետված հաշվետարն է: Գուցե դա է նաև պատճառը, որ քաղաքից դուրս գտնվող բնաշխարհը՝ անտառ, գետ, սար ու ձոր, գյուղական բնանկարը՝ իր հարաբերական հովվերգությամբ, ընդհանրապես բնորոշ չեն նրանց:

Կոմիտասի կերպարը

Կոմիտասի կերպարը նվիրական էր և՛ Չարենցի համար, և՛ Քոչարի: 1935 թ. հոկտեմբերի 21-ին Կոմիտասի (8/26.X.1869, Քյոթահիա – 22.X.1935, Փարիզ) մահվան լուրը ցնցում է Չարենցին (տե՛ս Գասպարյան 2022, 616–619): Այդ զգացողության անմիջական արտահայտություն է նրա «Կոմիտաս» պոեմը: Չարենցի «Կոմիտաս» և «Կոմիտասի հիշատակին» պոեմները տարբեր ստեղծագործություններ են, միևնույն ներշնչանքի տարբեր արտահայտություններ:

Կոմիտասի աճյունը հայրենիք տեղափոխելու կապակցությամբ «Գրական թերթ»-ը տեղեկացնում է. «Մայիսի 9-ին ֆրանսահայ աշխատավորներից երկու մեծ խումբ ներգաղթում է Խորհրդային Հայաստան: Ներգաղթողներն իրենց հետ բերում են մեր ժողովրդական երաժշտության մեծագույն վարպետի՝ Կոմիտասի զմուսած մարմինը, որ թաղվելու է Հայաստանի գրականության և արվեստի գործիչների պանթեոնում: Հայաստան է փոխադրվում նաև մեծ երաժշտագետի արխիվը: Ներգաղթողները Հայաստանում կլինեն մայիսի 25-ին» (1936, N 11, 30 ապրիլի):

Քոչարը ԽՍՀՄ վերադարձավ 1936 թ. մայիսին՝ նույն «Սինեյա» շոգենավով, ֆրանսահայ 1.800 ներգաղթյալների հետ, որ հայրենիք էր փոխադրում Կոմիտասի աճյունը: Հայաստանի ճանապարհը բռնած Կոմիտասի դագաղը «...երկար ժամանակ անտիրական մնում է անջատված վագոնում՝ Նավթլուղ կայարանում (Վրաստան): Ե՛վ դագաղը բերող ներգաղթյալները՝ հայերը, և՛ ընդունելու պատրաստ Երևանը կրակի մեջ էին մնացել: Ո՛չ կարողանում էին այն համարձակորեն փոխադրել Երևան, ո՛չ էլ կարող էին թողնել Նավթլուղ կայարանում» (Չարենցի հետ 1997, 108):

Կոմիտասի աճյունը Երևան է բերվում հուղարկավորության նախօրյակին՝ մայիսի 27-ին. այդ անձրևոտ գարնանային օրն էլ Չարենցն սկսում է գրել

«Կոմիտասի հիշատակին» պոեմի նախնական տարբերակը՝ «Հայրենի երգն ես դու մեր // Վերադարձած հայրենիք...» (Չարենց 1983, 612):

Կոմիտասը Չարենցի համար դառնում է հայոց եղենի, հայրենի հողի, հայոց ոգու, համատարած հայրենիքի խորհրդանշան և հայության ճակատագիր՝ ըստ որի՝ ժողովուրդը պետք է հավաքվի ու համախմբվի հայրենիքում. Այստեղ որոշակի արտահայտություն է ստանում «Պատգամ»-ի «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» գաղտնագիրը (տե՛ս Չարենց 1983, 311, 342): Կոմիտասի աճյունը հայրենի հողին է հանձնվում 1936 թ. մայիսի 28-ին:

Հայրենական հանճարի ինչպես մահվան, այնպես էլ հուղարկավորության տպավորություններով և հիշատակի ոգեկոչմամբ գրում է «Կոմիտաս», «Կոմիտասի հիշատակին» [*Requiem aeternam*], «Հավերժական մահերգ» (կամ «Հավերժական հանգիստ») պոեմները: Պահպանվել են նաև մի քանի բանաստեղծություններ ու պատառիկներ՝ «Քո աճյունին, Կոմիտա՛ս», «Տապանագիր», «Էպիտաֆիա», «Խելահեղ աչքերով, բոպիկ...», «Ռեքվիեմ հայրենական»:

Չարենցն էությանը Կոմիտասի հետ էր. «Փանոս Թերլեմեզյանի բազմաթիվ նկարների մեջ կար ուշագրավ մի էտյուդ: Ինքը՝ նկարիչը, Կոմիտասը, Սիամանթոն և վերջինիս սիրո առարկան՝ երիտասարդ գրող, գեղուհի Մաննիկ Պերպերյանը, նավի վրա Բոսֆորում զբոսնելիս: Չարենցը հրապուրված էր այդ նկարով և ամեն կերպ աշխատում էր ձեռք բերել կամ գնել, կամ էլ նվեր ստանալ: Բայց Թերլեմեզյանը ոչ մի կերպ չէր ուզում բաժանվել իր այդ երկից: <...>: Մի անգամ իմ ներկայությամբ Չարենցը, խաղալիք պահանջող մանկան համառությամբ, Թերլեմեզյանին «պատին դեմ տված», թախանձում էր, որ այդ էտյուդն իրեն ծախի: Նկարիչն այլևս չկարողացավ դիմադրել և ստիպված նկարը նվիրեց մեծ բանաստեղծին: Չարենցը, ուրախության ճիչ արձակելով, նկարը կրծքին սեղմեց...» (Ալազան 1967, 302):

Կոմիտասի կերպարը նույնքան հարազատ էր Քոչարին. և՛ նկարեց, և՛ քանդակեց: Նկարը (1946) լուսավոր ու պայծառ մի կերպար է, ասես ոչ թե տանջահար վարդապետն է, այլ նրա շողոտ, շաղոտ երգը: Կոմիտասի քանդակը (1971, Վաղարշապատ) լուծումներով պարզ է ու հանգիստ, մոնումենտալ է ու վեհ՝ ասես պատմության հեռուներից եկած մի ճամփորդ, որ մի պահ դադար է տվել հանգստանալու, որպեսզի քիչ հետո նորից շարունակի ճանապարհը:

Ժամանակը և արվեստագետի ճակատագիրը

Շատ նման են Չարենցի և Քոչարի ճակատագրերը: Ակնհայտ է երկու մեծությունների կյանքի որոշ դրվագների ընդհանրությունը ԽՍՀՄ պատմության այդ արյունոտ ու մռայլ տարիներին:

1936-ին ԽՍՀՄ վերադառնալուց հետո Քոչարը գնում է Թիֆլիս՝ հայրական տուն: Վրաստանի նկարիչների միությունը նրան լավ չի ընդունում՝ մերժվում է անդամության դիմումը, որից հետո աշնանը տեղափոխվում ու հաստատվում է Երևանում, ընդունվում Հայաստանի նկարիչների միության անդամ, բայց և «միության» ձեռքը ընկնում կրակը. «Երևանում Քոչարին հալածում էին, դա-

ժանորեն ու անտեղի քննադատում: Հայաստանի արվեստի բարձրագույն վերնախավը Քոչարի նկատմամբ տրամադրված էր ոչ միայն անբարյացակամորեն, այլև թշնամաբար» (Ալազան 1967, 31): Մեղադրանքները ծանրացան այն աստիճանի, որ 1937-ին Քոչարին վտարեցին Նկարիչների միությունից. ի՞նչ էր եղել՝ «...քննարկումներից մեկի ժամանակ հանկարծ հանեց կոշիկը, բարձրացրեց գլխից վեր, ցույց տվեց բոլորիս: «Նայե՛ք, տեսե՛ք, կոշիկիս ներքանը ծակ է: Ես նկարիչ եմ: Մուտյինիի բանվորներից և ոչ մեկի կոշիկը ծակ չէ՛» (Ալազան 1967, 56): Այդ դեպքից հետո մեկնեց Մոսկվա, 1938-ին վերադարձավ և Կարո Հալաբյանի միջնորդությամբ վերականգնվեց միության շարքերում:

Մտաբերենք՝ Հայպետհրատում զբաղեցրած աշխատանքից ազատվելուց և, որպես բողոքի արտահայտություն Գրողների միությունից դուրս գալու իր աղմկահարույց «Հայտարարությունից» հետո, 1935 թ. մարտի 13-ին Չարենցը վտարվեց այդ կազմակերպությունից: Հունիսին վերականգնվելուց հետո նույն միությունից Չարենցը երկրորդ անգամ վտարվեց 1937 թ. հուլիսին, այնուհետև ձերբակալվեց և կյանքի ուղին ավարտեց Երևանի բանտում:

Քաղաքական քննադատությունն անպակաս էր նաև Քոչարից: Ի վերջո, մեղադրեցին՝ որպես հակախորհրդային գաղափարների քարոզիչ, 1941 թ. հունիսի 23-ին՝ Հայրենական մեծ պատերազմն սկսելու հաջորդ օրը, ձերբակալեցին, տանջեցին, Փարիզը, ինչպես ասում են, քթից բերեցին, բայց 1943 թ. հոկտեմբերի 23-ին ազատեցին:

Երևանում հաստատվելուց հետո վերականգնվում է Չարենցի ու Քոչարի կապը: 1937 թ. մայիսի 30-ին Չարենցը նամակ է հասցեագրում Քոչարին (անտիպ է, բերում ենք ամբողջությամբ).

«Սիրելի Երվանդ!

Ես կարծեմ մի անգամ հայտնել եմ քեզ, որ այդ հրաշալի գիրքը նվիրել եմ Կարո Հալաբյանին:

Ուստի ցավում եմ, որ չեմ կարող ընդառաջ գնալ Ձեր ցանկությանը:

Ողջույն:

Ե. Չարենց

1937.30.V» (ԵԲԹ 1379, փաստաթուղթ 452, Արխ. Գ. 589):

Պարզ չէ, թե խոսքը ինչ գրքի մասին է, բայց հարցը շարունակվում է. «Սիրելի Երվանդ Քոչարին ի նշան հարգանքի և բարեկամության: 1937.9.VI. Չարենց. Երևան» մակագրությամբ «Արվեստների համադրության հարցեր» գիրքը (Вопросы синтеза искусств 1936, 152) Չարենցը նվիրում է Քոչարին: Սա նո՞յն գիրքն է, թե՞ մեկ ուրիշը՝ հնարավոր չէ ասել, բայց հնարավոր է ասել մեկ այլ կարևոր բան՝ ա՛յն, որ համադրական արվեստի ճանապարհը, որին նվիրված է տվյալ գիրքը, հարազատ էր երկուսին:

Համադրական արվեստի մասին Չարենցը խոսել է ԽՍՀՄ գրողների I համագումարում: Իսկ նշված գիրքը ի մի է բերում ճարտարապետների, քանդակագործների և գեղանկարիչների առաջին ստեղծագործական խորհրդակցության նյութերը: Նկարագարող է (սև-սպիտակ)՝ եգիպտական որմնանկարներից

և հունական քանդակներից մինչև Ռաֆայել, Ջոտտո, Տիցիան ու Միքելանջելո և ժամանակակիցներ: Գիրքը պահվում է Քոչարի թանգարանում:

Հավանաբար այս օրերին էլ Չարենցը Քոչարին նվիրել է նաև ծխամորճ, ինչը ևս պահվում է նկարչի թանգարանում:

Երկու արվեստագետների համար *ընդհանուր էր նաև վերաբերմունքը Ստալինի հանդեպ*: Ստալինին Չարենցը հայացք ուղղեց երկու տեսանկյունով՝ մեկ՝ որպես վիթխարի երկրի պատմական խորհրդանիշ, այսինքն՝ որպես ղեկավար, և այս հայացքը լուրջ էր («Թուղթ...», «Երրորդ Այգաբաց», «Հիմն Ղեկավարին», «Ողջույն Առաջնորդին», «Ներքող Առաջնորդին»), և երկրորդ՝ որպես բռնակալ, իսկ այս հայացքը շատ քննադատական էր, որ համապատասխան գործերում վերաձվեց սպանիչ ծաղրանկարի («Կար մի պոետ միամիտ...», «Եղև որդի զարմանալի...», «Հոտ է գալիս կրկին արյան...», «Օ, ճիշտ է ասել Լենինն հանճարեղ», «Բարձրավիզ կոշիկներ հագին», «Հսկա առաջնորդ, – Մարքսին հավասար», «Ստալին», «Միջնադարյան կացին», «Թիֆլիսցի կինտոն»):

Արտաքին ընդունելի պաշտոնական ձևի մեջ ներքին արգահատանքն է: Ստալինին նույն գրոտեսկով 1936-ին քանդակեց Քոչարը՝ սնամեջ գլուխ, ակնախոռոչներում աչքերի փոխարեն Լենինի կիսանդրի, հոնքերն ասես պատշգամբներ...

Ինչպես արդեն ասել ենք, առանձին դրվագ է Քոչարի **տարածական նկարչության** և Չարենցի հատկապես 1930-ական թթ. պոեզիայի ընդհանրության բացահայտումը: Տարածական նկարչություն, այսինքն՝ եռաչափ ծավալային պատկեր: Փոխվում է նկարի մակերեսը, ստանում բաց քանդակային լուծում: Կարող ես տեսնել նկարի հակառակ կողմը, ներսը, կողքերը: Չարենցը մտքի շաղափով մտավ խոսքի խորքը և հասավ միջուկին, այնտեղ, ուր կեցության խորհուրդն է որպես հրահեղուկ մագմա: Այդպիսին են «Գիրք ճանապարհի» ժողովածուն (1933/1934) և ամբողջ անտիպ ժառանգությունը: Եվ դա՛ թե՛ ծավալուն պոեմներում, թե՛ բանաստեղծություններում: Հապա մի նորից կարդացեք «Մահվան տեսիլ», «Որպես գորշ դեղին տերևներ...» պոեմները, «Հայնրիխ Հայնե», «Անվերնագիր (Իմ մահվան օրը կիջնի լուռություն)» բանաստեղծությունները. մտովի համեմատեք Քոչարի եռաչափ ծավալային նկարների հետ, և պարզ կդառնա, որ և՛ բանաստեղծը, և՛ նկարիչը փորձել են մինչև վերջին մասնիկը տրոհել նյութը, թափանցել ամենամութ անկյուններն անգամ:

Այստեղ արվեստն ու գիտությունը ձեռք ձեռքի են տալիս: Բնագետներն առումն են տրոհում, հասնում միջուկին ու էլեկտրոններին, միջուկն էլ ճեղքում, հասնում է պրոտոնին ու նեյտրոնին, փորձում տեսանելի դարձնել նախանյութը, իսկ գրողներն ու նկարիչները փորձում են հասնել հոգու այն ներքին առաջին ճառագայթին, որ լուսավորում է մարդու հետագա գոյաբանությունը, որ նույն նախասկզբն է՝ որպես նախաբառ: Այդպե՛ս է, որքան տարբեր, բայց գիտությունը և արվեստը ժամանակի հետ խոսում են մեկը մյուսին նույնքան հասկանալի լեզուներով: Ահա Քոչարը. «Ժամանակակից արվեստը շատ բարդ է և բազմակողմանի: <...>: Մեր երազները, տեսիլքները երկրի վրա երկրային չեն: Տիեզերք գնալուց առաջ մարդն արդեն գտել էր կոսմիկական ֆորմաները: <...>:

Արձանագործությունը մանրացավ, հասավ նեյտրոնների, ատոմների, էլեկտրոնների, բայց ձեռք բերեց մեծ ստեղծագործական ազատություն (Քոչար 2007, 26–27): Քանդակել կարելի է ամեն ինչ և ամեն ձևով: Պետք է գտնել մեծության ճանապարհը» (Հուլեյր... 1986, 95):

Գիտության զարգացմամբ պայմանավորված արվեստի առաջընթացին Քոչարն անդրադարձել է նաև 1966-ին տպագրված «Պիկասո» հոդվածում. «Եթե կուբիզմի տեսությունը հիմնավորվում էր Էյնշտեյնի, Ռիմանի և Լոբաչևսկու թեորիաներով, ապա սյուրռեալիստական արվեստի կոնցեպցիան ամրապնդվում և շաղախվում էր Ֆրոյդի և Բերքսոնի տեսություններով: Ենթագիտակցությունն իր իրավունքներն սկսեց ներկայացնել և շատ ավելի առաջ անցավ գիտակցությունից: Արվեստագետները փնտրեցին թաքնված ենթամաստական «եսի» անսպասելի գեղեցկությունները: Երազի՜ թաքնված ցանկությունների, իղձերի անթույլատրելի շղթայազերծումը դարձավ հոգու ազատագրման նշանը» (Հուլեյր... 1986, 95):

Եվ մի ձևակերպում նույն հոդվածից, որ բնորոշ է նաև նրան, և ոչ միայն նրան, այլև Չարենցին, և ոչ միայն Պիկասոյին, Քոչարին ու Չարենցին, այլև բոլոր հանճարներին: Եվ ի՞նչ է գրում. «Պիկասոն չի սիրում նվաճածը պահել, թողնում է եկողներին, իսկ ինքն անցնում է նոր ասպարեզ» (Հուլեյր... 1986, 95): Թեև տարածականորեն իրարից հեռու, բայց քանի՞ ստեղծագործական շրջան անցան և՛ Չարենցը, և՛ Քոչարը: Անցա՛ն և իրենց նվաճումներից թողեցին օգտվելու ոչ միայն մերձակա հետևորդներին, այլև հակառակորդներին:

Նրանց՝ որպես ստեղծագործող, միավորում է ևս մեկ համադասություն՝ կապված *ազդեցությունների* հետ: Առաջին քայլերից մինչև «Գիրք ճանապարհի» և անտիպներ Չարենցը եղել է հեռու կամ մոտիկ ազդեցությունների ձգողական դաշտում՝ Տերյան, Վեռլեն, Բլոկ, Մայակովսկի, Պաստերնակ, Պուշկին, Նարեկացի, բայց միշտ էլ մնացել է ինքնուրույն: Նույնը նաև Քոչարը՝ Միքելանջելոյից մինչև Բրակ ու Պիկասո... Դեռևս 1920-ին գրած, բայց 1968-ին տպագրված «Գույնը և ֆորման» հոդվածում Քոչարն անդրադարձել է այդ հարցին և տվել այսպիսի բացատրություն. «...իմ գործերը շատերին հիշեցնում են Պիկասոյի նկարները, բայց դա այն պարզ փաստն է, որ ապացուցում է, որ ո՛չ իմ նկարներն են հասկանում, և ո՛չ էլ հասկանում են, թե ինչ է ուզում Պիկասոն: <...>: Իմ նկարների մեջ անընդհատ կարծես անցնում է «ինչո՞ւ» հարցը, իսկ Պիկասոյի նկարների մեջ «ինչպե՞ս»-ը: Ինձ հետաքրքրում ու զբաղեցնում է ֆորմայի դրությունը, իսկ Պիկասոյին՝ որպիսությունը. Պիկասոն այս դեպքում գալիս է Վան Գոգից, իսկ ես՝ Սեզանից: Սեզանն ու Վան Գոգը միանգամայն իրար չեզոքացնող ու հակադիր ուժեր են» (Մաեստրո Քոչար 2016, 31–32):

Ավելի ուշ հարցին տվել է այսպիսի իմաստուն բացատրություն. «Ազդեցությունը սեփական անհատականության զարգացումն է ուրիշի փորձի շնորհիվ» (Հուլեյր... 1986, 260): Եթե ուրիշի փորձի շնորհիվ սեփական անհատականության զարգացում չեն, հապա ի՞նչ են Պիկասոյի և իր ընդհանրությունների ու տարբերությունների առանձնահատկությունները, որ այնպես նրբորեն նա բացատրում է: Քանի որ հոդվածը գրված է 1920-ին, անցնենք առաջ և հայացք

նետենք հետագա քայլերին՝ ինչքանով ուրիշի փորձի շնորհիվ սեփական անհատականության զարգացում չէ Պիկասոյի «Գեոնիկա» (1937) և Քոչարի «Պատերազմի արհավիրքները» (1963) կտավների համեմատությունը. միանգամայն տարբեր են ոճերը, ձևերը, գույները, կառուցվածքը, բայց նույնն է ասելիքը՝ պատերազմը չարիք է: Քոչարի բացատրությունը նույնն է՝ ազդեցությունը ծնում է արվեստի նոր նմուշ, որն ապրում է իր ինքնուրույն կյանքով:

Եվ, ի վերջո, Քոչարի ակնարկած ուրիշի փորձը ազգային և համաշխարհային արվեստի ճանապարհն է, որին այլ կերպ ասում են նաև *ավանդույթ*, և որը արվեստի զարգացման բնականոն ընթացքն է: Գրում էր, չէ՞, որ Պիկասոն գալիս էր Վան Գոգից, իսկ ինքը՝ Սեզանից: Այս գալը հենց ավանդույթի ճանապարհն է: Առանց այդ փորձառության՝ արվեստագետն ասես լինի ապօրինի ծնունդ: Այդ փորձի առկայությամբ միայն՝ անգամ ամենաձայրահեղ որոնումը դառնում է ընդունելի: Հասկանալի է, որ որոնում ու գտնում է շնորհալին, ապաշնորհի «որոնումը» մոլորություն է:

Ավանդույթի գեղարվեստական մարմնավորում է Քոչարի «Ընտանիք, սերունդներ» (1925) նկարը. Երեք սերունդ է՝ պապը, տղան, նրա կինը և նրանց որդին. կյանքն է՝ իր ժամանակային անցումներով՝ հիմքից սկսած: Չարենցը այդ շղթան տեսավ արվեստի ժառանգորդության շարունակականությամբ՝ Դանթեն և ինքը՝ «որպես միևնույն մարդկության երկու տարբեր հասակ» («Մահվան տեսիլ», 1933), որից հետո պատկերեց հայ ազգային-ազատագրական միտքը դարբնած սերունդների հարյուրամյա շղթան:

Չարենց – Քոչար հարաբերությունը լայն շրջանակ է ընդգրկում, ունի բացվելու և ծավալվելու հեռագնա ասպարեզ, իր մեջ տեղ է տալիս XX դարի համաշխարհային որոնումներին, ինչպես նաև ի հայտ է բերում հանճարների ստեղծագործական կյանքի ու մարդկային ճակատագրի ընդհանրությունը խորհրդային վարչակարգի այն եղերական տարիներին:

Գրականություն/References/Литература

1. Ալազան Վ. 1967, Հուշեր, Երևան, «Հայաստան»:
Alazan V. 1967, Memoirs, Yerevan, Hayastan (in Armenian).
2. Ալեքսանդրյան Ա. 1979, Պատանի Չարենցի հետ, Երևան, «Սովետական գրող»:
Alexandrian A. 1979, With the Young Charents, Yerevan, Sovetakan Groggh (in Armenian).
3. Առաքելյան Վ. 2003, Ճակատագրի խաչմերուկներում, Երևան, Հեղինակային հրատ.:
Arakelyan V. 2003, At the Crossroads of Fate, Yerevan, Author's Publication (in Armenian).
4. Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, «Տիգրան Մեծ»:
Gasparyan D. 2022, The Life and Times of Yeghishe Charents, Yerevan, Tigran Mets (in Armenian).
5. «Գրական թերթ», շաբաթաթերթ 1933, Երևան, N 7:
"Grakan tert" – "Literary Newspaper", weekly 1933, Yerevan, N 7 (in Armenian).
6. Երվանդ Քոչարի թանգարան (ԵՔԹ), 3517, ֆ. 2389:

- Yervand Kochar Museum (YKM), 3517, file 2389 (in Armenian).
7. Երվանդ Քոչարի թանգարան 1379, փաստաթուղթ 452, Արխիվային գույք 589: Yervand Kochar Museum 1379, document 452, Archival item 589 (in Armenian).
8. Հայաստանի կոոպերացիա, երկշաբաթաթերթ 1920, Երևան, N 12: Cooperation of Armenia, bi-weekly 1920, Yerevan, N 12 (in Armenian).
9. Հայոց լեզու և գրականություն 2017, երկամյա հանդես, Երևան, N 4: Armenian Language and Literature 2017, bimonthly journal, Yerevan, N 4 (in Armenian).
10. Հայրենիք ամսագիր 1941, Բոստոն, N 6: Homeland, magazine 1941, Boston, N 6 (in Armenian).
11. Հունահայ տարեգիրք 1928, Աթենք, Բ տարի: Greek-Armenian Yearbook 1928, Athens, Year B (in Armenian).
12. Հուշեր Եղիշե Չարենցի մասին 1986, Երևան, «Հայպետհրատ»: Memoirs about Yeghishe Charents 1986, Yerevan, Haypethrat (in Armenian).
13. Մաեստրո Քոչարը հուշերի անդրադարձում 2016, Երևան, «Անտարես»: Maestro Kochar's Reflections on Memoirs 2016, Yerevan, Antares (in Armenian).
14. Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, ԳԱ հրատ.: Charents E. 1983, Unpublished and Uncollected Works, Yerevan, Academy of Sciences Press (in Armenian).
15. Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, IV, Երևան, ԳԱ հրատ.: Charents E. 1968, Collected Works, IV, Yerevan, Academy of Sciences Press (in Armenian).
16. Չարենց Ե. 1967, Երկերի ժողովածու, VI, Երևան, ԳԱ հրատ.: Charents E. 1967, Collected Works, VI, Yerevan, Academy of Sciences Press (in Armenian).
17. Չարենց Ե. 1996, Նորահայտ էջեր, Երևան, ԵՊՀ հրատ.: Charents E. 1996, Newly Discovered Pages, Yerevan, Yerevan University Press (in Armenian).
18. Չարենցի հետ. Հուշեր, մաս 1-ին, 1997, Երևան, «Նաիրի»: With Charents. Memoirs, Part 1, 1997, Yerevan, Nairi (in Armenian).
19. Տերյան Վ. 1975, Երկերի ժողովածու, հ. 3, «Հայաստան»: Teryan V. 1975, Collection of Works, vol. 3, Armenia (in Armenian).
20. Չարենցի հետ. Հուշեր, մաս 2-րդ, 2008, Երևան, «Նաիրի»: With Charents. Memoirs, Part 2, 2008, Yerevan, Nairi (in Armenian).
21. Standard, ամսագիր 1924, Մոսկվա, N 1: Standard, magazine 1924, Moscow, N 1 (in Armenian).
22. Քոչար Ե. 2007, Ես և Դուք, Երևան, «Մուղնի»: Kochar E. 2007, I and You, Yerevan, Mughni (in Armenian).
23. Вопросы синтеза искусств 1936, Москва, «Огиз-Изогиз». Questions of the Synthesis of Arts 1936, Moscow, Ogiz-Izogiz (in Armenian).
24. Пастернак Б. 1929, Поверх барьеров, Ленинград, «Госиздат». Pasternak B. 1929, Over the Barriers, Leningrad, State Publishing House (in Armenian).

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ «ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍՏԵԴՏԱՑ»
ԽՈՐԱԳՐՈՎ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ (XIV, XVI, XVIII ԴԱՐԵՐ)
ADDITIONS OF DIALECT WORDS IN HANDWRITTEN DICTIONARIES
ENTITLED "HANDĒS BANASTEGHTSATS" (14TH, 16TH, 18TH CENTURIES)
ДОПОЛНЕНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ В РУКОПИСНЫХ СЛОВАРЯХ,
ОЗАГЛАВЛЕННЫХ "HANDĒS BANASTEGHTSATS" (XIV, XVI, XVIII BB.)**

Նազիկ Հովհաննիսյան
Nazik Hovhannisyanyan
Назик Оганесян

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Language Named after H. Acharyan, National Academy of Sciences, Armenia
Институт языка имени Р. Ачаряна, Национальная академия наук, Армения

instlingv@sci.am

Ներկայացվել է՝ 17.04.2025; գրախոսվել է՝ 20.10.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 17.04.2025; Revised: 20.10.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 17.04.2025; рецензировано: 20.10.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-148

Ամփոփում – «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները, ըստ Մատենադարանի (Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ) ձեռագրացուցակների, թվագրվում են XII դարով, սակայն հավանական է, որ դրանք կազմվել են XI–XII դարերում՝ հաշվի առնելով IX–XI դարերում ստեղծված կրթական կենտրոնների գործունեությունը: Հայտնի է, որ շատ ձեռագրեր ընդօրինակվել են կրթության և գրչության արվեստի կենտրոններում: Գրիչները փորձել են հարազատ մնալ բնօրինակին, քանի որ ձեռագիրը ճշգրիտ ընդօրինակելը չգրված օրենք էր, բայց նրանք դա նաև արել են լեզվի իմացության մակարդակին համապատասխան, և, այդուհանդերձ, չի կարելի բացառել միջավայրի լեզվի ազդեցությունը: Հետևաբար, հավանական է, որ ձեռագրերն ընդօրինակողները բառարաններում ավելացրել կամ ներառել են այնպիսի բառեր, որոնք, իրենց կարծիքով, հեշտությամբ են հիշվում կամ կարող են առավելագույն պատկերացում տալ որևէ երևույթի, գործողության, բնութագրի մասին, կամ էլ պարզապես հավելել և լրացրել են իրենց իմացածը: Հոդվածում քննվում են բարբառային բառեր, որոնք ներառվել են XII դարից հետո վկայվող ձեռագրերում: Բառարանային տվյալների վերլուծությամբ փորձ է արվում արձանագրելու, որ կա՞մ բարբառային բառերն ավելացրած ընդօրինակողը պատկանել է որոշակի բարբառ ներկայացնող տարածքի, կա՞մ ձեռագիրն ընդօրինակվել է այդ տարածքում:

Abstract – Handwritten dictionaries "Handēs Banasteghtsats", according to the catalogs of manuscripts of the Matenadaran (Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts), date back to the 12th century, but it is considered probable that they were compiled in the 10th–11th centuries, perhaps taking into account the activities of educational centers, created in the 9th–11th centuries. It is known that many manuscripts were copied in centers of education and the art of writing. The scribes tried to remain close to the original, because being closer to the original of the manuscript was an unwritten law, but they also copied according to the level of language proficiency, and the influence of the language of the environment cannot be ruled out. Therefore, it is likely that copyists of manuscripts added or included in dictionaries words that, in their opinion, are easy to remember or that can give the maximum idea about a phenomenon, action, characteristic, or simply added and supplemented what they knew. The article examines dialect words that were included in manuscripts dating after the 12th century. By analyzing dictionary data, an attempt is made to document that either the copyist who added the dialect words belonged to the area representing a particular dialect, or the manuscript was copied in that area.

Аннотация – Рукописные словари «Handēs Banasteghtsats», по каталогам рукописей Матенадарана (Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца), датируются XII веком, но считается вероятным, что они были составлены в X–XI веках, возможно, с учетом деятельности учебно-образовательных центров, созданных в IX–XI вв. Известно, что многие рукописи копировались (переписывались) в подобных центрах. Переписчики старались сохранять близость к оригиналу, что являлось неписаным законом, но они также переписывали (копировали) в соответствии с уровнем владения языком, посему нельзя исключать влияние языка среды обитания. Поэтому вполне вероятно, что переписчики рукописей добавляли либо включали в словари слова, которые, по их мнению, легко запоминаются или позволяют составить представление о явлении, действии, характеристике, или добавляли то, что знали. В статье рассматриваются диалектные слова, которые были включены в рукописи, датированные после XII века. На основе анализа словарных данных предпринята попытка зафиксировать, что либо переписчик, добавлявший диалектные слова, был родом из области, представляющей определенный диалект, либо рукопись была скопирована в этой области.

Հիմնաբառեր – գրչագիր, հոմանիշներ, գրիչ, բառարաններ, բարբառ:

Keywords – Manuscript, Synonyms, Scribe, Dictionaries, Dialect.

Ключевые слова – рукопись, синонимы, переписчик, словари, диалект.

Ներածություն

Վերջին տարիներին բազմակողմանիորեն ուսումնասիրվում են աշխարհի տարբեր լեզուների բարբառային միավորներ, բացահայտվում են բարբառային բառապաշարի ազգային առանձնահատկություններ (մասնավորապես տե՛ս <https://phsreda.com/ru/keyword/34191/articles>), և սույն նյութի արդիականությունը պայմանավորվում է տարբեր երկրներում խնդրի նկատմամբ աճող հետաքրքրությամբ:

Մերոպ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրացուցակներով «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները վկայվում են XII–XIII

դարերից. դրանց ընդօրինակված գրչագրերն ավանդվում են նաև հետագա դարերից (Յուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 1965–1970): Ընդօրինակող գրիչներն արտագրել են ըստ իրենց իմացության և կարողությունների, բայց չի կարելի բացառել նաև միջավայրի լեզվի ազդեցությունը, հետևաբար գրչագրերում հավանական են ոչ միայն գրչագրական, ուղղագրական շեղումներ, սխալագրություններ, այլև բառային տարբերակներ, բառերի փոփոխություններ կամ հավելումներ:

Հոդվածում քննվում են «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում առկա մի քանի բարբառային բառեր, որոնք հավելվել են նշված դարերից հետո ընդօրինակված գրչագրերի բառաշարքերին: Համեմատվում են հայոց լեզվի տարբեր բառարանների տվյալները, որոնց վերլուծությամբ էլ փորձ է արվում արձանագրելու, որ այդ բառերը հավելող գրիչը պատկանել է որոշակի բարբառ ներկայացնող տարածքի, կամ էլ գրչագիրն է ընդօրինակվել այդ տարածքում:

Նորությը, ըստ դարերի ներկայացվող բարբառային բառերի հավելումների, գրչագրերը հնարավորինս տեղայնացնելու փորձն է:

Բառաքնական դիտարկումներ

«Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները նաև ըստ հետազոտողների են վկայվում XII դարից, բայց և հավանական է համարվում, որ դրանք կազմվել են «10–11-րդ դարերում» (Գասպարյան 1968, 34, Ամալյան 2007, 47)՝ թերևս նկատի առնելով IX–XI դարերում հիմնված ուսումնագիտական կենտրոնների գործունեությունը: Հայկական վերածնության ժամանակաշրջանում (հայ ժողովրդի պատմության՝ IX դ. վերջերից մինչև XIV դ. ընդգրկող, ասել է՝ ընդհատումներով միմյանց հաջորդած Բագրատունյաց, Ռուբինյան, Զաքարյանների իշխանությունների ժամանակաշրջանը համարվում է հայկական վերածնության շրջան. տե՛ս Զալոյան 1964, 72–73), ինչպես հայտնի է, կրթության օջախներում, գրչության արվեստի կենտրոններում լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ընդօրինակողները ձգտել են հարազատ մնալ բուն օրինակին, քանի որ «...չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը» (Հովհաննիսյան 1991, 8–9): Բայց և արտագրել են՝ ըստ լեզվին տիրապետելու մակարդակի, և չի կարելի բացառել ընդօրինակողի «ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը»: Այս տեսանկյունից հիշատակելի է նաև Լևոն Խաչիկյանի՝ XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին վերաբերող այն դիտարկումը, որ «Հիշատակագիրները փորձում են, անշուշտ, գրել գրաբար, սակայն շատ քչերին է այդ հաջողվում: Ըստ մեծի մասին նրանք օգտագործում են խոսակցական լեզվի բազմաթիվ տարրեր, գավառական այս կամ այն խոսվածքին բնորոշ դարձվածքներ ու տերմիններ, որով և միջնադարյան խոսակցական լեզվի ուսումնասիրության համար մատակարարում են արժեքավոր տվյալներ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1950, XX–XXI):

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններին վերաբերող երկհատոր աշխատության էջերում Հայկ Ամալյանը հավաստում է, որ հոմանիշների՝ «Հանդէս բանաստեղծաց» ձեռագիր բառարանը (այսուհետև՝ ՁԲ) ստեղծվել է ուսուցողական նպատակներով (Ամալյան 1966, 45), ուստի հավանական է, որ ձեռագրերն ընդօրինակողները բառաշարքերին հավելել կամ բառաշարքերում ներառել են բառեր, որոնք, իրենց կարծիքով, սովորելիս հեշտությամբ կարելի է հիշել, կամ դրանք կարող են առավելագույն պատկերացում տալ երևույթի, գործողության, հատկանիշի մասին, կամ էլ պարզապես առադրելիքացրել են իրենց իմացածը: Ընդօրինակող գրիչները նաև որոշ հավելումներ են կատարել, բացատրություններ տվել. բառարանի գործնական բնույթով պայմանավորված՝ գրչագրերում առկա են ծանոթություններ ու հղումներ՝ «եթէ կամիս զմնացեալսն նման սմին տե՛ս ընդ ո՛յ գրի», «տե՛ս բուռն և զլացող մարդ», «վասն շինութեան աստուծոյ», «վասն առաջօք նմանութեան» և այլն (տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից (այսուհետև՝ ՄՄ) հետևյալները՝ ՄՄ թ. 540, 566 (II) 3450 5995, 10223: ՄՄ թ. 566 (II) ձեռագրում առկա է 2 բառարան՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից» (էջ 234 ք-279 ա) և «Հանդէս բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս բառ է գեղջուկ» (էջ 278 ք-300 ա), ուստի 2-րդը նշվում է ՄՄ թ. 566 (II): Պահպանվում է ձեռագիր բառարանների ուղղագրությունը):

Հայկ Ամալյանի վկայությամբ՝ «Հանդէս բանաստեղծաց»-ը հնագույն բառարաններից է. «....այն վկայվում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանվել, գրության ստույգ ժամանակը, տեղը և հեղինակը անհայտ են» (Ամալյան 1966, 124) (Ըստ Հ. Ամալյանի՝ Ն. Ակինյանը 1930 թ. «Հանդէս ամսօրեայ»-ում՝ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի գրախոսականում «հիշատակում է մի շարք հին բառարաններ», նաև «հայտնում իր կարծիքը նրանց ստեղծման ժամանակների մասին» (Ամալյան 2007, 8): Հարկ է արձանագրել, որ, ինչպես գրախոսականում նշում է Ն. Ակինյանը, ««Հին Բառագիրքներ»-ը «սովորաբար կը բովանդակեն» «3. Հանդէսք Բանաստեղծաց»-ը «իբր ժԱ-ԺԲ. դարէն, ճոխացած յընթացս նոր յաւելուածներով, եւ ենթարկուած նոր խմբագրութիւններու: Հազուադէպ է գտնել ձեռագիրներ, որոնք ըստ ամենայնի նոյն բնագիրը ներկայացնեն» (Ակինեան 1930, 491): Հետևաբար XII-XIII դարերից ավանդված գրչագրերից ընդօրինակվածների, այսինքն՝ XIV և հետագա դարերից ավանդված գրչագրերի համապատասխան հոմանիշային բառաշարքերին հավելված բառերը կարելի է դիտել հավելումներ (Հ. Ամալյանը «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները քննելիս նշում է. «....բառարանում հոմանիշներն իսկական շարք չեն կազմում,հիշյալ բառարանի բառախմբերում կան բազմաթիվ բառեր, որոնք հոմանիշ չեն հիմնաբառին», և դա նկատի ունենալով է ինքը գործածում «հոմանիշային խումբ տերմինը» (Ամալյան 2007, 65): Ընդունելով Հ. Ամալյանի դիտարկումը՝ պայմանականորեն կիրառվում է հոմանիշների բառաշարք ձևակերպումը, այսուհետև՝ ՀԲՇ): Քննվող ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, ուստի հավել-

լումների «անհրաժեշտությունը» հնարավորինս պարզաբանելու նպատակով համեմատվում են ոչ միայն հայոց լեզվի բառարանների տվյալները, այլև այդ բառերի գոյությունը հաստատվում է հետագայում լույս տեսած բառարաններով:

XIV դարից ավանդված ՄՄ թ. 3937-ում՝ **Անհաս** հենաբառով ՀԲՇ-ում (55բ), դժվարընթեռնելի ձեռագրով առկա է **լափանթերի** հավելումը. ենթադրելի է նաև **լոխանթերի** տարբերակը: ՀԲՇ-ն ավարտվում է «....և ահա աստուած» արտահայտությամբ (Նմանատիպ «որ է աստուած» արտահայտությամբ ավարտվում է նաև *Լոյս* հենաբառով ՀԲՇ-ն: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ղազարյանը, «Միջնադարյան հայ և լատին գրականության մեջ լույսի բազմախորհուրդ բառային գործածությունները (claritas, splendor, resplendentia fulgar, lux, lumen, illumino, lucidus, illustro) եղել են սովորական: Նարեկացու տաղերում Քրիստոսը դիտվել է «արեգակ, լույս, ճառագայթ, հուր և այլն»։ տե՛ս Ղազարյան 1980, 15): Այն ակնհայտորեն հավաստում է *Անհաս*→*Աստուած* իմաստային անցումը: Ինչպես վկայում է «*Բառարան Սուրբ Գրոց*»-ը, *Աստուած* անունը տրվել է «այն յափտենական, անսահման, **կատարեալ** և անհասանելի էակին, արարչին ամենայնի, որ կը խընամէ և կը վարէ զամենայն ամենակալ զօրութեամբը և **իմաստութեամբ**....» (Բառարան Սուրբ Գրոց 1881, 56. ընդգծ.՝ Ն.Հ.): Առանձնացված տարբերակները կարելի է մեկնել և՛ իբրև *լափ*, և՛ իբրև *լոխանթերի*, ինչպես և նշված գրչագրում բնութագրվում է Աստուած՝ «ամբողջովին, բոլորովին անթերի՝ կատարյալ», այսինքն՝ «ամենակատարյալ»: Հայկանուշ Մեսրոպյանի վկայությամբ՝ ածականի գերադրական աստիճանը Հաղորդի բարբառում կազմվում է նաև *լափ* բառով (Մեսրոպյան 2010, 59): Ըստ նրա՝ «*Լափ* գերադրական մասնիկը բնորոշ է նաև -ում ճյուղի Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի և -լ ճյուղի Մարաղայի բարբառներին....» (Մեսրոպյան 2010, 60): «Բոլորովին, ամբողջովին» նշանակությամբ *լափ*-ը գործածվում է Արարատյան, Ղարաբաղի, Հավարիկի, Շամախիի, Ուրմիայի, «ամենը, ամենքը, բոլորը, ամբողջը» նշանակող *լոխ*-ը (ստուգաբանությունը տե՛ս Մարգարյան 2015, 131–133)՝ Ղարաբաղի (Հ. Աճառյանի հավաստմամբ՝ «Այս բառը այնքան բնորոշ է Ղարաբաղի համար, որ շրջակա գավառներում **լօխ** բառը ծածկալեզվով նշանակում է ղարաբաղցի. օր.՝ **լօխերը եկան** «ղարաբաղցիք եկան»»։ Աճառյան 1954, 426, տե՛ս նաև Հաղորդի բառ ու բան 2023, 147), Շամախիի բարբառներում (Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, 207, 239, տե՛ս նաև Սարգսյան 2013, 256): Եվ քանի որ և՛ *լոխ*-ը, և՛ *լափ*-ը գործածվում են Ղարաբաղում կամ Շամախիում, ենթադրելի է, որ տվյալ գրչագիրը կա՛մ ընդօրինակվել է այդ տարածքում, կա՛մ էլ ընդօրինակողն է եղել այդ տարածքից:

XVI դարից ավանդված ՄՄ թ. 8106-ում՝ *Դեգերել. դանդաղել. արմանալ. յապաղել. պղերգանալ. ծուլանալ. վարանալ. թուլանալ. վեհերել. դողալ. տապալմսել. յամրանալ. աղաաղել. հեղգալ. յիրալ. մեղկել. երկնչիլ. զոփալ. զարհուրել. զահի հարկանել. զանգիտալ. պակնուլ. կեղակարծիլ. կասկածել. սոսկալ. դաւղել. յահարել. ջերանիլ* ՀԲՇ-ում (57բ), *յուլանալ*-ի փոխարեն **ուլանալ** բայն է (XIV դարից ավանդված ՄՄ թ. 4149-ում *յուլանալ*-ն է (354ա): «Ծուլանալ, ալարել,

դանդաղել» նշանակությամբ *ուլանալ*-ը «գաւառական բառ» նշումով հիշատակում են Ստեփան Մալխասյանցը (Մալխասեանց 1944թ, 593), «Հայոց լեզվի բարբառային բառարանը»՝ Ղարաբաղի, Հավարիկի, Նոր Նախիջևանի, Սվեդիայի, Հաճնի բարբառներում (*ուլնիլ, ուլնոլ* տարբերակներով. Հայոց լեզվի բարբառային բառարան 2010, 293), Հրաչյա Աճառյանը՝ Ղազախի, Ղարաբաղի բարբառներում (Աճառեան 1913, 865), «Ղարաբաղի բարբառի բառարանը» (*նիլանալ* տարբերակով. Սարգսյան 2013, 753), Պետրոս Ճիզմեճյանը («գաւառական» նշումով. Ճիզմեճեան 1957, 1180): «Միջին հայերենի բառարանը» բնագրային օրինակը քաղում է Ամիրդովլաթ Ամասիացուց (Ղազարյան, Ավետիսյան 2009, 616): Պարզորոշ է, որ այս բառի դեպքում էլ նշվում և հղվում է Ղարաբաղի բարբառը, և հետևաբար դարձյալ կարելի է ենթադրել գրչագիրն ընդօրինակողի՝ այդ տարածքին պատկանելը կամ գրչագրի՝ այդ տարածքում ընդօրինակվելը:

XVIII դարից ավանդված ՄՄ թ. 9116-ում՝ *Դուռել. խուղել. թաքչիլ. վերապարել. ճախրել. վերաթոչել. վերաթնել. սլանալ. թևածել. օղագնաց. փութալ. սրիպել. արագել. ընթանալ. հասանել* ՀԲՇ-ում (3ա), *ճեպել*-ի (վկայվում է ՄՄ թ. 5596-ում (223բ) և ՄՄ թ. 4612-ում (175բ) փոխարեն **Ճպել** տարբերակն է: Կարելի էր իհարկե *Ճպել*-ը համարել վրիպակ, սխալագրություն և չանդրադառնալ դրան: Սակայն այս առիթով հիշատակելի է Հ. Աճառյանի տարբեր գրչությունների առնչվող մեկնաբանությունը. «Թե՛ արմատական և թե՛ ածանցական բառերը շատ անգամ պատահում է, որ մեր ներկայ լեզուի ընդունած ձևից տարբեր ձևերով գրուած լինին հին ձեռագրերի մէջ: Սրացից ոմանք, անշուշտ, հասարակ սխալներ են, բայց առհասարակ իրենց ուղղագրական սխալի մէջ ներկայացնում են մի առանձին գաւառական յատուկ հնչումը և հետևաբար առանձնապէս կարևոր են հայերէնի բարբառների ուսումնասիրութեան համար: Այդ պատճառով մասնատոր ջանք եմ գործ դրել հաւաքելու գրքիս մէջ իւրաքանչիւր բառի տարբեր գրչութիւնները, յիշելով նաև նրանց գործածուած տեղերը» (Աճառյան 1971, 6): Նաև մասնավորապես այն, ըստ Սահակ Ամատունու, օգտագործում են «Արարատեան գաւառ»-ում, Լոռիում, այլև «այն գործածում են ղազախեցիք» (Ամատունի 1912, 447), և նրանից բացի՝ *Ճպել*-ն արձանագրում են Ստեփան Մալխասյանցը («աչքերը թարթել, բանալ խփել» իմաստով և «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով. Մալխասեանց 1944թ, 225), «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը՝ Արարատյան և Ղարաբաղի բարբառներում (Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, 412), «Ղարաբաղի բարբառի բառարան»-ը («Ճըպէլ – տե՛ս Աշկը ճըպէլ» հղումով. Սարգսյան 2013, 471, 60), Հրաչյա Աճառյանը («աչքը կամ արտևանունքը թարթել» իմաստով)՝ Ղազախի, Ղարաբաղի բարբառներում, Երևանում և Շուկավերում (Աճառեան 1913, 733): Հատկանշական է, որ առանց որևէ նշումի են արձանագրում արդի հայերենի բացատրական, հայոց լեզվի նոր, հայոց լեզվի հոմանիշների բառարանները (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 453, Աղայան 1976, 948, Սուքիասյան 1967, 429, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան 1957,

956, Հայոց լեզուի նոր բառարան 1968, 489, Հայոց լեզուի նոր բառարան 1992, 597), թերևս որոշ պարզաբանումների խնդիր է ծագում:

Ճպել «բարբառային բառի» ստուգաբանությանն անդրադարձել է Ալեքսանդր Մարգարյանը: Արձանագրելով բայի «գաւառական» լինելու հիշատակումները Սահակ Ամատունու, Հրաչյա Աճառյանի կազմած բարբառային, Ստեփան Մալխասյանցի կազմած բացատրական բառարաններում, այլև այն, որ Հրաչյա Աճառյանը «այդ բառը աստղանիշով ներկայացրել է իբրև «գրաբարի մեջ գոյություն չունեցող, բոլորովին նոր արմատ»»՝ նա նշում է. «Պետք է, սակայն, ասել, որ դա այդպիսին չէ և, ինչպես առիթ ենք ունեցել առաջին անգամ նշելու մեր՝ «Գորիսի բարբառը» ուսումնասիրության մեջ, **ճպել**-ը գրաբարում լայնորեն գործածվող **ճեպել** («Շտապեցնել, փութացնել») բայի հնչյունափոխված մի ձևն է, որ գիտեն միայն Արարատյան, Արցախի (Ղարաբաղի) և Գորիսի բարբառները....» (Մարգարյան 2015, 161–163): Քննելով «բարբառային բառ»-ը հնչյունական և իմաստային տեսանկյուններից՝ Ալեքսանդր Մարգարյանը նշում է, որ հնչյունականն «առանձնակի բարդություն չի ներկայացնում, և **ճեպել**-ից **ճպել** ձևը առաջ է եկել պարզապես ե>ը հնչյունափոխությամբ, որ նկատելի է հենց հիշյալ բարբառներին հատուկ որոշ բառերում, ինչպես՝ դեղնել-տղնել.... ճեղել -ճղել, խեճեպ-խըճեպ // կըճեպ....և այլն» (Մարգարյան 2015, 162): Իմաստային տեսանկյունից, ըստ նրա, «.... ճիշտ է, **ճպել** (<**ճըպել**)-ը զգալապես հեռացել է իր նախնական՝ **ճեպել** ձևից, բայց ամբողջապես չի խզել իմաստային կապը դրա հետ....» (Մարգարյան 2015, 162–163):

Այս բառի դեպքում էլ, թերևս, ձեռագիրն ընդօրինակողը հավանաբար ցանկացել է ներկայացնել իր՝ բարբառի իմացությունը:

XVIII դարից ավանդված ՄՄ թ. 9992-ում *Փանաքի. չքաւոր. աղքատ. փինաւ. կնաւ. վարաբախս. անգաւակ. ողորմ. տնանկ. տկար. պանդոյր. պանդուխտ. թափառական. նժպեհ. հեք. թշուառ. շուառ. չուառ. մերկ. կողոպուտ. ուրուկ. մուրօղ. տապալեալ. անգօր. անտարր. թարմաւար. տրուպ. աղկաղկ. ներքև. կարօտ. եղկելի. չնքին* ՀԲՀ-ին (3ա) հավելվել է **գուզ** բառը: Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *գուզ գուզ*-ը՝ «Բառ անյայտ. որպէս ոմկ. կուզ. խամպուր. կամ Կծկեալ՝ իբր ի գունս անկեալ. կամ Կաղ ի կաղս....» (Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան 1836, 578: Բառգրքի հեղինակների վկայությամբ՝ *գուզ*-ն առկա է Փիլոն Եբրայեցու երկում. ըստ նրանց՝ «Եղեալ կայ ուրոյն և ի հին բռ. հաւաքումն քանի մի խորին բառից Փիլոնի. թո՛ղ զլուծմունս համառօտս՝ առ ժամանակօք թերևս Երզնկացոյն» (ընդգծ.՝ Ն.Հ.) (տե՛ս Նոր բառգիրք հայկազգեան լեզուի 1836, 20), «կուզ կուզ, կծկած, կամաց կամաց» (Ճելալեան 1865, 225): Հրաչյա Աճառյանը նույնպես նշում է «անստոյգ բառ»՝ հիշատակելով Նոր հայկազյան բառգրքի մեկնությունը՝ «որպէս յն. γοτός «խեղ, հաշմանդամ»» (Աճառյան 1971, 587. նոր ստուգաբանություն է առաջարկում Տ. Դալալյանը. տե՛ս Դալալյան 2024, 5–18): Ստեփան Մալխասյանցը «կուզէկուզ, կուչ գալով» իմաստով *գուզ-գուզ*-ը վկայում է որպես «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» (Մալխասեանց 1944ա, 467): «Միջին հայերենի բառարան»-ում առկա է միջնա-

դարյան հանելուկներում գործածվող *գուզ ի գուզ*-ը՝ «կոացած, կուզեկուզ» նշանակությամբ (Ղազարյան, Ավետիսյան 2009, 149): Ըստ բառարանների՝ հայերենի բարբառներում գործածվում են *գուզ*-ով հարադրական կազմություններ. Վանի բարբառում՝ *գուզ անել* «Ձայն ու ծպտուն չհանելով՝ կծկվել՝ կուչ գալ» (Վ.Կատվալյանի վկայությամբ՝ Բայազետի բարբառում նաև նշանակում է «խուսափել ուշադրություն գրավելուց, մեղքի զգացումով լռել»), Նոր Զուղայի բարբառում՝ *գուզ մտնել* «1. Դարան մտնել... 2. Կուչ գալ» (Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 290–291): Նոր Նախիջևանի բարբառում վկայվում է «կկզած» իմաստով *գուզուզ* բաղադրությունը (Ջալալյան 2012, 114): Եվ դարձյալ ըստ բառարանների՝ *կուչ գալ*-ը (ստուգաբանությունը, այսինքն՝ առնչությունը *գուճ*-ին, տե՛ս Մարգարյան 2015, 13–15) նաև նշանակում է «ընկճվել, խոնարհվել, խեղճանալ» (Աղայան 1976, 783), «խոնարհվել (առավ. նվաստանալով)» (Բեդիրյան 2011, 706), *կուչ բերել առջևը*՝ Երևանում՝ «խոնարհեցնել, հպատակեցնել, ընկճել սարսափով» (Աճառեան 1913, 605): Ղարաբաղի բարբառում *դուզ կէնալ*-ը միայն «կրանալ» իմաստով է (տե՛ս Սարգսյան 2013, 458): Հատկանշական է, որ քրդերենում ևս գործածվում են *qûz*-ը ("горбатый; согнутый, наклонившийся") և *qûz bûn* (горбиться; нагибаться, наклоняться; сгибаться), *qûz kirin* ("сгибать; нагибать, наклонять; гнуть") հարադրական կազմությունները (Курдоев 1960, 491): Հետևաբար կուչ եկած՝ ընկճված, խոնարհ, խեղճ, նվաստացած անձը թշվառ, խղճուկ, աղքատ, չունևոր է (Սուքիասյան 1967, 262, 494, 650), ասել է՝ այն, ինչ արձանագրել է գրչագիրն ընդօրինակողը:

Եզրակացություններ

Անշուշտ, քննվող բառերի քանակը որոշակի եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում, բայց և նկատելի է, որ հավելված բառերը վկայվում են Ղարաբաղի բարբառում: Ուստի անդրադառնալով այս առիթով ծագող հարցերին՝ հիշատակելի է Հրաչյա Աճառյանի հետևյալ դիտարկումը: Ընդգծելով Ղարաբաղի բարբառի «նոր հայերենի 31 բարբառներուն մէջ ամէնէն տարածուածը» լինելը՝ նա նշում է, որ այն «շատ հեռու տեղեր ալ գացած է. Փոքր-Ասիոյ մէջ Զմիւռնիոյ և Այտընի քովերը հին հայ գաղթականութիւն մը կայ, որ մէկ երկու դար առաջ Ղարաբաղէն հեռանալով այս տեղերը հաստատուեր է», այլև մանրամասնելով՝ «Թէև յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկաստան դարձած է, բայց երկու տեղ՝ այն է Պուրտուր և Էօտէմիշ դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն Ղարաբաղցիք» (Աճառեան 1911, 61, Աճառյան 1951, 331):

Բարբառների լեզվական հարուստ նյութի համեմատական քննությամբ հնարավոր է թափանցել լեզվի պատմության խորքերը, վերականգնել բարբառային տարբերությունները և նպաստել հայերենի հնագույն շրջանի բարբառային բաժանվածության աստիճանի մասին պատկերացումներն ընդլայնելուն (Մուրադյան 1985, 75): Այս դիտարկումներն էլ հնարավորություն են ընձեռում

եզրակացնելու, որ վերոնշյալ փաստերը հետաքրքիր են նաև միջբարբառային առնչությունների տեսանկյունից:

Շնորհակալական

Շնորհակալություն բարբառագետ Վ. Կատվայանին և պատմաբան Թ. Ամրյանին՝ օգտակար տեղեկությունների համար:

Գրականություն/References/Литература

1. Ակինեան Ն. 1930, Հ. Աճառեան. Հայերէն Արմատական Բառարան, Հանդէս Ամսօրեայ, թիւ 7, 8, Վիեննա, Մխիթարեան հրատարակչատուն:
Akinyan N. 1930, H. Acharean. Armenian Etymological Dictionary, Handes Amsorya, vol. 7, 8, Vienna, Mekhitarist Publishing House (in Armenian).
2. Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան»:
Aghayan E. 1976, Explanatory Dictionary of Modern Armenian, Yerevan, Hayastan (in Armenian).
3. Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր Նախիջևան, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.:
Acharyan H. 1911, Armenian Dialectology: Classification and Arrangement of Armenian Dialects (with a Dialectological Card Index), Eminian Ethnographic Collection, vol. 8, Moscow-New Nakhichevan, Lazarean Institute of Oriental Languages Press (in Armenian).
4. Աճառեան Հ. 1913, Հայերէն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, Ն. Աղանյանցի տպ.:
Acharyan H. 1913, Armenian Provincial Dictionary, Eminian Ethnographic Collection, vol. 9, Tiflis, Printing House of N. Aghanyants (in Armenian).
5. Աճառյան Հ. 1954, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
Acharyan H. 1954, Complete Grammar of the Armenian Language in Comparison with 562 Languages, vol. 2, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
6. Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ.:
Acharyan H. 1971, Armenian Etymological Dictionary, vol. I, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
7. Աճառյան Հ. 1940, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, ԵՊՀ հրատ.:
Acharyan H. 1940, History of the Armenian Language, vol. 1, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
8. Ամալյան Հ. 2007, Հայ միջնադարյան բառարանագրությունը, Երևան, «ԱՌՏ»:
Amalyan H. 2007, Armenian Medieval Lexicography, Yerevan, ART (in Armenian).
9. Ամալյան Հ. 1966, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V–XV դդ.), Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:

- Amalyan H. 1966, Lexicographical Monuments of Medieval Armenia (5th–15th centuries), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
10. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ. 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու:
Avetikyan G., Surmelyan Kh., Avgeryan M. 1836, New Dictionary of the Armenian Language, vol. I, Venice, Printing House of St. Lazarus (in Armenian).
11. Բառարան Սուրբ Գրոց 1881, Կոնստանդնուպոլիս, Տպ. Ա. Յակոբ Պոյաճեան:
Dictionary of Holy Scripture 1881, Constantinople, Printed by A. Hagop Boyajian (in Armenian).
12. Բեդիրյան Պ. 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
Bediryan P. 2011, Extensive Explanatory Dictionary of Armenian Idioms, Yerevan, YSU Publishing House (in Armenian).
13. Գասպարյան Գ. 1968, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Gasparyan G. 1968, History of Armenian Lexicography, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
14. Դալալյան Ս. 2024, «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Երևան, ԼԻ հրատ.:
Dalalyan T. 2024, The Meanings of "Hidden, Disguised" in the Light of the Armenian-Iranian Etymological Examination of a Root Coming from Ancient Armenian, Jahukyan Readings, vol. 1 (21), Yerevan, LI Press (in Armenian).
15. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, Կ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Explanatory Dictionary of the Modern Armenian Language 1974, vol. III, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
16. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1950, Կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Colophons of Armenian Manuscripts 14th Century 1950, Compiled by L. Khachikyan, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
17. Հադրութի բառ ու բան 2023, Աշխ.-մբ և խմբ.-մբ՝ Ա. Սարգսյանի, Երևան, «Արմավ»:
The Folklore of Hadrut 2023, Compiled by A. Sargsyan, Yerevan, Armav (in Armenian).
18. Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան 1957, Յօրինեց Պետրոս վարդ. Ճիգմեճեան, Կ. II, Հալէպ, Տպարան Անի:
Complete Dictionary of the New Armenian Language 1957, Compiled by Rev. Petros Chizmechyan, vol. II, Aleppo, "Ani" Printing House (in Armenian).
19. Հայոց բառ ու բան 1912, Աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյս ս. Էջմիածնի:
Armenian Dictionary 1912, Worked by Archpriest Sahak Amatuni, Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin (in Armenian).

20. Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, հ. Ա, Երևան, «Գիտություն»:
Dialectological Dictionary of the Armenian Language 2001, vol. I, Yerevan, Gitutyun (in Armenian).
21. Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, հ. Բ, Երևան, «Գիտություն»:
Dialectological Dictionary of the Armenian Language 2002, vol. II, Yerevan, Gitutyun (in Armenian).
22. Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, հ. Գ, Երևան, «Գիտություն»:
Dialectological Dictionary of the Armenian Language 2004, vol. III, Yerevan, Gitutyun (in Armenian).
23. Հայոց լեզվի բարբառային բառարան 2010, հ. Զ, Երևան, «Գիտություն»:
Dialectological Dictionary of the Armenian Language 2010, vol. VI, Yerevan, Gitutyun (in Armenian).
24. Հայոց լեզուի նոր բառարան 1968, Աշխատասիրեցին՝ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան և որդիք հրատարակչատուն:
New Dictionary of the Armenian Language 1968, Compiled by A. Ter Khachaturyan, H. Gangruni, P.K. Tonikyan, Beirut, G. Tonikyan and Sons Publishing House (in Armenian).
25. Հայոց լեզուի նոր բառարան 1992, Աշխատասիրեցին՝ Գ. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հ. I, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան և որդիք հրատարակչատուն:
New Dictionary of the Armenian Language 1992, Compiled by G. Cherechyan, P.G. Tonikyan, A. Ter Khachaturyan, vol. I, Beirut, G. Tonikyan and Sons Publishing House (in Armenian).
26. Հովհաննիսյան Լ. 1991, Բառային տարբերակներ V դարի գրաբարում. Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, Երևան, ՀԳԱ հրատ.:
Hovhannisyanyan L. 1991, Word Variants in 5th Century Grabar. Problems of the History of the Armenian Language, vol. 3, Yerevan, Academy of Sciences of the Armenian Press (in Armenian).
27. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. 2009, Միջին հայերենի բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
Ghazaryan R., Avetisyan H. 2009, Dictionary of Middle Armenian, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
28. Ղազարյան Վ. 1980, Սարգիս Պիճակ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
Ghazaryan V. 1980, Sargis Pitsak, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
29. Ճելալեան Գ. 1865, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, Սուրբ Ղազար:
Chelalean G. 1865, Handy dictionary of the Armenian language, 2nd edition, Venice, Printing House St. Lazarus (in Armenian).
30. Մալխասեանց Ստ. 1944ա, Հայերէն բացատրական բառարան, հ. I, Երևան, ՀՍՍՌ պետական հրատ.:
Malkhasyants St. 1944a, Armenian Explanatory Dictionary, vol. I, Yerevan, State Publishing House of the Armenian SSR (in Armenian).
31. Մալխասեանց Ստ. 1944բ, Հայերէն բացատրական բառարան, հ. III, Երևան, ՀՍՍՌ պետական հրատ.:

- Malkhasyants St. 1944b, Armenian Explanatory Dictionary, vol. III, Yerevan, State Publishing House of the Armenian SSR (in Armenian).
32. Մարգարյան Ալ. 2015, Ստուգաբանություններ, Երևան, ԵՊՀ հրատ.:
Margaryan Al. 2015, Etymologies, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
33. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր թ. 3937, 4149, 8106, 9116, 9992:
Manuscripts of the Mesrop Mashtots Matenadaran N 3937, 4149, 8106, 9116, 9992.
34. Մեսրոպյան Հ. 2010, Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Երևան, «Նաիրի»:
Mesropyan H. 2010, Adjective synonyms in Armenian dialects, Yerevan, Nairi (in Armenian).
35. Մուրադյան Հ. 1985, Բառային զուգաբանությունների արժեքը. քարտեզագրման մի փորձ, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Muradyan H. 1985, The Value of Lexical Isoglosses, A mapping experiment, Dialectal Atlas of Armenian, vol. 2, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
36. Չալոյան Վ. 1964, Հայկական ռենեսանս, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Chaloyan V. 1964, Armenian Renaissance, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
37. Զալաշյան Գ. 2012, Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան, Դոնի Ռոստով, «Հին ռուսներ» ՍՊԸ:
Jalashyan G. 2012, Explanatory Dictionary of the New Nakhichevan dialect, Rostov-on-Don, "Old Russians" LLC (in Armenian).
38. Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, Արցախի պետական համալսարան:
Sargsyan A. 2013, Dictionary of the Karabakh dialect, Yerevan, Artsakh State University Press (in Armenian).
39. Սուքիասյան Ա. 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Suqiasyan A. 1967, Dictionary of Synonyms of the Armenian Language, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
40. Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 1965, հ. Ա, Երևան, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Catalog of Manuscripts of the Matenadaran Named after M. Mashtots 1965, vol. I, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the USSR (in Armenian).
41. Ցուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 1970, հ. Բ, Երևան, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Catalog of Manuscripts of the Matenadaran named after M. Mashtots 1970, vol. II, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the USSR (in Armenian).
42. Ուլուբաբյան Բ. 1981, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:

- Ulubabyan B. 1981, Episodes of the history of the Armenians from the Eastern Regions (5th–7th Centuries), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
43. Курдоев Канат 1960, Курдско-русский словарь, Москва, Государственное издательство иностранных и национальных словарей.
Kurdoev Kanat 1960, Kurdish-Russian dictionary, Moscow, State Publishing House of Foreign and National Dictionaries (in Russian).
44. Регионализация французского языка: диалекты Валлонии .Особенности разговорного французского языка во франкоязычной Швейцарии. Влияние диалектов на современный немецкий язык. Об изучении глаголов движения в русских говорах Приамурья. Выражение притяжательных отношений в арабском языке и его диалектах. Баварский диалект как уникальный территориальный диалект Германии. Особенности говоров села Чернолесское Новоселицкого района Ставропольского края, <https://phsreda.com/ru/keyword/34191/articles> (дата обращения: 16.04.2025).
Regionalization of the French Language: the Dialects of Wallonia. Peculiarities of Spoken French in French-speaking Switzerland. The Influence of Dialects on Modern German. On the Study of Verbs of Motion in Russian Dialects of the Amur Region. Expression of Possessive Relations in Arabic and its Dialects. The Bavarian Dialect as a Unique Territorial Dialect of Germany. Peculiarities of the Dialects of the Village of Chernoleskoye, Novoselitsky District, Stavropol Region, <https://phsreda.com/ru/keyword/34191/articles> (Accessed: 16.04.2025).

ПОГРАНИЧНЫЕ РУБЕЖИ АРМЕНИИ (ПО ЗАПИСКАМ ЕВРОПЕЙСКИХ И РУССКИХ ПУТЕШЕСТВЕННИКОВ XVII–XVIII ВВ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ (ԸՍՏ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՌՈՒՍ ԺԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ XVII–XVIII ԴԱՐԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ)

THE FRONTIERS OF ARMENIA (ACCORDING TO THE NOTES OF EUROPEAN AND RUSSIAN TRAVELERS OF THE 17TH–18TH CENTURIES)

Гоар Карагёзян
Գոհար Կարազյոզյան
Gohar Karagyozyan

Институт литературы им. М. Абегяна, Национальная академия наук, Армения
Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Literature after M. Abeghyan, National Academy of Sciences, Armenia

goharkaragyozyan@litinst.sci.am

Представлено: 27.06.2024; рецензировано: 16.10.2025; принято: 10.12.2025
Ներկայացվել է՝ 27.06.2024; գրախոսվել է՝ 16.10.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 27.06.2024; Revised: 16.10.2025; Accepted: 10.12.2025

© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence
© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-161

Аннотация – Статья посвящена анализу восприятия географических и политических границ Армении в XVII–XVIII веках через призму свидетельств европейских путешественников. Автор рассматривает, как историческая территория Армении в качестве культурно-этнического пространства соотносилась с реальными административными границами, установленными между Османской империей и Сефевидской Персией согласно Зухабскому договору 1639 года. Особое внимание уделяется описаниям таких символических и природных рубежей, как гора Арарат, реки Аракс и Арпачай, город Карс, Эрзерум и другие пограничные территории, воспринимаемые как лиминальные зоны между Востоком и Западом, христианским и мусульманским мирами. В центре анализа – тексты Жана Шардена, Жозефа Питтона де Турнефора, Жака Виллота, Адама Олеария, Поля Лука, Джемелли Карери и других, в наблюдениях которых Армения предстает пространством множественных пересечений стратегического значения и символической значимости. Сквозь призму этих нарративов реконструируется образ Армении как исторического и культурного многослойного региона, лишённого стабильных границ, но имеющего сакральное и этническое содержание. Границы Армении в европейских текстах часто обозначались не по административным картам, а по сетке значимых элементов – сакральных, исторических и этнографических, почерпнутых как из местных нарративов, так и из собственного культурного багажа путешественников.

Ամփոփում – Հոդվածում քննության է ենթարկվում Հայաստանի աշխարհագրական և քաղաքական սահմանների ընկալումը XVII–XVIII դարերում եվրոպացի ճանապարհորդների վկայությունների հիման վրա: Հեղինակը դիտարկում է, թե ինչպես են Հայաստանի պատմական տիրույթները՝ որպես մշակութային և էթնիկ տարածք, համադրվում Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև Զուհաբի պայմանագրով (1639 թ.) հաստատված վարչական իրական սահմանների հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում խորհրդանշական և բնական սահմանների նկարագրություններին, ինչպիսիք են Արարատ լեռը, Արաքս և Աղստաֆա (Արփաչայ) գետերը, Կարսն ու Էրզրում քաղաքները և սահմանամերձ այլ վայրեր, որոնք ընկալվում էին որպես սահմանային (լիմինալ) գոտիներ Արևելքի և Արևմուտքի, քրիստոնեական և իսլամական աշխարհների միջև: Վերլուծության կենտրոնում են ժան Շարդենի, Ժոզեֆ Պիտտոն դե Տուրնեֆորի, Ժակ Վիյոյի, Ադամ Օլեարիուսի, Պոլ Լյուկայի, Ջեմելլի Կարերիի և այլոց տեքստերը, որոնց դիտարկումներում Հայաստանը ներկայանում է որպես ռազմավարական նշանակությամբ և խորհրդանշական բովանդակությամբ խաչմերուկային տարածք: Այս պատմագրական հարթության միջոցով վերակառուցվում է Հայաստանի կերպարը՝ որպես պատմամշակութային առումներով բազմաշերտ տարածաշրջան՝ անփոփոխ սահմանների բացակայությամբ, սակայն հագեցած սրբազան և էթնիկ իմաստավորմամբ: Եվրոպական տեքստերում Հայաստանի սահմանները հաճախ նշվում էին ոչ թե վարչական քարտեզների, այլ իմաստային հյուսվածքի միջոցով՝ սրբազան, պատմական և ազգագրական շերտերով՝ ձևավորված ինչպես տեղական պատումներից, այնպես էլ ճանապարհորդների սեփական մշակութային պատկերացումների հիման վրա:

Abstract – This article examines the perception of Armenia’s geographic and political borders in the 17th–18th centuries through the lens of European travelers’ accounts. The author explores how the historical territory of Armenia as a cultural and ethnic space corresponded to the actual administrative borders established between the Ottoman Empire and Safavid Persia under the Treaty of Zuhab (1639). Special attention is given to descriptions of symbolic and natural boundaries such as Mount Ararat, the Araxes and Arpachay Rivers, the cities of Kars and Erzurum, and other frontier zones perceived as liminal spaces between East and West, Christianity and Islam. The analysis centers on the writings of Jean Chardin, Joseph Pitton de Tournefort, Jacques Villot, Adam Olearius, Paul Lucas, Giovanni Gemelli Careri, and others, whose observations depict Armenia as an area of multiple intersections, strategic significance, and symbolic resonance. Through these narratives, the image of Armenia is reconstructed as a historically and culturally multilayered region, lacking stable borders but rich in sacred and ethnic meaning. In European texts, Armenia’s boundaries were often defined not by administrative maps but by a network of meaningful signifiers – sacred, historical, and ethnographic – drawn from both local narratives and the travelers’ own cultural frameworks.

Ключевые слова – Армения, путешественники, границы, лиминальность, церковь.

Հիմնաբաներ – Հայաստան, ճանապարհորդներ, սահմաններ, լիմինալություն, եկեղեցի:

Keywords – Armenia, travellers, borders, liminality, church.

Вступление

Исторические границы Армении никогда не были статичными и подвергались изменениям в зависимости от геополитической ситуации. В разные перио-

ды армянские земли входили в состав различных империй. В период Средневековья и раннего Нового времени армянские земли стали объектом постоянного раздела между Османской империей и Персией. Это привело к тому, что административные границы не совпадали с этническими и культурными территориями армянского народа.

Раздел Армении по Зухабскому мирному договору

В XVII–XVIII веках, в пору посещения путешественниками Армении, ее территория, согласно Зухабскому мирному договору 1639 года, была разделена между Османской Турцией и Сефевидской Персией. В результате Восточная Армения, а также Дагестан, Ширван и Восточная Грузия отошли к Сефевидам, тогда как Западная Армения, Западная Грузия и Месопотамия оказались под контролем Османской империи. Касаясь границ Армении, французский путешественник Жан Шарден, автор «Путешествия по Персии и другим странам Востока», пишет: *«Описывая географическое положение страны, по которой я проходил, я не ссылаюсь ни на одного географа, ни древнего, ни новейшего, находя, что они противоречат друг другу... Большинство же [географов] делят ее только на две части: на Верхнюю и Нижнюю. Нижнюю, находящуюся под властью турок, иногда, они называют Малой, иногда Западной, но чаще всего Новой Армениею. Верхняя, называемая то Восточной, то Великой, а обыкновенно Старой Арменией, принадлежит Персии. Границы Малой Армении определяют так: с востока – Великая Армения, с юга – Сирия, с запада Черное море и с севера – Каппадокия. Границами же Великой Армении служат – Месопотамия, Грузия, Мидия и Малая Армения».* И далее: *«Армения послужила причиной последних войн между Турцией и Персией. Турки домогались подчинить себе Армению всю целиком, но в конце концов принуждены были разделить ее с Персами. Впрочем, в этом случае, все же турки так поделили Армению, что получили большую ее часть»* (Шарден 1902, 240).

Однако и после раздела земель султан и шах продолжали перманентно воевать друг с другом с целью отвоевания утерянных территорий. Тем не менее границы Армении оставались без изменения в течение почти ста лет. Постоянные войны, смена властителей и контроль Османской и Персидской империй делали Армению пространством пограничной неопределенности. Европейцы воспринимали ее как регион, лишенный стабильных границ и четкой политической идентичности, что усиливало ощущение ее лиминальности.

Территория Армении в этот период представляла собой многослойную структуру, включающую географическое, историческое, политическое, экономическое и этническое измерения. Географическое пространство определялось природным ландшафтом, тогда как геополитическое – пространством реального политического контроля со стороны Османской империи и Сефевидской Персии.

Историческая же территория Армении, не совпадавшая с границами фактической власти, сохранялась в культурной памяти и этническом присутствии.

Географическое пространство включало наиболее значимые символы, знаки, образы и характеристики территорий. Отличительными маркерами территории выступали также сакральные места: святыне горы, долины, рощи, реки, источники. Горы, перевалы, реки, труднопроходимые дороги воспринимались как естественные границы, отделяющие Армению от соседних регионов, преодоление которых означало вхождение в новые, неизведанные территории. В условиях отсутствия чётких политико-административных границ эти природные рубежи нередко совпадали с историческими и этническими ареалами проживания армянского населения. Своего рода топографическим ориентиром служили Араратские горы. Выступая в качестве одного из главных маркеров страны, гора Арарат предстает знаком-символом этой территории, своеобразной точкой отсчёта, от которой выстраивается единая географическая карта Армении. Путешественники воспринимали гору Арарат как один из символических маркеров границ армянской территории. Так, горы Араратские воспринимаются *«не как туманное обозначение неизвестной далекой страны, а как конкретное географическое понятие, как крайний предел христианского мира»* (Григорян 1974, 16–17). Подобным образом представлены Араратские горы в составленном в XIII веке «Житии Александра Невского»: *«И прославилось имя его во всех странах, от моря Хонужского (Каспийского – Г.К.) и до гор Араратских, и по ту сторону моря Варяжского (Балтийского – Г.К.) и до великого Рима»* (Повесть о житии 1981, 426–439).

В русских источниках, датируемых XVI–XVII вв., когда Армения была расчленена между султанской Турцией и шахским Ираном, и в дальнейшем, в XIX веке, когда по Туркманчайскому договору (1828 г.) к России отходили вместе с библейской горой Эриванское и Нахичеванское ханства, статус пограничной территории, *«границы, естественного предела христианских земель»*, *«пограничного столба своего рода между владениями русскими, турецкими и персидскими, которые все сходятся на нем»* (Марков 1901, 493) закрепляется за Араратом.

Арарат как рубеж между христианским и мусульманским мирами отчетливо проступает в путевых записках – письмах Н.Т. Муравьева: *«На утлом челноке я перебрался через шумный Аракс в Джульфе, – нашем пограничном карантине, – и татарское Салам встретило меня на Персидской земле. Грустно было на душе, когда, повернув в глухое, скалистое ущелье, я потерял из виду милую родину, и чудный Арарат»* (Муравьев 1844, 4).

Пограничные линии между османскими, персидскими и армянскими землями

Роль естественных границ в истории часто играли и реки, и Армения не является исключением. В записках путешественников XVII–XVIII веков реки упо-

минались как первостепенные ориентиры, разделявшие территории Османской империи, Персии и местных армянских княжеств (западная граница (Восточная Анатолия): Евфрат, Тигр. Южная граница (границы с Персией и Месопотамией): Тигр, Аракс). На картах того времени реки выполняли функцию чётко различных ориентиров, подчеркивая не только географическое, но и культурное значение этих водных рубежей.

Аракс – одна из главных рек региона, традиционно считалась границей между Персией и Османской империей – водоразделом, пограничной рекой, географическим пределом. Еще античные авторы, как правило, определяли реку Аракс в качестве границы Армении с Мидией. Плутарх пишет, что *«на шестой день после заключительного сражения римляне пришли к реке Аракс, отделяющей Мидию от Армении ... Когда же, благополучно достигнув противоположного берега, они ступили на армянскую землю...»* (Плутарх 1944, 424).

В своих путевых заметках немецкий путешественник, дипломат Адам Олеарий, совершивший два путешествия в Московию, касаясь границ Армении и Карабаха, пишет, что Армения это – *«область, лежащая между двумя благородными реками, Араксом и Куром (Arahes, Cyrus), ныне Aras и Kuer называемых, и заключающая в себе часть Армении, которую жители называют Арминия (Arminieh), и Грузия, которую они называют Гурдж (Gurtz)»* (Олеарий 1870, 700).

В записках посла дипломатической миссии Сефевидов ко двору испанского короля в 1599–1602 годах Дона Хуана Персидского читаем: *«Османское государство согласится заключить мир с Персией на гораздо более жестких условиях, а именно: султан оставляет за собой все те земли, прежде включенные в Персидское царство, которые его армии опустошили и завоевали во время последних кампаний, и что **река Аракс** (Arahes, Aras) должна считаться границей, разделяющей Османскую империю с царством шаха. Кроме того, только купцы, торговцы или послы будут иметь право пересекать эту пограничную реку, и под угрозой смерти ни один вооруженный солдат, турок или перс, не сможет перейти ее. В конце концов, шах и султан подписали этот договор... Таким образом, договор был утвержден, и с него были сделаны две официальные копии, одна – в Константинополе, подписанная в присутствии всех правителей Порты, другая – в Казвине, также подписанная персидскими ханами и правителями»* (Дон Хуан Персидский 2007, 133–134).

В XVII веке Аракс, как важную стратегическую линию, которая отделяла армянские земли от персидских владений, отмечал французский путешественник Жан Шарден. Согласно Жану Шардену, *«**Аракс** отделяет Армению от Мидии. Это царство, некогда державшее под своей властью Азию, теперь является лишь частью одной из провинций Персии, которую персы называют Азербайджаном или Асурпайкон»* (Chardin 1811, 307–308).

В XVII веке в качестве границы между армянскими землями и персидскими владениями османский путешественник Эвлия Челеби называет реку Арпачай,

отмечая, что её восточный берег принадлежит персам, а западный находится под управлением Карса (Челеби 1983, 336–337).

По словам французских путешественников – Жана Батиста Тавернье (Tavernier 1713, 52), Поля Лука (Lucas 1705, 4), Жозефа Питтона де Турнефора границей двух империй была также *«река Арпачай, до ее впадения в Аракс», «последнее же село Персии»* – Кошаванк (*Cochavan* у Турнефора). Далее начинались земли, подчиненные персам – Персидская Грузия (*«земли царя Персии»*) и Персидская Армения» (Tournefort 1727, 156).

Путешествие Жозефа Питтона де Турнефора по армянской стране было начато с земель, подвластных туркам, включительно вплоть до **Карса** – города, пограничного с Персидской Арменией. Карс в записках путешественников, как правило, представленный как последний город Турецкой Армении, выступает в качестве пограничной зоны, своего рода пограничной линии. Так, в «Проскинитарии» Арсения Суханова, отправленного на Восток царём Алексеем Михайловичем в 1651 году, город Карс упомянут как «последний турецкой град»: *«В 7 день пред зарею, возстав, поехали на гору все бором, и у горы даже до самага долу великаго приехали к Карсу граду, то есть в последний турецкой град»*. Описал он и реку Арпачай. *«В 10 день поехали на первом часу дни, приехали на реку великую, переехали выше Карса в ночь, река широка гораздо, и глубока, а как дождь бывает, то не мочно и переехать; имя ей Арпачай. Тут рубеж: с одной стороны генджинская земля, то есть кизылбашская, а с другой Османлы, сиречь турецкая»* (Суханов 1849, 217–218).

Карс в описаниях европейских путешественников неизменно предстает как пограничный, лиминальный город

«Карс – последний город Турции, расположен он на границе с Персией» (Villotte 1730, 57). *«Карс издревле играл роль порубежной крепости между Турциею, Персиею, Армениею и Грузиею»* (Марков 1901, 458). *«Карс (Carres) – последний город Турции; от Алеппо до этого города вдвое больше христиан, чем турок»* (Lucas 1705, 229) (*«J'ai remarqué que depuis Alep jusqu'à cette ville il y a deux fois plus de Chrétiens que de Turcs»*). И, наконец, Джемелли Карери кратко формулирует: *«Карс – граница между Персией и Турцией»* (Careri 1719, 451).

Карс был таможенной границей, пересечение которой было *«небезопасно для караванов, и не только из-за пошлины в полтора экю, которую надо платить на таможне, но также и из-за многочисленных пограничных караулов, которые под предлогом разгона разбойников сами становятся таковыми»* (Villotte 1730, 58), – делится своими наблюдениями автор путевых дневниковых записей «Путешествие миссионера общества Иисуса в Турцию, Персию, Армению, Аравию и Берберию» Жак Виллот. О разбойничьих действиях пограничной стражи с возмущением рассказывает и иезуит Филипп Авриль: *«Они обвинили меня в шпионаже и грозили повести меня к паше Карса – погранич-*

ного с Персией города Турции, который не преминет, говорили они, снести мне голову, в случае если я не постараюсь предотвратить несчастье значительными подношениями – единственным способом вырваться из их рук» (Avril 1692, 59). Поль Лука отмечает «Жульничество таможенников, которые пытаются взимать пошлину за выезд из страны» (Lucas 1705, 224).

Важной пограничной транзитной зоной между Османской империей и Персией (Tavernier 1713, 23–24; Avril 1692, 50–51) был также город Эрзерум. Стратегическое положение этого города, расположенного на границе двух империй, делало его не только административным и военным форпостом, но и крупным узлом транзитной торговли. Город играл роль перевалочного пункта для купцов, направлявшихся из Турции в Персию и обратно. Согласно Жаку Виллоту: «Эрзерум – один из тех городов, где господствуют турки; это столица Верхней Армении, расположенная на границах двух империй – Персии и Турции. Благодаря этому он представляет собой важный торговый центр, служа своего рода местом встречи купцов, переправляющих товары из Персии в Турцию и из Турции в Персию» (Villotte 1730, 49). По Полю Лука: «Эрзерум – небольшой город, через который проходят караваны, идущие из Константинополя и из всей Азии» (Lucas 1705, 218).

Градация опасности и враждебности: турецкая и персидская Армения в восприятии европейских путешественников XVIII века

Пересекая земли, подвластные туркам, путешественники оказывались на более безопасной территории – земле, подвластной персам. Об этом свидетельствуют многие путешественники, странствовавшие по Востоку. «Переходя границу Турции, – читаем в «Реляции путешествия» по странам Востока, составленной Жаком де Буржем, попутчиком миссионера, епископа Берита (Бейрута), – покидаешь страну рабства, в то время как на персидской земле можно даже одеваться на французский манер» (Rélacion du voyage de Mgr. l'evêque de Beryte 1666, 88). Словно в продолжение сказанного Турнефор пишет: «Жесткий нрав турок Карса», «недобрый взгляд, которым нас смеривали с головы до ног турки» (Tournefort 1727, 154), сменился добродушной улыбкой и приветливостью местных жителей. Кроме того, «границу Грузии можно было беспрепятственно пересечь [без уплаты таможенных пошлин]. И вообще, земли царя Персии можно было пройти без предъявления дозволения» (Tournefort 1727, 156). Поль Лука констатирует: «Я заметил по этому случаю, что христиане здесь не подвергаются такому притеснению и презрению, как в Турции. Выходя из этой церкви, я увидел христианина, который изрядно колотил турка палкой, тогда как в Турции он бы не осмелился даже взглянуть тому в лицо» (Lucas 1705, 7).

Таким образом, территория Турецкой и Персидской Армении в восприятии европейских путешественников XVIII века дифференцируется в зависимости от

степени предполагаемой опасности и враждебности по отношению к иноземцам и иноверцам. Географическое пространство предстает как конфессионально и этнически разнородное: здесь сосуществуют различные религии (ислам, христианство) и народы (армяне, турки, персы, курды). Каждое из этих подпространств осмысливается и оценивается по-своему, формируя систему восприятия, основанную на бинарных оппозициях: дружественное – враждебное, безопасное – опасное, надежное – ненадежное, спокойное – тревожное и т.д. Наиболее опасной и тревожной зоной, согласно описаниям путешественников, представляется курдское пространство. Курды контролировали дорогу и грабили проходившие мимо караваны. Согласно запискам французского путешественника Жозефа Питона де Турнефора, *«расположенные лагерем у истоков Евфрата, они были в этих краях сущим бедствием для путешественников.... Они не признают даже турок, и обдирают их, как и всех, при любом удобном случае. Они не подчиняются ни бейлербею, ни паше»* (Tournefort 1727, 119). *«Курды столь же опасны, как и арабы, и ничем не уступают им в искусстве грабежа, все думали лишь о том, как можно скорее скрыться из виду, чтобы не дать им собраться и напасть на нас»* (Avril 1692, 37–38), – читаем в «Путешествии по различным частям Европы и Азии» Филиппа Авриля.

Abstract – The northwestern regions of Armenia were one of the centers of the Kura-Araxes culture, where the Harich site stands out due to its stratified layers and hundreds of small clay artifacts. After a new study of archaeological collections preserved from the excavations of the site was found that in the Early Bronze Age settlement of Harich along with various Kura-Araxes ceramic vessels, zoomorphic and anthropomorphic figurines, stone and bone tools, there are 21 tokens (counting objects), 60 clay animal horn-shape miniatures, more than 150 wheel models, various discs and wheel-shaped objects. While the function of tokens is relatively clear, the purpose of wheels, discs, and horn-shaped objects has been a subject of long-standing debate among archaeologists. Therefore, starting in 2020, a new restoration, study, digitization and publication of the entire archaeological collection preserved from the excavations of Harich, and especially the objects listed above, has been initiated. Tokens, in various shapes and sizes, represent some of the earliest examples of a counting system and were used for measuring and recording quantities of grain, liquids and other goods. It is also possible that horn-shaped and wheel-shaped objects served similar purposes in weighing and accounting. The aim of the article is to discuss the existence of small finds from the Early Bronze Age settlement of Harich, to try to classify and typify them, and to study in the context of similar objects found from other Kura-Araxes tradition sites. The function of these objects is also discussed to understand whether they were a means of measuring a certain quantity, currency, or calculation, or whether they had more domestic, practical uses.

Аннотация – Северо-западный регион Армении является одним из центров Куро-Араксской культуры. Здесь находится памятник Арич, характеризующийся своей многослойностью и наличием сотен мелких глиняных предметов. В результате нового изучения археологических коллекций, сохранившихся при раскопках памятника, было установлено, что из раннебронзового поселения Арич, наряду с различными керамическими сосудами Куро-Араксской эпохи, зооморфными и антропоморфными фигурками, каменными и костяными орудиями, наличествуют 21 токен (счетный предмет), 38 предметов в виде рогов, более 150 моделей колес, различные диски и колесообразные предметы. Если функция токенов ясна, то назначение колес, дисков и предметов в форме рогов является предметом дискуссии археологов. Поэтому с 2020 года была предпринята новая реставрация, оцифровка и публикация всей археологической коллекции Арича и особенно перечисленных выше предметов. Токены различных форм и размеров представляли собой образцы первых примеров счетной системы и использовались как мера весов для зерна, жидкостей и т.д. Возможно, предметы в форме рогов и колес также служили для взвешивания и счета. Их стандартизированные размеры указывают на то, что для общин ранней бронзы характерно было системное мышление в вопросах хозяйства, собственности и обмена. Наличие этих предметов в поселениях ранней бронзы явствует о том, что, вопросы собственности и управления информацией уже являлись объектом инте-

реса людей в этот период. Целью статьи является рассмотрение предметов, найденных в поселении Арич, их классификация и типизация, изучение их в контексте аналогичных предметов, найденных в других памятниках Куро-Араксской эпохи. Не менее важно обсудить также вопрос функционального назначения этих предметов, а именно: понять, были ли они средством меры весов или счета либо они применялись в быту.

Հիմնարաներ – վաղբրոնզեդարյան, Հառիճ, թոքեններ, անիվներ, սկավառակներ:

Keywords – Early Bronze Age, Harich, tokens, wheels, discs.

Ключевые слова – раннебронзовый, Арич, токены, колеса, диски.

Ներածություն

Հայաստանի հյուսիս-արևմուտքը կուր-արաքսյան մշակույթի զարգացման և տարածման հիմնական կենտրոններից է եղել, և այստեղ են տեղակայվել այս ավանդույթի հատկապես երկրորդ՝ կառնուտ-շենգավիթյան ենթափուլին բնորոշ մի շարք հնագիտական հուշարձաններ (Badalyan 2014, 73): Հենց այս ժամանակաշրջանում է, որ Հայաստանում կավե առարկաների պատրաստման և թրծման տեխնոլոգիան սկսել է ավելի մեծ թափով զարգանալ և տարբեր չափերի խեցանոթներին զուգահեռ պատրաստվել ու տարածվել են բազմազան մանրաչափ առարկաներ, մարդակերպ և կենդանակերպ արձանիկներ, սայլերի մոդելներ, հենակներ ու պատվանդաններ:

Հյուսիսարևմտյան Հայաստանի կուր-արաքսյան հուշարձանները քննելիս հարկ է նշել Կառնուտի (Badalyan and Avetisyan, 2007, 136–152; Бадалян 1984, 229–237) Մեծ Սեպասարի (Yeganyan 2017, 395–410), Քեթիի (Петросян 1989), Շիրակավանի (Թորոսյան և այլք 2002), Հոռոմի (Badaljan et al 1993), Լեռնակերտի (Vardanyan et al 2022, 472–495) և Հառիճի (Хачатрян 1975, 43–45), վաղբրոնզեդարյան բնակատեղիները, որոնցից հատկապես Հառիճում գտնվել են մեծ թվով մանր առարկաներ:

Հառիճի հնագիտական հուշարձանը բազմաշերտ է, զբաղեցնում է մոտավորապես 6 հա մակերես (Хачатрян 1975, 43, Արեշյան, Ղաֆադարյան 1996, 59–60): Հուշարձանի տարածքը բաժանվել է 3 դարավանդների (I, II, III). որոնցից առաջինում բացվել է բնակատեղիի հիմնական հատվածը (մոտ 42 մ² մակերես), և հենց այստեղից էլ գտնվել են վերոնշյալ մանրաչափ առարկաների օրինակները: 2020 թվականից հուշարձանի նյութերի նորովի ուսումնասիրության շնորհիվ տասնյակ նոր առարկաներ են ի հայտ եկել, որոնք նախկինում չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը: Այդ առարկաները այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն ծառայություն» ՊՈԱԿ-ում (Հառիճից գտնված հնագիտական բոլոր առարկաները, որոնք նշված են հոդվածում, պահվում են Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական ֆոնդում՝ հավաքածուներ N 2621–2622): Այս բոլոր առարկաները վերականգնվել և ամրակայվել են, չափագրվել, լուսանկարվել, տիպաբանվել ըստ չափերի կամ ձևերի:

Դիտարկենք հուշարձանի այն մանրաչափ առարկաների օրինակները, որոնք պահվում են ՀՊԹ-ում՝ թոքեններ – 21 առարկա (նկ. 1), եղջյուրներ – 38 առարկա (նկ. 2), անիվների մոդելներ – 155 առարկա (նկ. 3):

Թոքեններ


Թոքենները (անգլ. *token*-հաշվիչ, նշան) կավից պատրաստված փոքր չափերի, հիմնականում երկրաչափական բազմազան պատկերների ձևով առարկաներ են, դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանից օգտագործվել են որպես չափ ու քանակի միավորներ: Այս առարկաների առաջին օրինակները հայտնվել են մ.թ.ա. X հազարամյակում Սիրիայի տարածքում գտնվող մի քանի հուշարձաններում (Miami 2016, 4), շատ մեծ տարածում են ունեցել Մերձավոր Արևելքի երկրագործական բնակատեղիներում՝ Ջարմո, Ուրուք. դրանցից մի քանիսում նմանատիպ առարկաների թիվը հասնում է հարյուրների (Schmandt-Besserat 1992, 10):

Հնագետների շրջանում այս առարկաների մասին քննարկումները բաժանվում են մի քանի խմբի. ոմանց համար սրանք հաշվիչներ են, արժույթի միավորներ, ոմանց համար՝ սեղանի խաղերի խաղաքարեր, որոնց նման օրինակները գտնվել են հատկապես Եգիպտոսում (Kowalski 2004, 12) ավելի ուշ շրջանում:

Սակայն դեռևս 1992 թվականին ամերիկացի հետազոտող Դ. Շմանթ-Բեսերատը իր «Գրից առաջ» գրքում այս առարկաները կոչել է թոքեններ, ուսումնասիրել 8000-ից ավելին, տեսակավորել դրանք, քննել դրանց հիմնական գործառույթը (Schmandt-Besserat 1992):

Դ. Բեսերատը տվել է 16 հիմնական տեսակներ՝ մի քանի խմբավորումով, օվալ, եռանկյունի, գլանաձև, և սահմանել, որ գոյություն ունեն պատրաստման ձևով շատ պարզ և ավելի բարդ թոքեններ: Պարզ են այն առարկաները, որոնք հիմնականում առանց նախշերի կամ գործիքի հետքերի, հասարակ երկրաչափական պատկերներ են, իսկ բարդ են այն թոքենները, որոնք ունեն ներկի հետքեր, գծազարդեր, անցքեր, դետալներ, և Մերձավոր Արևելքի հուշարձաններում երբեմն հանդիպում են կենդանիների գլուխներով և անոթի մոդելների ձևերով թոքեններ:

Ըստ Դ. Բեսերատի, յուրաքանչյուր թոքեն ունի իր կիրառության առարկան, ինչպես օրինակ, կոները զարու կամ ցորենի պարկերի համար էին, որոշները՝ ձեթի կամ այլ հեղուկների: Թոքեններից յուրաքանչյուրն ունեցել է իր գործառույթը. այսպես՝ շրջանաձև, կոնաձև թոքենները երևան են գալիս երկրագործական հասարակություններում, որտեղ հիմնականում զբաղվում էին հացահատիկավոր բույսերի մշակմամբ, իսկ ավելի բարդ՝ գլանաձև կամ լոբաձև թոքենները հիմնականում հայտնվում են անասնապահությամբ զբաղվող հասարակություններում:



Նկ. 1. Հադիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիից գտնված թոքեններ. ա-բ) կոնաձև, (քաշերը ծախից աջ՝ 8 գ, 9 գ, 20 գ, 14 գ, 2 գ, 4 գ, 5 գ, 2 գ), գ) սկավառակաձև (քաշերը ծախից աջ՝ 5 գ, 2 գ), դ) երկկոն (քաշը՝ 3 գ), ե) անկանոն (քաշերը ծախից աջ՝ 7 գ, 6 գ, 7 գ) (լուսանկարները՝ Վոսա Հակոբյանի)

Հադիճի տարածքում գտնվել են մեծաքանակ սկավառակաձև, կոնաձև և անկանոն առարկաներ, որոնք շատ երկար ժամանակ ուղղակի դիտարկվում էին որպես պատրաստուկներ, այլ առարկաներից պոկված հատվածներ, հիմնականում արձանիկների մասեր, բայց ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու դեպքում պարզ է դառնում, որ դրանք պոկված չեն ինչ-որ տեղից, ամբողջական են, ունեցել են հենց այսպիսի կիրառություն:

Հադիճում գտնված թոքենները, ըստ ձևի, բաժանվել են մի քանի տեսակի.

1. կոնաձև (նկ. 1ա, բ),
2. սկավառակաձև (նկ. 1գ),
3. երկկոն (նկ. 1դ),
4. անկանոն (նկ. 1ե):

Այս առարկաները պատրաստված են ձեռքով, անխառն կավից, դրանց վրա երբեմն կարելի է տեսնել մանր քարերի մնացորդներ, երբեմն նկատելի են մատնահետքեր կամ գործիքների հետքեր:

Ունեն տարբեր գունավորումներ, սակայն կուր-արաքսյան մշակույթի կավե առարկաներին շատ բնորոշ գույներ՝ շագանակագույնի, նարնջագույնի տարբեր երանգավորումներ: Այս գտածոների բարձրությունները հիմնականում 2–5 սմ են: Գերակշռում են կոնաձև առարկաները, որոնք տարբերվում են ըստ բարձրությունների, որոշները՝ շատ ավելի տափակ, ցածր առարկաներ են (նկ. 1բ), որոշները՝ ավելի սուր, երբեմն մինչև 5 սմ բարձրության իրեր են (նկ. 1ա): Հասկանալու համար, թե արդյոք այս առարկաները կարո՞ղ էին որպես կշռաքարեր օգտագործվել, կշռվել են, սակայն բոլորն ունեն տարբեր քաշեր (նկ. 1):

Թոքենների առաջին օրինակները Հայաստանում գտնվել են Ակնաշենի (Badalyan et al 2022, 218) նեոլիթյան բնակատեղիից: Նմանատիպ առարկաներ տարածաշրջանում հայտնաբերվել են նաև Արուխլոյի (Hansen et al 2006, 24), Մոնջուկի Թեփեի (Daitche 2019, 410) նեոլիթյան և Կամիլթեփեի (Lyonet et al 2012, 11) խալկոլիթյան բնակատեղիներից: Կուր-արաքսյան բնակատեղիներից նման օրինակներ են պեղվել Կոհնե Սահարից (Abedi 2022, 14). դրանք նույնպես դիտարկվում են որպես քանակի և արժույթի որոշակի միավորներ:

Եղջյուրների նմանվող առարկաներ

Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիի տարածքում գտնվել են նաև 38 բազմազան կենդանիների եղջյուրների նմանվող առարկաներ: Սրանք մեկից երբեմն մինչև 5–7 սմ երկարություն ունեցող եղջյուրներ են, մեծ մասամբ՝ կտրտված: Այս առարկաները նույնպես դիտարկվել են որպես կենդանակերպ արձանիկներից կտրտված եղջյուրներ, սակայն հաշվի առնելով դրանց մեծ չափերը՝ մի փոքր բարդ է պատկերացնելը, որ դրանք արձանիկների մասեր են, չնայած որ Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիից վերոնշյալ առարկաներին զուգահեռ հայտնաբերվել են բազմազան կենդանակերպ արձանիկներ նույնպես, որոնք, սակայն, չափերով շատ ավելի փոքր են (Saribekyan 2022, 2024): Այս եղջյուրներից որոշների դեպքում դրանք ամբողջական են՝ կտրտված չեն այլ առարկայից և կարող էին առանձին կիրառություն ունենալ:



Նկ. 2. Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիից գտնված եղջյուրանման առարկաներ (լուսանկարը՝ Վոսան Հակոբյանի)

Անիվներ և սկավառակներ

Հառիճի տարածքում թոքեններին զուգընթաց սկսում են հայտնվել անիվների բազմազան մոդելներ և սկավառակաձև առարկաներ, որոնց քանակը նույնպես հսկայական թվերի է հասնում, ի տարբերություն վաղբրոնզեդարյան այլ հուշարձանների: Այս առարկաների ընդհանուր թիվը 155 է. դրանցից 133-ը՝ կավից, 22-ը՝ քարից են պատրաստված: Կավե իրերի ճնշող մեծամասնությունը 4–7 սմ տրամագծով, շրջանաձև առարկաներ են՝ միջանցիկ անցքով, ունեն սայլի անիվի տեսք (նկ. 3ա):

Նմանատիպ անիվի մոդելներ են գտնվել կուր-արաքսյան բազմազան հուշարձաններից (Özdemir 2021, 120; Simonyan 2015, 135; Бадалян и др. 2015, 126): Նախապես ենթադրվում էր, որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անիվի այս մոդելների և կենդանակերպ արձանիկների համատեքստում գտնվել են նաև 9 սայլի թափքի մոդելներ, կարելի է եզրակացնել, որ դրանք եղել են ամբողջական սայլերի մոդելներ՝ լծված կենդանակերպ արձանիկներով, որոնցից մի քանի օրինակներ գտնվել են Բադաանիում (Mirtskhulava 2008, 105-116, Burmeister 2010, 231), Արսլան Թեփեում (Frangipane 1993, 88), ավելի վաղ՝ Հարրապպայում (Kenoyer 2004, 94):



Նկ. 3. Հադիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիից գտնված անվաճն առարկաներ (լուսանկարը՝ Վոսմ Հակոբյանի)

Մնացած մոտ մեկ տասնյակ կավե և 22 քարե առարկաները շատ ավելի փոքր տրամագծերով են՝ կրկին միջանցիկ անցքով, սակայն տափակ՝ ի տարբերություն անիվի մոդելների, ընդ որում, հանդիպում են նաև տուֆից պատրաստված օրինակներ: Այս անիվներն ունեն 2-3 սմ տրամագծեր (նկ. 3բ): Փոքր չափերի այս իրերը հիմնականում դիտարկվել են որպես ուլունքներ, կոճակներ, կախազարդեր: Քարից անիվների նմանատիպ օրինակներ փաստագրվել են նաև Քյուլ Թեփեում (Abedi 2015, 63), Շենգավիթում (Бадалян и др. 2015, 74): Նմանատիպ կավե սկավառակաձև օրինակներ հանդիպում են դեռևս նեոլիթում (Ակնաշեն. Badalyan et al 2022, 219), հետո հայտնվում Օրչոսանի խալկոլիթյան բնակատեղիում (Gambashidze 2018, 75-83), Բոյուկ Քեսիկում (Musesyibli, Huseynov 2008, 97): Նման փոքր սկավառակաձև 2 առարկա գտնվել է նաև Ծաղկահովտից (Badalyan, Avetisyan 2007, 267), սակայն դրանք ոսկորից են:

Վաղբրոնզեդարյան մի շարք հուշարձաններից ևս գտնվել են կրկին 2-5/6 սմ տրամագծով սկավառակաձև առարկաներ՝ առանց միջանցիկ անցքերի, հիմնականում կտրված անոթների տարբեր հատվածներից: Սրանց գործառույթը նույնպես հնագետներին քննարկումների առիթ է տվել, և մինչ օրս դա միանշանակ չէ, չնայած որ վաղբրոնզեդարյան մի շարք հուշարձաններում նույնպես նմանատիպ առարկաներ հայտնաբերվել են (Бадалян и др. 2015, 40):

Թոքենները՝ որպես չափման միավորներ, կնիքները՝ սեփականության ցուցիչներ

Վերոնշյալ առարկաների՝ նման հսկայական քանակություններով ի հայտ գալը կուր-արաքսյան բնակատեղիում մի շարք հարցեր է առաջացնում: Նախ և առաջ հարկ է ճշգրտել այս գտածոների գործառույթը, ինչը եթե թոքենների դեպքում հստակ է, ապա հնագետները սկավառակների ու անիվների պարագայում տարբեր տեսակետներ ունեն հարցի վերաբերյալ: Քանի որ Մերձավոր Արևելքում մի փոքր ավելի վաղ, իսկ Հարավային Կովկասում վաղ բրոնզի դարաշրջանում սկսում են ձևավորվել չափի ու քանակի մասին պատկերացումները, բազմազան առարկաներ են ի հայտ գալիս մեծ քանակություններով և ստանդարտ չափերով (Beale 1978, 289): Որոշ վաղբրոնզեդարյան մետաղե և կավե առարկաներ, օրինակ պարույրաձև զարդերը և իլիկի գլուխները մասնագետների կարծիքով նույնպես ձեռք են բերում արժույթի միավորներ և սկսում են օգտագործվել որպես ապրանքափողի տեսակ (Չոհրաբյան 2015, Չոհրաբյան 2024): Եվ բնավ զարմանալի չէ, որ տարածում են ստանում թոքենները, որոնք տեղեկատվություն փոխանցելու միջոց էին, ստեղծվել են ինչ-որ կոնկրետ բանի քանակ արժանագրելու համար, և Հառիճում դրանց հայտնվելը կարևոր օրինակ է փաստելու համար, որ ժամանակի մարդիկ արդեն ունեին որոշակի պատկերացումներ չափի և քանակի մասին: Այս առարկաների օգտագործումը հաշվարկային համակարգի առաջին օրինակն էր, որը համակարգված էր, և ինչքան ավելի համալիր ու բարդ են դարձել հաշվարկները, այդքան ավելի համակարգվել են նաև հաշվարկային առարկաները, օրինակ, երբ կոնկրետ գծեր կամ անցքեր են ավելացել, դրանք ցույց են տվել քանակը:

Նմանատիպ փոքրիկ, հեշտ պատրաստվող առարկաների օգտագործումը տարածվում է միգուցե նաև որովհետև կավի օգտագործումը հեշտացել էր, կավե առարկաների կոտրելը կամ վնասելը դժվար էր, նաև հնարավոր էր դրանք վերաօգտագործել (Schmandt-Besserat 1992, 162):

Տնտեսության զարգացման նոր ձևերի հետ միաժամանակ, երբ մեծ պահանջ է առաջանում ավելի շատ չափիչ առարկաներ ունենալու, հաշվարկների և առևտրի նորանոր իրեր են ի հայտ գալիս, որոնք սկսում են դիտարկվել որպես չափ ու կշռի միավորներ: Սրանք կարող էին որպես չափօրինակ ծառայել, օգտագործվել ավելի լայն շրջաններում՝ որպես միասնական միավոր: Չնայած այն հանգամանքին, որ Էգեյան տարածաշրջանում, Անատոլիայում և Մերձավոր Արևելքի վաղբրոնզեդարյան որոշ բնակատեղիներում արդեն սկսում են հայտնվել կշռաքարերը (Rahmstorf 2010, 88), բայց թոքենների՝ կշռաքարեր լինելու տեսակետը բացառվում է, որովհետև կշռաքարերը հիմնականում պատրաստվում էին քարից, որն ավելի ծանր է, և միանման կշիռ ստանալը համեմատաբար հեշտ էր, քան կավի դեպքում, և Հառիճի թոքենների պարագայում դրանց կշիռները, ինչպես երևում է նկար 1-ի նկարագրության հատվածում, նշված քաշերից խիստ տարբեր են, մինչդեռ չափերը շատ հաճախ համընկնում են:

Այս ամենին զուգընթաց, ավելի հազվադեպ, բայց հայտնվում են նաև կնիքները, որոնք ևս մի օրինակ են այն բանի, որ մարդիկ սկսել էին մտածել սեփականության մասին: Եթե թոքենները չափ ու քանակ էին ցույց տալիս, ապա կնիքները սեփականության արտահայտման ավելի կատարելագործված օրինակներ էին, որոնք մատնանշում էին առարկայի, անհատի կամ խմբի պատկանելությունը: Կնիքներ նույնպես տարածաշրջանում երևան են գալիս դեռևս նեոլիթից (Ակնաշեն (Badalyan et al 2022, 217), հետո խալկոլիթյան բնակատեղիներում (Բոյուկ Քեսիկ (Museyibli, Huseynov 2008, 97), Օրչոսանի (Gambashidze 2018, 84): Կուր-արաքսյան մշակույթի հուշարձաններում հայտնվում են արդեն այս ժամանակաշրջանին բնորոշ կնիքներ, որոնցից հայտնաբերվել են Թալինում (Badalyan, Avetisyan 2007, 247), Քյուկ Թեփեում (Abedi, Omrani 2015, 67), Կոհնե Սահարում (Abedi 2022, 14), Վրաստանի տարածքում՝ Գուդաբերդկայում, Բերիկլեբիում, Գրակլիանիում (Шаншавабили, Шерадазишвили 2014, 112), Ա. Սագոնան հիշատակում է մի քանի կնիք Նորշունթեփեում, Արսլանթեփեում, Կուրուջութեփեում (Sagona 1984, 117):

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, թե ինչու որոշ կուր-արաքսյան հուշարձաններում վերը քննարկված առարկաների քանակը հասնում է հազիվ մեկ տասնյակի, իսկ Հառիճում՝ հարյուրների: Նմանատիպ իրավիճակ է նույնպես Մերձավոր Արևելքի այն հուշարձաններում, որտեղից գտնվել են թոքենները, որոշ հնավայրերում դրանք մոտ մեկ տասնյակի են հասնում, որոշներում՝ հարյուրների:

Քանակները շատ տարբեր են, որովհետև որոշ հուշարձաններ համեմատաբար ավելի երկար են պեղվել, մյուսները՝ ոչ, որոշ հուշարձաններում 50-ից ավելի են, մյուսներում՝ 5 հատ, Դ. Բեսերատը դա բացատրում է նաև նրանով, որ սրանք փոքր չափերի են, աչքի չեն ընկնում, երբեմն նաև կտրտված են եղել և սկզբնական շրջանում չեն արժանացել հնագետների ուշադրությանը (Schmandt-Besserat 1992, 32):

Եզրակացություններ

Այսպիսով, հողվածում ներկայացված օրինակների ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրահանգել, որ միգրացե այս իրերը չեն ունեցել միանշանակ կիրառություններ, որովհետև չի բացառվում նաև այն հանգամանքը, որ դրանք ստեղծվել են բազմակի գործածության համար և նախապես որպես հաշվարկի միավորներ պատրաստված առարկաները կարող էին փոխել իրենց կիրառությունը և որպես խաղաքարեր կամ հագուստի մասեր օգտագործվել կամ՝ հակառակը: Բայց փաստ է, որ թոքենների, կնիքների և կշռաքարերի տարածվելու հանգամանքի հետ կապված՝ մարդիկ սկսում են շատ մեծ ուշադրություն դարձնել տեղեկատվության կուտակման ու փոխանցման, հաշվարկային միավորների և համակարգերի ստեղծման և փոխանակման խնդիրներին:

Չնայած որոշ մասնագետների պնդումներին, որ Միջագետքում հասարակությունները տնտեսապես շատ ավելի զարգացած էին, իսկ Հարավային Կովկասում առավելապես երկրագործական տնտեսաձևերով էին ապրում, միևնույն

է՝ թոքենների, կնիքների, անվաճն առարկաների գոյությունը նմանատիպ քանակություններով նոր քննարկումների առիթ է տալիս:

Շնորհակալական

Հոդվածի ուսումնասիրությունները իրականացվել են ՀՀ գիտության կոմիտեի Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի N 22-YSSS-037 շրջանակում: Հոդվածը գրելու ընթացքում ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի պատմության թանգարանի տնօրինությանը և Հնագիտության բաժնի աշխատակիցներին, նաև հնագետներ, պ.գ.դ. Արսեն Բոբոխյանին, պ.գ.թ. Արմինե Հարությունյանին և դրամագետ, պ.գ.թ. Արմինե Զոհրաբյանին օգտակար խորհուրդների համար:

Գրականություն/References/Литература

1. Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ. Հայկական Լեռնաշխարհի և հարակից շրջանների ճարտարապետությունը վաղ բրոնզի դարում, Հայկական ճարտարապետության պատմություն, Հտ. I, Երևան, «Գիտություն», 33-67:
Areshyan G., Ghafadaryan K. The Architecture of the Armenian Highlands and Adjacent Regions in the Early Bronze Age, History of Armenian Architecture, vol. I, Yerevan, Gitutyun, 33-67 (in Armenian).
2. Զոհրաբյան Ա. 2015, Վաղ բրոնզեդարյան պարուրածն զարդերը որպես ապրանքափողի տեսակ, Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն, Երևան, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն ծառայություն ՊՈԱԿ, 151-161□
Zohrabyan A. 2015, Early Bronze Age Spiral Shape Decorations as Primitive Money, Metsamor: A Chronicle of Half a Century of Excavations, Yerevan, Service For The Protection Of Historical Environment And Cultural Museum-Reservations SNCO, 151-161 (in Armenian).
3. Զոհրաբյան Ա. 2024, Իլիկի գլուխները որպես ապրանքափող, Մեծամորյան ընթերցումներ, N 2, Երևան, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն ծառայություն ՊՈԱԿ, 165-182:
Zohrabyan A. 2024, Spindle Whorls as Commodity-Money, Metsamorian readings, vol. 2, Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations SNCO, 165-182 (in Armenian).
4. Թորոսյան Ռ. Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., 2002, Հին Շիրակական, Հնագիտական պեղումները Հայաստանում 23, Երևան, «Գիտություն».
Torosyan R., Khnkikyan O. Petrosyan L., 2002, Ancient Shirakavan, Archaeological Excavations in Armenia 23, Gitutyun, Yerevan (in Armenian).
5. Abedi A., Omrani B. 2015, Kura-Araxes Culture and North-Western Iran: New Perspectives from Kul Tepe Jolfa (Hadishahr), Paléorient, N 41/1, 55-68.
6. Abedi A. 2022, Seal and Sealing in the Kura-Araxes Culture: New Findings from North-western Iran, Aramazd Armenian Journal of Near Eastern Studies, N XVI/1-2, 3-27.

7. Badalyan R., Avetisyan P. 2007, *Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia*, BAR International Series 1697, Oxford, Archaeopress Publishing.
8. Badalyan R. 2014, New Data on the Periodization and Chronology of the Kura-Araxes Culture in Armenia, *Paléorient*, N 40/2, 71–92.
9. Badalyan R., Harutyunyan A., Meliksetian K., Pernicka E., Christidou R. 2022, *Miscellaneous Objects from Aknashen, The Neolithic Settlement of Aknashen (Ararat Valley, Armenia), Excavation seasons 2004–2015*, Oxford, Archaeopress Publishing, 212–225.
10. Badaljan, R., Edens, C., Gorny, R., Kohl, P.L., Stronach, D., Tonikjan, A.V., Hamayakjan, S., Mandrikjan, S., Zardarjan, M., 1993, Preliminary Report on the 1992 Excavations at Horom, Armenia, Iran, Vol 31, 1–24.
11. Beale T.W. 1978, Beveled Rim Bowls and Their Implications for Change and Economic Organization in the Later Fourth Millennium B.C., *Journal of Near Eastern Studies*, 37/4, 289–313.
12. Burmeister S. 2010, Transport im 3. Jahrtausend vor Christus. Waren die Wagen ein geeignetes Transportmittel im Überlandverkehr? In: *Von Majkop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4.-2. Jt. v. Chr.*, Berlin, Eurasien-Abteilung des Deutschen Archäologischen Instituts, 223–237.
13. Daitche J. 2019, The Tokens from Monjukli Depe, Looking Closely: Excavations at Monjukli Depe, Turkmenistan, 2010–2014, vol. 1, Leiden, Sidestone Press, 409–455.
14. Frangipane M. 1993, Arslantepe-Melid-Malatya, Arslantepe, Hierapolis, Iasos, Kyme, Scavi Archeologici Italiani in Turchia, Venezia, 30–103.
15. Gambashidze I. 2018, Die spätchalkolithische Siedlung Orchosani (Südwestgeorgien). In: *Gold & Wein: Georgiens älteste Schätze*, Frankfurt, Archaeologisches Museum Frankfurt, 74–85.
16. Hansen S., Mirtskhulava G., Bastert-Lamprichs K., Benecke N., Gatsov I., Nedelcheva P. 2006, Aruchlo 2005–2006: Bericht über die Ausgrabungen in einem neolithischen Siedlungshügel, *Archäologische Mitteilungen aus Iran und Turan*, N 38, 1–34.
17. Kenoyer M.J. 2004, Die Karren der Induskultur Pakistans und Indiens, *Bad und Wagen: Der Ursprung einer Innovation Wagen im Vorderen Orient und Europa*, Mainz am Rhein, 87–106.
18. Kowalski W. 2004, Ancient Board Games, *Art and Culture Magazine*, N 13, 55–68.
19. Museyibli N., Huseynov M. 2008, Boyuk Kasik, Baku, National Academy of Sciences, Institute of Archaeology and Ethnography.
20. Niami T. 2016, *Near Eastern Tokens: A Contextual Analysis of Near Eastern Tokens from the 7th to the 4th Millennium BC*, Master Thesis.
21. Özdemir A. 2021, Murat Höyük Erken Tunç Çağı Hayvan Figürinler, *Sosyal Bilimler Dergisi*, SD Publishing House, 567–582.
22. Rahmstorf L. 2010, The Concept of Weighing During the Bronze Age in the Aegean, the Near East and Europe, *The Archaeology of Measurement. Comprehending Heaven, Earth and Time in Ancient Societies*, New York, Cambridge University Press, 88–105.
23. Sagona A. 1984, *The Caucasian Region in the Early Bronze Age, Part 1*, BAR International Series 214, Oxford, Archaeopress Publishing.

24. Saribekyan M. 2022, Zoomorphic Clay Figurines from the Early Bronze Age Settlement of Harich, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N XVI/1–2, 378–390.
25. Saribekyan M. 2024, Anthropomorphic and Zoomorphic Clay Statuettes of the Kura-Araxes Tradition: Case from the Settlement Harich, Armenia, Praehistorische Zeitschrift, 1–11.
26. Schmandt-Besserat D. 1992, Before Writing, vol. 1, Austin, University of Texas Press.
27. Simonyan H. 2015, The Archaeological Site of Shengavit: An Ancient Town in the Armenian Highland, Fundamental Armenology, N 1, 134–168.
28. Vardanyan B., Saribekyan M., Davtyan R., Mkrtchyan L., Manukyan S. 2022, Preliminary Results of Excavations of the Early Bronze Age Settlement in Lernakert (Armenia), Aramazd Armenian Journal of Near Eastern Studies, XVI/1–2, 472–495.
29. Yeganyan L. 2017, The Early Bronze Age Shrine of Mets Sepasar, Bridging Times and Spaces: Festschrift in Honour of Gregory E. Areshian on the Occasion of His Sixty-Fifth Birthday, Oxford, Archaeopress Publishing, 395–410.
30. Бадалян Р. 1984, Раннебронзовое поселение близ с. Карнут, Историко-филологический журнал, N 1, 229–237.
Badalyan R. 1984, Early Bronze Age Settlement near the Village Karnut, Historical-Philological Journal, N 1, 229–237 (in Russian).
31. Бадалян Р., Овсепян С., Хачатрян Л. 2015, Шенгавит: Каталог археологических материалов из коллекции Музея истории Армении, Ереван, Музей истории Армении.
Badalyan R., Hovsepyan S., Khachatryan L. 2015, Shengavit: Catalog of Archaeological Materials from the Collections of the History Museum of Armenia, Yerevan, History Museum of Armenia (in Russian).
32. Петросян Л. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до. н.э), Ереван, АН Армянской ССР.
Petrosyan L. 1989, Excavations of the Sites of Ketı and Voskehask (III-I mill. BC), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR.
33. Шаншашвили Н., Шеразадишвили З. 2014, Печати эпохи ранней бронзы на Южном Кавказе, Дагестан в Кавказском историко-культурном пространстве, Конференция посвященная 90-летию Института истории, археологии и этнографии Дагестанского научного центра Российской академии наук, Махачкала, Академия наук, 122–123.
Shanshashvili N., Sharazadishvili Z. 2014, Seals of the Early Bronze Age in the South Caucasus, Dagestan in the Caucasian Historical and Cultural Space, Conference dedicated to the 90th Anniversary of the Institute of History, Archaeology and Ethnography of the Dagestan Scientific Center of the Russian Academy of Sciences, Makhachkala, Academy of Sciences, 122–123 (in Russian).
34. Хачатрян Т. 1975, Древняя культура Ширака, Ереван, Ереванский государственный университет.
Khachatryan T., Ancient Culture of Shirak, Yerevan, Yerevan State University (in Russian).

**ՇՆՈՂԻ ՀՆԱԿԱՅՐԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՈՒՆՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՆՐ
ԶԱՐԴԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (Մ.Թ.Ա. I ՀԱՋ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)**

**TYPOLOGY OF BEADS AND SMALL ORNAMENTS DISCOVERED AT THE
ARCHAEOLOGICAL SITES OF SHNOGH (FIRST HALF OF THE 1ST
MILLENNIUM BC)**

**ТИПОЛОГИЯ БУСИН И МЕЛКИХ УКРАШЕНИЙ, НАЙДЕННЫХ В
АРХЕОЛОГИЧЕСКИХ ПАМЯТНИКАХ ШНОХА (ПЕРВАЯ ПОЛОВИНА I
ТЫС. ДО Н.Э.)**

Անի Սարատիկյան
Ani Saratikyan
Ани Саратикян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

ani.saratikyan@iae.am

Ներկայացվել է՝ 27.08.2025; գրախոսվել է՝ 21.11.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 27.08.2025; Revised: 21.11.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 27.08.2025; рецензировано: 21.11.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-215

Ամփոփում – Հնագիտական տվյալները վկայում են, որ Հարավային Կովկասի տարածքում բնական պաշարները կարևոր դեր են ունեցել ոչ միայն կենցաղային և արտադրական խնդիրների լուծման, այլև զարգացողության մեջ: Քարից, բրոնզից և տարբեր խառնուրդներից պատրաստված ուլունքներն ու զարդերը դրա ակնհայտ վկայությունն են: Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Շնող գետի (Լոռի, Հայաստան) ավազանի տարածքից մեր պեղած դամբարաններից հայտնաբերված ուլունքների և մանր զարդերի հիմնական տեսականին և դրանց զուգահեռները հնագիտական ու հավատալիքային համատեքստերում: Ներկայացված տեսականու մեջ մեծ տարածում ունեն սարդիոնից, մածուկից պատրաստվածները, մեծ կիրառելիություն ունի նաև բրոնզը, ինչպես արտադրական մյուս ուղղություններում, պերճանքի առարկաները, կախազարդերն ու ուլունքները նույնպես շարունակում են պատրաստվել բրոնզից: Ուշագրավ է ծովախեցիների առկայությունը: Դրանք չնայած ուլունքներ չեն, չունեն մշակման հետքեր, սակայն մասնագիտական գրականության մեջ դրանք համեմատվում են մետաղի, ոսկու և այլ թանկարժեք նյութերի հետ, որոնց առկայությունը հուշում է, որ դրանք ունեցել են ոչ միայն գեղարվեստական, այլև սոցիալական նշանակություն՝ արտահայտելով որոշա-

կի բարձր կարգավիճակ: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ուլունքների վերաբերյալ հավատալիքային ընկալումները լայնորեն տարածված էին տարբեր մշակույթներում. դրանք դիտարկվել են որպես հմայական ուժ և պաշտպանիչ նշանակություն ունեցող առարկաներ: Նման զուգադրումները վկայում են, որ Հին Հայաստանի մշակութային միջավայրում առկա են եղել ոչ միայն տեղական ավանդույթներ, այլև ակտիվ տնտեսական ու մշակութային կապեր Մերձավոր Արևելքի հետ. այդ մասին վկայում են բնամիջավայրին ոչ բնորոշ գտածոները:

Abstract – Archaeological evidence shows that in the ancient cultures of the South Caucasus, natural resources were important for production activities, as well as for decorative arts. Beads and ornaments made of stone, bronze, and various alloys serve as clear evidence of this. The present study reveals the principal types of beads and small ornaments uncovered during our excavations in the burial grounds of the Shnogh River basin (Lori, Armenia) and examines their parallels in both archaeological contexts and mythological narratives. In the presented assemblage, beads made of sardonyx and paste are particularly widespread, bronze is also extensively used. As in other areas of production, objects of adornment-including pendants and beads-continued to be crafted from bronze. The presence of seashells is especially noteworthy. Although they are not beads and show no traces of working, in scholarly literature they are compared to metal, gold, and other precious materials. Their presence suggests that they held not only artistic value but also social significance, reflecting a certain elevated status. The beads were seen as objects with magical power and were also important for protective and religious rituals. These similarities show that the culture of ancient Armenia had strong local traditions and was also influenced by the economies and cultures of the Near East. This is shown by findings that are not typical for the local area.

Аннотация – Археологические данные свидетельствуют о том, что в древней культуре Южного Кавказа природные ресурсы играли важную роль не только в решении производственных задач, но и в ювелирном искусстве. Бусы и украшения, изготовленные из камня, бронзы и различных сплавов, являются очевидным доказательством сказанного. Настоящее исследование посвящено основным типам бус и мелких украшений, обнаруженных при раскопках могильников бассейна реки Шнох (Лори, Армения), и их параллелям в археологическом и мифологическом контексте. В данной коллекции широко распространены изделия, изготовленные из сардоникса и пасты, а также активно используется бронза. Как и в других областях производства, предметы украшения, подвески и бусы изготавливались из бронзы. Особый интерес представляет наличие морских раковин. Несмотря на то, что они не являются бусами и не имеют следов обработки, в научной литературе их сопоставляют с металлом, золотом и другими драгоценными материалами. Их наличие указывает на то, что они имели не только художественную, но и социальную значимость, отражая определённый высокий статус. Результаты исследования показывают, что представления о бусах были широко распространены в различных культурах; они рассматривались как объекты, обладающие магической силой и имеющие культовое оберегающее значение. Такие параллели свидетельствуют о том, что культурная среда Древней Армении имела не только богатые местные традиции, но и находилась под активным экономическим и культурным влиянием Ближнего Востока, о чем являются находки, нетипичные для местного ареала.

Հիմնաբառեր – Հայաստան, Լորի, Շնող, դամբարան, ուլունք:

Keywords – Armenia, Lori, Shnogh, tomb, bead.

Ключевые слова – Армения, Лори, Шнох, гробница, бусина.

Ներածություն

Լոռու մարզի Շնող գետի ավազանի տարածքում պեղված երկաթեդարյան դամբարաններից հայտնաբերվել են տարաբնույթ պեղճանքի առարկաներ, որոնց մեջ առանձնակի ուշադրության են արժանի ուլունքները: Ուսումնասիրած 132 դամբարանից ուլունք (ուլունքաշար) պարունակող դամբարանները 16-ն են, որից 9-ը՝ տղամարդկանց, 3-ը՝ կանանց, 4-ը առանց կմախքի դամբարաններ են: Սա ցույց է տալիս, որ ուլունքների առկայությունը սեռորոշիչ հանգամանք չէ. դրանք հանդիպում են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց դամբարաններում, այս դեպքում նույնիսկ տղամարդկանց դամբարաններում գերակշռում են: Ըստ այդմ՝ դրանք իրենց բազմազանությամբ մեծ տեղ ունեն արդուզարդի մեջ, և կիրառել են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ: Ուլունքների տեսականին հատկապես շատ է Բարձրյալ (մ.թ.ա. IX–VIII դդ.), Բովեր-1 (մ.թ.ա. IX–VIII դդ.), Բաղերի ճալա (մ.թ.ա. IX–VIII դդ.), Բովեր-2 և Փիջուտ (մ.թ.ա. VIII–VII դդ.) դամբարանդաշտերում, որոնք էլ քննարկվում են ստորև:

Ուլունքներն առաջին հերթին ցույց են տալիս ժամանակաշրջանի գեղագիտական մտածողությունը, նախընտրելի ձևերը և գույները: Այս առումով գունապանակը պարզ է՝ ներառում է մուգ և բաց շագանակագույն, կաթնագույն, սպիտակ, կապտավուն և փիրուզագույն երանգներ: Սա, իհարկե, պայմանավորված էր ոչ միայն հնաբնականների նախասիրությամբ, այլև տարածքում առկա բնական պաշարներով, քանի որ վերջիններս էլ հիմնականում կիրառվում էին ուլունքներ պատրաստելու համար: Ուլունքներն առատորեն կիրառվել են թաղման ծեսում: Ակնհայտ է, որ դրանք ննջեցյալին «ուղեկցել են» ոչ միայն որպես սեփականություն, այլև էականորեն կապված են հմայական հատկությունների հետ. ըստ այդմ՝ ստորգետնյա աշխարհում կարող էին լինել հոգու պահպանության խորհրդանիշ:

Ուլունքների և մանր զարդերի հիմնական տեսականին

Շնողի տարածքից հայտնաբերված ուլունքների առկա տեսականու մեջ, ինչպես Հայաստանի շատ այլ հնավայրերում, գերակշռում են քարից՝ սարդիոնից և մածուկից պատրաստվածները (Սեյրանյան, Դեմջյան 1989, 4): Մ.թ.ա. V հազ. սկսած՝ մածուկից պատրաստվածները մեծ տարածում են ստանում հատկապես Միջագետքում (Bar-Yosef Mayer, Porat 2010, 117): Մածուկից ուլունքների համար հիմնական հումք են հանդիսանում ստեատիտը, ստեատիտե ֆայանսը և կվարցային ֆայանսը (Bar-Yosef Mayer et al. 2004, 499): Սրանցից զատ, ուլունքների կազմում կան նաև բրոնզից, ապակուց, ծովախեցիներից պատրաստված նմուշներ:

Սարդիոնից ուլունքներ. Սարդիոնները աչքի են ընկնում ձևի և գույնի բազմազանությամբ: Դրանց մեջ կան կլոր, գլանաձև, բաց ու մուգ շագանակագույն,

ինչպես նաև կաթնագույն օրինակներ (նկ. 1, 2-3, 2-5, 2-6, 3): Սարդիոնները վզնոցների շարվածքում բավականին շատ են կիրառվում, հանդիպում են թե՛ այլ ուլունքների, թե՛ միայն սարդիոնի շարաններով: Վերջիններիս զուգահեռները հայտնի են և՛ Հայաստանի, և՛ ընդհանրապես Հարավային Կովկասի տարբեր հնավայրերից (Դևեջյան 2022, 28; Խանզադյան, Կարաքեշիշյան 1981, 5; Хачатрян 1975, 243, рис. 155; Техов 1977, 180; Сурпычев, Малхасян 1984, 32):

Բրոնզից կոճակներ, կախազարդեր. Բրոնզից պատրաստված կոճակների և կախազարդերի քանակը շատ է, իսկ տեսականին բազմազան չէ (նկ. 4): Դրանք ներկայանում են երեք ձևով. տափակ կոճակների (նկ. 4-1, 4-2), երկարավուն՝ խողովակաձև կախիկների (նկ. 4-3, 4-4, 4-6, 4-7), և գնդաձև՝ միաձուլված շարոցների տեսքով (նկ. 4-5): Կոճակաձև ուլունքները հավանաբար նախատեսված են եղել հագուստի՝ լանջապանակի վրա ամրացնելու համար, քանի որ դրանց մի կողմն է ուռուցիկ, իսկ մյուս կողմը հարթ է, այն հարմարեցված է կարելու համար, իսկ ներսում պահպանված են կտրվածքում կլոր կամրջակները, որոնց միջոցով էլ հավանաբար կարվել են (Մարտիրոսյան 1969, 30, տախ. 28, նկ. 5, 6): Ընդհանրապես, տարբեր չափերի բրոնզե կոճակները բավական տարածված էին ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջաններում և հայտնի են Հայաստանի տարբեր հնավայրերից (Деведжян 1981, 46, таб. XIII, рис. 11-14):

Խոշորների տեսականին շատ չէ, դրանց մեջ ուշագրավ են խողովակաձև զարդերը, որոնք բավական լավ մշակված օրինակներ են, և գնդաձևները: Այս բրոնզե առարկաները մի դեպքում անզարդ են (նկ. 4-3, 4-4), մյուս դեպքում փորագրման տեխնիկայով զարդարված են գծավոր-ցանցավոր նախշերով (նկ. 4-6, 4-7): Այդպիսիք գտնվել են Սադախլույից, Ծալկայի շրջանից (Morgan 1988, 123, fig. 102; Кыфтин 1941, 55, рис. 52-1): Սրանք հավանաբար պերճանքի առարկաներ են եղել, որոնցից շարոցներ են պատրաստել և օգտագործել որպես կախազարդ:

Շաղախից ուլունքներ. Մանրահատիկ ուլունքների մեջ կան նաև կլոր, ուղղանկյունաձև, գլանաձև, սպիտակ, բաց և մուգ շագանակագույն, կապույտ (փիրուզագույն) մածուկից (նկ. 2-2, 2-4, 2-5, 2-6), ինչպես նաև կապույտ ապակուց կամ ապակենման խառնուրդից պատրաստված (նկ. 3) մանրահատիկ օրինակներ: Ապակենման և մածուկից ուլունքներ են գտնվել, օրինակ, Մամխորի կալից, Կամոյից, Գոլովինոյից և այլն (Խանզադյան, Կարաքեշիշյան 1981, 7-8): Սպիտակ գլանաձև ուլունքները մեծ տարածում ունեն, որոնք հիմնականում պատրաստվում են ստեատիտից, ինչպես մաքուր քարից, այնպես էլ համախառնուրդներից (Astruc et al. 2021, 421): Սրանց մեջ կան ինչպես գլանաձև և կարճ, խողովակաձև երկարուկ, այնպես էլ կլորավուն և ուղղանկյունաձև օրինակներ: Այս ուլունքների քիմիական բաղադրության վերաբերյալ տվյալներ չունենք, սակայն ուշագրավ է, որ ավելի վաղ թվագրվող հուշարձաններում նույնպես առկա են նմանատիպ օրինակներ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք ոչ թե մածուկից, այլ քարից են պատրաստված (Badalyan et al. 2022, 213): Այս պարագայում միայն հետագա ուսումնասի-

րությունների շնորհիվ հնարավոր կլինի հստակ պատասխանել, թե ինչ տեխնոլոգիական բնութագիր ունեն այն բոլոր ոլուռները, որոնք մենք առայժմ որակում ենք որպես մածուկից պատրաստված. հնարավոր է մի մասը բնական քարից պատրաստված լինի, որոշ մասն էլ բզեզանման և գլանաձև են (նկ. 2-5, 2-6) և շատ մոտ են փիրուզի բնական երանգին: Ինչ վերաբերում է պատրաստման տեխնոլոգիային, ապա, հավանաբար, դրանք երկու ձևով են պատրաստվել. օրինակ՝ մանր, խողովակաձևերը հնարավոր է մեկ գլանակից լինեին պատրաստված, ապա գլանակը կտրատելով՝ առանձին մասեր ստանային: Ավելի խոշոր և մանրամասն մշակվածությամբ օրինակները, ըստ երևույթին, առանձին են պատրաստվել, մանավանդ որ նմանատիպ օրինակները ավելի քիչ են:

Ծովախեցիներ. Ոլուռների ամենաքիչ տարածվածությունն ունեն ծովախեցիներից պատրաստվածները (նկ. 2-1): Ծովախեցիների հայտնաբերումը ծովից շատ հեռու վայրերում կարևոր է. այն կարող է վկայել հեռահար փոխազդեցությունների և ընդարձակ առևտրային ցանցերի գոյության մասին: Այդպիսի օրինակներ գտնվել են Լոռի Բերդի, Քարաշամբի, Օշականի, Մեծամորի և այլ դամբարանադաշտերից (Դևեջյան 2006, աղ. 9, մկ. 6-8; Փիլիպոսյան 1998, 64): Շնորհի օրինակները «*Cerastoderma edule*» միջերկրածովյան և սևծովյան տեսակներին են պատկանում: Ծովախեցիներն օգտագործվել են հիմնականում կախազարդեր պատրաստելու համար (Manca et al. 2022, 118): Չնայած նրան, որ մենք այս նմուշները ոլուռների շարքում ենք դիտարկում, նշենք, որ այս օրինակները մշակման հետքեր (անցքեր) չունեն, որը դժվարացնում է դրանց գործածության հստակեցումը: Նմանատիպ խեցիներ են հայտնաբերվել նաև Իրանի տարածքում, երկաթի դարաշրջանի Հասանլուի և Զագրոսի դամբարաններում՝ դրանք համեմատվում են մետաղի, ոսկու և այլ թանկարժեք նյութերի հետ, և դրանց առկայությունը հուշում է, որ ունեցել են ոչ միայն գեղարվեստական, այլև սոցիալական նշանակություն՝ արտահայտելով որոշակի բարձր կարգավիճակ (Manca et al. 2022, 123): Դամբարանում դրանց առկայության մասին Ա. Փիլիպոսյանը գրում է, որ ծովախեցիներից պատրաստված առարկաների առկայությունը կապված է սոցիալական կարգավիճակի հետ և հանդիպում է գերազանցապես կանանց դամբարաններում (Փիլիպոսյան 1998, 64): Թաղման ծեսում դրանց առկայությունը կարող էր պայմանավորված լինել նաև դրանց վերագրվող մոգական-չարխափան ազդեցության մասին հավատալիքով:

Ոլուռները հավատալիքներում

Ոլուռները մեծ դեր ունեն հավատալիքներում՝ որպես հմայական հատկություններով օժտված իրեր: Օրինակ՝ Սարգիոնի կամ սերդուլիկի մոգական հատկությունները շատ վաղուց հայտնի են եղել Հին աշխարհում, այդ մասին է վկայում Ուրի մ.թ.ա. III հազ. դամբարաններում դրանց առկայությունը: Հայտնի է, որ Շուբադ աստվածուհու մարմինը ամբողջությամբ ծածկված է եղել ոսկուց, արծաթից, լազուրիտից և սերդուլիկից պատրաստված ոլուռներով: Սերդուլիկը նաև մեծ տարածում է ստացել հին Եգիպտոսում, դրանք հայտնաբերվել են


Թութանհամոնի դամբարանում, հավանաբար մոզական հատկություններով օժտված այդ քարերը պետք է պաշտպանեին փարավոնին հետմահու (Texov 1977, 180; Woolley, Litt 1934, 223):

Հայտնի են նաև նրա բուժական նշանակության մասին տվյալներ, համաձայն որի՝ այն օժանդակել է ծննդաբերությանը, բուժել է ուռուցքներ և վերքեր, մասնավորապես կտրող գործիքներից ստացած վերքերը (Խանզադյան, Կարաքեշիջյան 1981, 12). դրանք բուժելու համար քարը շփում էին ջրով, ապա այդ ջրով մաքրում էին վերքը (Сутрычев, Малхасян 1984, 32): Մեջբերելով Ա. Դավրիժեցուն՝ Ղրիմից հայտնաբերված մի կնիք-մատանու սերդուլիկից քարե ներդիրի մասին գրելիս հեղինակները նշում են, որ, ըստ հայերի մեջ եղած հավատալիքների. «այդ քարը պաշտպանում է իր տիրոջը տուն քանդվելու և պատերը փլվելու ժամանակ» (Բելի, Մանուչարյան 1980, 290): Իսկ փիրուզի մասին նշվում է, որ այն զինվորը, որ ուներ փիրուզազարդ վահան, անպարտելի էր (Сутрычев, Малхасян 1984, 37–38):

Ինչպես նշում է Է. Խանզադյանը, թաղման ծեսում զարդերի առկայության արարողակարգային նշանակության լավագույն դրսևորումներից է շումերական Ինաննա աստվածուհու մահվանն ու վերածննդին նվիրված առասպելը (Խանզադյան, Կարաքեշիջյան 1981, 12): Այնտեղ մասնավորապես ասվում է, որ Ինաննան, ձգտելով ամեն գնով զորացնել իր իշխանությունն ու միաժամանակ դառնալ նաև ստորերկրյա աշխարհի տիրուհին, որոշում է իջնել ստորերկրյա թագավորություն՝ զարդարվելով արքայական հանդերձանքով և փառահեղ զարդերով. նա ուղևորվում է դեպի մի «երկիր, որից վերադարձ չկա» (Крамер 1965, 183): Համանման մի պատում է պահպանվել նաև հայոց մեջ. ըստ այդմ՝ Շամիրամ թագուհին հասարակ ուլունքը ձեռք բերելու համար տալիս է մի բուռ ոսկի, ասելով, որ այն աստվածների հայր Ջևան է ուղարկել իրեն, որպեսզի դրանով կենդանացնի Արային: Ուլունքը կորցնելով ծովում՝ Շամիրամն այնքան է վշտանում, որ իր արցունքներից գետեր են գոյանում, իսկ ծովի աստվածը հրաժարվում է վերադարձնել այն՝ ասելով, որ այն հարկավոր է իրեն խորտակելու համար այն նավերը, որոնց միջոցով թագուհին ուզում է տիրել ծովափի բոլոր քաղաքներին (Հայկազունի 1909, 6, 14): Այս դրվագները բնորոշում են ուլունքի մի առանձնահատկություն, ըստ որի՝ այն երկրային կյանքի և անդրաշխարհի միջև կապող միջոց է հանդիսանում՝ ունենալով պահպանիչ հմայական ուժ, անգամ վերակենդանացնող հատկություն:


Եզրակացություններ

Ներկայացված ուլունքների և զարդերի տեսականին պատրաստված է բազմատեսակ նյութերից՝ ներառյալ քար, մածուկ, բրոնզ, ապակի և ծովախեցիներ: Տեղական հումքի օգտագործումը վկայում է տարածքային պաշարների օգտագործման մասին, իսկ ծովախեցիների առկայությունը շեշտում է հեռահար առևտրային կապերի մասին:



Նկ. 1. Սարդիոնից ուլունքներ

1-1. Բարձրյալ, դ. N 22, 1-2. Բովեր 1, դ. N 50, 1-3, 1-4, 1-5. Բաղերի ճալա, դ. N 15




Նկ. 2. Սարդիոնից, մաճուկից ուլունքներ և ծովախեցիներ

2-1. Բաղերի ճալա, դ. N 32, 2-2, 2-3. Բովեր 1, դ. N 19, 2-4. Բովեր 1, դ. N 50, 2-5. Բարձրյալ, դ. N 35, 2-6. Բարձրյալ, դ. N 107



Նկ. 3. Սարդիոնից, մածուկից և ապակուց ուլունքներ, Բարձրյալ, դ. N 11



Նկ. 4. Բրոնզից ուլունք-կախազարդեր

4-1. Բարձրյալ, դ. N 107, 4-2. Բովեր 2, դ. N 11, 4-3. Փիջուտ, դ. N 20, 4-4. Բովեր 2, դ. N 11, 4-5. Բարձրյալ, դ. N 107, 4-6. Փիջուտ, դ. N 20, 4-7. Փիջուտ, դ. N 3

Ուլունքների արտադրությունն իրականացվել է տարբեր տեխնոլոգիաներով՝ ինչպես քարերի մշակմամբ, մեկ գլանակից կտրատելու միջոցով, այնպես էլ առանձին դետալների պատրաստմամբ: Ուլունքների գունային բազմազանությունը (շագանակագույն, կաթնագույն, սպիտակ, կապտավուն, փիրուզագույն) պայմանավորված է ոչ միայն գեղագիտական նախընտրությամբ, այլև տեղական հումքի առկայությամբ: Ուլունքների մոգական և պաշտամունքային նշանակության մասին վկայում են ինչպես հայոց մեջ պահպանված հավատալիքները, այնպես էլ տարածաշրջանի դամբարանային համալիրների տվյալները, որը տևական շարունակություն ունի: Ծովային պաշարների օգտագործումը եղել է կենսապահովման կարևոր մաս՝ խթանելով հնագույն մարդկանց տնտեսության զարգացումը: Այդ մշակույթի հետ հեռահար շփումների մասին են վկայում դամբարանում հայտնաբերված ծովախեցիները՝ ձեռք բերելով նաև հավատալիքային նշանակություն:

Շնորհակալական

Շնորհակալություն ենք հայտնում ՀԱԻ հնակենդանաբան Նուշիկ Զարիկյանին՝ ծովախեցիների նույնականացման համար: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Գրականություն/References/Литература

1. Բելի Ա., Մանուչարյան Ա. 1980, Հայերեն արձանագրությամբ կնիք-մատանի Ղրիմից, Պատմա-բանասիրական հանդես, N 1, 289–291:
Beli A., Manucharyan A. 1980, Signet ring with an Armenian inscription from Crimea, Historical-Philological Journal, N 1, 289–291 (in Armenian).
2. Դևեյան Ս. 2006, Լոռի բերդ II, Երևան, «Գիտություն»:
Devejian S. 2006, Lori Berd II, Yerevan, Gitutyun (in Armenian).
3. Դևեյան Ս. 2022, Լոռի բերդ III, Երևան, ՀԱԻ հրատ.:
Devejian S. 2022, Lori Berd III, Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press (in Armenian).
4. Խանզադյան Է., Կարաքեշիշյան Ռ. 1981, Վաղ երկաթի դարաշրջանի դամբարաններ, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. VII, Երևան, «Հայաստան», 3–15:
Khazadryan E., Karakeshishyan R. 1981, Burials of the Early Iron Age, Proceedings of the History Museum of Armenia, vol. VII, Yerevan, Hayastan, 3–15 (in Armenian).
5. Հայկազունի Հ. 1909, Շամիրամի ուլունքը, Հայ զինուորի գրադարան, N 3, Հրատարակութիւն Խորէն քահ. Մնացականեանցի, Թիֆլիս, Արագատիպ «Նաղեժդա», 3–16:
Haykazuni H. 1909, Shamiram's Bead, Library of the Armenian Soldier, N 3, Published by Khoren Catholicos Mnatsakanyants, Tiflis, Nadezhda, 3–16 (in Armenian).

6. Մարտիրոսյան Հ. 1969, Ուշբրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձաններ II (խմբ. Բ.Ն. Առաքելյան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
- Martirosyan H. 1969, Late Bronze Age Settlements and Cemeteries, Archaeological Monuments of Armenia II (Ed. B. Arakelyan), Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
7. Սեյրանյան Վ., Դևեջյան Ս. 1989, Մեր նախնիների քարե ուլունքները, Երեկոյան Երևան, դեկտեմբերի 2, N 277, 4:
- Seyranyan V., Devejian S. 1989, Stone Beads of Our Ancestors, Yerekoyan Yerevan, December 2, N 277, 4 (in Armenian).
8. Փիլիպոսյան Ա. 1998, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III–II հազ. Հուշարձաններից հայտնաբերված ծովախեցիները որպես հնագիտական և ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուր, Հին Հայաստանի մշակույթը XI, Հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 64–65:
- Piliposyan A. 1998, Sea Shells Discovered at the Monuments of the Armenian Highlands Dating to the 3rd–2nd Millennia BC as Primary Sources for Archaeological and Ethnographic Research, Culture of Ancient Armenia XI, Abstracts of the Reports of the Republican Scientific Conference, IAE, NAS RA, 64–65 (in Armenian).
9. Astruc L., Courcier A., Gratuze B., Guilbeau D., Jansen M., Ostaptchouk S., Lyonnet B., Guliyev F. 2021, The Use of Natural Resources at Mentesh Tepe during the Late Chalcolithic Period and the Early Bronze Age. In: Marro C., Stöllner Th. (eds.), The Origins of Early Mining and Metallurgy in the Caucasus, MOM Éditions, 409–424.
10. Badalyan R., Harutyunyan A., Meliksetian Kh., Pernichka E., Christidou R. 2022, Miscellaneous Objects from Aknashen, The Neolithic Settlement of Aknashen (Ararat Valley, Armenia), Excavation Seasons 2004–2015, Archaeopress Archaeology, 212–224.
11. Bar-Yosef Mayer D., Porat N. 2010, Glazed Steatite Paste Beads in the Chalcolithic of the Levant: Long Distance Trade and Manufacturing Processes, Techniques and People: Anthropological Perspectives on Technology in the Archaeology of the Proto-historic and Early Historic Periods in the Southern Levant, 111–123.
12. Manca L., Mashkoura M., Ghasimid T. 2022, Between Land and Sea. The Exploitation of Marine Shells from the Neolithic to the Iron Age in Iran: The Site of Ruwar (Northwest of Iran), Paleo, Hors-série, Sociétés humaines et environnements dans la zone circumméditerranéenne du Pléistocène au début del’Holocène, Actes du colloque en hommage à Émilie Campmas, Université Toulouse, Jean Jaurès, 8–9 mars 2021, Musée national de Préhistoire, 112–129.
13. Morgan J. de 1889, Mission Scientifique Au Caucase, I, Paris, Ernest Leroux éditeur.
1920 թ. դեկտեմբերին Հայաստանը խորհրդայնացվեց՝ ժառանգելով Հայաստանի Հանրապետության կողմից չհաղթահարված աղքատությունը, սովը, համաճարակները, քայքայված տնտեսությունը: Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) կառավարությունը հենց սկզբից չճանաչեց մասնավոր սեփականությունը: Իշխանությունների նպատակային գործունեությունը հանգեցրեց նախկին մեծահարուստների, գործարանատերերի ունեզրկման: Խորհրդային իշխանությունն առավել ընդգծված բացասական վերաբերմունք ուներ «բանվորներին շահագործող» մասնավոր արդյունաբերական ձեռնարկությունների նկատմամբ՝ փորձելով օր առաջ պետական սեփականություն դարձնել դրանք: Դա կարող էր նպաստել նաև «պետության հիմնապուն» հանդիսացող բանվորական զանգվածների նկատմամբ կայուն ազդեցության հաստատմանը և պահպանմանը:

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվարն ընկած ժամանակաշրջանում Հայաստանի խորհրդային իշխանություններն առաջնահերթ պետականացրին գործող ձեռնարկությունները: 1921 թ. փետրվարին բռնկված հակախորհրդային ապստամբության պատճառով բռնագրավումների գործընթացն ընդհատվեց: 1921 թ. ապրիլի սկզբին Երևանում և շրջակայքում խորհրդային իշխանության վերականգնումից հետո հանրապետությունում բռնագրավումներ կատարելու հարցում առավել զգուշավոր գործելակերպ որդեգրվեց: ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (Ժողկոմխորհ) 1921 թ. հուլիսի 26-ի երկու դեկրետներով կանոնակարգվեց ձեռնարկությունների, տարբեր անշարժ գույքերի ազգայնացման ու բռնագրավման խնդիրը: Այդպիսի լիազորություն վերապահվեց բացառապես Ժողկոմխորհին, որի թույլտվությամբ միայն հիմնարկներն ու պաշտոնյաները կարող էին պետականացումներ և բռնագրավումներ կատարել (ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, Էջմիածին, 1921, էջ 84–85):

Հայաստանի բնակչության դրությունը սկսեց բարելավվել նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ-ի) տարիներին (1921–1928 թթ.): Այն նպաստեց արդյունաբերական վերականգնմանը: Այլ արտադրությունների թվում վերագործարկվեցին նաև գարեջուր արտադրող ձեռնարկությունները, մանավանդ որ գարեջրի արտադրությունը ֆինանսական մեծ ներդրումներ չէր պահանջում, փոխարենը՝ ակնկալվող եկամուտն անհամեմատ մեծ էր: Այս առումով ուշադրության արժանացան դեռևս XIX դարի վերջերին Երևան և Ալեքսանդրապոլ (1924 թվականից՝ Լենինական) քաղաքներում հիմնադրված գարեջրի գործարանները,

որոնց գործունեությունն ընդհատվել էր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ակոհոլային խմիչքների վրա սահմանված հարկերի պատճառով:

ԽՍՀՄ-ում խրախուսվում էր գարեջրի արտադրությունը, քանի որ այն համարվում էր համեմատաբար մատչելի և «թույլ» ակոհոլային ըմպելիք, որը կարող էր փոխարինել օղուն՝ միաժամանակ բյուջեի համար ապահովելով լրացուցիչ եկամուտներ և խթանելով սննդի արդյունաբերության զարգացումը:

Գարեջրի արտադրությունն առաջինը վերսկսվեց Ալեքսանդրապոլում: 1921 թ. ազգայնացված Համազասպ Ծաղիկյանի գարեջրի գործարանը 1923 թ. հունիսից սկսեց արտադրանք թողարկել (Բանվոր, Լենինական, 16.XII.1923, N 90): Քաղաքի գարեջրի մյուս գործարանի տարածքում, որը պատկանել էր Մկրտիչ Զիթողյանին, 1922 թ. հիմնվել էր տեքստիլ ֆաբրիկա:

ԽՍՀՄ այլ մեծ քաղաքների օրինակով՝ Երևանի քաղաքային-գավառային գործադիր կոմիտեն (քաղգավգործկոմը) 1923 թ. տարեվերջին անհրաժեշտ համարեց ՀՍԽՀ մայրաքաղաքում ևս գարեջրի արտադրություն կազմակերպել: Նախնական ուսումնասիրություն կատարելուց հետո քաղգավգործկոմի ընդհանուր բաժինը 1923 թ. դեկտեմբերի 11-ին դիմեց գործկոմի ղեկավարությանը՝ առաջարկելով ազգայնացնել արդյունաբերող Հարություն Ավետյանին պատկանող «Զանգա» գարեջրի գործարանը՝ իր ամբողջ տարածքով, շինություններով, ինվենտարով և տրամադրել քաղաքի տեղական տնտեսությանը: Մանավանդ որ գործարանի սարքավորումները համեմատաբար բարվոք վիճակում էին, և հնարավոր էր համարվում առանց մեծ ծախսերի կարճ ժամանակամիջոցում այն վերագործարկել (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 6-8; Խորհրդային Հայաստան, Երևան, 3.I.1924, N 2): Այս ամենն առիթ է դառնում գարեջրի գործարանը (նաև գործարանատիրոջ՝ Զանգու (Հրազդան) գետի ափին գտնվող մնացյալ ունեցվածքը) պետականացնելու համար:

Երևանի քաղգավգործկոմի դիմումի հիման վրա ՀՍԽՀ ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցության 1924 թ. հունվարի 2-ի նիստում որոշվեց Ավետյանի գարեջրի գործարանը հանձնել Ժողովրդական տնտեսության խորհրդին՝ վերջինին լիազորելով այն կապալով տրամադրել Երևանի քաղգավգործկոմին (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 185, թ. 2): Որոշում կայացվելուց կարճ ժամանակ անց՝ հունվարի 9-ին, Հ. Ավետյանի գարեջրի գործարանի ամբողջ գույքը բռնագրավվեց՝ հանձնվելով Երևանի քաղգավգործկոմի տեղական տնտեսության բաժնի իրավասությանը (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 432-442):

Երևանի քաղաքային իշխանությունները քայլեր ձեռնարկեցին բռնագրավված գործարանն արագ վերագործարկելու նպատակով: ՆԷՊ-ի սկզբնափուլում տարածված «օրինաչափություն» էր, որ արտադրության կազմակերպման բնագավառում մասնագետների պակասի պատճառով խորհրդային իշխանությունները, այլ տարբերակ չունենալով, աշխատանքի էին ընդունում հին սերնդի փորձառու մասնագետների: Առժամանակ պաշտոնավարում էին պետականացված ձեռնարկությունների նախկին տերերը կամ ղեկավարները: Աշխատանքները կազմակերպելուց հետո, առաջին իսկ հարմար փոխարինողի առկայությամբ

յան դեպքում, նրանց աշխատանքից ազատում էին: Հաշվի առնելով մասնագետների պակասը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հ. Ավետյանն ուներ գարեջրի գործարան ղեկավարելու երկարամյա փորձ, տիրապետում էր բազմաթիվ հմտությունների՝ սկսած գարեջրի պատրաստման տեխնոլոգիայից և վերջացրած այն իրացնելու և շահույթ ստանալու հմտություններով, 1924 թ. մարտի 1-ին Երևանի քաղաքագործկոմը նրան աշխատանքի հրավիրեց իր նախկին գործարան՝ իբրև վարիչ (հետագայում նշանակվեց նաև գարեջրագործ): Նա այդ պաշտոնը վարեց մինչև 1926 թ. ապրիլի 12-ը (Երևան քաղաքի պատմության թանգարան, ՄՄ 2315-4, փ. 1382):

Երևանի «Զանգա» (հետագայում վերանվանվեց «Հրազդան») գարեջրի գործարանի վերագործարկման և գարեջրի արտադրության կազմակերպման հարցում կային որոշ դժվարություններ: Գործարանի աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար խոչընդոտ էր շենքի վիճակը. մի քանի տարի չօգտագործվելու պատճառով այն վերանորոգման կարիք ուներ: Ուստի Երևանի քաղաքագործկոմն այդ նպատակով ֆինանսական միջոցներ հատկացրեց: Անգործության հետևանքով շարքից դուրս էին եկել նաև մի շարք կարևորագույն տեխնիկաներ, այդ թվում՝ սառույց պատրաստող մեքենան: Հաջորդ պատճառը հումքի (գարու, թարմ գայլուկի) պակասն էր: Գործարանը կարիք ուներ նաև գարեջրի զտման սարքավորումների, շշերի և խցանների (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 13 շրջ., 17-18, 23, 110 և շրջ.):

Աշխատանքների դանդաղ ընթացքը դժգոհություն առաջացրեց Երևանի քաղաքագործկոմում: 1924 թ. մայիսի 20-ին Առևտրաարդյունաբերական սեկցիային ուղղված հրահանգում Տեղական տնտեսության բաժնի վարիչ Պապյանը պահանջեց միջոցներ ձեռնարկել գործարանը սահմանված ժամանակամիջոցում վերագործարկելու նպատակով՝ հակառակ դեպքում սպառնալով, թե «հանցավորները կհեռացվեն պաշտոնից ու դատի կհանձնվեն» (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 103): Այս հրահանգը նպաստեց աշխատանքների արագացմանը. 1924 թ. հունիսի 1-ից Երևանի գարեջրի գործարանը (այն ուներ 5 աշխատակից, որից մեկը վարիչն էր) սկսեց փոքր ծավալով արտադրանք թողարկել (Խորհրդային Հայաստան, 23.VII.1924, N 168; ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 127, 146-147 շրջ.): Հունիսի առաջին օրերին Լենինականի գարեջրի գործարանից ստացվեց 20 ֆունտ գայլուկ, 16.000 դատարկ շիշ, իսկ Թիֆլիսից՝ 10.000 խցան (ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 89-90, 148):

Թեև գործարանի առջև խնդիր էր դրված ավելացնել արտադրությունը՝ նախապատերազմական արտադրական ծավալներին հասնելու նպատակով, սակայն վերագործարկմանը հաջորդող առաջին ամիսներին նախատեսված եկամուտը չապահովվեց: Այսպես՝ գործարանը վերագործարկման ամսում պատրաստել էր 240 դույլ գարեջուր, հուլիսին՝ 700 դույլ: 1924 թ. սեպտեմբերի ընթացքում գործարանն արտադրել էր 328 դույլ գարեջուր և նախորդ ամիս արտադրած գարեջրի հետ վաճառել 651 դույլ, սակայն սառույց չունենալու պատճառով հոկտեմբերին արտադրությունը կանգ էր առել (Խորհրդային

Հայաստան, 12.IX.1924, N 209, 14.XI.1924, N 260): Հետագայում գործարանի արտադրողականությունն առավել կայուն դարձավ:

Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին պետականացվեցին և վերագործարկվեցին մինչև խորհրդայնացումը գոյություն ունեցող գարեջրի գործարանները: Թեև գարեջրի արտադրությունը Հայաստանի 1920-ական թվականների տնտեսության առաջնային ճյուղերից չէր, այդուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես ՆԷՊ-ի պայմաններում թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը պետական ներդրումներով կարողանում էին համեմատաբար արագ վերականգնվել ու զարգանալ:

Հրապարակվող փաստաթղթերն ընտրված են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) թիվ 113 (<< Կառավարություն) և 133 (ՀԽՍՀ բանվորագյուղացիական և կարմիրբանակայինների պատգամավորների Երևանի քաղաքային-գավառային գործադիր կոմիտե) ֆոնդերից: Դրանք հնարավորություն են ընձեռում բացահայտելու Հայաստանի խորհրդայնացումից հետո Երևանի գարեջրի գործարանի պետականացման և վերագործարկման մանրամասները: Փաստաթղթերը վերնագրել ենք և ծանոթագրել: Պահպանել ենք դրանց լեզվաոճական առանձնահատկությունները, ուղղագրական և կետադրական միջամտություններ արել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Անհրաժեշտ հավելումները կատարել ենք ուղղանկյուն փակագծերում ([]):

Համո Սուքիասյան

Hamo Sukiasyan

Амо Сукиасян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

hamo.sukiasyan@academhistory.am

DOI: 10.53548/0320-8117-2025.3-307

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Թիվ 1

Երևանի քաղաքային-գավառային գործադիր կոմիտեի տեղական տնտեսության բաժնի վարիչի գրությունը առևտրաարդյունաբերական սեկցիայի վարիչին՝ գարեջրի գործարան հիմնելու հարցի վերաբերյալ

7 դեկտեմբերի 1923 թ.

N 1341

Խնդրվում է շտապել պատասխանելու գրությանս գարեջրի գործարան բացելու մասին:

Տեղ[ական] տնտ[եսության բաժնի] վարիչ՝ Պապյան

Գործավար՝ Տ. Հովհաննիսյան
Մակագրություն. «Կատարված է: Մեր զեկուցումը գործարանի համար ներկայացված է Տեղական տնտեսության վարչին: 9.XII., Պետրոսյան»:

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 1: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 2

Երևանի քաղաքագործկոմի տեղական տնտեսության բաժնի արդյունահարկային սեկցիայի ենթաբաժնի վարիչի զեկուցագիրը տեղական տնտեսության բաժնի վարիչին՝ Հ. Ավետյանին պատկանող գարեջրի գործարանը բռնագրավելու վերաբերյալ

9 դեկտեմբերի 1923 թ.

Ի կատարումն Ձեր սույն դեկտեմբերի 7-ի N 1341 գրության՝ գարեջրի գործարան ձեռնարկելու մասին, զեկուցում եմ հետևյալը.

Քաղաքումս գոյություն ունի գարեջրի գործարան, որը պատկանում է քաղաքացի [Հարություն] Ավետյանին և գտնվում է Զանգու գետի վրա: Այդ գործարանը 1915 թվից մինչև օրս մատնված է անգործության:

Գործարանի մեջի կահավորությունը և բոլոր մասերը, շնորհիվ տիրոջ պահպանության, գտնվում է բարեկարգ և մաքուր վիճակի մեջ, առանց բացառության, որպիսի հանգամանքը թույլ է տալիս ամենակարճ ժամանակամիջոցում և աննշան ծախքով վերականգնել գործարանի գործունեությունը:

Այդ գործարանը կառուցված է վերջին կատարելագործված սիստեմայով, որը պարզ ապացուցում է, որ ժամանակին այդ գործարանը ունեցել է խոշոր և հաջող արտադրություն:

Ներկա ընդհանուր տնտեսության սուղ դրությունը պահանջում է, որ տնտեսությանը զարկ տալու համար անգործության մատնված գործարանները, ընդհանուր շահերի տեսակետից, վերաշինվեն և վերականգնվեն:

Ուստի անհրաժեշտ եմ համարում.

1. Շտապ կարգով հարց հարուցել վերոհիշյալ գարեջրի գործարանը յուր ամբողջ տարածությամբ մունիցիպալիզացիայի՝ ենթարկել և տրամադրել Տեղական տնտեսությանը:

2. Մունիցիպալիզացիայից հետո անմիջապես կատարել գործարանի շենքում մի քանի նորոգումներ, որի մասին սորան կից ներկայացնում եմ առանձին հանձնաժողովի կազմած արձանագրությունը:

3. Մասնագետ չլինելու պատճառով գործարանատեր Ավետյանին, ինչպես լավ մասնագետի և երկարատև փորձառություն ունեցողի, հրավիրել գործարանի վարիչի պաշտոնով, որին հանձնարարել կարճ ժամանակամիջոցում կազմել գործարանին հարկավոր բոլոր պիտույքների նախահաշիվը:

Արդյունահարկային սեկցիայի ենթաբաժնի վարիչ՝ Պետրոսյան

Մակագրություն. «Շտապ: Ընդհանուր բաժնի վարիչին: Խնդրում եմ Ձեր միջնորդությունը գործկոմի նախագահությանը՝ մունիցիպալիզացիայի ենթարկելու այս գործարանը ամբողջ գույքով և թույլ տալ մտցնելու գործարանը 1924 թ. բյուջեի մեջ: 10.XII., Պապյան»:

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 7 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 3

Երևանի քաղաքագործկոմի տեղական տնտեսության բաժնի հանձնաժողովի եզրակացությունը (ակտը) Հ. Ավետյանի գարեջրի գործարանը վերագործարկելու հարցի վերաբերյալ

9 դեկտեմբերի 1923 թ.

Настоящий акт составлен о нижеследующем: сего числа комиссия в составе: заведующего Эксплуатации налогов п/отд. местного хозяйства т. Петросяна, помощника его [В.] Абраамяна, техника Тер-Исаакяна и комиссара [А.] Степаняна, осмотрев помещение Пивоваренного завода гр[ажданина] гор. Эривани [А.] Аветова, находящееся на речке Занга, нашла следующее: внутреннее оборудование завода в полном его составе, вследствие бдительного надзора и попечения со стороны владельцев, находится в целости и исправности, благодаря чему, при наличии материалов в пивоварении, возможно без особых затрат быстро восстановить действия завода.

Здание завода в общем также находится в целости за исключением незначительной его части, а именно крыша одного отделения завода, которая местами обвалилась, и фасадные стены здания, в которой образовалась трещина.

Как для исправления указанных дефектов, так и для улучшения общего вида здания требуется расход приблизительно до 2000 руб. Постановлено о вышеизложенном составить настоящий акт, который за общей подписью представить по принадлежности.

Зав[едующий] эксплуатац[ией] налог[ов] п/отд. Петросян
Помощник его В. Абраамян²
Техник местхоза Тер-Исаакян³
Комиссар А. Степанян

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 4

**Երևանի քաղաքապետարանի ընդհանուր բաժնի «շտապ» նշագրումով
գրությունը գործկոմին՝ Հ. Ավետյանին պատկանող գարեջրի գործարանը
բռնագրավելու վերաբերյալ**

11 դեկտեմբերի 1923 թ.
N 1529

Այսու հայտնում եմ, որ քաղաքում գոյություն ունի գարեջրի գործարան, որը պատկանում է քաղաքացի [Հ.] Ավետյանին և գտնվում է Ջանգու գետի վրա:

Այդ գործարանը 1915 թվից մինչև օրս չի գործում:

Գործարանի ամբողջ ինվենտարը⁴ և բոլոր մասերը, շնորհիվ գործարանատիրոջ պահպանության, գտնվում է բարեկարգ և մաքուր դրության մեջ, որպիսի հանգամանքը նպաստում է կարճ ժամանակամիջոցում և աննշան ծախքով վերականգնել գործարանի գործունեությունը:

Գործարանը կառուցված է վերջին կատարելագործված սիստեմով, որը ապացուցում է, որ նա ժամանակին ունեցել է խոշոր և հաջող արտադրություն:

Ներկայումս ընդհանուր տնտեսության սուղ դրությունը պահանջում է տնտեսությանը զարկ տալու համար անգործության մատնված գործարանները վերաշինվեն և վերականգնվեն:

Ուստի անհրաժեշտ եմ համարում այդ գարեջրի գործարանը իր ամբողջ տարածությամբ, շինություններով և ինվենտարով մունիցիպալիզացիայի ենթարկել և տրամադրել տեղական տնտեսությանը, որի օգտագործման նախագիծը կներկայացվի ապագայում:

Ընդհանուր բաժնի վարիչ [Հ. Ղարիբյան]
Գործերի վարիչ [Հարությունյան]

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 6 և շրջ.: Թողոն: Մեքենագիր:

Թիվ 5

**Հ. Ավետյանի գարեջրի գործարանն ընդունող Երևանի քաղաքապետարանի
ընդհանուր բաժնի հանձնաժողովի եզրակացությունը (ակտը)**

19/24 դեկտեմբերի 1923 թ.

Общий отдел Эргоружисполкома предписанием от 18/12 за N 060 сообщил главному контролеру исполкома А. Иоаннисяну, что для приема Пивоваренного завода Эрив[анского] гражданина [А.] Аветяна со всем инвентарем, назначена комиссия под его председательством в составе членов: Х. Налчаджяна и Арт. Григоряна, почему [и] предложил 19-го декабря приступить к описи имущества завода и акт вместе с описью представить в общий отдел.

Прибыв 19-го числа на означенный завод, Комиссия нашла все двери завода запертыми на замок, узнав, что Аветяна нет в гор. Эривани и что ключи от замкнутых дверей находятся у родственника Аветяна, Андраника Акопяна, находящегося в это время около этого завода. Комиссия предложила ему отпереть все двери, что им и было исполнено.

Осмотрев внутренние помещения завода и находя, что для составления подробной описи инвентаря необходимо содействие специалиста, знакомого с названиями принадлежностей завода, комиссия опечатала все двери завода и примыкающих к нему складов сургучной печатью, поручив целость печатей охране, просила Завед[ующего] общим отделом исполкома пригласить специалиста: на следующий день 20 декабря, в ожидании явки специалиста, комиссия приступила к описи вещей, находящихся в одном из складов. 21-го декабря названный Акопян, у которого находились ключи от замков, не явился на завод, дав знать, что у него умер родственник.

Розыск Акопяна по городу не увенчался успехом, почему и комиссия не имела возможности в этот день продолжать составление описи. 23 декабря в понедельник, комиссия, в присутствии приехавшего собственника Аветяна описала весь инвентарь завода и вновь опечатала все двери сургучной печатью с назначением охраны цельности печатей.

Составленную опись⁵ в трех экземплярах представить в Общий отдел.

Председатель А. Иоаннисян

Члены: Х. Налчаджян, А. Григорян

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 14: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 6

Քաղվածք Երևանի քաղաքագործկոմի նախագահության նիստի արձանագրությունից՝ Հ. Ավետյանի գարեջրի գործարանը բռնագրավելու և Տեղական տնտեսության շահագործմանը հանձնելու վերաբերյալ

22 դեկտեմբերի 1923 թ.

N 2

Լսեցին – 1. Ընդհանուր բաժնի դիմումը քաղ. [Հ.] Ավետյանի գարեջրի գործարանը մունիցիպալիզացիայի ենթարկելու և Տեղ[ական] տնտեսության շահագործմանը հանձնելու [վերաբերյալ]:

Որոշեցին – 2. Խնդրել Ժողկոմխորհին գործարանը ազգայնացնել և հանձնել գործկոմին: Առաջարկել ընդհանուր բաժնին նախագահության հաջորդ նիստին ներկայացնելու նախահաշիվ և առաջիկա սեզոնի ծրագիրը:

Նախագահ՝ Հ. Ղարիբյան

Քարտուղար՝ Այդինյան
 ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 20 շրջ.: Վավերացված պատճեն:
 Մեքենագիր:

Թիվ 7

**Երևանի քաղաքագործկոմի տեղական տնտեսության բաժնի վարիչի
 գրությունը Հ. Ավետյանցին՝ իր ունեցվածքի ցուցակագրման մասին**

24 դեկտեմբերի 1923 թ.
 N 2151

Քաղաքում գտնված Ձեզ պատկանյալ գարեջրի գործարանի ինվենտարը և
 մատերիալը ցուցակագրելու համար առաջարկվում է գործարանը բացել և թույլ
 տալ հատուկ նշանակված հանձնախմբի նախագահ, գործկոմի գլխավոր վերա-
 հսկիչ Աշոտ Հովհաննիսյանին այդ ցուցակագրումը կատարելու, կամ գործա-
 րանի բանալիները վերոնշյալին հանձնել:

Տեղ[ական] տնտ[եսության] բաժ[նի] վարիչ՝ [Պապյան]
 Ընդ[հանուր] բաժնի վարիչ՝ [Հ. Ղարիբյան]

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 9 և շրջ.: Թողոն: Մեքենագիր:

Թիվ 8

**ՀՍԽՀ Ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցության որոշումը Հ.
 Ավետյանի գարեջրի նախկին գործարանը Երևանի քաղաքագործկոմին
 կապալով հանձնելու մասին**

2 հունվարի 1924 թ.
 N 1

Слушали: 21. Вопрос о пивоваренном заводе гражд[анина А.] Аветяна⁶.

Постановили: 21. Исполкому войти в соглашение с Совнархозом на предмет
 взятия в аренду пивоваренного завода.

Указать Совнархозу, что Совнархоз может брать, как арендную плату, ми-
 нимум амортизационных. В случае несогласия Исполкома и Совнархоза войти в
 ЭКОСО⁷.

Слушали: 23. Об уменьшении акциза на пиво (Обращения Алекпольского
 исполкома).

Постановили: 23. Отказать.

Секретарь ЭКОСО Г. Парзян

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 185, թ. 2: Բնագիր: Մեքենագիր⁸:

Թիվ 9

**Երևանի քաղաքագործկոմի «շտապ» նշագրումով գրությունը
Ժողովուրդին՝ Հ. Ավետյանի գարեջրի նախկին գործարանը գործկոմին
անցնելու պայմանները հստակեցնելու վերաբերյալ**

4 հունվարի 1924 թ.

N 126

Համաձայն մեր միջնորդությանը՝ Ժողովուրդին որոշմամբ քաղ. Ավետյաններին պատկանյալ գարեջրի գործարանը մունիցիպալիզացիայի է ենթարկված և հանձնված է Ձեր իրավասությանը: Սակայն այդ գործարանը նույնի որոշմամբ պիտի տրամադրվի մեզ որոշ պայմաններով:

Գործարանը մեզ հանձնելու համար անհրաժեշտ է կազմել ամորտիզացիա⁹ և կալկուլացիա¹⁰ և կազմել գործարանի ինվենտարի ու մատերիալի լրիվ և մանրամասն ցուցակը: Այդ աշխատանքները կատարելու [համար] կազմակերպվում է հատուկ հանձնախումբ, որին մասնակցելու խնդրվում է ուղարկել ձեր ներկայացուցիչը:

Ներկայացուցչին անհրաժեշտ է անցնել Գործկոմ ս./թ. հունվարի 7-ին, առ[ավուտյան] ժամը 9⁰⁰-ին:

Տեղ[ական] տնտեսության բաժնի վարիչ՝ Պապյան

Գործերի վարիչ՝ Հարությունյան

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 1: Թողոն: Մեքենագիր:

Թիվ 10

**Երևանի քաղաքագործկոմի ընդհանուր բաժնի «շտապ» նշագրումով
գրությունը Ավետյանների ընտանիքին՝ պետականացված գարեջրի
գործարանի գույքը ցուցակագրող հանձնաժողովին օժանդակելու մասին**

12 հունվարի 1924 թ.

N 429

Նկատի ունենալով, որ Ձեզ պատկանյալ գարեջրի գործարանը մունիցիպալիզացիայի է ենթարկված և հանձնված է բաժնիս իրավասությանը¹¹, ուստի հատուկ հանձնախմբի միջոցով պետք է ցուցակագրվի և գնահատվի գործարանի ինվենտարը ու մատերիալը:

Հանձնախմբի այդ աշխատանքների միջոցին որոշ դժվարությունների և թյուրիմացությունների չհանդիպելու համար խնդրվում է Ձեզ, Ձեր մոտ եղած գործարանի ինվենտարի և մատերիալի վերաբերյալ գնահատության բոլոր փաստաթղթերը հանձնել հանձնախմբին մասնակցող մեր ներկայացուցիչ ընկ.

Գևորգ Հարությունյանին: Այդ փաստաթղթերը հանձնախմբի աշխատանքներն ավարտելուց հետո կվերադարձվեն Ձեզ:

Ընդհանուր բաժնի վարիչ՝ Հ. Ղարիբյան
Գործերի վարիչ՝ Հարությունյան

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 5 և շրջ.: Թողոն: Մեքենագիր:

Թիվ 11

**ՀՍԽՀ Ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցության որոշումը
Հ. Ավետյանի գարեջրի նախկին գործարանը Երևանի քաղաքագործկոմին
հանձնելու պայմանների մասին**

9 փետրվարի 1924 թ.
N 5

Слушали: 7. Об условиях сдачи в аренду Совнархозом Эриванскому исполкому бывшего пивоваренного завода принадлежащего гр[ажданину А.] Аветяну.

Постановили: 7. Предложить Совнархозу сдать в аренду пивоваренный завод (Аветяна) Горисполкому, считая амортизация за машины 4% и за помещение 2%, каковые считать с 1-го января 1924 года¹².

Секретарь ЭКОСО Г. Парзян

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 185, թ. 6: Բնագիր: Մեքենագիր¹³:

Թիվ 12

**ՀՍԽՀ Ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցության որոշումը գարեջրի
վրա սահմանված ակցիզային հարկն իջեցնելու մասին**

23 փետրվարի 1924 թ.
N 9

Слушали: 6. О снижении акциза на пиво (см. пост. ЭКОСО от 2/11924 г., пост. Ленина[анского] исполкома от 31/1-1924 г., п. 2).

Постановили: 6. Утвердить предложение Уползакнаркомфина¹⁴ взимать акциз по весу назначенного к затору солода по 4 руб. [с]пуда.

Секретарь ЭКОСО Г. Парзян

ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 185, թ. 10: Բնագիր: Մեքենագիր¹⁵:

Թիվ 13

**Երևանի քաղաքագործկոմի տեղական տնտեսության բաժնի հրահանգը
առևտրաարդյունաբերական սեկցիային՝ գարեջրի և տոմետի
գործարանների վերագործարկման աշխատանքներն արագացնելու մասին**

20 մայիսի 1924 թ.

N 578

Ինչպես պարզվում է գարեջրի և տոմետի գործարանների աշխատանքների ընդհանուր ընթացքից, դրանք վերջնականապես կազմակերպվելու և աշխատանքի են անցնելու շատ ուշ: Անհրաժեշտ է ընդգծել, որ բավականին խոշոր գումար ենք ծախսել այդ շենքերի վերանորոգման վրա: Բացակայում է միայն մարդկային ֆիզիկական ղեկավար ուժ և էներգիա՝ գործը վերջնականապես կազմակերպելու համար: Խնդրվում է Ձեր կողմից հնարավոր միջոցների դիմել և զգուշացնել այդ աշխատանքներում ակտիվ մասնակից ունեցող¹⁶ անձանց, որ եթե տրված ժամանակամիջոցում գործարանները չկազմակերպվեն ու չգործեն, հանցավորները կհեռացվեն պաշտոնից ու դատի կհանձնվեն:

Տեղ[ական] տնտեսության բաժնի վարիչ՝ Պապյան

Գործերի վարիչ՝ Հարությունյան

Մակագրություն. «Պատճենը տալ գարեջրի գործարանի վարիչին և առաջարկել միջոցներ ձեռք առնել: 23.V., Պեդրոսյան»:

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 103: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 14

**Երևանի քաղաքագործկոմի տեղական տնտեսության Գարեջրի և տոմետի
գործարանների վարիչի բացատրագիրը տեղական տնտեսության
առևտրաարդյունաբերական սեկցիայի վարիչին՝ գործարանների
վերագործարկման աշխատանքների ձգձգման պատճառների մասին**

27 մայիսի 1924 թ.

N 26

Ի պատասխան Ձեր գրության՝ 24 մայիսի 1924 թ., N 342, որ գարեջրի և տոմետի գործարաններում աշխատանքները կատարվում են շատ դանդաղ, որի պատճառով գործի սկսումն ուշանում է: Սրանով հայտնում եմ ի գիտություն Ձեզ, որ գարեջրի գործարանի շինության վերանորոգման աշխատանքները կատարվել են ոչ լրիվ կերպով, նախահաշվով ներկայացրած աշխատանքների միայն մի երրորդն է կատարվել տեխնիկական բաժնի աշխատակից Տեր-Իսահակյանի կողմից: Մնացածը հետզհետե կատարվում է մեր միջոցով: Իսկ ինչ վերաբերում է ինվենտարի վերանորոգմանը և ռեմոնտին, դրանք կատարվում

են ըստ հնարավորության գործարանի վարչության կողմից: Բացի դիմամո մեքենայի և էլեկտրոմոտորների կանոնավորման գործից, որը հանձնված է տեխնիկ Տեր-Մկրտչյանին, որի դանդաղումը գործի ուշ սկսվելու պատճառներից մեկն է, նույնպես և Ռուսաստանից ստանալիք մթերքների և որոշ մասերի բացակայությունը, որոնց մասին ես դեռ մարտի սկզբներին դիմում եմ արել տեղական տնտեսությանը: Չունենք նույնպես գարեջրագործ վարպետ¹⁷, որի վարձելու մասին պետք է հոգար Տեղական տնտեսությունը:

Իսկ ինչ վերաբերում է տոմետի գործարանին, նրանք արդեն իրենց տեղերը դրված են և պակաս մասերը պատվիրված է նախկին Տեր-Ավետիքյանի գործարանին¹⁸, որը շուտով պատրաստ կլինի և կսկսի գործել:

Գարեջրի գործարանի վարիչ՝ Հ. Ավետյան¹⁹

Մակագրություն 1. «Տեղակ[ան] տնտեսության] վարիչին: Ներկայացնում եմ: 29.V., Պետրոսյան»:

Մակագրություն 2. «Այդ բոլորի վրա հսկողությունը դուք անձամբ պետք է ունենաք և իզուր տեղը չգցեք ուրիշների վրա դանդաղության պատճառը: 30.V., Պապյան»:

Մակագրություն 3. «Կարդացի: Հ. Ավետյան»:

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 110 և շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

Թիվ 15

**Երևանի քաղաքագործկոմի քարտուղարի գրությունը ընդհանուր բաժնին՝
Գարեջրի գործարանի աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ
տրամադրելու մասին**

9 հունիսի 1924 թ.

N 7073

Խնդրվում է հայտնել. բաժնիդ կազմակերպած գարեջրի գործարանը ե՞րբ է աշխատանքի անցնելու: Անհրաժեշտ է ձեռք առնված միջոցները ուժեղացնել գործարանի աշխատանքները արագացնելու համար:

Գործկոմի քարտուղար՝ Այդինյան

Գործերի վարիչ՝ Հարությունյան

Մակագրություն. «Անցել ենք աշխատանքի վաղուց: Միջոցներ ձեռք են առնվում, որ արագացվեն աշխատանքները: 11.V., Պապյան»:

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 128: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 16

**Երևանի քաղաքագործկոմի ընդհանուր բաժնի գրությունը գործկոմին՝
Գարեջրի գործարանի արտադրությունը վերսկսելու մասին**

12 հունիսի 1924 թ.

N 7303/520

Ի հետևումն գործկոմիդ ս./թ. N 7073 գրության՝ հայտնվում է, որ գարեջրի գործարանի աշխատանքներին անցել ենք վաղուց²⁰: Ամեն տեսակի միջոցներ է ձեռք առնվում աշխատանքների արագացման վերաբերյալ: Գարեջուր պատրաստի ունենք:

Ընդհանուր բաժնի վարիչ [Հ. Ղարիբյան]
Տեղ[ական] տնտ[եսության] բաժնի վարիչ՝ Պապյան
Գործերի վարիչ՝ Հարությունյան

ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 127: Թողոն: Մեքենագիր:

Ծանոթագրություններ

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ֆինանսական օժանդակությամբ՝ 25RG-6A104 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

1. Մասնավոր գույքի պետականացումը և իբրև հանրային սեփականություն փոխանցումը քաղաքային իշխանություններին:
2. Վ. Աբրահամյանը Առևտրաարդյունաբերական սեկցիայի վարիչի օգնականն էր:
3. Տեր-Իսահակյանը Առևտրաարդյունաբերական սեկցիայի տեխնիկն էր:
4. Իրերի (գույքի) ցուցակը:
5. Հ. Ավետյանցի գարեջրի գործարանում եղած ապրանքների ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 15-17:
6. Նույն նիստում (հարց N° 20) քննարկվել է նաև Հ. Ավետյանի բրնձամաքրիչ գործարանը Երևանի քաղաքագործկոմի օգտագործմանը հանձնելու հարցը:
7. Экономические совещания при Совнаркомѐ ССРА.
8. Փաստաթղթի քաղվածքի վավերացված պատճենը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2397, թ. 19:
9. Գույքի աստիճանական մաշումը և ծախսերի մեջ մաշվածության գումարի հաշվառումը:
10. Ծախսերի հաշվարկ:
11. 1924 թ. հունվարի 9-ին Հ. Ավետյանից բռնագրավված ունեցվածքի մանրամասն նկարագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թթ. 432-442:

12. Գարեջրի գործարանը ՀՍԽՀ Ժողտնտխորհի կողմից Երևանի քաղգավգործկոմին վարձակալության հանձնելու մասին պայմանագրի նախագիծը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 141 և շրջ.:
13. Փաստաթղթի քաղվածքի վավերացված պատճենը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 26 շրջ.:
14. Уполномоченный Закавказского Народного Комиссариата Финансов.
15. Փաստաթղթի քաղվածքի վավերացված պատճենը տե՛ս ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 2412, թ. 41:
16. Այն է՝ մասնակցություն:
17. Մասնագետի բացակայության պատճառով գարեջրագործի գործառույթները ևս վերապահվեցին Հ. Ավետյանին:
18. Երվանդ Տեր-Ավետիքյանի մեխանիկական գործարանը գտնվում էր Երևանում:
19. Վերջինս միաժամանակ տոմետի գործարանի վարիչն էր:
20. «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում տպագրված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ գարեջրի գործարանը սկսել էր գործել հունիսի 1-ից (Խորհրդային Հայաստան, 23.VII.1924, N 168):

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ/REVIEWS/ РЕЦЕНЗИИ

**ԱՐԱՄ Վ. ՔՈՍՅԱՆ, ԵՐՎԱՆԴ Հ. ԳՐԵԿՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ ՄԻՋԱՎԱՅՐԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐ, ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ (Ք.Ա. X – I ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐ),
ԵՐԵՎԱՆ, 2024, ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏ., 408 ԷՋ**

**ARAM V. KOSYAN, YERVAND H. GREKYAN, THE ENVIRONMENTAL HISTORY
OF THE ARMENIAN HIGHLAND: NATURAL ENVIRONMENT, CLIMATE
CHANGES, AND CIVILIZATIONAL PROCESSES (10TH-1ST MILLENNIA BC),
YEREVAN, 2024, PUBLICATION OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY
AND ETHNOGRAPHY OF THE NAS RA, 408 P.**

**АРАМ В. КОСЯН, ЕРВАНД О. ГРЕКЯН, ИСТОРИЯ ОКРУЖАЮЩЕЙ
СРЕДЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ: ПРИРОДНАЯ СРЕДА, КЛИМАТИЧЕСКИЕ
ИЗМЕНЕНИЯ И ЦИВИЛИЗАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ (X-I ТЫС. ДО Н.Э.),
ЕРЕВАН, 2024, ИЗД. ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА, 408 С.**



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ
տպագրված սույն աշխատանքի հեղինակները՝
Ա.Վ. Քոսյանն ու Ե.Հ. Գրեկյանը, հայագիտությա
ն և արևելագիտության բնագավառներում
այն եզակի մասնագետ-գիտնականներն են,
որոնք մեծ ճանաչում ունեն նաև արտերկրում:
Մասնագիտական առումով քաղաքակրթությ
ունների վեր ու վարընթաց գործընթացներում
շրջակա միջավայրի ազդեցությունների բարդ
ու շատ հաճախ հակասական հիմնահարցերին
անդրադառնալն ինքնին համարձակ քայլ է,
քանի որ հայագիտության ոլորտում վերոնշյալ
ազդեցությունները տակավին հատուկ և բազ
մակողմանիորեն չեն ուսումնասիրվել: Ըստ

այդդ, հայագիտական այս եզակի հետազոտությունն արժանիորեն համալրելով
միջավայրային պատմության վերաբերյալ արտասահմանյան պատկառելի մաս
նագիտական գրականության ցանկը, միաժամանակ վստահություն է ներշնչում,
որ մոտ ապագայում կդառնա հենք նման ուղղությամբ նոր հայագիտական
ուսումնասիրությունների համար:

Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, 4 գլխից, վերջաբանից, անգլերեն ամփոփագրից և օգտագործված ծավալուն գրականության ու աղբյուրների ցանկից: Վերջինս ներկայացնելու համար հեղինակներից պահանջվել է 107 էջ ու 1524 կտոր պատկառելի գրականություն (էջ 300–407): Աշխատության մեջ առաջ քաշված խնդիրներն առավել պատկերավոր դարձնելու համար օգտագործվել են բազմաթիվ նկարներ, քարտեզներ, գծապատկերներ ու աղյուսակներ (մեծավ մասամբ հեղինակային)՝ ըստ համապատասխան բաժնի ու խնդիրների: Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները բավականին ընդարձակ են՝ շուրջ 9 հազարամյակ՝ Ք.ա. X–I հազարամյակներ (9.2–2.8 իրադարձությունները կամ կլիմայական երևույթների ժամանակահատվածը՝ էջ 11), որն էլ իր հերթին համապատասխանում է Երկիր մոլորակի կլիմայական վաղ, միջին և ուշ Հոլոցենի ժամանակահատվածներին (չորրորդական դարաշրջանի վերջին փուլը): Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունների վերհանմանը զուգահեռ՝ մանրակրկիտ վերլուծված են Հին առաջավորասիական, հյուսիսաֆրիկյան և բալկանյան քաղաքակրթությունների նմանատիպ իրավիճակային երևույթների բնույթագրերը:

Ուսումնասիրության մեջ Հայկական լեռնաշխարհի վաղ շրջանի պատմության խնդիրները քննարկվում են (էջ 64–74, 75–146, 255–294) ինչպես հարևան տարածաշրջանների, այնպես էլ երկրագնդի ամենատարբեր հատվածներում շրջակա միջավայրի ազդեցության կոնկրետ դրսևորումների լայն համապատկերում: Խիստ կարևոր է, որ Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների պատմությունը ներկայացվում է ըստ երկրագնդի կլիմայական պատմության: Բավականին ուշագրավ է հեղինակների կողմից հինարևելյան հասարակություններում էկոլոգիական աղետների հետևանքով իրավիճակային փոփոխությունների (երբեմն նաև ռազմաքաղաքական բնույթի բարդությունների և այլ հանգամանքների) պատճառով պետությունների քաղաքական և տնտեսական վիճակի վատթարացման, իսկ որոշ պարագաներում էլ բարելավման փուլերին՝ ճգնաժամային եզրույթի ներմուծման ու կիրառման հանգամանքը (էջ 128):

Աշխատության մեջ հիմնականում կիրառվել են պատմահամեմատական, հետհայաց և դիաքրոնիկ վերլուծության մեթոդները:

Առաջին գլխում (*Շրջակա միջավայրը և քաղաքակրթությունները*, էջ 16–74), որն էլ բաժանված է 11 ենթագլուխների, ներկայացված է քաղաքակրթությունների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների խնդիրը: Մանրակրկիտ քննվել են «աշխարհագրական դետերմինիզմի» տեսությունն ու հասկացությունները (հույն պատմիչ Թուկիդիդեսից մինչև ամերիկացի աշխարհագրագետ Է. Հանթինթոն, էջ 16–28): Հայ դետերմինիստ-պատմաբաններից հիշատակության են արժանացել Ա. Գարագաշյանը, Ս. Պալասանյանը, Լեոն, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանում նրանց սուր քննադատության ենթարկած Ա. Ոսկանյանը (էջ 20–21): Խորհրդային ժամանակաշրջանին անդրադառնալիս սպասելի էր, որ նվազագույնը մեկ-երկու տողով անդրադարձ կլինի խորհրդա-

յին պատմաբան-աշխարհագրագետներ Լ.Ն. Գումիլյովին և Մ.Ի. Արտամոնովին: Սակայն կարծում եմ, որ այս թեմայի անհավանական ծավալն ու հագեցվածությունը, ինչպես նաև քաղաքակրթական ու հնաերկրաբանական խորն ու համակցված հետազոտության մեթոդաբանական խնդիրներն են, որ ստիպել են շրջանցել խորհրդային պատմագրությունը:

Հետազոտության մեջ մանրամասն քննարկվել են էկոհամակարգի վրա ներգործուն այնպիսի երևույթներ, ինչպիսիք են կարճաժամկետ կլիմայական փոփոխությունները (բնական աղետներ, տեկտոնական և սեյսմիկ գործընթացներ (էջ 35–42), ինչպես նաև համաճարակներն (էջ 42–43) ու միգրացիաները (էջ 43–47): Ներկայացված են նաև հնակլիմայագիտական ուսումնասիրություններում օգտագործվող մեթոդները (դենդրոխրոնոլոգիա, ցամաքային և ջրային զանազան ապարների ու նստվածքների վերլուծություն և այլն (էջ 57–59):

Հայկական լեռնաշխարհի կլիմայական պայմանները, ըստ հնակլիմայաբանական ուսումնասիրությունների, ներկայացվել են սկսած Հոլոցենի սկզբնական փուլից (Ք.ա. X հազարամյակ): Մինչև խնդրի ուսումնասիրությունը հեղինակները շեշտում են հետևյալը. «Այսպեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայկական լեռնաշխարհի ոչ բոլոր հատվածներն են բավարար ուսումնասիրված, հատկապես՝ Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ: Կլիմայաբանների ուշադրության կենտրոնում են եղել Վանա լճի և Եփրատ ու Տիգրիս գետերի ավազանները, իսկ մնացած շրջաններում Հոլոցենի ընթացքում տիրող իրավիճակի մասին տվյալները բխում են քննարկվող դարաշրջանի վերաբերյալ գիտության մեջ առկա ընդհանուր պատկերացումներից, այն է՝ այլ տարածաշրջանների հետ համադրման օգնությամբ» (էջ 68): Հաշվի առնելով վերոհիշյալ՝ հեղինակները Հայկական լեռնաշխարհի վաղ պատմության (Ք.ա. V–II հազարամյակներ՝ էնեոլիթից մինչև ուշ բրոնզի դարը ներառյալ (էջ 72–74) ուսումնասիրության հիմքում դնում են շրջակա միջավայրի փոփոխություններով պայմանավորված փուլային մոտեցումը:

Երկրորդ գլխում (*Հայկական լեռնաշխարհը*, էջ 75–146), որը բաժանված է 9 ենթագլուխների, իսկ վերջիններս էլ՝ ենթավերնագրերի, տրվում է Լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական նկարագիրը՝ երկրակազմությունից ու բնակլիմայական պայմաններից մինչև հողային ռեսուրսներ ու մետաղական հանքավայրեր (էջ 75–108), և այդ ամենը՝ միջավայր-հասարակություն հասկացության հենքին: Նկարագրելով Լեռնաշխարհի ռելիեֆային և կլիմայական առանձնահատկություններն ու հակադրությունները՝ հեղինակները նշում են, որ այն պետք է արտացոլվեր տեղի հասարակությունների կենսագործունեության եղանակի, միջավայրի առաջադրած մարտահրավերների հաղթահարման ունակությունների, նոր պայմաններին հարմարվելու հնարավորությունների և մեխանիզմների վրա (էջ 75): Լեռնաշխարհի *հողային ռեսուրսները* (էջ 91–97) նկարագրելիս հեղինակները եզրահանգում են, որ. «Անասնապահությունը Հայկական լեռնաշխարհի շատ շրջանների համար պատմական բոլոր ժամանակներում, հատկապես հին շրջանում կարևորագույն դեր է խաղացել: Այդ է պատ-

ճառը, որ բացառությամբ վերոհիշյալ մի քանի շրջանների՝ մնացած տարածաշրջաններում բնակչության կենսապահովման կարևորագույն բաղադրիչը հենց անասնապահությունն էր, ավելի ճշգրիտ՝ երկրագործական-անասնապահական համալիր տնտեսությունը (տարբեր տոկոսային հարաբերակցությամբ)» (էջ 92): Ըստ այդմ, պայմանավորված Հայկական լեռնաշխարհի հողային ռեսուրսների քանակով, դրանց որակով և ռելիեֆային ու կլիմայական կոնկրետ պայմաններով, հեղինակները Լեռնաշխարհի բնակչության երկրագործական զբաղվածությունը տարաբաժանել են երկու ոլորտի՝ ա. հացահատիկային կուլտուրաների մշակում, բ. այգեգործություն և տեխնիկական կուլտուրաներ (էջ 112):

Շրջակա միջավայրում տեղի ունեցող զգալի փոփոխությունների հետևանքով միջավայր-հասարակություն հավասարակշռության խախտումը, ըստ հեղինակների, կարող էր հանգեցնել կենսակերպի էական փոփոխության, այն է՝ տնտեսական գործունեության ոլորտում ծանրության կենտրոնի տեղափոխում դեպի հարևան տարածքներ, որը պետք է արտահայտվեր գոյամիջոցների արտաքին աղբյուրների որոնման տեսքով: Միջավայրում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք պետք է նպաստեին կենսականորեն անհրաժեշտ միջոցների նվազմանը, կարող էին պատճառ դառնալ սկզբում հասարակության ագրեսիվության աճի, այնուհետև՝ բնակչության լրիվ կամ մասնակի արտագաղթի (էջ 137-142): Բնակլիմայական պայմաններից ելնելով՝ բնակչության շարժունակությունը հեղինակները տարաբաժանել են երկու տիպի միգրացիայի՝ հորիզոնականից ուղղահայաց և հորիզոնականից հորիզոնական (էջ 141):

Աշխատանքի երրորդ գլխում (*Հոլոցենի ճգնաժամային փուլերը*, էջ 147-254), որն էլ բաժանված է 7 ենթագլխի, իսկ վերջիններս էլ՝ ենթավերնագրերի, ներկայացված են Առաջավոր Ասիայի վաղ շրջանի պատմության ընթացքում կլիմայաբանական ուսումնասիրությունների շնորհիվ ի հայտ եկած մի շարք պատմափուլեր, որոնք նշանակալից ազդեցություն են ունեցել հասարակությունների քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային պատմության վրա: Այդ փուլերի ընթացքում (8.2, 6.2, 5.2, 4.2, 3.2, 2.8 կլիմայական իրադարձություններ), ըստ հեղինակների, համատարած վկայված են հետևյալ երևույթներով՝ 1. քաղաքական կառույցի խարխուլում կամ նույնիսկ վերացում, 2. տնտեսական հիմքերի խարխուլում, 3. սոցիալական ընդվզումներ, բնակչության լայն զանգվածների ապստամբություններ, բնակչության շարժունակության աճ երկրի ներսում, հաճախ նաև՝ զանգվածային արտագաղթեր այլ երկրներ և այլն: Այդ երևույթները չեն սահմանափակվում միայն Առաջավոր Ասիայով, այլ վկայված են նաև Եվրասիայի տարբեր շրջաններում, Հյուսիսային Աֆրիկայում և այլուր: Իսկ դա խոսում է հիշյալ երևույթների գլոբալ, այլ ոչ թե ռեգիոնալ մասշտաբների մասին (էջ 147): Ի մասնավորի՝ մանրամասն անդրադարձ է կատարվել Հին Եգիպտոսի (էջ 177-179, 217-224), Հին Միջագետքի (Շումերաաքքադական ժամանակաշրջանից մինչև Նորասորեստանյան և Նորբաբելական թագավորությունները, էջ 156-159, 169-174, 224-229, 239-249), Հնդկաստանի ու Չի-

նաստանի (էջ 186–188) և այլ գոտիների վրա Հոլոցենի ճգնաժամային փուլերի ազդեցություններին (էջ 163, 186):

Ուսումնասիրության չորրորդ գլխում (*Հոլոցենի կլիմայական փոփոխությունները և Հայկական լեռնաշխարհը*, էջ 255–294), որն էլ բաժանված է 4 ենթագլխի, դրանք էլ՝ ենթավերնագրերի, ներկայացված են Հայկական լեռնաշխարհի կլիմայական փոփոխություններն ու դրանց ազդեցությունները նեոլիթից մինչև ուրարտական պետության անկման վրա: Մանրամասն անդրադարձ է կատարված կլիմայական 8.2 (էջ 256–261), 5.2 (էջ 261–269), 4.2 (էջ 269–277), 3.2 (էջ 277–279) և 2.8 (էջ 279–294) կլիմայական իրադարձություններին: Ուշագրավ է կուր-արաքսյան մշակույթի գրեթե ամբողջական նկարագիրը՝ սկսած Ք.ա. IV հազարամյակի վերջից (5.2 իրադարձություն, Ք.ա. մոտ 3000–2900 թթ.) կամ կուր-արաքսյան մշակույթի ծավալման շրջանից մինչև կլիմայական 4.2 իրադարձության փուլում այդ մշակույթի անկման շրջանը (էջ 258–269): Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կուր-արաքսյան մշակույթի կրողների կենսակերպի վերաբերյալ հեղինակների հետևյալ մոտեցումը. «Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան մշակույթի օրինակով կարելի է լավ պատկերացում կազմել մեր տարածաշրջանում երկու տարբեր՝ երկրագործական և անասնապահական կենսակերպերի գոյության մասին: Նկատվել է, որ կուր-արաքսյան մշակույթի կրողները գերազանցապես նստակյաց էին, սակայն, շարժունակ անասնապահական հատվածը նույնպես նշանակալից պեղք է լինել» (էջ 131): Հեղինակները նշում են, որ, 4.2 իրադարձության ձևավորած միջավայրային փոփոխություններով պայմանավորված, Հայկական լեռնաշխարհում տեղի է ունենում ապարնակեցման համատարած երևույթ, իսկ բնակչության շարժունակության աճն ու տեղաշարժերը վկայում են ընդգրկուն ճգնաժամի մասին (էջ 271–274): Նույն իրադարձությամբ պայմանավորված՝ պոնտկասպյան գոտուց դեպի Հայկական լեռնաշխարհ բնակչության տարբեր խմբերի շարունակական ներհոսք է նկատվում, որը հետագայում, ըստ մասնագետների, էական դեր պիտի կատարեր Լեռնաշխարհում լեզվական իրավիճակի փոփոխման գործում (էջ 275):

Լեռնաշխարհում հաջորդ ճգնաժամային շրջանը սկսվել է Ք.ա. II հազարամյակի վերջին (3.2 իրադարձություն), երբ նույնպես գրանցվում են բնակչության մեծ տեղաշարժեր (արամեացիներ, մուշկեր, կասկեր ժողովուրդներ (էջ 224–234, 274–279): Ճգնաժամը գազաթնակետին հասավ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան մասերում տեղակայված քաղաքական կազմավորումների, մասնավորապես՝ Իսուվայի թագավորության անկմամբ (էջ 279): Ուսումնասիրության մեջ հեղինակների քննարկած վերջին ճգնաժամային շրջանը 2.8 իրադարձությունն է (Ք.ա. VIII–VII դդ.): Այս շրջանին են վերաբերում փոյուզացիների և, հավանաբար, փոքրասիական այլ ժողովուրդների տեղաշարժը դեպի արևելք՝ վերինեփրատյան ավազանի ու Հայկական լեռնաշխարհի ուղղությամբ և լեռնաշխարհից ներս (Տուն Թորգոմա): Կարելի է ենթադրել մարերի/իրանական ցեղերի տեղաշարժ դեպի մերձարաքսյան գոտիներ,

որոնց դեմ էլ, հավանաբար, ուղղված է եղել Արգիշթի Ռուսայորդու հեռավոր արշավանքը Կասպից ծովի ուղղությամբ: Այս շրջանակում պետք է դիտարկել սկյութների մեծ ակտիվությունը: Ք.ա. VII դարի 2-րդ կեսին, որոնք էլ, հավանաբար, վերջին հարվածը հասցրեցին ուրարտական երերացող տերությանը (էջ 294): Փաստացի, Լեոնաշխարհում՝ այս շրջանի ամենաակնառու բացասական ազդեցությունը ուրարտական պետության քայքայումն ու նոր էթնոքաղաքական իրողությունների հաստատումն էր:

Գրքի վերջաբանում (էջ 295–297) և նրա անգլերեն ամփոփագրում (էջ 298–299) հեղինակներն ընդհանրացնում են ողջ Հոլոցենի ժամանակաշրջանի Հայկական լեոնաշխարհի միջավայրի բավական ուշագրավ պատմությունը: Կիրթ ու մշակված հայերենով շարադրված այս ուշագրավ ուսումնասիրության մեջ շատ քիչ են անհաջող ձևակերպումները և վրիպակները, որոնց մի մասը, անշուշտ, պատահականության կամ տեխնիկական վրիպման արդյունք են: Դրանցից են Ադրիանապոլիսի հայտնի ճակատամարտի թվագրումը Ք.ա. 378 թ.-ով (էջ 31)՝ պետք է լինի 378 թ., Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114–1076 թթ.) կառավարման ժամանակահատվածի որոշ իրադարձություններ թվագրված են Ք.ա. 1182 թ., 1180 թ.՝ համապատասխանաբար Ք.ա. 1082 թ. և 1080 թ.-ի փոխարեն (էջ 227), Լիդար Հյույսի և Թիլլե Հյույսի միջինասորեստանյան շերտերը թվագրված են համապատասխանաբար XI–X և X–VIII դարերով, այնինչ պետք է լինի Ք.ա. IX–X և Ք.ա. X–VIII դդ. (էջ 278): Վանա լիճը անվանվել է «*փակ լիճ*» (էջ 68), այնինչ աշխարհագրագիտական դասակարգմամբ պետք է լիներ *ներքին ավազանի* կամ *անհոս* լիճ: Նմանատիպ աշխատությանը հարկ կլինի ավելացնել նաև անվանացանկեր և այլն:

Ամփոփելով նշենք, որ Ա.Վ. Քոսյանի ու Ե.Հ. Գրեկյանի սույն ուսումնասիրությունն անգնահատելի և ուշագրավ ներդրում է հայագիտության բնագավառում: Այն միտված է բուն իսկ միջավայրի հնակլիմայաբանական սահմաններն ընդարձակելու, այդ բնագավառում մեր հատվածական իմացությունը լրացնելու և ամբողջացնելու: Փաստացի ստեղծվել է Հայկական լեոնաշխարհի միջավայրի և քաղաքակրթությունների պատմությունը վերարտադրող մի գործ, որը, մեր համոզմամբ, թեև ուշացած, սակայն մնայուն արժեք է:

Ռուսլան Յականյան
Ruslan Tsakanyan
Руслан Цаканян

Institute of Oriental Studies, National Academy of Sciences, Armenia
Արևելագիտության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Институт востоковедения, Национальная академия наук, Армения

ruslan.tsakanyan@orient.sci.am

DOI: 10.53548/0320-8117-2025.3-322

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ Մելանիա Միքայելյան
Սեդա Քուփելյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ Գայանե Հարությունյան

Editors of Armenian section – Melania Mikaelyan
Seda Kupelyan
Editor of Russian section – Gayane Harutyunyan

Редакторы армянского отдела – Меланья Микаелян
Седа Купелян
Редактор русского отдела – Гаянэ Арутюнян

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Պետրոսյանի
Computer design and pagination – Armine Petrosyan
Компьютерный дизайн и пагинация – Армине Петросян

Հրատ. պատվեր N 1410
Ստորագրված է տպագրության 12.12.2025 թ.:
Տպագրական 20.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902, 56-41-80:

Signed for printing 12.12.2025
20.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902, 56-41-80

Подписано к печати 12.12.2025 г.
20.5 печ. л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902, 56-41-80

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://lraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Official site of the Journal: <http://lraber.sci.am>
E.mail of the Journal: lraber@sci.am
Официальный сайт журнала: <http://lraber.sci.am>
Электронная почта журнала: lraber@sci.am

© Հանդեսի տեխնիկական ֆորմատը հաստատված է հեղինակային իրավունքով
© The technical format of the journal is confirmed by copyright
© Технический формат журнала подтвержден авторским правом